

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՌԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԼԵԶՎԱԿԱՆՆ ՈՒ ԱՐՏԱԼԵԶՎԱԿԱՆԸ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՈՒՄ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՄԱՌԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

**ԼԵԶՎԱԿԱՆՆ ՈՒ ԱՐՏԱԼԵԶՎԱԿԱՆԸ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2018

ՀՏԴ 811.19  
ԳՄԴ 81.23  
Բ 242

*Տղազրության է երաժիսավորել  
Երևանի Պետական համալսարանի  
ռոմանագերմանական բանասիրության  
ֆակուլտետի գիտական խորհուրդը*

Խմբագիր՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ  
Ս. Գասպարյան

Գրախոս՝ Բ.Գ.Պ., դոցենտ Գ. Մուրադյան  
Բ.Գ.Ք., դոցենտ Զ. Վարդապետյան

**Բաղդասարյան Մառա Աղասու**

Բ 242 Լեզվականն ու արտալեզվականը քաղաքական ելույթում/  
Մառա Բաղդասարյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2018, 194 էջ:

Սույն մենագրության նպատակն է պարզաբանել քաղաքական ելույթի՝ որպես լեզվական և արտալեզվական իրողությունների յուրօրինակ փոխներթափանցման առանձնահատկությունները: Փորձ է արվում ցույց տալու լեզվական նպատակային արտահայտության միջոցով որոշակի գաղափարների ու հասկացությունների՝ արժեքների, պատկերացումների, համոզմունքների, ինչպես նաև գործողությունների, վարքային ու կենսակերպային մոդելների մատուցման եղանակները, ընդ որում քաղաքական ելույթը դիտարկվում է որպես գործաբանական նպատակային՝ գործառական-ճանաչողական հաղորդակցություն: Ուսումնասիրությունը միտված է նպաստելու լեզվաբանական-խոսքաբանական և քաղաքագիտական-հասարակագիտական հետազոտություններով զբաղվող մասնագետների, ուսանողների և, առհասարակ, խոսքի քաղաքական գործառությամբ հետաքրքրվող անձանց՝ քաղաքական խոսքի նկատմամբ գիտակցության բարձրացմանը: Այս ուսումնասիրության արդյունքները կարող են ընդգրկվել գործառական ոճագիտության, խոսույթի/տեքստի մեկնաբանության դասընթացներում, ինչպես նաև լեզվաբանների, քաղաքագետների ու դիվանագետների համար անգլերենի հատուկ դասընթացի ձևավորման հիմք դառնալ:

ՀՏԴ 811.19  
ԳՄԴ 81.23

ISBN 978-5-8084-2286-5

© ԵՊՀ հրատ., 2018  
© Բաղդասարյան Մ., 2018

YEREVAN STATE UNIVERSITY

**MARA BAGHDASARYAN**

**THE LINGUISTIC AND THE EXTRALINGUISTIC  
IN POLITICAL SPEECH**

YEREVAN  
YSU PRESS  
2018

*Recommended for publication by  
Academic Council of Romance and  
Germanic Philology Faculty*

Edited by: Seda Gasparyan  
Doctor of Philology, Professor,  
Corresponding Member of RA National Academy  
of Sciences

Reviewed by: Gayane Muradian  
Doctor of Philology, Associate Professor  
Zaruhi Vardapetyan  
PhD, Associate Professor

**Mara Baghdasaryan**

The Linguistic and the Extralinguistic in Political Speech.  
Baghdasaryan M., Yerevan, YSU Press, 2018, 194 p.

The monograph aims to reveal and specify the characteristics of the political speech as a unique intertwinement of linguistic and extralinguistic phenomena. It illustrates the transfer of specific ideas and concepts – values, visions, convictions, as well as models of action, behaviour and lifestyle through targeted language expression: the political speech is observed as a functional-cognitive communication that is pragmatically oriented. This research is intended to advance political discourse awareness among specialists and students engaged in linguistic, political, sociological studies, as well as people interested in the political use of language in general. The results of the research can be used in courses of functional stylistics, discourse/text interpretation and also make a basis for a special course of English for linguists, political scientists and diplomats.

## ԱՌԱՋԱԲԱՆ

Քաղաքականությունը մեր կյանքի անբաժան մասն է: Ավելին՝ այն անընդհատ ընդլայնվում է՝ իր մեջ ներառելով առաջին հայացքից քաղաքականության հետ բոլորովին կապ չունեցող նորանոր ոլորտներ, որոնք սակայն ավելի խորքային դիտարկման պարագայում երևան են հանում իրենց քաղաքական հենքը: Սա բնական է, քանի որ քաղաքականությունը ենթադրում է գաղափարախոսություն, ինչը մարդու մտածողությանն է առնչվում, և գործողություն, որն էլ ներկայացնում է մարդու վարքային ոլորտը: Մարդը մտածում է ու գործում, ընդ որում համակեցության իր իսկ հաստատած ձևի ու կարգի պայմաններում, որ կոչվում է պետություն: Այսպիսով գաղափարախոսությունն ու գործողությունը ամենաբարձր պետական մակարդակից տարածվում են մինչև, այսպես կոչված, ամենացածր, մասնավոր մակարդակ:

Ամենալայն իմաստով *ֆաղափականություն* երևույթը և սովյալ հասկացությունն անվանող բառն արմատավորվել են ժամանակակից մարդու կյանքում, և մեզ համար արդեն սովորական է դարձել լսել այս կամ այն հաստատության, կազմակերպության, ընկերության քաղաքականության մասին: Արդյունքում, կամա թե ակամա, բոլորս էլ ներգրավված ենք որոշակի քաղաքականության մեջ:

Այդուհանդերձ, *ֆաղափականություն* ասելով առաջին հերթին հասկանում ենք պետական կամ առնչվող կառույցները, ինստիտուտներն ու հարաբերությունները: Քաղաքականությունը, ինչպես մարդու գործունեության ցանկացած ոլորտ, ունի իր օրինաչափություններն ու յուրատկությունները դրսևորող լեզու: Չաշվի առնելով այլ ոլորտների հետ քաղաքականության փոխներթափանցման ակնհայտ բազմակողմանիությունը՝ կարևոր ենք համարում ընդգծել այն իրողությունը, որ դրա լեզուն աչքի է ընկնում իր մեծ բազմազանությամբ ու խորությամբ:

Ժամանակակից աշխարհում հստակ ըմբռնվում է քաղաքականության առանցքային դերը, և այն տարաբնույթ ուսումնասիրությունների է ենթարկվում տարբեր գիտակարգերում՝ քաղաքագիտություն, հասարակագիտություն, հանրային հոգեբա-

նություն և այլն: Քաղաքականության լեզվական արտահայտությունն էլ մեծ ուշադրության է արժանանում լեզվաբանական ուսումնասիրությունների շրջանակում:

Հայաստանում նմանատիպ հետազոտություններն ակտիվացել են միայն վերջին տասնամյակում: Քաղաքական դիսկուրսի ուսումնասիրությունների բնագավառում հիրավի ուշագրավ է այս գիրքը, որում հեղինակը՝ բանասիրական գիտությունների թեկնածու Մառա Բաղդասարյանը, մանրամասն վերլուծում և մեկնաբանում է ժամանակակից անգլալեզու քաղաքական ելույթը միանգամայն լայն ընդգրկումով՝ ձևաբանական, բառային, շարահյուսական, որն էլ իրականացվում է դիսկուրսի քննության դիրքերից: Ուսումնասիրության տեսական-մեթոդական բազան նույնպես ընդգրկում է՝ սկսած արիստոտելյան թեմատիկ-բովանդակային կառուցվածքի ստեղծման մեխանիզմներից մինչև գործառական ոճագիտություն, գործաբանություն, դիսկուրսի քննադատական վերլուծություն, նյարդալեզվաբանական ծրագրավորում, ինչպես նաև հանրային հոգեբանության ու փաստարկման տեսության հարաբերակից որոշ դրույթներ: Նման ներգիտակարգային և որոշակի միջգիտակարգային քննությամբ է հեղինակը համակողմանիորեն վերծանում ու ներկայացնում նյութը: Սա էական է քաղաքական խոսքի հետազոտության մեջ, քանի որ, ինչպես աշխատանքում ենք տեսնում, քաղաքական դիսկուրսը տրամաբանականի և հուզականի նուրբ հակադրամիասնություն է, և ցանկացած գաղափարախոսություն առավել գործուն է, իսկ պերսուազիան լիակատար, երբ տրամաբանական փաստարկումն ու հուզական ներշնչումը հանդես են գալիս միասնաբար և ճիշտ համամասնությամբ:

Քաղաքական առաջնորդների անգլալեզու ելույթների ուսումնասիրությունը կարևոր է մեր օրերում աշխարհում «քաղաքականություն իրականացնող» հիմնական լեզվի՝ անգլերենի տրամադրած հնարավորությունների բացահայտման, դրանց նրբությունների ընկալման, կիրառման մեխանիզմների յուրացման, նաև այդ հնարավորությունների շահագործման ու առավել ևս շահարկման իրազեկության առումով:

Անհրաժեշտ են համարում ընդգծել ևս մեկ բան. աշխատությունը գրված է հայերեն, ընդ որում գիտական պատշաճ մակարդակով: Սա էական հանգամանք է, քանի որ, ի տարբերություն քաղաքական դիսկուրսի ռուսալեզու և առավել ևս անգլալեզու ուսումնասիրությունների, դրա հայերեն քննության ավանդույթը նոր է ձևավորվում մեզանում: Այս մենագրությունն արժեքավոր է նաև շատ հասկացությունների հայերեն համարժեք արտահայտման ձևերի ներմուծման և կայացման տեսանկյունից:

Խնդրո առարկա աշխատությունը մեծապես հաջողված գործառական-ճանաչողական հետազոտություն է: Հեղինակը մեկնում է հռետորի գաղափարներն ու հույզերը լեզվական ուսումնասիրությամբ, վեր հանում նրա նպատակադրություններն ու շարժառիթները՝ տեղայնացնելով դրանք դիսկուրսային իրադարձության՝ արտալեզվական իրականության համատեքստում:

Այս մենագրությունը կարող է հիմք դառնալ քաղաքական դիսկուրսի վերլուծության դասընթացի ձևավորման համար և նպաստ բերել նշված բնագավառում գիտական ուսումնասիրությունների հետագա իրականացմանը: Կարող է հետաքրքիր լինել նաև քաղաքական խոսքով հետաքրքրվողների լայն շրջանակի համար:

### **Սեդա Գասպարյան**

ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ

ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս աշխատանքի ուսումնասիրության օբյեկտը ժամանակակից անգլալեզու քաղաքական ելույթն է՝ որպես լեզվական և արտալեզվական իրողությունների փոխներթափանցում: Անգլալեզու քաղաքական խոսույթը միջազգայնացման, իսկ ավելի ճիշտ, համաշխարհայնացման աննախադեպ ընդգրկման է հասել մեր օրերում: Ժամանակակից աշխարհը չափազանց արագ է զարգանում, ամեն ինչ մշտական շարժման, փոփոխության մեջ է գտնվում: Շարժունության գաղափարն առանցքային է, հատկապես երբ խոսքը վերաբերում է մարդկանց: Փոփոխության՝ խնդիրների, ռիսկերի, մարտահրավերների փոփոխության դեմ այլևս հնարավոր չէ պայքարել, աշխարհը փորձում է ապրել այդ փոփոխությունների հետ, ճկուն լինել արագ արձագանքելու դրանց, հնարավորինս կառավարելու դրանք: Հսկայական է նպատակային խոսքային հաղորդակցման դերը համաշխարհային բազմաձև հարաբերություններում: Ժամանակակից աշխարհում այդ խոսքային հաղորդակցման հիմնական ու գլխավոր միջոցն անգլերենն է: Բացառիկ է անգլերեն քաղաքական խոսույթի դերը տարբերությունների միջև շփման եզրեր գտնելու, անհամաձայնությունները հաշտեցնելու, հակամարտությունները կարգավորելու գործում: Անգլերենը դարձել է ժողովուրդների ու պետությունների միջև ամենամատչելի ու ամենագործուն կամուրջը, մարդկանց շարժունության կարևոր նախապայմանը: Այս լայն համատեքստում միանգամայն բնական է, որ կարևորվում, նույնիսկ առանցքային է դառնում անգլալեզու քաղաքական ելույթի դերը համաշխարհային քաղաքական խոսույթում:

Լինելով քաղաքական խոսույթի դասական դրսևորում՝ քաղաքական ելույթն ունի արտալեզվական մեծ բեռնվածություն: Հատկապես կարևորվում է քաղաքական առաջնորդի ելույթի դերը: Խոսքային փոխազդեցության այս ձևն արդյունավետ է ժողովրդի կամ նրա ներկայացուցիչների (խորհրդարան/պառլամենտ, քաղաքական կամ հասարակական կազմակերպություն, քաղաքացիական խումբ), ինչպես նաև համաշխարհային հանրության հետ անմիջական շփման առումով: Ելույթի մի-

ջոցով քաղաքական առաջնորդը հրապարակայնացնում, հանրության սեփականությունն է դարձնում պետության առաջ կանգնած կարևորագույն խնդիրները, որոնց լուծում պետք է տրվի և հատկապես, երբ լուծումն ամենևին միանշանակ չէ: Քաղաքական ելույթի միջոցով հռետորն իր լսարանին, ժողովրդին ներգրավում է խնդրի քննարկման մեջ՝ նրանց ասես մասնակից դարձնելով որոշում կայացնելու գործին և, հետևաբար, դրդելով կիսելու պատասխանատվության բեռը:

Քաղաքական ելույթը պերսուազիայի հզոր ձև է: Փաստական-տեղեկատվական և հուզական-ներգործական բովանդակությանը հավասար նրանում կարևորվում է հռետորը, նրա ինքնությունը, հաճախ նաև խարիզմատիկ կերպարը, ինչը միանգամայն մեծացնում է փաստերի ճշմարտահավատության և հոգեբանական-հուզական ներգործության աստիճանը: Արտալեզվական իրականությունը քաղաքական ելույթի հիմքն ու շարժիչ ուժն է: Խոսքն էլ, արտացոլելով այդ արտալեզվական իրականությունը, իր այս կամ այն լեզվական արտահայտությամբ ներագդում է դրա վրա (ընդ որում՝ տարբեր լեզուներ արտալեզվական իրականության արտացոլման ու կերտման որոշակիորեն տարբեր շրջանակ ու հայեցակերպեր են տրամադրում [Grace 1987, Duranti 2001, Ter-Minasova 2005, Тер-Минасова 2008, Smith 2003, Baghdasaryan 2008]):

Այսպիսով, հաշվի առնելով անգլալեզու քաղաքական խոսույթի կարևորությունը, էական է ուսումնասիրել ու հասկանալ այդ լեզվով քաղաքական ելույթի կառուցման, դրանում հասարակական-քաղաքական իրականության ներկայացման մեխանիզմներն ու առանձնահատկությունները: Սա մի կողմից հնարավորություն կտա ելույթը խորությամբ ու համակողմանիորեն հասկանալու, իսկ մյուս կողմից՝ այն կառուցելու: Ժողովրդավարական զարգացումների պայմաններում խոսքի ազդեցության հնարավորությունները հիրավի դժվար է թերագնահատել, և թե՛ զարգացած ժողովրդավարական, թե՛ առավել ևս դեռ զարգացող ժողովրդավարական ազգերին ու պետություններին անհրաժեշտ է տիրապետել անգլալեզու քաղաքական խոսույթի կերտման ու գործառության առանձնահատկություններին: Յա-

յաստանի Հանրապետությունը՝ որպես զարգացող երիտասարդ ժողովրդավարություն, քաղաքական խոսքի մշակույթի և ավանդույթների զարգացման որոշակի հետաքրքիր ճանապարհ ունի անցնելու: Անգլալեզու քաղաքական ելույթի և առհասարակ խոսույթի զարգացած մշակույթի ու ավանդույթների հետազոտությունը կարող է մեծապես նպաստել հայ քաղաքական խոսույթի անգլալեզու, ինչպես նաև հայալեզու դրսևորմանը:

Քաղաքական խոսույթի ուսումնասիրությունները Հայաստանում թափ են առել անկախությունից ի վեր: Խոսքի ազատության, կյանքի ազատականացման, բազմակուսակցական քաղաքական համակարգի նորաստեղծ պայմաններում քաղաքական խոսույթը թևակոխում է զարգացման որակապես նոր փուլ, և, բնականաբար, ի հայտ է գալիս խոսքային իրացման ձևերի ու միջոցների բազմազանության անհրաժեշտություն: Սա էլ իր հերթին լեզվաբաններին, քաղաքագետներին և հարակից այլ ոլորտների մասնագետներին մղում է քաղաքականության խոսքի հետազոտության: Հատկապես վերջին տասնամյակում քաղաքական խոսույթի ուսումնասիրությունները բավական ակտիվացել են մեր երկրում: Սակայն քաղաքական խոսույթը, մասնավորապես հայ քաղաքական խոսույթը դեռևս հեռու է համակողմանի ուսումնասիրված լինելուց: Տեսական դրույթներն ու մեթոդներն էլ հիմնականում սերում են ռուսական, եվրոպական ու ամերիկյան լեզվաբանական դպրոցներից և խոսույթային վերլուծության սկզբունքներից:

Ուսումնասիրության փաստական նյութը վերցված է բրիտանական, ամերիկյան և հայ քաղաքական առաջնորդների ժամանակակից անգլալեզու քաղաքական ելույթներից՝ մասնավորապես Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության նախկին վարչապետ Թոմի Բլեդրի, Ամերիկայի Միացյալ Նահանգների նախկին նախագահներ Ջորջ Բուշ կրտսերի, Բարաք Օբամայի և Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանի ելույթներից: Միացյալ Թագավորության և Միացյալ Նահանգների քաղաքական առաջնորդների ելույթների ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ ժողո-

վուրդներն են անգլերենի բնիկ կրողները՝ լինի բրիտանական, թե ամերիկյան տարբերակով, և ուրեմն այդ ելույթները համարվում են ժամանակակից անգլալեզու քաղաքական խոսույթի մոդելներ: Կարևորվում է նաև այն հանգամանքը, որ այդ տերություններն ու դրանց ղեկավարներն առանցքային դեր ունեն միջազգային, համաշխարհային զարգացումներում: Հայ քաղաքական առաջնորդների անգլալեզու ելույթները կարևորություն ունեն մեզ համար, քանի որ հայ ազգային ինքնության, շահերի ու նկրտումների դրսևորման ռազմավարական հարթակ են միջազգային ասպարեզում: Հայ քաղաքական անգլալեզու խոսույթի նմուշների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ըմբռնելու հայ քաղաքական խոսքի մասնակցությունը միջազգային անգլալեզու քաղաքական խոսույթում հաղորդման և ներազդման գործառույթների հարաբերակցության տեսանկյունից:

Մեր աշխատանքի նպատակն է որոշարկել և պարզաբանել քաղաքական ելույթի՝ որպես լեզվական և արտալեզվական իրողությունների յուրօրինակ փոխներթափանցման առանձնահատկություններն ու դերը: Փորձ է արվում ցույց տալու լեզվական նպատակային արտահայտության միջոցով որոշակի գաղափարների ու հասկացությունների՝ արժեքների, պատկերացումների, համոզմունքների, ինչպես նաև գործողությունների, վարքային ու կենսակերպային մոդելների փոխանցումը: Քաղաքական ելույթը, որ քաղաքական խոսույթի համապարփակ դրսևորում է, դիտարկվում է որպես գործաբանական նպատակային՝ գործառական-ճանաչողական հաղորդակցում: Ուսումնասիրությունը նաև միտված է նպաստելու քաղաքական խոսքի նկատմամբ գիտակցության բարձրացմանը լեզվաբանական-խոսքաբանական ու քաղաքագիտական-հասարակագիտական հետազոտություններով զբաղվող մասնագետների, քաղաքական գործիչների ու դիվանագետների, լրագրողների ու հանրային կապերի ոլորտի մասնագետների ու, առհասարակ, խոսքի քաղաքական գործառությամբ հետաքրքրվող անձանց մոտ և քաղաքական խոսքային հաղորդակցման զարգացմանը մեր հանրապետությունում:

Ուսումնասիրությունն ունի գործառական-գործաբանական, ինչպես նաև ճանաչողական ուղղվածություն: Որպես ուսումնասիրության լեզվաբանական ելակետ աշխատանքում ընդունվում է գործառական ոճագիտությունը, որն անմիջականորեն զբաղվում է մարդկային կենսագործունեության տարբեր ոլորտներում հաղորդակցման լեզվական միջոցների ընտրության ու համակցման առանձնահատկությունների հետազոտությամբ: Կիրառվում է նաև գործաբանության, խոսույթի վերլուծության, խոսույթի քննադատական վերլուծության, նյարդալեզվաբանական ծրագրավորման տեսական-մեթոդական բազան: Քաղաքական ելույթի սույն ուսումնասիրությունը հենվում է նաև Արիստոտելի «Յետորիկայի» որոշ հասկացությունների վրա, ինչն իրապես կարևոր է քաղաքական ելույթի թեմատիկ-բովանդակային կառուցվածքի ստեղծման մեխանիզմները հասկանալու համար: Աշխատանքում տեղ են գտել նաև հանրային հոգեբանության ու փաստարկման տեսության՝ սույն հետազոտությանը հարաբերակից որոշ դրույթներ: Տարբեր մոտեցումների ու հայեցակերպերի զուգահորումը միանգամայն անհրաժեշտ է ժամանակակից քաղաքական խոսույթի հնարավորինս համակողմանի ուսումնասիրության համար, որի հիմքում ընկած են ըմբռնումը, մեկնաբանումը և գնահատողականությունը:

Քաղաքական ելույթի գործառական քննությունը թույլ է տալիս բացահայտել քաղաքական ելույթի էությունը որպես լեզվական և արտալեզվական իրողությունների փոխներթափանցում: Քաղաքական ելույթի այսպիսի ընկալումն ու մեկնաբանությունն են դրվում որպես մեր ուսումնասիրության հենքային դրույթ: Լեզվական իրողությունների քննությունն իրականացվում է արտալեզվական իրողությունների հետ անընդհատ և սերտ կապի մեջ: Վերլուծությունը տարվում է արտալեզվական իրականության երևույթների հնարավորինս խորքային մեկնությամբ լեզվաբանական գիտական իրավասության շրջանակում: Քաղաքական խոսույթը՝ մասնավորապես քաղաքական ելույթը, ուսումնասիրվում է ոչ թե լեզվական մեկ հայեցակերպի տեսանկյունից, այլ բառային, քերականական, ոճական, տեքստային յուրահատկությունների համալիր քննությամբ, որն էլ թույլ է

տալիս բացահայտել առաջին հայացքից զուտ քերականական (խոսքամասային, ձևաբանական), բառային (իրականության երևույթների անվանում, վերաբերություն) հարաբերություններ արտահայտող տարբեր լեզվական միջոցներ, որոնք քաղաքական ելույթում ձեռք են բերում մեծ արտալեզվական բեռնվածություն և արտահայտում ամբողջական հասկացություններ, մտածողության կարգեր և վարքի ձևեր:

Նաև փորձ է արվում մեկ ամբողջական ելույթի շրջանակում քննության առնելու, մի կողմից, տարբեր լեզվախոսքային միջոցները, հաճախ նաև դրանց փոխներթափանցումը, բազմաձև դրսևորումների փոխադարձ կապն ու արձագանքը տվյալ լեզվական համատեքստում, մյուս կողմից՝ քաղաքական ելույթը դիտարկելու իբրև այդ միջոցների համակողմանի իրացում-ամբողջություն կոնկրետ արտալեզվական համատեքստում (Գլուխ 2.3):

Այսպիսով, տվյալ ուսումնասիրությունը կարող է իր նպաստը բերել քաղաքական խոսույթի գործառության մեկնաբանությանը, մասնավորապես քաղաքական խոսույթի վերլուծության հայալեզու տեսության զարգացմանը, ինչպես նաև գործառական-ճանաչողական խոսքային հաղորդակցման հետազոտություններին առիաստարակ: Այն նաև կարող է նպաստավոր լինել գործառական ոճագիտության ավանդույթների զարգացմանը խոսքային հաղորդակցման տեսանկյունից և համալրել գործառական ոճերի, դրանց ոճաժանրային տեսակների առանձնահատկությունների նկարագրությունը: Շեշտելով լեզվական և արտալեզվական իրողությունների սերտ կապը՝ այս հետազոտությունն ընդգծում է դրանց միասնական քննության անհրաժեշտությունը լեզվաբանական գիտությունների կողմից, ինչը կարևորվում է ոչ միայն լեզվաբանական հետաքրքրության դիտանկյունից: Նման քննությունը, ըստ էության, կարևոր ելակետներից է նաև հասարակագիտական՝ մասնավորապես քաղաքագիտական ուսումնասիրությունների համար:

Սույն աշխատանքը կարող է հետաքրքրություն ներկայացնել գործառական-գործաբանական ուսումնասիրություններում: Այն կարող է օգտակար լինել անգլերենի, ինչպես նաև խոսքի

մշակույթի դասավանդման ոլորտում ներգրավված մասնագետների և ուսանողների համար: Այս ուսումնասիրության արդյունքները կարող են ընդգրկվել գործառական ոճագիտության, խոսույթի/տեքստի մեկնաբանության դասընթացներում, ինչպես նաև լեզվաբանների, քաղաքագետների ու դիվանագետների համար անգլերենի հատուկ դասընթացի ձևավորման հիմք դառնալ:

## ԳԼՈՒԽ 1

### **ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹ. ՀԵՆՔԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Քաղաքական գիտակցությունը ձևավորվել է դեռևս անտիկ ժամանակներում: «Մուսայական արվեստների հնարների փոփոխություն չի լինում առանց փոփոխությունների ամենակարևոր պետական կանոնակարգերում» [[http://yanko.lib.ru/books/lit/dushenko-aphorizm.htm#\\_Toc44520506](http://yanko.lib.ru/books/lit/dushenko-aphorizm.htm#_Toc44520506)],- ասել է Պլատոնը, Արիստոտելն էլ ավելացրել. «Մարդը քաղաքական կենդանի է» [[http://yanko.lib.ru/books/lit/dushenko-aphorizm.htm#\\_Toc44520506](http://yanko.lib.ru/books/lit/dushenko-aphorizm.htm#_Toc44520506)]:

Վերջին տասնամյակներին աշխարհում ժողովրդավարության, առևտրայնացման, ազատ շուկայական հարաբերությունների տարածման պայմաններում գրանցվում են տեղեկատվության աննախադեպ ծավալներ, բազմազանություն և տարածման արագություն: Քննադատելու պոտենցիալ կարողությունը մարդկային ուղեղին հնարավորություն է տալիս լեզվում ու լեզվի միջոցով ընկալելու տեղեկատվություն կոչվող այդ բարդ ու բազմաշերտ սուբստանցի էությունը և վերարտադրելու այն՝ մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է քաղաքականությանը: Հատկապես կարևորվում է քննադատական մոտեցման և ճիշտ կողմնորոշման դերը հնարավոր ամեն ճանապարհով «հոսող» ու մարդու ուղեղը «հեղեղող» տեղեկատվության մեր դարաշրջանում:

Քաղաքականությունը թափանցել է մարդկային փոխազդեցության ավելի ու ավելի շատ ոլորտներ, իսկ քաղաքական հաղորդակցումը՝ դարձել մարդկային համայնքում ընթացող զարգացումների արտացոլման ու դրանց արձագանքման առավել արագ միջոց: Իրադարձություններն ու փոփոխությունները վրա են հասնում մեկը մյուսի հետևից՝ բավական քիչ ժամանակ թողնելով մարտահրավերներն ընդունելու և դրանց պատշաճ արձագանքելու համար: Քաղաքական անցուդարձը, որ հասարակական կյանքի թերևս բոլոր ոլորտների տարբեր զարգացումների շարժիչ ուժն է, իր բազմաձև դրսևորումներով կարիք ունի



համապատասխան լեզվական արտահայտության: Վերջինս հնարավոր է դառնում մշակված խոսքային գործունեության՝ մասնավորապես քաղաքական խոսքի միջոցով: Քաղաքականությունը, ինչպես և հասարակական գործունեության ցանկացած ոլորտ, ունի իր էությանն ու նպատակին հատուկ լեզվական դրսևորում: Քաղաքականության լեզուն աչքի է ընկնում խորությամբ ու մեծ բազմազանությամբ: Քաղաքականության մասին պատմող ու քաղաքականություն իրականացնող խոսքն իր ստեղծման գործընթացով հանդերձ կոչվում է *ֆաղաֆական խոսույթ (դիսկուրս)* և ուսումնասիրվում որպես հրապարակային խոսքի ռճաժանրային տարատեսակ: Քաղաքական խոսույթի էությունն ու սահմաններն առավել համապարփակ հասկանալու համար անհրաժեշտ է որոշարկել, թե ինչ է խոսույթը:

*Խոսույթը* լեզվաբանության, խոսքաբանության, հռետորիկայի, խոսույթի քննադատական վերլուծության, գործաբանության, հասարակագիտության, քաղաքագիտության և մի շարք այլ գիտությունների առավել խրթին տերմին - հասկացություններից է: Ներկայումս կատարվում են մեծ թվով ուսումնասիրություններ այն որոշարկելու, սահմանելու և մեկնաբանելու ուղղությամբ: Երևույթը լուսաբանվում է տարբեր հայեցակետերից, իսկ տեսակետները, բնականաբար, բավական բազմազան են: Գիտական իմացության ոլորտում շրջանառվում են խոսույթի նեղ և լայն ըմբռնումներ: Նեղ իմաստով այն մարդկային փոխազդեցության որոշակի բնագավառի խոսքային գործունեության արդյունքն է՝ ինքնին «արտադրված» խոսքը: Լայն իմաստով այս հասկացությունն ավելի է բարդանում. խոսքից՝ արդյունքից բացի այն ընդգրկում է նաև այդ խոսքաստեղծման ողջ գործունեությունը՝ այսպես կոչված վերխոսքային կամ շուրջխոսքային տարածքի ներառմամբ: Խոսույթի այս երկրորդ ընկալումն առավել մեծ տարածում է գտնում հետազոտական շրջանակներում՝ հատկապես խոսույթի քննադատական վերլուծության ոլորտում<sup>1</sup>: Խոսույթը դիտարկվում է որպես հաղորդակցական ամբողջություն, որում հենքային են իրադրային և հասկացութային համատեքստը ձևավորող այնպիսի գործոններ, ինչպիսիք են հաղորդակցման վայրը, ժամանակը, առիթը, մաս-

նակիցները, հասցեատեր-լսարանը, նպատակը, առաջադրանքը մի կողմից, և ազգային, պատմական, հասարակական-քաղաքական, կենսակերպային մտածողության ու վարքագծի հասկացություններն ու մոդելները մյուս կողմից: Որոշ հետազոտողներ խոսույթն ընկալում են որպես հանրային պրակտիկայի ձև՝ շեշտելով խոսույթային իրադարձության և համապատասխան իրադրության, ինստիտուտի, հանրային կառուցվածքի դիալեկտիկական հարաբերությունը [Wodak 2004, Fairclough, Graham, Lemke, Wodak 2004, Fairclough 2005<sub>2</sub>]: Ընդ որում՝ խոսույթն իր մեջ կարող է ներառել ոչ միայն խոսք/տեքստ, այլ նաև ուրիշ նշանային համակարգերի տարրեր՝ օրինակ, պատկերներ, կառույցներ, հնչյուններ, շարժումներ [Fairclough, Graham, Lemke, Wodak 2004, Fairclough 2005<sub>2</sub>]: Ոմանք էլ ընդգծում են խոսույթի հասարակական-ճանաչողական հայեցակերպը՝ քննադատորեն արժևորելով խոսույթի, ճանաչողության ու հասարակության կապը և մեկնաբանելով, թե ինչպես են խոսույթի կառույցները հիշողության մեխանիզմների միջոցով ազդում մտային պատկերումների վրա. հետևաբար ճանաչողության միջոցով խոսույթը կապվում է հանրային կառուցվածքի հետ: Այսպիսով, խոսույթը նկարագրվում է որպես իմացության ու հանրային պրակտիկայի հիշողության ձև [van Dijk 1998, 2002]: Ինչևէ, կարծիքները համընկնում են այն հարցում, որ խոսույթը ոչ միայն ձևավորվում է վերը նշված տարբեր գործոնների ազդեցության ներքո, այլ նաև արտացոլում, հաստատում, վերարտադրում, ձևավորում է այդ գործոնները, մի խոսքով՝ մեզ շրջապատող իրականությունը, ավելի ճիշտ՝ իրականության մեր ընկալումը: Տեսակետները քիչ թե շատ ի մի բերելով՝ կարելի է խոսույթը ներկայացնել որպես հանրային փոխազդեցության՝ լեզվական ձև ստացած իրացում՝ լեզվական գործունեության կառուցվածքային և գործընթացային հատկանիշների ամբողջությամբ [Горбунова 2008]: Խոսույթը լեզվական և արտալեզվական գործոնների համալիր գործաբանական բարդ փոխներթափանցում է, որի բաղադրիչները, մի կողմից, լեզվական կառույցի կոնկրետ խոսքային իրացում ստացած տարրերն են, մյուս կողմից՝ դրա մասնակիցների նկարագիրը, հաղորդակցման նկատմամբ նրանց վերաբերմունքը,

հաղորդակցման նպատակը և այլն: Մի խոսքով՝ խոսույթը հանրային գործողության ձև է [հմմտ. Foucault [http://www9.georgetown.edu/faculty/irvinem/theory/Foucault-Discourse\\_on\\_Language-Summary-excerpts.html](http://www9.georgetown.edu/faculty/irvinem/theory/Foucault-Discourse_on_Language-Summary-excerpts.html)], որում արտացոլվում են հանրային կառուցվածքի, ինստիտուտների, ինքնությունների առանձնահատկություններն ու փոխհարաբերությունները, և որի արդյունքում կապակցված հաջորդական խոսքի միջոցով իրականացվում է նպատակային տեղեկատվական «նյութափոխանակություն»: Խոսույթի կառույցների և մտային կառույցների փոխհարաբերությամբ խոսույթը կապվում է հասարակությանը ճանաչողության միջոցով:

*Քաղաքական խոսույթը* հրապարակախոսական արձակի տարատեսակ է և առանձնանում է իր գործառույթային հատկանիշների համալիր դրսևորմամբ: Հրապարակախոսական ոճի և հետևաբար քաղաքական խոսույթի հիմնարար գործառույթներն են տեղեկատվության հաղորդումը և հուզական ներգործումը, որոնք գոյաբանորեն ներհատուկ են խոսքի նշված գործառական տարատեսակին: Քաղաքական խոսույթը հաճախ նկարագրվում է որպես հաղորդակցում, որի հիմնական շարժառիթն ու նպատակն իշխանության համար պայքարն է և որի հիմքում ընկած են մրցակցության ու գործողության գաղափարները [Михалева <http://www.rus-lang.com/about/group/mikhaleva/state2>, Шейгал, Дешевова 2009]: Քաղաքական խոսույթը սահմանվում է տարբեր հայեցակետերից՝ խոսույթ քաղաքական ոլորտում, խոսքային գոյացություն, որի բովանդակությունը, կերտողը կամ լսարանը լայն առունով առնչվում են քաղաքականության ոլորտին, քաղաքական գործիչներին: Քաղաքական խոսույթը նաև քաղաքական հաստատություններում կիրառվող ինստիտուցիոնալ խոսքն է: Հետաքրքիր է քաղաքական խոսույթի՝ որպես նշանային համակարգի հայեցակարգը: Քաղաքական խոսույթը ներկայանում է որպես մի համակարգ, որում տեղի է ունենում տարբեր տիպի լեզվական միավորների ու ստանդարտ խոսքային գործողությունների իմաստի ու գործառույթների փոփոխություն [Шейгал <http://www.twirpx.com/file/5675-6/?rand=7898778>, [http://www.gumer.info/bibliotek\\_Buks/Polit/Arti](http://www.gumer.info/bibliotek_Buks/Polit/Arti)

cle/scheig\_vlast.php]: Քաղաքական խոսույթն ընկալվում է որպես խոսք/տեքստ քաղաքական հաղորդակցման կոնկրետ իրադրության մեջ: Այն նաև ընդգրկում է քաղաքական հաղորդակցման ոլորտը սպասարկող խոսքային ու ոչ խոսքային միջոցների պոտենցիալը, քաղաքական հաղորդակցման լայն համատեքստը, ոլորտին հատուկ խոսքային գործողությունների մոդելները և ժանրային տարբերակումը: Քաղաքական խոսույթին բնորոշ են միջտեքստային և միջխոսույթային հարաբերություններ, որոնք ստեղծում են յուրահատուկ փոխներթափանցված խոսույթային ցանցի ամբողջություն<sup>2</sup>:

Քաղաքական խոսույթը իրականության կամ դրա որոշակի պատկերացման միայն վերարտադրություն չէ: Հաճախ քաղաքական խոսքն ինքնին գործողություն է, օրինակ՝ քաղաքական կամքի դրսևորում բազմաձև բանակցային գործընթացներում, ճգնաժամային իրավիճակներում, պետական սկզբունքային և քաղաքացու հանապազօրյա խնդիրների լուծման հարցերում: Հետևաբար, քաղաքական խոսույթը դրսևորվում է նաև որպես գործողություն, ընդ որում՝ խոսույթի նշանակության մեջ ներառվում է նաև ողջ խոսույթային իրադարձության արդյունքը:

Քաղաքական խոսույթից անբախտելի են տրամաբանական փաստարկումը և հուզական ներգործումը, որոնց միջոցով իրականացվում է քաղաքական պերսուազիան (համոզում): Այս երկու էական գործառույթները բուն քաղաքական գործունեության համատեքստում հաճախ փոխկապակցված, նույնիսկ փոխներթափանցված են դրսևորվում՝ ծառայելով քաղաքական խոսույթի հիմնարար նպատակին՝ քաղաքական հասցեագրողի համար ցանկալի որոշակի իրականության պատկերի կերտմանը:

Ներկայումս քաղաքականության ոլորտի, այդ թվում և քաղաքական խոսքի հետևողական ուսումնասիրությունները գիտակարգային ու միջգիտակարգային լայն ընդգրկման են հասել<sup>3</sup>: Քաղաքական խոսույթի ժամանակակից հետազոտություններն իրականացվում են տարբեր հայեցակերպերից՝ լեզվաբանության՝ մասնավորապես գործառական ոճագիտության, ճանաչողական լեզվաբանության, գործաբանության և խոսույթի վերլուծության, տրամաբանության՝ մասնավորապես փաստարկման տեսության, հանրալեզվաբանության, հանրային հո-

գերանության, հաղորդակցման տեսության, նյարդալեզվաբանական ծրագրավորման, խոսույթի քննադատական վերլուծության և այլն: Վերջին տարիներին շրջանառվում են նաև *ֆաղափական լեզվաբանություն* [Голованъ <http://www.pan-i.ru/librpani/Работы/Феномен-дискурса-3А-от-прикладной-лингвистики-к-политике-и-культуре/details.html>] և *ֆաղափական խոսույթի վերլուծություն* [Хмельцов 2004] հասկացությունները, ինչը վկայում է այն մասին, որ ժամանակակից աշխարհում քաղաքականության լեզուն կամ քաղաքական լեզուն կարևորագույն դեր ունի, և այդ դերը լիովին գիտակցվում է: Այս երկու հանգամանքները, առավել խթանելով քաղաքականության լեզվի ուսումնասիրությունները, նպաստել են ուսումնասիրության նաև տեսական-մեթոդական բազայի ու հասկացական ապարատի զարգացմանը:

*Քաղափական ելույթը* որպես քաղաքական խոսույթի առանցքային դրսևորում հատկապես ուշագրավ դեր ունի ժողովրդավարական հասարակությունների զարգացումներում: Քաղաքական առաջնորդը, անմիջականորեն խոսելով իր ժողովրդի հետ, կարող է առավել քան երբևէ ազդեցիկ լինել: Այս երևույթը ձևավորվել է դեռևս անտիկ աշխարհում, երբ ճառեր էին ասվում հանրային ժողովներին և այդ կերպ որոշումներ ընդունվում: Քաղաքական ելույթը հռետորական արվեստի դասական օրինակ է և ուսումնասիրվում է նաև դրա սահմաններում:

Պերսուազիվ (համոզողական) հաղորդակցումը վճռորոշ է տեղեկատվության մեր դարաշրջանում: Քաղաքական խոսույթն ինքնին և դրա բազմազան վերլուծությունները՝ սկսած դեռևս անտիկ ժամանակներից (օրինակ՝ Արիստոտելի «Հռետորիկան»), ստիպում են, որ մարդն ավելի լավ գիտակցի լեզվի գորությունն ու իշխանությունը: Քաղաքական ելույթի ժանրը մարդկանց խմբերի և զանգվածների հետ հաղորդակցման յուրօրինակ ինտերակտիվ ձև է: Քաղաքական ելույթը մենախոսություն չէ, որ արտասանվի ու վերջանա: Այն անհրաժեշտաբար երկխոսություն է, որի հենքում արդեն իսկ ծրագրավորված են խոսակցի՝ հռետորի համար ցանկալի կամ սպասելի պատասխանն ու արձագանքը:

Քաղաքական խոսքն արտալեզվական իրողությունների ուղղակի արտահայտությունն է: Այն իրականությունն արտացոլում է որոշակի նպատակի (մտադրության, նպատակադրության) տեսանկյունից: Հետևաբար, արտացոլումը կարող է տարբեր լինել և բնականաբար ուղիղ համեմատական չլինել մեզ շրջապատող օբյեկտիվ իրականությանը: Օբյեկտիվի ու սուբյեկտիվի սահմանը հաճախ դժվար է որոշարկել քաղաքական խոսույթում. դրանք հիմնականում համակցված են ներկայացվում: Ըստ Արիստոտելի՝ ճշմարտության էական հատկանիշը մարդկային դատողության և իրերի կամ իրադարձությունների միջև համապատասխանությունն է [Aristotle <http://www.public.iastate.edu/~honeyl/Rhetoric/index.html>, Аристотель <http://www.koob.ru/aristotel/ritorika/>]: Սակայն հասարակական փոխազդեցության ոլորտում ճշմարտությունը թերևս ամենաբարդ ու հարաբերական հասկացություններից է: Հանրային հավանարտության, բանավեճի, քննարկման մեջ ճշմարտությունը ոչ թե պարզապես նպատակ է, այլ չափանիշ, որով իշխանությունը սահմանվում, պահանջվում, հաստատվում և վերահաստատվում է: Ներկայացվող իրականության ճշմարտության և լեզվական արտահայտության հարաբերությունը պայմանավորված, միջնորդավորված է քաղաքական հասցեագրողի նպատակադրությամբ, գաղափարախոսությամբ: Պետք է տարբերակել նաև տրամաբանորեն ճիշտ/սխալ և փաստականորեն ճիշտ/սխալ հասկացությունները, քանի որ տրամաբանորեն ճիշտը միշտ չէ, որ իրականության մեջ գոյություն ունի որպես փաստ, և հնուտ հռետորը կարող է տրամաբանորեն ճիշտ ներկայացնել փաստականորեն սխալը, իսկ իրական փաստը միշտ չէ, որ տրամաբանական է: Ճշմարտության հարաբերականությունը պայմանավորված է աշխարհի մասին շրջանառվող տեղեկությունների տարաբնույթ աղբյուրների առկայությամբ, ինչպես նաև, մի կողմից, տարբեր ելակետային դրույթներով, մյուս կողմից՝ տարբեր գերակա գործոններով ու նպատակներով. իրերի վիճակը տարբեր կերպ է դիտարկվում և գնահատվում տարբեր համակարգերի հետ հարաբերակցության տեսանկյունից: Մտադրություններն ու ճշմարտությունները լինում են հան-

րային կամ կոլեկտիվ և մասնավոր: Քաղաքական գործունեության ոլորտում առանձնակի կարևորություն ունեն հանրային ճշմարտությունները: Խոսքային ակտի գործաբանական ուժի անորոշությունը, նույնիսկ երկիմաստությունը նույնպես ամենօրյա շահարկման գործիք են քաղաքական դաշտում խաղացողների համար: Ցանկացած խոսքային ակտ և դրա մեկնաբանումն ու ըմբռնումը մասամբ կառուցվում են լսարանի արձագանքի միջոցով: Ցանկացած ասույթ ունի պոտենցիալ և իրական բազմաթիվ նպատակներ. խոսքի ընձեռած վերամեկնաբանման և վերահամատեքստայնացման հնարավորությունները հատկապես կարևորվում են քաղաքական խոսույթի, մասնավորապես քաղաքական ելույթի համատեքստում: Քաղաքական խոսքային գործողության նպատակադրության վերագրումը և ճշմարտության արժեքի գնահատումն ինքնին գործընթացներ են, որոնք պետք է ըմբռնել ըստ իրենց հանրային, ինչպես նաև ճանաչողական հատկանիշների [Duranti 1993]:

Գաղափարախոսությունն առանձնահատուկ, հենքային և միևնույն ժամանակ ոչ միանշանակ դեր ունի մարդկային հասարակության գործունեության ամենաբազմազան բնագավառներում: Այն մեծամասամբ մշակվում է գիտակցական-նպատակադիր քաղաքական գործունեության ընթացքում: Գաղափարախոսությունը սոցիալական այս կամ այն խավի կողմից իրականության ընդգծված շահեկան արտացոլում, իմաստավորում, արժևորում և ճանաչողություն է [Յակոբյան 2005]: Այս կամ այն խմբի համար ընդհանուր հանրային պատկերացումները (գիտելիք, վերաբերմունք) հաճախ կազմվում են որոշակի գաղափարախոսությունների հիման վրա [van Dijk 2002]: Գոյություն ունեն գաղափարախոսության դրական ու բացասական հասկացություններ: Ըստ առաջինի՝ գաղափարախոսությունն աղավաղված միտք է, իրականության մասին թյուր տեսություն կամ պատկերացում, ըստ երկրորդի՝ հանրային գիտակցության կառուցում, հետևաբար մտածողության ու գործողության դիալեկտիկորեն անքակտելի մաս: Գաղափարախոսությունը կարող է իրական ուժ դառնալ, երբ ներկայացվում է իբրև հասարակության մեծամասնության կամ ազգային ողջամիտ, հիմնարար,

նորմատիվ հայացքների համակարգ և դառնում խոր համոզմունք [Յակոբյան 2005]: Ինչպես գիտենք, գաղափարախոսական քարոզչության<sup>4</sup> ամենահզոր ձևերից է պետական քարոզչությունը, որի նպատակը (նաև ներակա կերպով) աշխարհայացքի վրա ներգործելն է: Գաղափարախոսությունը կարող է վտանգավոր լինել, եթե շահագործվի որոշակի սոցիալական (հիմնականում իշխող) խավի կողմից ի նպաստ իրենց շահերի ու պահանջունքների և ընդդեմ մյուս (հիմնականում իշխվող) խավերի շահերի ու պահանջունքների: Այսպիսով՝ իրականության նկատմամբ ընտրովի վերաբերմունքի շնորհիվ քարոզվող գաղափարախոսությունը կարող է բացարձակացվել և տարածվել ողջ համակարգի վրա [Յակոբյան 2005]:

Այստեղ տեղին է խոսել մանիպուլացման, ավելի կոնկրետ՝ ճանաչողական մանիպուլացման մասին, որը որպես մտքի վերահսկում ներառում է հասկացական գործընթացներին միջամտություն, կողմնակալ մտային մոդելների ու հանրային պատկերացումների՝ գիտելիքների ու գաղափարախոսությունների ձևավորում: Մանիպուլացման հանրային հայեցակերպը որոշարկվում է որպես սոցիալական անհավասարությունը հաստատող անօրինական գերակայություն: Ըստ խոսույթային հայեցակերպի՝ մանիպուլացումը հիմնականում ներառում է գաղափարախոսական խոսույթի սովորական ձևերն ու ձևաչափերը, ինչպիսիք են *մեր* «լավի», իսկ *նրանց* «վատի» շեշտումը: Այսպիսով, մանիպուլացումը դիտվում է որպես հասարակական իշխանության շահագործման, մտքի ճանաչողական վերահսկման և խոսույթային փոխազդեցության ձև [van Dijk 2006:]: Մանիպուլացումը հոգեբանական ներգործության տեսակ է, որի օգնությամբ լսարանի մեջ ներակայորեն սերմանվում են մանիպուլացնողի համար ձեռնտու գաղափարներ ու ցանկություններ, որոնք չեն հանրնկնում այդ պահին մանիպուլացվող լսարանի ունեցածի հետ, ինչպես նաև ներակայորեն խթանվում է մանիպուլացնողի որոշարկած գործողությունների իրականացում այդ լսարանի կողմից: Խոսքային մանիպուլացման միջոցով փորձ է արվում լսարանին հակված դարձնել տվյալ խոսքային հաղորդագրությունն ընդունելու առանց բոլոր փաստարկները հաշվի առնելու



[Чернявская 2006]: Սա էլ հնարավորություն է տալիս ամբոխավարության, երբ իրավիճակի խորքային, բազմակողմանի վերլուծությունը փոխարինվում է ակնհայտ, սակայն մակերեսային պատճառների դիտարկմամբ [Баранов 2005]:

Քաղաքականության խոսքի առնչությամբ հատկապես կարևորվում է այսպես ասած օրինական կամ ընդունելի համոզումը՝ պերսուազիան [van Dijk 2006<sup>1</sup>]: Այն քաղաքական հռետորիկայի հիմքն ու առանցքն է, դրա շուրջ է կառուցվում ողջ քաղաքական խոսույթը: Պերսուազիան բանավոր կամ գրավոր հաղորդագրություն հղած քաղաքական գործչի/հռետորի ազդեցությունն է հասցեատեր-լսարանի վրա, ինչի նպատակն է համոզել վերջինիս որևէ բանում կամ որևէ բան անելու/չանելու [Чернявская 2006]: Այսպիսով, պերսուազիայի արդյունքի համար վճռական է լսարանի արձագանքը, և, հետևաբար, բացարձակապես անհրաժեշտ է ապահովել լսարանի ներգրավվածությունը պերսուազիվ հաղորդակցման գործընթացում: Պերսուազիվ հաղորդակցումը մեծապես գիտակցական, խիստ նպատակային (առավելապես) խոսքային գործունեություն է, որի հաջողության համար հաճախ պահանջվում են մեծ ինտելեկտուալ ջանքեր և բարձր տեղեկացվածություն (հիարկե, կախված հասցեատեր-լսարանի պատրաստվածության աստիճանից ու տրամադրվածությունից):

Պերսուազիվ հաղորդակցման իրականացման համար անհրաժեշտ է տիրապետել դրա ռազմավարություններին ու հնարներին: Հաղորդակցական ռազմավարությունը տեղեկատվություն ուղարկելու որոշակի հաղորդակցական մտադրության առավել արդյունավետ իրականացման պլան է, որը կարգավորում է հաղորդագրության բովանդակային կողմը, հաղորդակցման արդյունքը՝ հասցեատիրոջ արձագանքը, որին միտված է խոսքն ամբողջությամբ, ինչպես նաև լեզվական միջոցների ընտրությունն ու համակցումը, որոնք միտված են տվյալ հաղորդակցական իրադրության հաջողության ապահովմանը [հմմտ. Чернявская 2006, Гончарова 2000]: Գոյություն ունի նաև խոսքային ռազմավարություն հասկացությունը, որ ենթադրում է տեղեկատվության կառուցման կոնկրետ խոսքային հայեցակերպ:

Քանի որ հաղորդակցական, ճանաչողական գործունեությունն անքակտելիորեն միակցված է խոսքային դրսևորման հետ, առավել նպատակահարմար է կիրառել խոսքային-հաղորդակցական ռազմավարություն տերմինը և դրանով արտահայտվող հասկացությունը: Այս ռազմավարությունն իր հերթին դրսևորվում է խոսքային-հաղորդակցական հնարների կամ, այլ կերպ ասած, խոսքային մարտավարության, տեխնիկայի միջոցով [Чернявская 2006:45-46, Зигманн 2003]:

Պերսուազիայի կարևորագույն առանձնահատկություններից է ներակա իմաստի առկայությունը: Առհասարակ ողջ քաղաքական հաղորդակցման համար բնութագրական և նույնիսկ էական է ներակա իմաստը, որը մեծ գործաբանական ընդգրկման է հասնում քաղաքական խոսույթի բազմաբարդ ցանցում: Ներակա իմաստի կիրառման ռազմավարությունը քաղաքականության մեջ մեծապես շահեկան է. բացահայտ պնդումներ չկան, բնականաբար, քիչ է նաև ընդդիմանալու և վիճարկելու հավանականությունը:

Իմաստների, ինչպես նաև ճշմարտությունների ստեղծումն ու վերարտադրությունը տեղի են ունենում հենց խոսույթային գործընթացում [Hodges 2008]: Խոսույթային գործունեության արդյունքում են ձևավորվում նաև գաղափարախոսությունները. այսպիսով խոսույթը դիտարկվում է որպես գործընթաց, գաղափարախոսությունը՝ արդյունք [Purvis, Hunt 1993, տե՛ս նաև van Dijk 2006<sub>2</sub>, 1981]: Իմաստները, ճշմարտությունները, գաղափարախոսությունները գտնվում են անընդհատ շարժման և զարգացման մեջ, որոնց «կենսագործունեությանը» կարելի է հետևել հասարակական-քաղաքական խոսույթում: Խոսույթների ամբողջությունը կազմում է ազգային, ավելի լայն ընդգրկմամբ՝ միջազգային խոսույթը կամ երկխոսությունը (լայն իմաստով), որում տարբեր հասկացություններ կայացվում են, վերարտադրվում, մեկնաբանվում, վերամեկնաբանվում, ինչպես նաև այլափոխվում քաղաքական խաղացողների կողմից՝ տարբեր նպատակադրություններից ու իրադրային համատեքստերից ելնելով [Hodges 2008]: Նույնիսկ այսպես ասած առաջնային խոսույթը մեկնաբանություն է՝ իրականության անհատական կամ

կոլեկտիվ մեկնաբանություն, խոսույթի մեկնաբանությունն էլ բնականաբար՝ մեկնաբանության մեկնաբանություն:

Նպատակադրության գաղափարը և դրա կոնկրետ իրացումները միանգամայն էական են քաղաքական խոսույթում: Նպատակադրությունն առկա է ողջ խոսույթում՝ սկզբից մինչև վերջ: Ավելին, այն ծնվում է խոսույթից կամ վերջինս իրացնող ասույթներից առաջ և դեռ գործում է դրանց առկայացումից հետո: Նպատակադրության հասկացությունը տարբեր կերպ է անվանվում տարբեր հետազոտողների կողմից՝ նշանակություն (meaning, ավելի կոնկրետ՝ meaning<sub>NN (nonnatural)</sub> Փ. Գրայսի մոտ) [Grice 1957, Searle 1991, Verschueren 1999], մտադրություն (intention) [Grice 1957], իմպլիկատուրա (ի նկատի ունենալը կամ նշանակելը) – իմպլիկատ (ի նկատի ունեցածը կամ նշանակածը) (implicature – implicatum) [Grice 1975, Грайс 1985], ասույթի ուժ (force of an utterance) [Остин 1986, Searle 1991, Leech 1983], հաղորդակցական մտադրություն/նպատակ (communicative intention) [Levinson 1983], նպատակ (goal) [Leech 1983], (purpose) [Brown, Yule 2003], և տարբեր հայեցակերպերից էլ մեկնաբանվում՝ կախված տվյալ հեղինակի հետազոտական հետաքրքրություններից: Սակայն մի բան ընդհանուր է նրանց համար՝ նպատակը/նպատակադրությունը հենքային է դիտվում լեզվի նկատմամբ գործառական մոտեցման (խոսքային հաղորդակցման) տեսանկյունից, և այն ավելին է, քան լեզվի տրամադրած տարբեր բառաքերականական միավորների իմաստը, քանի որ իր մեջ ներառում է իմաստային մեկ այլ էական բաղադրիչ ևս՝ հասցեագրողի կողմից ներդրված կամ առաջ քաշված նշանակությունը, մտադրությունը, միտումը: Նպատակադրության իրացման կենսական պայմանը դրա ընկալումն է հասցեատիրոջ կողմից, այսինքն՝ հաղորդակցման մեջ ներգրավված կողմերի համագործակցությունը, ինչն էլ հաջողված խոսքային ակտի և առհասարակ հաղորդակցման դրական ելքի կայացման հնարավորություն է տալիս: Հարկ է նաև նշել, որ նպատակադրությունը հաղորդակցական կարգ է և հետևաբար գործում է որոշակի լեզվական և արտալեզվական փոխազդեցության համատեքստում:

Այսպիսով, քաղաքական խոսույթն իրապես խորությամբ հասկանալու համար միանգամայն անհրաժեշտ է տեղյակ լինել ճշմարտության, նպատակադրության (նպատակի, հաղորդակցական մտադրության), գաղափարախոսության, պերսուազիայի, քարոզչության, մանիպուլացման հասկացություններին ու իրականացման մեխանիզմներին, ինչպես նաև կոնկրետ հասարակական-քաղաքական իրադրությունում այդ երևույթների իրացմանը:

Արտալեզվական իրականության արտացոլումը, ինչպես արդեն նշվել է, բարդ և ոչ միանշանակ գործունեություն է, որի արդյունքն էլ իր հերթին բազմաթիվ մեկնաբանությունների առարկա է դառնում: Ակնհայտ է, որ արտալեզվական իրականության լեզվական արտահայտումը պահանջում է լեզվական որոշակի միջոցների, դրանց համակցման որոշակի ձևերի կիրառում և նույնիսկ շահագործում: Քաղաքական խոսքը կիրառողի համար չափազանց կարևոր է լեզվական արտահայտության ճշտությունը (հաճախ նույնիսկ ճշգրտությունը), երբ *ճիշտ* նշանակում է առավելագույն համապատասխանություն կոնկրետ դեպքին/առիթմին, հաղորդակցական իրադրությանը, տեղին, ժամանակին, լսարանին և մասնավորապես նպատակին [հմնտ. Orwell [http://orwell.ru/library/essays/politics/english/e\\_polit](http://orwell.ru/library/essays/politics/english/e_polit)]: Սակայն քաղաքական խոսքի արտահայտման գործառույթը սահուն փոխակերպվում է՝ ստանձնելով իրականության կերտման գործառույթ, երբ ստեղծվում է քաղաքական հասցեագրողի համար ցանկալի իրականություն (ավելի ճիշտ՝ դեռ իրականության պատկեր) նախ մարդկանց ուղեղներում, ապա և մարդկային փոխազդեցության ոլորտում, որտեղ այդ իրականությունն առավել առարկայանում է, երբ մարդիկ սկսում են քննարկել, վերլուծել, մեկնաբանել, առավել ևս հավատալ, մի խոսքով՝ վերաբերվել դրան որպես գոյություն ունեցող իրողության: Այսպիսով, խոսքը պիտի անի իր գործը, իրականացնի իր «քաղաքական» գործառույթը:

Քաղաքական խոսքի դիտարկման թերևս առավել լեզվաբանական ուղղվածություն ունեցող հայեցակերպը գործառական ոճագիտությունն է, որն անմիջականորեն զբաղվում է

մարդկային կենսագործունեության այս կամ այն ոլորտում հաղորդակցման լեզվական միջոցների ընտրության ու համակցման առանձնահատկությունների ուսումնասիրությամբ: Պերսուազիվ խոսքի ճիշտ կառուցման մեխանիզմների, համապատասխան լեզվական արտահայտության, ոճի հարցերը քննարկվել են դեռևս անտիկ աշխարհում մասնավորապես հռետորական արվեստի շրջանակում, ինչի փայլուն օրինակ է մ.թ.ա. 4-րդ դարում Արիստոտելի գրած «Հռետորիկան»: Քաղաքական խոսույթը, ինչպես և կյանքի ցանկացած այլ ոլորտի խոսքային հաղորդակցում, առանձնանում է իրեն բնորոշ լեզվական միավորների և հատկապես դրանց համակցումների յուրատիպությամբ: Այս լեզվական միջոցներն ու դրանց համակցումները ոճակազմիչ, ինչպես նաև հաճախ ոճատարբերակիչ են քաղաքական խոսքի համար: Քաղաքական խոսքը շատ հարուստ ու բազմազան է. այն տարբեր ձևեր է ընդունում՝ սկսած խիստ ինստիտուցիոնալից մինչև այսպես կոչված գրական խոսակցական, և, հետևաբար, տվյալ ոճին բնորոշ լեզվական միջոցներն էլ աչքի են ընկնում թե՛ իմաստային և թե՛ կառուցվածքային բազմազանությամբ: Դրանք դրսևորվում են լեզվի տարբեր հայեցակերպերում՝ բառային, բառակապակցական, շարույթային, ասույթային և այլն: Սակայն դրանց միավորող կարևոր հատկանիշն այն է, որ բոլորն էլ ծառայում են մի նպատակի՝ քաղաքական պերսուազիային: Քաղաքական խոսույթում լայն կիրառություն ունեն, մի կողմից, գնահատողական վերաբերմունք արտահայտող բառային միավորներ (որոշ ածականներ, մակբայեր՝ մասնավորապես խոսքը սաստկացնող միավորներ (ինտենսիֆիկատորներ) և այլն), մյուս կողմից՝ ճշգրիտ տեղեկատվություն հաղորդող մասնագիտական բառեր ու հապավումներ, երևույթների սահմանումներ: Քաղաքական խոսքում հետաքրքիր են փոխաբերության, փոխանունության, կրկնության, մեղմասության, հռետորական հարցի, զուգահեռ կառույցների, աստիճանավորման, մեջբերման, համատեքստայնացման, հեզմանքի (և սաամբողջը չէ) դրսևորումները: Եական է դերանունների նշանակությունը քաղաքական խոսքային գործունեության մեջ:

Այսպիսով, արտալեզվական իրականությունը կարող է ընդունել ամենաբազմազան լեզվական ձևեր, որոնք ծառայում են ամենատարբեր արտալեզվական իրողությունների ստեղծելու նպատակին: Նա, ով հանրային խոսքի հնարավորություն ունի, կարող է կառավարել ու վերահսկել, հասնել իշխանության: Մյուս կողմից՝ ով ունի իշխանություն, նա ունի հանրային խոսքի ակնհայտ հնարավորություն, կառավարում է ու վերահսկում: Այսինքն՝ նա, ով անվանում է երևույթներն ու իրերը, իշխում է: Սա հատկապես ընդգծված է դրսևորվում քաղաքական խոսույթում: Այսպիսով, քաղաքական խոսույթն իշխանության և՛ աղբյուր է, և՛ արդյունք:

### Ծանոթագրություններ

1. Խոսույթի քննադատական վերլուծության և այդ ոլորտում իրականացվող հետազոտությունների մասին մանրամասն տես Fairclough 2005<sub>2</sub>, 2005<sub>3</sub>, Fairclough, Graham, Lemke, Wodak 2004, Geuss 1988, van Dijk 1993, 1998, 2001, 2005, Waller 2006, Widdowson 1998, Wodak 2004, 2006:
2. Միջտեքստայնություն (intertextuality) տերմինը ներմուծվել է Ջ. Կրիստեվայի կողմից 1960-ականների վերջին: Այն ցույց է տալիս, որ ցանկացած տեքստ կառուցվում, հավաքվում է այլ տեքստերից, իր մեջ ներառում է այլ տեքստեր և դրանց յուրօրինակ վերափոխում է: Տեքստերի կամ խոսույթային իրադարձությունների միջև գոյություն ունեն ներակա կամ բացահայտ բազմազան կապեր, ընդ որում՝ թե՛ հետահայաց և թե՛ հեռահայաց: Տեքստի իմաստը ձևավորվում է այդ ընդհանուր համատեքստում [Kristeva 1980]: 1990-ականներին Ն. Ֆեռըքլաֆի կողմից ներմուծվել է միջխոսույթայնություն (interdiscursivity) տերմինը: Այն նշանակում է տարբեր կարգի խոսույթների տարրերի համակցում մեկ խոսույթի շրջանակում: Սա տեքստում ստեղծում է հանրային պրակտիկայի յուրօրինակ տարասեռություն (հիբրիդայնություն), ինչը բնորոշ է սոցիալական սահմանների աղավաղմանը կամ ջնջմանը: Միջխոսույթային հարաբերության պարագայում շեշտն առավելապես դրվում է խոսույթային պայմանականությունների, այլ ոչ թե ուրիշ տեքստի տեքստակազմիչ դերի վրա [Fairclough 2005<sub>2</sub>]:

3. Սրա վառ վկայությունն են տարբեր երկրների հետազոտողների տեսական և վերլուծական աշխատանքները՝ Beard 2000, Cap 2005, Fairclough 2005<sup>1</sup>, Kristensson <http://dalea.du.se/theses/archive/d1ac1037-d1f4-42f9-8edf-73d2bb4bf811/c92abf6c-2150-4ab5-9d71-758fa7361463.pdf>, Mihas 2005, Phillips 1998, Tian 2006, van Dijk 2009, Wodak, Weiss 2004, Бурашникова <http://www.state-brand.ru/part15/49.html>, Шейгал 2002 և այլն:
4. Քարոզչությունը՝ թե՛ քաղաքական ու ռազմական և թե՛ տնտեսական, մշակութային ու կենսակերպային, մեծ ընդգրկման է հասել տեղեկատվության մեր դարում: Բարձր տեխնոլոգիաների աննախադեպ զարգացումը հզոր ազդակ դարձավ քարոզչության արագ տարածման ու մարդկանց ամենօրյա կենսագործունեության շոշափելի կամ անտեսանելի անբաժան տարրը դառնալու գործում: Քարոզչությունն իրականացվում է տարբեր տեխնիկաների ու հնարների միջոցով, որոնք ստեղծվում են տրամաբանական և հուզական բաղադրիչների հաստատմամբ ու խաղարկմամբ՝ ընդ որում նաև կեղծ հաստատմամբ ու խաղարկմամբ [Propaganda <http://www.propagandacritic.com/articles/intro.why.html>]:

## ԳԼՈՒԽ 2

### **ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՊԵՐՍՈՒԿՁԻՎ ԽՈՍՔԻ ԼԵԶՎԱԲԱՆԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵԼԱԿԵՏ**

Քաղաքական խոսույթը ներկայացնում է լեզվի հրապարակախոսական գործառական ոճը և դրա առավել դինամիկ զարգացող դրսևորումներից է: Հրապարակախոսությունը՝ իր բանավոր ու գրավոր դրսևորումներով, լեզվի ամենատարածված ժամանակակից կիրառություններից է և իր ուրույն տեղն ու դերն ունի համաշխարհային հանրության հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային կյանքում: Հրապարակախոսական արձակն ունի կարևոր հասարակական առաքելություն՝ խթանել ու զարգացնել ներազգային, համազգային և միջազգային հարաբերությունները համապատասխան տիպի հրապարակումների, ուղերձների, կոչերի և, իհարկե, բուն հրապարակային ելույթի միջոցով: Վերջինս երևան է եկել և ձևավորվել հռետորական արվեստի ձևով: Հրապարակախոսական այս բազմազան հաղորդագրության տարածման գործում էական է զանգվածային լրատվամիջոցների դերը: Միաժամանակ շատ կարևոր է ժողովրդական հավաքների, հանդիպումների ավանդական ձևը, որն ապահովում է նաև կենդանի շփում հրապարակախոսի/հռետորի ու ժողովրդի միջև:

Սակայն մինչ հրապարակախոսական արձակի և մասնավորապես քաղաքական խոսույթի քննարկմանն անցնելը հարկ է ներկայացնել լեզվի գործառույթների և գործառական ոճերի տեսության համառոտ ակնարկ:



## 2.1. Խոսքի գործառական քննության գիտատեսական հիմքերը

Ավելի քան յոթանասուն տարի է, ինչ *լեզվի գործառական ոճ* երևույթն ու հասկացությունը մեծ հետաքրքրություն են հարուցել և ակտիվ քննարկման առարկա դարձել լեզվաբանների, հոգեբանների և հասարակագետների շրջանում: Ներկայումս այս հետաքրքրությունը չի նվազել, և խնդրի վերաբերյալ տեսակետները դեռ տարամետ են:

Ի՞նչ է գործառական ոճը, և ե՞րբ գիտնականները սկսեցին պատշաճ ուշադրություն դարձնել դրան:

Ինչպես հայտնի է, ամեն ինչ սկսվեց Կարլ Բյուլերից 1934 թվականին: Լինելով հոգեբան՝ Կ. Բյուլերն առաջին անգամ փորձ կատարեց պարզելու խոսքային հաղորդակցման մեջ լեզվի գործառույթների տարբերությունը խոսքային ակտի երեք կողմերի կամ հայեցակերպերի տարբերակման հիմքի վրա: Այդ երեք կողմերն են՝ խոսողը, ունկնդիրը և այն, ինչ հաղորդվում է, այսինքն՝ հաղորդագրությունը: Ըստ այդմ Կ. Բյուլերը սահմանում է ցանկացած խոսքային ակտում գոյություն ունեցող երեք հիմնական գործառույթները՝ ներկայացում (*Darstellung*), արտահայտում (*Ausdruck*) և դիմում (*Appell*): Ներկայացման գործառույթը կամ կողմնորոշումը դեպի հաղորդակցական նյութն առավել ակնառու է այն դեպքերում, երբ լեզուն կիրառվում է որոշակի տեղեկատվություն փոխանցելու համար: Արտահայտման գործառույթն արտացոլում է խոսողի կողմը և գերիշխում է խոսողի հույզերն արտացոլող ինքնաբուխ բացականչությունների տարբեր տեսակներում: Դիմումի գործառույթը, որ հարաբերակցվում է ունկնդրի կողմին, գերիշխում է հրամաններում, խնդրանքներում, պահանջներում և ունկնդրի վրա ներազդմանն ուղղված այլ խոսքային դրսևորումներում [Бюлер 1993, Бюлер <http://depositfiles.com/ru/files/f81ry6czf>]:

Այս եռակողմ բաժանումը բավականին ընդհանուր է և բավարար չափով մանրամասն չէ լեզվի միջոցով հաղորդակցման բուն իրադրությունը համապարփակ կերպով արտահայտելու համար: Այս պատճառով է, որ հետագայում գիտնականների կողմից բազմաթիվ փորձեր են արվել ներկայացնելու խոսքային

ակտի ու գործառական ոճերի առավել մշակված, համապարփակ տեսություններ:

Պրահայի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչ Յան Մուկառովսկին, քննելով Բյուլերի տեսությունը, կարևորում է խոսքային ակտի ևս մեկ բաղադրիչ՝ նշանը: Ըստ Մուկառովսկու՝ այն հարաբերվում է խոսքի պոետիկ (poetic) կամ գեղագիտական (aesthetic) գործառույթի հետ: Նշանն ուշադրությունը հրավիրում է իր և ոչ թե հաղորդագրության վրա: Գեղագիտական կամ պոետիկ գործառույթն էականորեն հակադրվում է Կ. Բյուլերի կողմից առաջ քաշած երեք «գործնական» գործառույթներին [Mukarovsky 1977]:

Բյուլերի սխեման զարգացնելու մեկ այլ փորձ կատարեց ականավոր լեզվաբան Ռ. Յակոբսոնն իր դասակարգման մեջ: Վերոհիշյալ չորս հասկացություններին նա ավելացնում է ևս երկուսը, որոնք անհրաժեշտ են խոսքային հաղորդակցման իրականացման և ապահովման համար: Մեկը կոդի (code) հասկացությունն է, որը ենթադրում է հաղորդակցվողների՝ հասցեագրողի ու հասցեատիրոջ համար ամբողջությամբ կամ զոնե մասամբ ընդհանուր նշանագիտական համակարգ՝ լեզու, որի միջոցով իրականացվում է խոսքային հաղորդակցումը: Մյուսը հարաբերության (contact) հասկացությունն է, որի հաստատումը խոսողի և ունկնդրի միջև գործնականում խոսքային հաղորդակցման պարտադիր տարր է: Այսպիսով, Ռ. Յակոբսոնն առանձնացնում է հետևյալ գործառույթները. 1) վերաբերական (referential) գործառույթ, որը նույն հաղորդման (նաև անվանվում է դենոտատիվ, կոգնիտիվ, ինտելեկտիվ) գործառույթն է և ուղղված է խոսքի համատեքստին լայն իմաստով, 2) հուզական կամ արտահայտչական (emotive) գործառույթ, որի նպատակը խոսողի վերաբերմունքի ուղղակի արտահայտումն է հաղորդվող նյութի նկատմամբ, 3) դիմումի (conative) գործառույթ, որն իրացնում է որոշակի հղում, հորդոր ունկնդրին, 4) խոսքարկման կամ կապահաստատական (phatic) գործառույթ, որը խոսողի և ունկնդրի միջև հարաբերություն հաստատող գործառույթն է, 5) մետալեզվական (metalingual) գործառույթ, որն իրացվում է, երբ խոսողն անդրադառնում է ինքնին լեզվական առանձնա-

հատկություններին, 6) պոետիկ (poetic) գործառույթ (տարբեր կերպ է անվանվում տարբեր հետազոտողների կողմից՝ գեղագիտական (aesthetic), վերնշանային (metasemiotic), գեղարվեստական (belletristical), ներագդման (function of impact), որի էությունը հեղինակը պարզաբանում է թե՛ գեղարվեստական գրականությունից և թե՛ առօրյա խոսքից բերված օրինակներով [Якобсон 1975, Jakobson <http://courses.essex.ac.uk/lt/lt204/lingpoetics.htm>]:

Խորհրդային լեզվաբանության մեջ լեզվի գործառույթների և գործառական ոճերի հարաբերակցության հետևողական ուսումնասիրություն սկսվեց 1954 թվականին «Вопросы языкознания» գիտական պարբերականում ոճագիտության հիմնահարցերի քննարկմամբ: Նախևառաջ ուշադրությունը սևեռվեց *լեզվի ոճ, խոսքի ոճ, ոճագիտություն* տերմին-հասկացությունների և դրանց արտահայտած երևույթների որոշարկման խնդրին: Լեզվաբանական լայնածավալ գիտելիքի ոլորտում դրանց սահմանների հստակեցումը թերևս այնքան էլ միանշանակ չէ: Ակադեմիկոս Վ. Վ. Վինոգրադովը ոճը սահմանում է որպես «այս կամ այն համաժողովրդական, համազգային լեզվի ոլորտում խոսքային հաղորդակցման միջոցների կիրառման, ընտրության ու համակցման ձևերի հանրորեն գիտակցված և գործառական առումով պայմանավորված, ներքուստ միավորված ամբողջություն՝ հարաբերակից արտահայտման այլ նմանօրինակ եղանակների հետ, որոնք ծառայում են այլ նպատակների, իրականացնում են այլ գործառույթներ տվյալ ժողովրդի հանրային խոսքային գործունեության մեջ» [Виноградов 1955:73]: Սա լեզվական ոճի բավականին համապարփակ սահմանում է, որում ընդգրկված են երեք կարևորագույն հայեցակերպերը՝ լեզվական որոշակի միջոցները, դրանց համակցման որոշակի ձևերը և որոշակի նպատակը, որին նախորդ երկուսը ծառայում են: Ընդհանրության աղբյուրներ կարելի է գտնել Ռ. Ա. Բուդագովի սահմանման հետ, որում լեզվական ոճը ձևակերպվում է որպես «համաժողովրդական լեզվի տարատեսակ՝ պատմականորեն ձևավորված և հատկանիշների հայտնի ամբողջությամբ բնութագրվող, որոնց մի մասը յուրատիպորեն՝ իր ձևով կրկնվում է

այլ ոճերում, սակայն որոնց որոշակի համակցումը տարբերակում է մի լեզվական ոճը մյուսից» [Будагов 1967:68]: Իրականում դժվար է գտնել չկրկնվող լեզվական միավորներ լեզվական տարբեր դրսևորումներում, սակայն դժվար է չնկատել դրանց մատուցման առանձնահատկությունները՝ կախված տարբեր ոճերի գործառական նպատակաուղղվածությունից: Գործառական նպատակահարմարությունը փաստորեն լեզվի ոճերի կյանքի կոչման շարժիչ ուժն է: Ինչ վերաբերում է ոճագիտության ուսումնասիրության լեզվական նյութին, պետք է ասել, որ լեզվաբանական այս գիտակարգի առանձնահատկությունն այն է, որ լեզուն ուսումնասիրվում է, Գ. Վինկուրի արտահայտությամբ, «իր կառուցվածքի ողջ հատույթով միաժամանակ, այսինքն՝ և՛ հնչյունները, և՛ ձևերը, և՛ նշանները, և՛ դրանց մասերը» [ըստ՝ Виноградов 1955:68]: Կարող է թվալ, թե ոճագիտությունը հետազոտության իր առարկան չունի, քանի որ լեզվի տարբեր հայեցակերպերն առանձին-առանձին ուսումնասիրվում են լեզվաբանական ավելի ավանդական գիտակարգերի կողմից, ինչպիսիք են, օրինակ, բառագիտությունը, քերականությունը և այլն: Ոճագիտությունը քննում է այս նույն նյութը, «բայց հատուկ տեսանկյունից», ինչն էլ ստեղծում է դրա սեփական առարկան ու նպատակն այսպես կոչված «օտար նյութում»: Ոճագիտությունը վեր է հանում խոսքում լեզվական արտահայտման «տոնայնությունը», թափանցում դրա իմաստային նրբերանգների մեջ և մեկնում դրա նպատակահարմարությունն ու նպատակաուղղվածությունը խոսքային հաղորդակցման մեջ մարդկային կենսագործունեության տվյալ ոլորտի համատեքստում: Այսպիսով, լեզվաբանական միտքը հանգում է ոճագիտության առանցքային գաղափարին՝ գործառույթին: Ոճագիտությունն ուսումնասիրում է «լեզվի գործածությունը»<sup>1</sup> [Виноградов 1955:18-19], և, հետևաբար, «ոճագիտության գործառական իմաստավորումը ... միակ ճիշտ տարբերակն է» [Будагов 1967:128]:

Լեզվական հաղորդակցման հանգամանքներից, իրադրությունից, նպատակից, առաջադրանքից, բովանդակությունից կախված՝ խոսքն ընդունում է տարբեր ձևեր: Խոսքն ուղղված է

արտալեզվական իրականությանը և «ծրագրավորված»՝ ծառայելու անհատական կամ հանրային կարիքների, ցանկությունների, նկրտումների: Հետևաբար, կոմկրետ գործառույթ իրականացնելու համար ընտրված լեզվական միավորները, ինչպես նաև դրանց համակցման եղանակները պետք է խոսքի համապատասխան, պատշաճ ելք ապահովեն այդ իրականություն: Խոսքի ձևերն ունեն ակնհայտորեն գործառական առանձնահատկություններ, և, բնական է, որ դրանք ուսումնասիրող գիտակարգն ունի գործառական բնույթ և իրավացիորեն պետք է կոչվի գործառական ոճագիտություն: Ոճագիտությունը պետք է լինի «խիստ գործառական», քանի որ հենվում է «մարդկանց կենսագործունեության ամենատարբեր ոլորտներում նրանց հաղորդակցման, մտածողության և հույզերի արտահայտման միջոցի՝ լեզվի օբյեկտիվ կարգերին» [Будагов 1967:130]:

Մյուս կարևորագույն հարցը, որին հարկ է անդրադառնալ այս համատեքստում, հետևյալն է՝ լեզվի՞ թե խոսքի՞ գործառույթ: Թեև որոշակի տրամաբանական պատասխանի կարելի է հանգել, այն, թերևս, միանշանակ չի կարելի անվանել: Լեզվի ոճագիտության հիմնահարցերի քննարկումն ամփոփող իր հոդվածում [Виноградов 1955] Վ. Վինոգրադովը ներկայացնում է մի շարք հետազոտողների հայացքներ, սահմանումներ, որոնցից բավական ուշագրավ են Ի. Ս. Իլյինսկայայի դատողությունները: «Լեզվական ոճ» կամ «լեզվի ոճ» տերմինը մատնանշում է, որ խոսքի ոճերն ըմբռնվում ու հետազոտվում են «լեզվական առումով»՝ լեզվական համակարգի տարրերի հատկանիշների և գործածության տեսանկյունից: «Լեզվի ոճերն» ընկալվում են ոչ թե որպես «ինքնին լեզվական կառույցում գոյություն ունեցող տարբեր արտահայտչական միջոցների մեկուսացած և ինքնամփոփ շրջանակներ», այլ հանրային խոսքային փոխազդեցության տարբեր դրսևորումներում «զանազան ոճական տարրերի հարաբերակցման ու համակցման կոլեկտիվ գիտակցված եղանակներ» [Виноградов 1955:71-72]: Հարկ է ընդգծել, որ կոլեկտիվ կամ հանրային գիտակցումն ու կիրառությունն են, որ թույլ են տալիս խոսել լեզվական կամ խոսքային կայացած ոճի, այլ ոչ թե անհատական գործածության կամ ոճական դրսևորման

մասին: Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ որոշ լեզվակիր անհատների հզոր խոսքային գործունեությունը կարող է ազդեցություն ունենալ գրական կամ համազգային լեզվի ոճական միտումների զարգացման, ձևավորման վրա: «Խոսքի ոճագիտությունը հիմնված է լեզվի ոճագիտության վրա»,– գրում է Վ. Վինոգրադովը [Виноградов 1963:14]: Այնուհետև նա ավելացնում է, որ «խոսքի ոճերը նախևառաջ որոշակի կոմպոզիցիոն համակարգեր են հանրային խոսքի հիմնական ժանրերի կամ կառուցողական տարատեսակների շրջանակում»: Նշելով, որ լեզվաբանների մեծամասնությունը չի տարբերակում լեզվական ու խոսքային ոճեր հասկացությունները՝ Ռ. Բուդագովն ընդգծում է դրանց սահմանազատման կարևորությունը [Будагов 1967:70]: Ըստ նրա՝ այդ տարբերությունը պայմանավորվում է այն հանգամանքով, որ ժամանակակից զարգացած գրական լեզուների ոճերն իրենց հիմքում ունեն ավելի օբյեկտիվ և հստակ արտահայտված լեզվական նյութ, քան խոսքային ոճերի տարբերությունները: Մյուս տարբերությունն այն է, որ լեզվական ոճերը սովորաբար ձևավորվում են բոլոր ժամանակակից զարգացած գրական լեզուներում, իսկ խոսքային ոճերը կարող են չհանդնկնել կամ տարբերվել լեզվից լեզու կամ տարբեր պատմական դարաշրջաններում: Ուստի խոսքային ոճերն առավել փոփոխական են, քան լեզվական ոճերը, որոնք «լեզվաբանորեն ավելի կայուն և տիպաբանորեն ավելի ընդհանրական գոյացություններ են» [Будагов 1967:71]:

Հաշվի առնելով լեզու – խոսք հարաբերակցության ոչ այնքան միանշանակ ու խրթին բնույթը, ինչպես նաև գեղարվեստական գրականության լեզվի յուրահատկությունները՝ լեզվաբաններն առանձնացնում են ոճագիտության մի քանի տեսակ՝ «սերտորեն հարաբերվող, հաճախ փոխադարձաբար հատվող և միշտ հարաբերակից, մինչդեռ օժտված իրենց խնդիրների համալիրով, իրենց առաջադրանքներով, իրենց չափանիշներով և կարգերով» [Виноградов 1963:5]: Ըստ Վ. Վինոգրադովի՝ առաջինը լեզվի՝ որպես «համակարգերի համակարգի» ոճագիտությունը կամ կառուցվածքային ոճագիտությունն է: Երկրորդը խոսքի, այսինքն՝ լեզվի հանրային կիրառման տարբեր տեսակ-

ների և ակտերի ոճագիտությունն է: Եվ երրորդը գեղարվեստական գրականության ոճագիտությունն է: Լեզվի ոճագիտությունը նկարագրում է «լեզվի՝ որպես «համակարգերի համակարգի» միասնական կառուցվածքի ներսում ձևերի, բառերի, բառաշարքերի ու կառույցների տարբեր հարաբերակից մասնավոր համակարգերի փոխհարաբերությունները, կապերը և փոխազդեցությունը» [Виноградов 1963:5]: Այն ուսումնասիրում է բնորոշ հատկանիշների անբողջությամբ բնութագրվող լեզվական ոճերի հարաբերակցությունը պատմական զարգացման կտրվածքով: Այս ոճերը կոչվում են գործառական, քանի որ տարբերվում են հանրային փոխգործունեության բազմազան ոլորտներում իրականացրած իրենց գործառույթներով: Խոսքի ոճագիտությունը և լեզվի ոճագիտությունը գտնվում են անընդհատ, սերտ փոխազդեցության մեջ: Առաջինը, մի կողմից, հենվում է երկրորդի կանոնակարգված, կայացած նյութական՝ լեզվական հնարավորությունների վրա, մյուս կողմից՝ հարստացնում, թարմ շունչ հաղորդում դրան իր բազմաթիվ ու բազմազան դրսևորումներով, որոնք խոսքի առավել դինամիկ բնույթի արդյունք են: «Գրական-գեղարվեստական ստեղծագործության ոճական վերլուծությունը շատ հաճախ անմիջականորեն ծագում է լեզվի կառուցվածքի ու նրանում գետեղված լեզվական ոճերի իմացությունից կամ ուսումնասիրությունից»,– գրում է Վ. Վինոգրադովը [Виноградов 1963:8]: Լեզվի ոճական համակարգի անեմատարբեր երևույթներ իրենց ուղղակի կամ գործառական առումով բարդեցված կիրառությունն են ստանում գեղարվեստական գրականության մեջ:

Ռ. Բուդագովն առաջարկում է ոճագիտության որոշ չափով այլ տարանջատում՝ «համաժողովրդական լեզվի ոճագիտություն», «գրական լեզվի<sup>2</sup> ոճագիտություն», «գեղարվեստական գրականության ոճագիտություն» [Будагов 1967:129]: Լեզվաբանը համոզված է, որ ոճագիտության այս բոլոր տեսակները պետք է լինեն գործառական և հիմնված են լեզվի՝ որպես հաղորդակցման միջոցի օբյեկտիվ կարգերի՝ մասնավորապես ոճերի վրա:

Ակադեմիկոս Վ. Վինոգրադովը նշում է լեզվի երեք կարևորագույն հանրային գործառույթներ՝ հաղորդակցում (общение), հաղորդում (сообщение) ու ներագում/ներգործում (воздействие): Ըստ այդմ լեզվի ընդհանուր կառույցում նա առաջարկում է առանձնացնել հետևյալ վեց ոճերը, որոնք ոչ թե կարծրացած և անպայմանորեն հակադրված ամբողջություններ են, այլ իրենց մեծամասնության մեջ հարաբերելի, համադրելի ու զուգորդելի են՝

1. առօրյա-կենցաղային (обиходно-бытовой) ոճ – հաղորդակցման գործառույթ,
2. առօրյա-գործնական (обиходно-деловой) ոճ – հաղորդման գործառույթ,
3. պաշտոնական-փաստաթղթային (официально-документальный) ոճ – հաղորդման գործառույթ,
4. գիտական (научный) ոճ – հաղորդման գործառույթ,
5. հրապարակախոսական (публицистический) ոճ – ներագուման գործառույթ,
6. գեղարվեստական գրականության (художественно-беллетристический) ոճ – ներագուման գործառույթ [Виноградов 1963:6]:

Չնայած ոճերի այս տարանջատմանը՝ հայտնի է, որ հաղորդակցման գործառույթը՝ իր ամենալայն իմաստով, ընկած է ողջ խոսքային գործունեության հիմքում: Նեղ իմաստով հաղորդակցման գործառույթը կարող է ընկալվել որպես խոսքարկման գործառույթ, որի պարագայում խոսողը նպատակ ունի շփում հաստատել ունկնդրի հետ և նախապատրաստել նրան ընկալելու տեղեկատվությունը (հաղորդագրությունը) և ոչ թե անմիջապես փոխանցելու այն:

Լեզվական հաղորդակցումն ամենալայն իմաստով ընկալելու դեպքում ակնհայտ է, որ մարդիկ լեզուն միշտ կիրառել են որոշակի հաղորդագրություն (առօրյա ամենապարզ զրույցից մինչև բարդ գիտական տեղեկատվություն) միմյանց փոխանցելու համար: Սակայն հայտնի է, որ զուտ տեղեկատվություն փոխանցելուց բացի լեզուն նաև օգտագործվել է ունկնդիրների վրա ներգործելու նպատակով՝ նրանց հուզավիճակում կամ



մտավիճակում որոշակի փոփոխությունն առաջացնելու կամ նրանց դրդելու գործել խոսողի համար ցանկալի ձևով: Գործառույթը, որով լեզուն կիրառվում է այս դեպքում, Վ. Վինոգրադովի կողմից անվանվում է ներազդման գործառույթ, ինչպես և ներկայացված է վերը բերված դասակարգման մեջ: Ներազդման գործառույթն իր ամբողջական և առավել համապարփակ իրացումն է գտնում բառարվեստի ստեղծագործության մեջ, այսինքն՝ գեղարվեստական գրականության ոճում:

Վ. Վինոգրադովի տեսությունը և դասակարգումը շատ արժեքավոր են գործառական ոճագիտության խնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող խորհրդային, հետխորհրդային և արտասահմանյան երկրների լեզվաբանների տեսությունների և դասակարգումների բազմազանության մեջ: Ակադեմիկոս Վ. Վինոգրադովի գործառական ոճերի հայեցակարգը հիմնարար հետազոտություն է գործառական ոճագիտության ոլորտում:

Խորհրդային լեզվաբանական դպրոցի մեկ այլ ներկայացուցիչ Մ. Ն. Կոժինան, համաձայնելով լեզվի և խոսքի դիալեկտիկական միասնության սկզբունքի հետ, խոսքը դիտարկում է որպես գործընթաց, լեզվի գործառություն, իրական կենսագործունեություն: Նա լեզուն ընկալում է որպես լեզու – խոսք միասնություն, որում խոսքը լեզվի՝ որպես համակարգի գործառությունն է: Հետևաբար խոսքի ուսումնասիրությունը նույնպես «զուտ» լեզվաբանական է: Լեզուն արտացոլում է արտալեզվական իրականությունը խոսքում, ինչպես նաև թափանցում դրա մեջ խոսքի միջոցով: «Նեղ լեզվականի և արտալեզվականի փոխգործունեության խնդիրը կենտրոնական, մեթոդաբանորեն հիմնարար է լեզվաբանության այն ոլորտում, որը կարելի է անվանել խոսքաբանություն» [Кожина 1968:35]: «Խոսքային կառուցվածքը լեզվի գործառության ձևն է» [Кожина 1968:39]: Լեզվի գործառության ընթացքում ոչ միայն իրացվում է լեզվի համակարգը, այլև ձևավորվում է խոսքի կառուցվածքը: Խոսքը, անկասկած, հիմնված է լեզվի՝ դրա տրամադրած միջոցների վրա, սակայն սրանք խոսքում չեն կազմում ստատիկ համակարգ, այլ ստեղծում են դինամիկ կառուցվածք: Խոսքը, իր նյութական հայեցակերպով լինելով լեզվական և բնականաբար

կրելով լեզվական հատկանիշներ, ունի նաև իր յուրահատուկ հատկանիշները, այսպես կոչված «հավելումը», որ դրսևորվում է հենց խոսքային կառուցվածքում: Սա ասելով՝ Մ. Կոժինան ի նկատի ունի «լեզվական տարրերի հերթագայության հատուկ «կարգը», որը համապատասխանում է դրանց ընտրության ու համակցման որոշակի սկզբունքներին՝ կախված արտալեզվական գործոններից, այդ գործոնների հետ հատուկ գործառական «կապի» տեսակից» [Кожина 1968:48]: Այստեղ պետք է հասկանալ խոսքի՝ արտալեզվական գործոններով պայմանավորված հորիզոնական և ուղղահայաց կապերը: Խոսքը վերաբերում է այն արտալեզվական գործոններին, որոնք իրենց ազդեցությունն են ունենում խոսքի կառուցվածքի՝ լեզվական համակարգի տրամադրած միավորների, հնարավորությունների բազմաձև կիրառությունների, համակցումների, փոխադարձ կապերի վրա, ինչն իր հերթին ուղղված է հաղորդակցման գործառական, նպատակային կողմը, այսինքն՝ արտալեզվական առաջադրանքն իրականացնելուն: Այսպիսով՝ «խոսքաբանությունն ուսումնասիրում է խոսքը (որպես լեզվի գործառություն)», այսինքն՝ արտալեզվական իրականության և լեզվական համակարգի փոխներգործության բոլոր հիմնական խնդիրները լեզվաբանական հայեցակերպից: Սա էլ հիմք է տալիս խոսքաբանությունն ընկալել որպես «հենց լեզվաբանական ուղղություն» [Кожина 1968:53]: Խոսքաբանական գիտություններից հիմնականը Մ. Կոժինան համարում է գործառական ոճագիտությունը, մասամբ նաև պոետիկան [Кожина 1968:63]: Խոսքը գործառական ոճագիտության այսպես կոչված վերջնական առարկան է և ոչ թե լեզվի համակարգի ուսումնասիրության համար ելքային նյութը, և գործառական ոճագիտությունը խոսքը քննում է լեզվաբանական, այլ ոչ թե, ասենք, հոգելեզվաբանական տեսանկյունից: Քննարկվող խոսքաբանական գիտակարգը կոչվում է գործառական, քանի որ խնդիր ունի ուսումնասիրելու խոսքային գործունեության մեջ լեզվական միավորների դերն ու նշանակությունն արտալեզվական իրականության ամենատարբեր ոլորտներում համապատասխան գործառույթ իրականացնելու առաջադրանքում: Այսպիսով, գործառույթն այս իմաստով իր

ելությամբ խոսքաբանական հասկացություն է և հենքային գործառական ոճագիտության համար, սակայն միայն այն դեպքում, երբ օբյեկտիվ, ընդհանրական կամ հանրային բնույթ է կրում և ոչ թե զուտ անհատական կամ դիպվածային: Լեզվաբանությունը, հետևաբար խոսքաբանությունը, ինչպես նաև գործառական ոճագիտությունը հետազոտում են լեզու–խոսք երևույթը որպես օբյեկտիվ իրականության իրողություն: «Գործառական ոճագիտությունը,– գրում է Մ. Կոժինան,– լեզվաբանական գիտություն է, որն ուսումնասիրում է մարդկային գործունեության և հաղորդակցման այս կամ այն ոլորտին համապատասխանող խոսքի զանազան տեսակներում լեզվի գործառության առանձնահատկություններն ու օրինաչափությունները, ինչպես նաև այդ ընթացքում ձևավորվող գործառական ոճերի խոսքային կառուցվածքը և լեզվական միջոցների ընտրության ու դրանցում *[գործառական ոճերում]* համադրման նորմերը» [Кожина 1968:69]: Յեղիմակը ոճագիտության մեջ կարևորում է հենց խոսքի ոճերը, քանի որ ոճականն իր ծագումով և բնույթով համարում է խոսքային երևույթ, որը պարզապես «նստվածք» է տալիս լեզվի համակարգում կամ գտնվում է դրա պոտենցիալում: Ինչպես նաև ոճին ներհատուկ է առավել վառ և ամբողջական դրսևորում լեզվի հենց գործառության ընթացքում: Խոսքի գործառական ոճը ոճականորեն երանգավորված լեզվական միավորների ոչ միայն ընդամենը փոխադարձ կապվածություն է, այլ նաև խոսքի կառույցի ներսում դրանց գործառական փոխադարձ կախվածություն և պայմանավորվածություն, որն ուղղված է հաղորդակցական նպատակն ու առաջադրանքն իրականացնելուն: Այս միավորները, մի կողմից, համակցված ու կապակցված են ըստ լեզվական նորմերի, իսկ մյուս կողմից՝ արտալեզվական իրականության որոշակի գործոնների, որոնք անմիջականորեն թելադրում, պայմանավորում, ինչպես նաև հաղորդակցական կուռ էություն են տալիս տվյալ խոսքային կառուցվածքին:

Մ. Կոժինան հնարավոր է համարում առանձնացնել հաղորդակցական (коммуникативная), կառուցողական<sup>3</sup>/գաղափարաձևավորող (мыслеформиляющая), հուզական (эмотивная) և կամային (волеятативная) գործառույթները, որոնցից առաջին

երկուսը կհամարվեն լեզվական, մյուսները՝ խոսքային (ընդ որում՝ եթե հաղորդակցական գործառույթն ընկալվի լայն իմաստով՝ որպես հաղորդակցում (общение) և ոչ թե հաղորդում (сообщение), այն կներառի նշված մյուս բոլոր գործառույթները): Խոսքի կամ հաղորդակցման գործընթացի և մասնավորապես գործառական ոճագիտության հայեցակերպից դժվար թե նպատակահարմար է այս գործառույթները տարանջատել «ոճերի դասակարգման առումով, քանի որ ... լեզվի գործառության ընթացքում այս բոլոր գործառույթները միասին են դրսևորվում» [Кожина 1968:215-216]:

Ըստ Կոժինայի՝ պոետիկ գործառույթն այսպես ասած երկրորդական, ածանցյալ գործառույթ է՝ հիմնված հաղորդակցական (լայն իմաստով) գործառույթի վրա: Պոետիկ գործառույթը խոսքային է և կապված լեզվի գործառական կողմի հետ: Այն լեզվի առանձնահատուկ գործառություն է «գեղագիտական հաղորդակցման (ավելի նեղ՝ գեղարվեստական գրականության)» ոլորտում: Այն կատարում է յուրահատուկ գեղագիտական առաջադրանք նշված ոլորտում:

Հեղինակն առանձնացնում է խոսքի հետևյալ հիմնական գործառական ոճերը.

1. առօրյա-խոսակցական (разговорно-бытовой),
2. քաղաքական-գաղափարախոսական (կամ հրապարակախոսական լայն իմաստով) (политико-идеологический или публицистический в широком смысле),
3. օրենսդիր (կամ պաշտոնական-գործնական) (законодательный или официально-деловой),
4. գիտական (научный),
5. գեղարվեստական (художественный),
6. կրոնական (религиозный):

Այս գործառական ոճերն առանձնացվում են արտալեզվական միասնական համալիր սկզբունքի հիման վրա, որի բաղադրիչներն են հասարակական գիտակցության ձևը, գործունեության և սոցիալական հարաբերությունների համապատասխան տեսակը. ընդ որում՝ այս տարանջատումը քննվում է հաղորդակցման ու խոսքի բնույթի, կառուցվածքի վրա ազդեցության

առանձնահատկությունների, հետևաբար լեզվի գործառույթյան նպատակների և առաջադրանքների տեսանկյունից [Кожина 1968:174-175, 178]:

Փորձելով պարզաբանել գործառական ոճերի էությունը՝ Մ. Կոժինան գրում է. «Ինքնին մարդկային հարաբերությունների տարբեր «տիպերը» գիտակցության հարաբերակից ձևերի հետ միասին՝ իրենց զուտ անդրադարձ և այլ առումներով, սահմանում են լեզվի գործառույթյան օրինաչափությունները, ինչպես նաև խոսքի՝ հաղորդակցման գործընթացում ձևավորվող կառուցվածքային տարատեսակները կամ գործառական ոճերը» [Кожина 1968:166]:

Ըստ Մ. Կոժինայի՝ հաղորդակցման գործընթացում՝ խոսքում իրացվում է գիտակցության (մտածողություն, զգացմունքներ, կանք) և լեզվի՝ որպես մարդկային երկու առանձնահատուկ հատկանիշների միասնությունը: Միաժամանակ այս երկուսը սերտորեն փոխկապակցված են հասարակական հարաբերությունների և գործունեության հետ<sup>4</sup>:

Գործառական ոճագիտությունը բացահայտում է լեզվական նշանի պրագմատիկ կողմը: Լեզվական նույն նյութը, արտալեզվական տվյալ իրականության հետ (տեղ, ժամանակ, նպատակ, առաջադրանք, հասցեատեր-լսարան, խոսողի/գրողի անհատական կամ ընդհանրական ինքնություն և այլն) յուրահատուկ կապեր հաստատելով, խոսքում ընդունում է որոշակի կառուցվածք՝ պայմանավորված նշված արտալեզվական իրականությամբ թելադրված գործառույթով, որը խոսքի ոճակազմիչ հիմքն է [Եզեկյան 2003, Ջահուկյան, Խլղաթյան 1976]: Այս կամ այն գործառույթին ծառայելու համար համապատասխան հատկանիշների ավելի կամ պակաս առկայությամբ էլ պայմանավորված է այս կամ այն լեզվական միջոցների կիրառման հաճախականությունը տարբեր ոճերում: Այդ միավորները գործառական առումով դառնում են ոճակազմիչ և որպես արդյունք՝ ոճատարբերակիչ:

Լեզվի ուսումնասիրության նկատմամբ գործառական մոտեցման հետազոտությամբ է զբաղվել նաև ականավոր բրիտանացի լեզվաբան Մ. Ա. Կ. Չալլիդեյը: Գործառական մոտեցման

հիմքում նա առաջին հերթին դնում է լեզվի կիրառության ուսումնասիրությունը, այսինքն՝ պարզել, թե որոնք են այն նպատակները, որոնց ծառայում է լեզուն, և ինչպես ենք մենք կարողանում հասնել այդ նպատակներին խոսելու և լսելու, կարդալու և գրելու միջոցով: Բայց գործառական մոտեցումն ունի նաև այլ դրսևորում՝ փորձել բացատրել լեզվի բնույթը գործառական առումով, այսինքն՝ լեզվի ձևի և կառուցվածքի պայմանավորվածությունը գործառույթներով, որոնց ծառայում է լեզուն: Նախադասությունների և լեզվական այլ միավորների կառուցվածքը պայմանավորված է դրանց գործառույթով: Լեզուն այնպիսին է, ինչպիսին կա այն գործառույթների պատճառով, որոնց լեզուն ծառայում է [Halliday 1978:4, հմմտ. Будагов 1983]: Լեզվական կառույցները գործառական տեսանկյունից հասկանալու համար, ըստ Մ. Յալլիդեյի, անհրաժեշտ է «դրսից» գալ դեպի «ներս»՝ լեզուն մեկնաբանելով հասարակական գործընթացում իր ունեցած դիրքի առումով: Միաժամանակ ուշադրություն է դարձվում իրականին և պոտենցիալին. մեկնաբանվում է խոսույթը (խոսքը), նաև լեզվական համակարգը, որն ընկած է խոսույթի հիմքում որպես «իմաստի պոտենցիալ» (“meaning potential”) չափազանց բարդ ցանց: Եթե լեզուն դիտարկվում է որպես շփում, փոխազդեցություն, ապա անխուսափելի է դրա քննությունը հասարակական համակարգի տեսանկյունից: Այն, ինչ խոսողը կարող է ասել՝ բառաքերականական համակարգն (lexicogrammatical system) ամբողջությամբ, իմաստային համակարգի (semantic system) իրացումն է: Վերջինս այն է, ինչ խոսողը կարող է ի նկատի ունենալ, և ինչը Մ. Յալլիդեյն անվանում է «իմաստի պոտենցիալ»: «Ես լեզուն տեսնում եմ ըստ էության որպես իմաստի պոտենցիալի համակարգ» [Halliday 1978:39]: Այս իմաստային համակարգն էլ իր հերթին իրենից վեր, լեզվից դուրս գտնվող վարքային համակարգի (behavioural system) դրսևորումն է: Սա այն է, ինչ խոսողը կարող է անել, և ինչը Մ. Յալլիդեյը նշում է որպես «վարքային պոտենցիալ» (“behaviour potential”): Այս համակարգերը նշանային մակարդակներ են, որոնք ցույց են տալիս բուն լեզվականից անցումն արտալեզվականին՝ հանրային նշանային համակարգին (“a

behavioural system or more generally a social semiotic” [Halliday 1978:39]) և հակառակը: Ըստ լեզվաբանի՝ լեզուն վարքի հանրորեն համատեքստայնացված ռեսուրսների ամբողջությունն է, «իմաստի պոտենցիալ», որ կապված է կիրառման իրադրության հետ. ընդ որում՝ իրադրությանը համապատասխանելը կամայական հավելումն է լեզվական արտահայտման մեջ, այլև կենսականորեն անհրաժեշտ է հաջողված հաղորդակցման հնարավորության համար: Եվ սա ոչ թե անհատների ընտրության կամ կարողության խնդիր է, այլ ընդհանուր լեզվական (այստեղ ակնհայտ է դիրքորոշման ընդհանրությունն վերը քննարկված լեզվաբանների հետ), քանի որ լեզուն բոլորի համար ընդհանուր «իմաստի պոտենցիալ» է՝ միաժամանակ լինելով փորձի մաս և փորձի միջանձնային մեկնաբանում:

Այս առնչությամբ Մ. Յալլիդեյը տարբերակում է գործառույթը և կիրառությունը: Կիրառությունը լեզվական համակարգում գոյություն ունեցող այլընտրանքային տարբերակների ընտրությունն է կոնկրետ իրադրական տիպերի համատեքստում: Բայց այս իրադրական տիպերը կարող են լինել բազմազան և բազմաթիվ, ու անհնար է որոշարկել կիրառությունների սահմանափակ շարք և քերականություն գրել դրանցից յուրաքանչյուրի համար: Կարելի է որոշարկել, ինչպես գրում է լեզվաբանը, սահմանափակ թվով գործառույթներ, որոնք նա նաև անվանում է «մակրոգործառույթներ»: Վերջիններս ընդհանուր են բոլոր այս կիրառությունների համար, և դրանց միջոցով է, որ համապատասխան իմաստի պոտենցիալը մարմնավորվում է քերականական կառույցներում: Այսպիսով, լեզվի իմաստային համակարգը միջնորդ կամ կամուրջ է արտալեզվականի՝ հասարակական համակարգի և ներլեզվականի՝ քերականական համակարգի համար: Իմաստային համակարգի այլընտրանքային տարբերակների ամբողջությունը հենց իմաստի պոտենցիալն է: Լեզվական համակարգը, ըստ Մ. Յալլիդեյի, գործառական է ծագմամբ և ուղղվածությամբ, և, հետևաբար, դրա բնույթը հասկանալու համար պետք է այն քննել գործառական տեսանկյունից: Քերականական միջոցների<sup>5</sup> տարբերակների ընտրությունը կանխորոշվում է խոսքի իմաստային բաղադրիչներով: Սրանք

իրենց հերթին կախված են հանրային համատեքստից և պայմաններից, որոնք արտալեզվական գործոններ են: Այստեղից ակնհայտ է դառնում լեզվի երկակի բնույթը՝ լեզուն որպես արտահայտման/արտացոլման և ներգործման միջոց: Արտացոլելով շրջակա իրականությունը՝ լեզուն միաժամանակ կրում է դրա ազդեցությունը և «ակտիվորեն խորհրդանշում է հանրային համակարգը՝ տարբերակների իր մոդելներում փոխաբերականորեն ներկայացնելով մարդկային մշակույթները բնութագրող տարբերակումը» [Halliday 1978:3]: Արտալեզվական գործոնները լեզվական գործառույթների միջոցով թափանցում են լեզու և այնուհետև վերջինիս իսկ ազդեցության ներքո օբյեկտիվ կամ սուբյեկտիվ փոփոխություններ կրում, ինչը նույնպես տեղի է ունենում խոսողի կողմից նախանշված, արտալեզվական համատեքստին ուղղված գործառույթների իրացմամբ: Սա էլ կարելի է անվանել լեզվական և արտալեզվական իրողությունների փոխհարաբերության դինամիկա: Լեզվի տարբեր գործառույթները մարդկանց հնարավորություն են տալիս իմաստային ակտերի (acts of meaning)<sup>6</sup> միջոցով հաստատելու իրենց կարգավիճակը և դերը, ձևավորելու և փոխանցելու արժեքների ու գիտելիքի ընդհանուր համակարգը. այսպիսով՝ վերարտադրում ենք հասարակական կառուցվածքը՝ միաժամանակ այն վերափոխելով ու վերահաստատելով:

Լեզվի հիմնական գործառույթները կամ այսպես կոչված մակրոգործառույթները, որոնք առանձնացնում է Մ. Հալլիդեյը, երեքն են և բնութագրվում են հետևյալ կերպ: Առաջինը բովանդակության արտահայտումն է՝ խոսողի՝ արտաքին աշխարհի, ինչպես նաև ներաշխարհի, գիտակցության փորձը և դրանից ծագող տրամաբանական հարաբերությունները: Երկրորդը մոդալականության արտահայտումն է՝ խոսողի ստանձնած դերը և նրա կողմից խոսակցին հատկացրած դերը, նրանց փոխազդեցությունը խոսքային իրադրության մեջ: Երրորդը տեղեկատվության կառուցվածքի արտահայտումն է՝ խոսույթի յուրաքանչյուր մասի հարաբերությունն ամբողջին և արտալեզվական գործոններին, այսինքն՝ հաղորդագրության ողջ հաղորդակցական գործընթացի հետ հարաբերակցության մեջ: Այս երեք գոր-



ծառայությունները համապատասխանաբար կոչվում են գաղափարային (ideational)՝ փորձառական (experiential) ու տրամաբանական (logical) ենթաբաժանումներով, միջանձնային (interpersonal) և տեքստային (textual) [Halliday 1978:45-46, Halliday 1973:99]:

Մ. Յալլիդեյի կարծիքով Կ. Բյուլերի սխեման որոշ չափով դեռևս արժեքավոր է: Այս վերապահումը նա անում է՝ հղում կատարելով այն փաստին, որ Բյուլերը նպատակ չունի գործառական տեսանկյունից մեկնաբանելու լեզվական համակարգի բնույթը: Նրա հետաքրքրությունը հոգեբանական է: Բյուլերի տեսակետը լեզվաբանը համարում է միանգամայն գործուն նրա նպատակների առնչությամբ: Սակայն Մ. Յալլիդեյն ընդունում է գործառայությունների որոշ չափով այլ (թեև առնչվող) համակարգ, որպեսզի, ինչպես ինքը հեղինակն է նշում, այն ուղղի դեպի ներս լեզվական համակարգի բնույթը մեկնաբանելու համար: Ապա իր և Կ. Բյուլերի գործառական շրջանակների միջև զուգահեռներ անցկացնելով՝ նշում է, որ իր գաղափարային (ideational) գործառայությունը սերտորեն համապատասխանում է Բյուլերի ներկայացման (representational) գործառայության՝ այն բացառությամբ, որ ինքը դրանում փորձառականի (experiential) և տրամաբանականի (logical) տարանջատում է մտցնում, ինչը համապատասխանում է ինքնին լեզվի ներսում գոյություն ունեցող հիմնարար տարբերակմանը: Յալլիդեյի միջանձնային (interpersonal) գործառայությունը քիչ թե շատ համապատասխանում է Բյուլերի դիմունի (conative) և արտահայտման (expressive) գործառայությունին միասին վերցրած, քանի որ, ըստ Մ. Յալլիդեյի, լեզվական համակարգում այս երկուսը չեն տարբերակվում: Ի համալրում վերոհիշյալ երկու գործառայությունների Մ. Յալլիդեյը ներմուծում է երրորդ գործառայությունը՝ տեքստայինը (textual), որը չկա Կ. Բյուլերի տեսության մեջ, քանի որ ներհատուկ է լեզվին: Յեղինակն այս գործառայությունը բացատրում է որպես լեզվի տեքստակազմիչ, լեզուն համատեքստի՝ իրադրության և նախորդող տեքստի հետ հարաբերող գործառայություն: Մ. Յալլիդեյը համոզված է, որ լեզուն իրականում կառուցված է ըստ այս երեք չափումների: Գործառայությունների այս համակարգը բացահայտում է լեզվի

ներքին բնույթը՝ այն հարաբերելով արտաքին միջավայրի հետ [Halliday 1978:48, Leech 1983:56-63, Brown, Yule 2003:1-4, Levinson 1983:41-42]:

Մ. Յալլիդեյն առաջարկում է ոճն ուսումնասիրել իմաստային համակարգի միջոցով՝ կիրառելով իմաստի գործառական մեկնության մոտեցումը: Սա հնարավորություն կտա լեզվական իմաստը կապել նշանային առավել լայն համատեքստին ընդհանրապես: Յետագոտողը մեծապես կարևորում է լեզվական գործառույթի հասկացության դերը լեզուն իր կրթական, զարգացման, հասարակական և գեղագիտական հայեցակերպերով ըմբռնելու համար:

Ամենօրյա կենսագործունեության ընթացքում մարդիկ անընդհատ գտնվում են շփման մեջ, ինչն առավելապես իրականացվում է խոսքային հաղորդակցման միջոցով: Յասարակական փոխազդեցությունը ոչ միայն խոսքարկման հարաբերության հաստատման, այլև միմյանց այս կամ այն տեղեկատվության, գիտելիքի փոխանցման կարիք է առաջացնում: Սա պարտադիր է մարդկային հասարակության բնականոն զարգացման համար: Որոշակի հասարակական պահանջների բավարարումը կանխորոշել է լեզվական արտահայտության տարբեր ձևերի առանձնացումն ու ձևավորումը, որոնք ծառայում են լեզվական գործունեության երկու հիմնարար տեսակներին՝ հաղորդմանն ու ներազդմանը: Շարունակելով խորհրդային ոճագիտության ավանդույթները՝ Մ. Ս. Չակովսկայան հաղորդման և ներազդման գործառույթների երկատումը նախընտրում է քննել ինտելեկտիվ տեղեկատվության՝ գիտական ոճի և հուզարտահայտչական-գնահատողական իմաստային նրբերանգների հաղորդման՝ գեղարվեստական գրականության ոճի հակադրության մեջ: Սակայն երկատման կողքին նա տեսնում է այս երկու ոճերի նաև դիալեկտիկական կապ: «Մի կողմից՝ դրանք հակադրված են, իսկ մյուս կողմից՝ զուգադրված և գտնվում են խոր փոխազդեցության և փոխներթափանցման մեջ» [Чакoвская 1986:5-6]՝ իհարկե, գերակա գործառույթի ոճատարբերակիչ դերի պահպանմամբ: Լեզվի այս հիմնական գործառույթների հատկանիշների ու լեզվական արտահայտման առանձնահատկությունների

ուսումնասիրության համար հետազոտողը նպատակահարմար է գտնում զուգադրական մեթոդը. ընդ որում՝ ուսումնասիրվող լեզվական դրսևորումները, առավելագույնս խստորեն համապատասխանելով հակադրված գործառական ոճերին, պետք է ունենան նույն առարկայական բովանդակությունը: Լեզվաոճական վերլուծությունը Ս. Չակոբյանի ներկայացնում է երեք մակարդակով՝ իմաստային, երբ լեզվական միավորն իրացվում է ուղիղ, անվանողական նշանակությամբ, վերնշանային, երբ լեզվական միավորի՝ իմաստային մակարդակում ունեցած բովանդակությունն ու ձևը կարող են նոր մետաբովանդակության (իմաստային հավելյալ նրբերանգներ՝ հարանշանակություն, փոխաբերություն, կերպարայնություն) արտահայտություն դառնալ կոնկրետ համատեքստում, վերվերնշանային, երբ հեղինակի մտադրությունն արտահայտելու համար լեզվական միավորների միջոցով իրացվում են ոճական հնարներ, որոնք պետք է դիտել նաև արտալեզվական համատեքստի շրջանակում [Чакoвская 1986:12]:

Գործառական ոճագիտության ասպարեզում ուշագրավ են ժամանակակից ռուսական լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչ Ն. Ս. Ռազինկինայի մոտեցումները: Ձարգացած գրական լեզվի գործառական-ոճական շերտավորման հետ կապված հարցերում թեև չկա մոտեցման բացարձակ միասնություն, ինչևէ, ըստ լեզվաբանի՝ մի շարք դրույթներում դիտվում է դիրքորոշումների որոշակի հստակություն: Սա հնարավորություն է տալիս առանձնացնել և նկարագրել հաղորդակցական գործառական-ոճական համակարգերը: Այդպիսի դիրքորոշումներից են այս կամ այն ոճի լեզվական առանձնահատկությունների դիտարկումը դրա գոյության արտալեզվական (ներառյալ սոցիալական) պայմանների առնչությամբ, որոշակի նպատակաուղղվածության առկայությունը, ըստ որի իրականացվում է գործառական ոճերի առանձնացումը, ինչպես նաև տարբեր մակարդակների լեզվական միջոցների ընտրությունը, որոնք ավանդաբար համադրվում են մարդու հաղորդակցական գործունեության տարբեր ոլորտների ու դրսևորումների հետ, գործառական ոճում ասույթի նպատակահարմարության և բազմատեսակ

կրկնվող, կարծրատիպային լեզվական երևույթների փոխհարաբերությունը, գործառական-ոճական գոյացության շրջանակում ժանրային տարբերակման առկայությունը և այլն [Разинкина 2004:6-7]: Միաժամանակ այս հարցերը *գործառական ոճ* հասկացության սահմանման բաղադրիչներ են:

Ն. Ռազինկինան, չհակադրվելով այս ավանդական մոտեցումներին, հնարավոր է համարում գործառական ոճի իր առաջադրած հայեցակարգը, որի հիմքում ընկած է այն դրույթը, որ գործառական ոճը «բարձր աստիճանի ներդաշնակ, կարգավորված, ամբողջական և, որպես հետևանք, գեղագիտորեն նշանակալի» [Разинкина 2004:7] երևույթ է: Քանի որ գործառական ոճն ունի նպատակային հստակ առաքելություն, տրամաբանական է, որ այն իրացնող լեզվական տարրերը նպատակաուղղված ու նպատակահարմար իմաստային-գործառական փոխկապվածություն են դրսևորում թե՛ լեզվական կառույցի ներսում և թե՛ արտալեզվական իրականության հետ շփման, փոխհարաբերության մեջ: Գործառական ոճի այս հատկանիշն ունի գեղագիտական արժեք: Հայտնի է, որ գեղագիտության հիմնական հասկացություններն են գեղեցկությունը, ամբողջականությունը, ներդաշնակությունը, նպատակահարմարությունը և այլն: Մի կողմից՝ խոսքի բովանդակության ու ձևի համապատասխանությունը, մյուս կողմից՝ սրանց միասնության նպատակահարմարությունն իրադրային համատեքստին և առաջադրանքի իրականացմանը ստեղծում են գեղեցկության ու ներդաշնակության յուրօրինակ մոդել: Գեղեցկության մասին խոսելիս պետք է անպայման նշել դրա մեկ այլ կարևորագույն բաղադրիչի մասին. խոսքը վերաբերում է ունկնդրի/ընթերցողի ընկալմանը, այսինքն՝ գեղագիտական հաճույքին: Ամբողջականության հատկանիշը Ն. Ռազինկինան դիտում է ոչ միայն գործառական հաղորդակցման իրացման, այլև ինքնին ոճի ներսում ժանրային կազմակերպման՝ մասնավորապես ժանրերի ստորակարգման և գործառական միասնության առումով: Հետազոտողը գործառական ոճի էությունն ու բնույթը ներկայացնում է կենտրոնամետ ու կենտրոնախույս միտումների միջոցով: Առաջինը հիմնական ոճակազմիչ և ոճատարբերակիչ լեզվական

նյութն է, երկրորդը՝ այսպես կոչված ներոճական տարատեսակությունը (վարիացիաներ), որ շարժունություն է ստեղծում կոնկրետ տեքստերի լեզվական նյութում: Այս երկու միտումները միաժամանակ գործում են լեզվում և թույլ են տալիս խոսել գործառական ոճի զարգացման դինամիկայի, ինչպես նաև լեզվական ընտրության օրինաչափությունների և ոչ թե այս կամ այն ոճի մեկընդմիջտ ամրագրված լեզվական երևույթների մասին: Այստեղ ակներև է դիրքորոշման նմանություն Ս. Կոժինայի հետ, որը նույնպես խոսում է որևէ ոճին հատուկ լեզվական միջոցների, առանձնահատկությունների ոչ թե որոշակի շարքի, այլ դրանց գործառության որոշակի, բայց և բավական լայն ընդգրկմամբ տատանվող օրինաչափությունների մասին: Այս երևույթը Ն. Ռազինկինան համեմատում է փիլիսոփայության մեջ հոմեոստազի՝ անկայուն հավասարակշռության հետ, որի գաղափարը համակարգի պահպանման համար էական հատկանիշների հնարավոր սատարումն է: Յուրաքանչյուր գործառական ոճ ունի լեզվական տարրերի ընտրության և կիրառման իրեն հատուկ և իրեն մյուսներից տարբերող հենքային սկզբունք: Եթե այս սկզբունքն ընկալվի որպես լեզվական միջոցների որոշակի շարքի «նախանշում», ապա կգծագրվի գործառական ոճի ստատիկ պատկեր, իսկ եթե գործառական ոճն ընկալվի տարբերակայնության հնարավորության տեսանկյունից, ապա այն կդրսևորվի իր դինամիկ կողմով: Առաջինը հետահայաց մոտեցում է՝ պայմանավորված լեզվամշակութային ավանդույթով, երկրորդը՝ հեռահայաց, որը ենթադրում է ասույթի հնարավոր կոնկրետ առաջադրանքների ընդգրկում: Այս երկու մոտեցումների համադրությունն է միայն թույլ տալիս գործառական ոճը դիտել որպես յուրահատուկ ամբողջական համակարգ՝ օժտված որոշակի տարբերակայնությամբ [Разинкина 2004:51-52]: Յուրաքանչյուր ոճում այս կամ այն համամասնությամբ (կախված հաղորդակցական ուղղվածությունից) գոյություն ունեն լեզվական կարծրատիպի և տարբերակայնության, նույնիսկ յուրօրինակության դրսևորումներ: Կարծրատիպերը կարևոր են տեղեկատվության տիպային մոդելների պատշաճ, համարժեք փոխանցման համար: Գոյություն ունեցող լեզվական

այլընտրանքային կամ ինքնատիպ իրացումները խոսքն ավելի բազմերանգ, ճկուն և թարմ են դարձնում: Սակայն նույնիսկ անհատական ինքնատիպ լեզվական դրսևորումները կարող են լայնորեն ընդունվել և կիրառվել հասարակության կամ դրա մի հատվածի կողմից և դառնալ սովորական, կռահելի, ակնկալելի կոնկրետ թեմատիկ համատեքստում: Այլ կերպ ասած՝ առկայացած լեզվական արտահայտությունը կվերածվի ավտոմատ կիրառվող լեզվական արտահայտության: Կարծրատիպայինի և տարբերակայինի «փոխգործակցությունը» լեզվի դիալեկտիկայի դրսևորում է: Գործառական ոճերն ինքնամփոփ ամբողջություններ չեն: Դրանք գտնվում են անընդհատ փոխազդեցության և փոխներթափանցման գործընթացում, որի դրդապատճառներն են հաղորդակցական իրադրության բազմազանությունն ու այլընտրանքային տարբերակայնության հնարավորությունը: Նմանատիպ գաղափարներ արտահայտվել են դեռևս Վ. Վինոգրադովի [Виноградов 1955, 1961, 1963, 1981], Ռ. Բուդագովի [Будагов 1967, 1983] և այլոց կողմից:

Չնայած այն հանգամանքին, որ լեզվաբանների տեսակետների միջև կան որոշ տարամիտումներ՝ նրանք նշում են, որ գրական լեզուն ընդհանրապես և դրանում գոյություն ունեցող գործառական իրացումները մասնավորապես գտնվում են անընդհատ փոփոխության գործընթացում, ինչը պատմական, սոցիալ-քաղաքական, մշակութային, համընդհանուր լեզվական և գործառական բնույթի տարբեր զարգացումների արդյունք է: Սա մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ լեզուն բաց համակարգ է մարդկային հասարակության կառույցի ներսում՝ միաժամանակ հենքային լինելով այդ կառույցի համար:

Գործառական ոճերը մեկ համընդհանուր ազգային լեզվի ավելի նեղ, նպատակային իրացումներ են և հիմնված են այլընտրանքային տարբերակների մեկ հսկայական ռեսուրսին, որից ակունք ու անընդհատ սնունդ են առնում, սակայն թերևս երբեք չեն նույնանում: Գործառական ոճերն իմաստագործաբանական առունով սկիզբ են առնում մարդկային համայնքից՝ արտալեզվական իրականությունից, որպեսզի, լեզվախոսքային ձևակերպում ստանալով, նորից ուղղվեն այդ իրականություն:

Լեզուն սնունդ է առնում այդ միջավայրից, որպեսզի, իր մեխանիզմների միջոցով նոր նյութը մշակելով, այն վերադարձնի հասարակությանը բազմազան կոնկրետ իրացումների ձևով: Այս շրջանառությունն անընդհատ է ու գնալով ավելի մեծ ծավալներ է ստանում, քանի որ մարդկային գործունեության, փոխազդեցության ու ամենատարբեր «փոխանակումների» տեսպերն ու ծավալներն անհամեմատ և աննախադեպ ավելացել են տեղեկատվական բարձր տեխնոլոգիաների մեր դարում: Լեզվի գործառույթները, գործառական ոճերի և առհասարակ խոսքային գործունեության միջև հարաբերություններն ուսումնասիրող մի շարք լեզվաբաններ արտահայտում են այն տեսակետը, որ լեզվի ոճի գոյությունը պայմանավորված է լեզվի հաղորդակցական բնույթով ու հաղորդակցման գործառույթով, ինչպես նաև պատմամշակութային զարգացմամբ: Այս խմբի հետազոտողները պնդում են, որ նույն ոճական կարգերը տարբեր իմաստներով են իրացվում լեզվի տարբեր ոճերում: Պատմության տարբեր ժամանակահատվածներում ոճական բնութագրերը, առանձնահատկությունները և դրանց փոխհարաբերությունը կարող են նույնը չլինել [Виноградов 1955, Балли 1961, Будагов 1967, Кожина 1968, Микоян, Тер-Минасова 1981, Чаковская 1986, Гаспарян 2000, Разинкина 2004]:

Լեզվի գործառական իրացման համընդհանուր սկզբունքները սահմանելով՝ լեզվաբանները նշում են, որ հաղորդակցման գործառույթը ողջ խոսքային գործունեության հիմքն է, որը զանազան իրացումներ է ստանում: Գործառական ոճերը համապատասխանում են լեզվական գործունեության ոլորտներին և առանձնանում ըստ այդ գործունեության ձևերի: Այս տեսակետն իր հաստատումն է գտել նաև պրոֆեսոր Ս. Ք. Գասպարյանի մենագրության մեջ, որը գործառական ուսումնասիրությունների ոլորտում վերջին տարիների հետազոտություններից է: Մենագրության մեջ մեծապես կարևորվում են գործառական-հաղորդակցական մեթոդի կիրառությունը լեզվաբանության մեջ և լեզվի գործառական, կառուցվածքային առանձնահատկությունների ճանաչումն ու պարզաբանումը, որը պարտադիր է լեզվի տեսությունն ըմբռնելու և վեր հանելու համար [Գասպարյան 2000]:

Իր «Գրական լեզուներ և լեզվական ոճեր» գրքում Ռ. Բու-  
դագովը համաձայնում է ակադեմիկոս Վ. Շչերբայի հետ այն  
հարցում, որ լեզվի յուրաքանչյուր տարատեսակ՝ ոճ, «կյանքի է  
կոչվում գործառական նպատակահարմարությամբ» [Будагов  
1967:67]: Դա է պատճառը, որ ոճի հասկացությունը խոր ար-  
մատներ ունի լեզվում, և խոսքի ու մտքի վարպետները միշտ  
զգոն են եղել ոճական տարբերությունների նկատմամբ:

Այսպիսով, գրական լեզվի գործառական խնդիրները  
քննարկելիս լեզվաբաններն ընդգծում են լեզվական միջոցների  
ընտրության և համակցման սկզբունքի դերը գործառական  
դրսևորումների տարբերակման մեջ: Յուրաքանչյուր ոճ բնու-  
թագրվում է մի շարք լեզվական միջոցների ամբողջությամբ, որի  
տարրերը մասամբ հանդիպում են նաև այլ ոճերում: Ինչևէ,  
տարբեր ոճերում դրանց հարաբերակցումը միմյանց և օբյեկ-  
տիվ իրականության հետ որակապես տարբեր է, ինչը հնարավո-  
րություն է ընձեռում հասցեագրողին արտահայտել իր մտքերն  
ու զգացմունքները պատշաճ և իմաստային-գործաբանական  
առումով ընկալելի, ընդունելի ձևով: Այլ կերպ ասած՝ լեզվական  
միջոցների որոշակի փոխհարաբերությունն է խոսքում (տեքս-  
տում, խոսույթում), ինչպես նաև արտալեզվական իրականու-  
թյան հետ, որ տարբերակում է լեզվական մի ոճը մյուսից [Գաս-  
պարյան 2009]:

Այսպես, բազմազան հնչույթային, ձևույթային, բառակազ-  
մական, դարձվածային և շարահյուսական միջոցների, մի կող-  
մից, լեզվի ներսում, մյուս կողմից՝ արտալեզվական իրակա-  
նության հետ փոխհարաբերությունների ուսումնասիրությունը  
գործառական ոճագիտության խնդիրն է: Այլ կերպ ասած՝ գոր-  
ծառական ոճագիտությունն այն գիտակարգն է, որը զբաղվում է  
խոսքում՝ իրական հաղորդակցման մեջ իրացված լեզվական  
միավորների և արտալեզվական գործոնների ուսումնասիրու-  
թյամբ:



## 2.2. Լեզվի գործառնությունը հաղորդում – ներգործում հակադրամիասնության դիտանկյունից

Այս աշխատանքի ուսումնասիրության առարկան՝ քաղաքական խոսույթը, հրապարակախոսական արձակի ոճաժանրային ինքնատիպ դրսևորում է: Հրապարակախոսական գործառնական ոճը ձևավորվել է գրական լեզվի շրջանակում և դրա պատմական հիմքի վրա: Այս ոճն առանձնանում է ուրույն իմաստագործառնական, կառուցվածքային և ոճական տարրերի համալիր միասնությամբ և ամբողջությամբ: Ոճականորեն նշույթավորված լեզվական միավորների սերտ փոխհարաբերությունն այդ ամբողջության մեջ ուղղված է որոշակի հաղորդակցական նպատակի՝ արտալեզվական առաջադրանք իրականացնելուն: Այս ոճի առանձնացումը պայմանավորված է վերոհիշյալ նպատակով, դրան ծառայող գործառնություններով, ընդգծված առանձնահատուկ հանրային բովանդակությամբ և համապատասխան արտահայտում ապահովող որոշակի կառուցվածքով: Պետք է նշել, որ կառուցվածքը մեծապես կախված է բովանդակությունից և արտալեզվական իրականության լեզվական դրսևորումն է: Հրապարակախոսական ոճն ընդհանրապես և այն ներկայացնող միավորները մասնավորապես իրենց հենքում ունեն արտալեզվական իրականությունը:

Հրապարակախոսական ոճը հասարակական գիտակցության ձև է և արտահայտում է հեղինակի կամ խոսողի տեսակետը պատմական, հասարակական, քաղաքական, սոցիալական, գաղափարախոսական, մշակութային իրականությունների վերաբերյալ, ինչը պայմանավորված է ազգային և համաշխարհային քաղաքակրթության ու մշակույթի համատեքստում նրա անձնական փորձի առանձնահատկություններով: Ոճի արտալեզվական խնդիրն իրագործվում է լեզվի տարբեր հայեցակետերի տարրերի յուրահատուկ համաձայնության և հարաբերակցության միջոցով: Տարրերի այս համաձայնությունն ու հարաբերակցությունը պետք է լինի ոչ միայն լեզվական մակարդակում, այլ նաև արտալեզվականում: Այլ կերպ ասած՝ լեզվական տարրերի բնույթը պետք է ներդաշնակ լինի իրենց արտահայտած արտալեզվական իրողությունների էությանը:

Խոսքի ձևի և բովանդակության փոխհարաբերության առնչությամբ մեծ կարևորություն են ձեռք բերում լեզվական միավորների խոսքային տարբեր դրսևորումներն իրենց բացահայտ և ներակա իմաստային նրբերանգներով: Յուրաքանչյուր լեզվական միավոր կամ կառույց դիտարկվում է որոշակի բովանդակության՝ արտալեզվական համատեքստի հետ հարաբերության մեջ:

Համաձայնելով և պաշտպանելով այն հենքային թեզը, որ լեզվախոսքային արտահայտման բոլոր ձևերը մեկ ընդհանուր համագոյային լեզվի մասն են՝ ինչևէ, պետք է փաստել, որ յուրաքանչյուր գործառական ոճ ունի արտահայտման ուրույն ձևեր՝ լեզվական տարրեր, խոսքային գործունեության միջոցներ: Լինելով հանրային գիտակցության ձևեր՝ գիտությունն ու արվեստն ունեն աշխարհի յուրացման իրենց հատուկ ձևերը. մինչ արվեստը բացահայտում է էականը կոնկրետ զգացմունքային բնույթ ունեցող ձևի մեջ, գիտության պարագայում սա արվում է ընդհանրացված բնույթ ունեցող հասկացությունների և օրենքների միջոցով: Տրամաբանական (գիտական) մտածողության մեջ գիտնականը գնում է իրականության մեջ կոնկրետից դեպի մտածողության մեջ վերացականը, իսկ պատկերավոր (գեղարվեստական) մտածողության մեջ արվեստագետը ձգտում է երևույթների կոնկրետ իրացման և դրանք օժտում է հուզականորեն վառ, ինքնատիպ արտահայտությամբ [Разинкина, 2004:12]: Միևնույն ժամանակ խոսքի գործառույթները և հետևաբար գործառական ոճերը երբևէ չեն կարող սահմանվել որպես մեկուսացած, իրարից բացարձակապես տարանջատված երևույթներ: Այս տեսանկյունից զարմանալի չէ, որ որոշ փոխգործակցություն է նկատվում, օրինակ, գիտական և գեղարվեստական ոճերի միջև: Գիտական շարադրանքում (հատկապես բանավոր իրացման մեջ) կարող են հանդիպել պատկերավոր, հուզական արտահայտման ձևեր, որոնք ունեն հստակ գործաբանական հանձնարարական՝ ընթերցողի/ուսնկնդրի ուշադրությունը գրավելով, նրա վրա տպավորություն գործելով՝ ավելացնել տրամաբանական տեղեկատվության լսելիությունն ու ապացուցելիությունը լսարանի համար: Գեղարվեստական

գրականության մեջ նույնպես կարելի է հանդիպել «չոր» գիտական տրամաբանական շարադրանքի հատվածների, որոնք ոչ թե տվյալ իմաստային տեղեկատվության փոխանցման, այլև վերնշանային բովանդակության հաղորդման (օրինակ՝ կերպարի նկարագրում, բացահայտում, որոշակի սյուժետային երևույթների մեկնաբանում, կանխատեսում և այլն) խնդիր ունեն: Այսինքն՝ այս այլաոճ տարրերը դիտարկվում են որպես «ներխուժումներ», հեղինակային անհատականության դրսևորումներ կամ կոնկրետ գործաբանական նպատակ իրականացնող խոսքային դրսևորումներ և օրգանական բնույթ չեն կրում կամ էլ ոճականորեն փոխակերպված են հանդես գալիս տվյալ գործառական-ոճական համատեքստերում:

Հրապարակախոսական գործառական ոճում հանդիպում ենք տարբեր գործառական ուղղվածության լեզվական միջոցների յուրահատուկ համագոյակցության: Սա պայմանավորված է լեզվի գործառական ոճերի ողջ համակարգում վերոհիշյալ ոճի դիրքով: Հրապարակախոսական ոճը որպես լեզվի յուրահատուկ գործառական դրսևորում միջակա դիրք է գրավում խոսքի երկու հիմնական գործառույթներն իրացնող գործառական ոճերի՝ տեղեկատվականի և գեղարվեստականի միջև: Այնուամենայնիվ, պետք է նշվի, որ հրապարակախոսական ոճն իր ուրույն անկախ տեղն ու դերն ունի խոսքում: Օրինակ՝ օրենքի լեզվի հիմնական առանձնահատկություններն են արտահայտության հստակությունը և ճշգրտությունը, գեղարվեստական գրականության պարագայում՝ հուզական-արտահայտչական-գնահատողական նրբերանգների գերակայությունը, իսկ գիտական խոսքին հատուկ է տրամաբանականությունը, որը ենթադրում է գիտաբանների և չեզոք բառիմաստների առկայություն: Հրապարակախոսական արձակում նկատվում է երկատում. մի կողմից՝ կա օբյեկտիվության, իսկ մյուս կողմից՝ հասարակական կարծիքի վրա ներազդելու միտում [Микоян, Тер-Минасова 1981]: Այսպես, ակնհայտ է դառնում, որ հրապարակախոսական ոճը ձգտում է թե՛ արտահայտչականության և թե՛ տրամաբանականության: Սա հաստատում է այն միտքը, որ քննարկվող գործառական ոճը միաժամանակ թե՛ հակադրվում է երկու հիմնա-

կան տարաբևեռ գործառական ոճերին (գիտական և գեղարվեստական ոճեր) և թե՛ դրանցից յուրաքանչյուրի հետ շատ ընդհանրություններ ունի: Ի՞նչ է սա նշանակում: Արդյո՞ք սա նշանակում է, որ տարբեր գործառական ուղղվածության տարրերը պարզապես համագոյակցում են հրապարակախոսության մեջ, և հնարավոր է դրանից դուրս մղել երկու հիմնական գործառույթներից որևէ մեկն իրացնող տարրերն առանց խոսքի գործառական ուղղվածությունն աղճատելու: Պատասխանը բացասական է: Ինչպես Գ. Մուրադյանն է գրում իր ատենախոսության մեջ, « ... հրապարակախոսական գործառական ոճը գոյաբանորեն իսկ կապված է հաղորդման և ներգործման գործառույթների հետ, որոնց դիալեկտիկական հակադրամիասնությունն ուղղված է լուծելու որոշակի հասարակական խնդիրներ և ըստ էության պետք է դիտարկվի որպես հասարակական գիտակցության ուրույն ձև» [Մուրադյան 2003:26]:

Մարդկային էությունը՝ մտածողությունը, խոսքը, վարքը, ներդաշնակորեն ամբողջական գոյություն է, որը ձևավորվում է ոչ միայն համասեռ, այլ նաև տարասեռ և նույնիսկ տարամետ տարրերից: Սրանց համագոյակցումն ու անընդհատ պայքարը, հաղթանակներն ու փոխզիջումները, փոխակերպումներն ու փոխներթափանցումն ապահովում են մարդկային հանրության կենսական դիալեկտիկական և դինամիկ զարգացումը: Լեզվի գործառության հրապարակախոսական դրսևորումն իր ունեցած միջակա դիրքի շնորհիվ մարդկային էության հակադրամիասնության ճշմարիտ, առավել համակողմանի արտացոլում է: Իր խոսքը հրապարակ հանելով՝ մարդը պետք է այն հասկանալի, մատչելի, ընկալելի դարձնի մարդկանց լայն զանգվածների համար: Հետևաբար այդ խոսքը պիտի լինի և՛ տրամաբանական, և՛ զգացմունքային: Այս երկուսի անհրաժեշտ համամասնությունն է, որ ներդաշնակություն է գտնում մարդկային էության հետ: Պատահական չէ, որ հրապարակախոսությունը մեր թվարկությունից առաջ ի հայտ է եկել լեզվի հենց բանավոր տարբերակով և զարգացել ու կանոնակարգում ստացել հռետորական արվեստի տեսքով:

Արդյո՞ք սա կամայական համամասնություն է: Ի տարբերություն մյուս գործառական ոճերի՝ հրապարակախոսական գործառական ոճը «ոչ թե օգտագործում է» հաղորդման կամ ներազդման գործառույթն ի հավելում իր հիմնական գործառույթին, «այլ գոյաբանորեն իսկ իր մեջ ներառում է դրանք» [Մուրադյան 2003:35]: Գ. Մուրադյանը սա բնորոշում է որպես լեզվի ոճագործառական «դիալեկտիկական հակադրամիասնություն», որով ստեղծվում է «այն ոճական միջավայրը», որում ներկայացվում է օբյեկտիվ իրականությունը՝ զուգորդվելով հեղինակի/հռետորի դիրքորոշմամբ ու գնահատականով: «Հրապարակախոսական ոճի «միս ու արյուն» հանդիսացող երկու գործառույթներից ցանկացածի բացակայության դեպքում ոճը չի կայանա» [Մուրադյան 2003:36], թեև դրանց համամասնությունը կարող է տարբերվել՝ կախված արտալեզվական առաջադրանքից: Հաղորդում ու ներգործում պահանջող արտալեզվական հիմքը հաղորդում ու ներգործում ապահովող լեզվական միջոցների հետ միասին կազմում են բնական, օրգանական, ներդաշնակ ինքնուրույն մի ամբողջություն, որը կոչվում է հրապարակախոսական գործառական ոճ: Հրապարակախոսական լեզվական դրսևորման կարևորությունն անհամեմատ մեծանում է, երբ խոսքը վերաբերում է անգլերենին՝ թիվ մեկ միջազգային լեզվին, այսպես կոչված լինգվա ֆրանկային<sup>7</sup>: Գլոբալացման մեր ժամանակաշրջանում, երբ երկրների և ազգերի միջև տնտեսական, քաղաքական, գիտական, մշակութային հարաբերություններն ու կապերն աննախադեպ թափ և ընդգրկում են ստացել, անգլերենը որպես կայացած միջազգային լեզու թևակոխել է համաշխարհայնացման փուլ [Sutton 2006, Wierzbicka 2006, Coupland, Jaworski, Hampshire (Eds.) 1997]: Անգլալեզու հրապարակախոսությունը՝ մասնավորապես քաղաքական խոսույթն ապահովում է այն ընդարձակ դաշտը, որտեղ ներկայացվում, քննարկվում, վիճարկվում են ազգային և միջազգային հանրության կենսագործունեության տարբեր ոլորտների վերաբերող հարցեր, կայացվում և չեղյալ հայտարարվում ազգերի համար ճակատագրական որոշումներ, հայտարարվում և դադարեցվում պատերազմներ, ձեռք բերվում տնտեսական ճգնաժամ

մի հաղթահարմանը միտված փոխզիջումներ, քարոզվում ազգամիջյան հանդուրժողականություն և մշակութային բազմազանություն:

Այսպիսով զարմանալի չէ, որ անգլալեզու հրապարակախոսությունը՝ հատկապես իր քաղաքական դրսևորմամբ, ներկայումս ստանձնել է ևս մեկ շատ կարևոր առաքելություն. այն դարձել է ժամանակակից արժեքների փոխանցման, տեղեկացվածության բարձրացման լեզվական հիմնական միջոցը: Ընդ որում՝ այդ արժեքների շարքում կենտրոնական դիրք են զբաղեցնում ժողովրդավարական արժեքները: Կարելի է եզրակացնել, որ խոսքի այս գործառական տարատեսակի անգլալեզու դրսևորումը նպաստում է, մի կողմից, անգլերենի, մյուս կողմից՝ ազգերի ժողովրդավարացմանը: Ժամանակակից աշխարհի զարգացումների համատեքստում անգլերենի այս գործառական տարատեսակն ավելի մեծ կարևորություն է հաղորդում գրական անգլերենին ընդհանրապես՝ ինչ-որ առումով այն օրինակ դարձնելով մյուս բոլոր լեզուների համար:

Իր գոյության ընթացքում անգլալեզու հրապարակախոսության ոճն ակունք է առել ու հարստացել ընդհանուր գրական անգլերենից: Վերջինիս զարգացումը խթանել է նաև քննվող ոճի զարգացումը: Հրապարակախոսական ոճն էլ իր հերթին ընդլայնում ու հարստացնում է գրական լեզվի բառապաշարը, հասկացական և իմաստային համակարգը, կառուցվածքային բազմազանությունն ու ճկունությունը: Արագ փոփոխվող ժամանակակից կյանքը լեզուն դարձնում է առավել զգայուն, քան երբևէ, ինչը հանգեցնում է որոշակիության, տրամաբանականության, ճշգրտության, ինչպես նաև պատկերավորության, զգացմունքայնության, հումորի, հեգնանքի արտահայտման նոր, ավելի դինամիկ ու դիպուկ լեզվական ձևերի ստեղծմանը: Լեզուն այն է, ինչ կա մարդկանց կյանքի տարբեր ոլորտների գործառույթներին ծառայելու արդյունքում:

Գեղարվեստական և ոչ գեղարվեստական ոճերի ազդեցության ներքո հրապարակախոսական ոճը նաև ենթակա է ձևաբանական ու շարահյուսական փոփոխությունների: Թափանցելով հրապարակախոսական լեզու՝ «օտար» տարրերը

ծեռք են բերում նոր հարանշանակային իմաստներ ու նրբերանգներ, հարմարվում յուրահատուկ գործառական միջավայրին, այսպես ասած «հրապարակախոսականացվում»:

Մարդկային մտածողության երկու ուղղությունների՝ տրամաբանական ճանաչողության և հուզական ընկալման սկզբունքային տարբերությունը ելակետային է և որոշիչ ցանկացած լեզվախոսքային իրացման ոճական դրսևորման և ուսումնասիրության համար, քանի որ երկու հիմնական գործառական ոճերը համապատասխանում են մարդկային մտածողության այդ երկու ուղղություններին:

Այսպիսով, հրապարակախոսական արձակի և, հետևաբար, քաղաքական ելույթի վերլուծությունը պետք է իրականացվի երկու հիմնական գործառական դրսևորումների հակադրության հիման վրա, ինչն առկա է հրապարակախոսական արձակի բոլոր տարատեսակներում:

Ինչպես արդեն նշվել է վերը, հրապարակախոսական ոճում՝ ներառյալ քաղաքական խոսույթում, խոսքի երկու հիմնական գործառույթները համագոյակցում են, և այդ գործառույթների փոխազդեցությունը մշտական է և կանոնավոր: Հետևաբար, իր հասարակական առաքելության մեջ լեզվի այս գործառական դրսևորումն ունի երկու խնդիր՝ հաղորդում/տեղեկացում և ներգործում/ներագրում. սա է գործառական ոճի հիմնական հակադրությունը, որը կոնկրետ խոսքային իրացումներում երևան է գալիս մի շարք ածանցյալ հակադրությունների միջոցով՝ օբյեկտիվ – սուբյեկտիվ, տրամաբանական – հուզական, գրքային (գրավոր) – խոսակցական (բանավոր), փոխաբերական – ուղղակի, ոչ իրական (երևակայական) – իրական (փաստագրական) [Մուրադյան 2003:39]:

Օբյեկտիվ – սուբյեկտիվ հակադրությունն էական նշանակություն ունի հրապարակախոսական նպատակաուղղվածության առաջադրանքն իրականացնելու համար: Պետք է ապահովվի, մի կողմից, հաղորդագրության ճշգրտությունը, ամբողջականությունը և կենսականությունը, իսկ մյուս կողմից՝ հեղինակի վերաբերմունքը, դիրքորոշումը դրա նկատմամբ: Հաճախ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններն այնքան նուրբ են միա-

հյուսված, որ նույնիսկ դժվար է դրանք խոսքում ճանաչել և առանձնացնել:

Տրամաբանական – հուզական հակադրությունը հենքային է հաղորդում – ներգործում ընդհանուր հակադրության մեջ: Այն մեծապես բացահայտում է լեզվական ձևերի ոճական իմաստները՝ կապված աշխարհընկալման ու ճանաչողության առանձնահատկությունների հետ: Տրամաբանականությունը կարող է արտահայտվել պատճառահետևանքային կապեր ցույց տվող, խոսքի ընթացքը կարգավորող, ինչպես նաև շատ դեպքերում պարբերաբար կրկնվող, կանխատեսելի բառաձևաբանական և կառուցվածքային միավորների միջոցով: Հուզականություն ստեղծելու համար առաջին պլան են հանվում արտահայտչականություն, գնահատողականություն, դարձվածայնություն, իմաստային բազմաձայնություն, խտացում, ուժգնացում ապահովող լեզվական միավորները:

Գրքային և խոսակցական տարրերի փոխգործակցությունը միանգամայն բնականոն է քննարկվող գործառական ոճում, քանի որ վերջինս մեծ մասամբ ուղղված է հասարակության լայն զանգվածներին: Հրապարակախոսական գործառական ոճը հարստանում է, մի կողմից, առօրյա խոսքի մասամբ չեզոքացած տարրերով, իսկ մյուս կողմից՝ հասարակական-քաղաքական, տնտեսագիտական, իրավաբանական բառ-հասկացություններով, որոնք այս գործառական համատեքստում հանրամատչելի ու առավել հասանելի են դառնում հասարակության տարբեր խավերի ու մասնագիտական խմբերի համար: Հրապարակախոսության լեզուն իր մեջ է ներառում նաև պաշտոնական բառեր և արտահայտություններ՝ իրենց յուրահատուկ շարահյուսական մատուցմամբ: Սակայն սրանք չեն «ծանրացնում» խոսքը, այլ պարզապես այն ավելի ծանրակշիռ են դարձնում: Այս բազմատարր համաձուլվածքը խիստ արժեքավոր է. այն կիրթ, հարուստ և միաժամանակ հասարակության ամենատարբեր խավերին հասանելի լեզվով մատչելի է դարձնում ամենահրատապը, էականը և առաջավորը:

Քննարկվող գործառական ոճում փոխաբերական – ուղղակի իմաստների ոճական հակադրության մեջ նկատելի է հուզար-



տահայտչական-գնահատողական լեզվական միավորների լրացուցիչ, հարանշանակային, յուրահատուկ զուգորդումներ առաջացնող իմաստների որոշակի չեզոքացում, քանի որ հրապարակախոսական ոճի առաջնային նպատակը ոչ թե զուտ գեղագիտական տպավորությունն է, այլ, բավական կոնկրետ նպատակներից ելնելով, կոնկրետ տեղեկատվության հաղորդումը նաև ոչ հազվադեպ ներակա կերպով կամ փոխաբերական քողի ներքո: Ինչևէ, այստեղ էական է թյուրըմբռնման տեղիք չտալ:

Երևակայական – փաստագրական հակադրությունը հրապարակախոսական գործառական ոճում դրսևորվում է փաստական իրողություններ և երևակայական մտահայեցողություններ արտահայտող լեզվական միջոցների նպատակային ընտրությամբ: Այնուամենայնիվ, գոյություն չունի այսպիսի միջոցների բացարձակ անհամատեղելիություն. մի կողմից՝ իրականացվում է համոզում փաստական, օբյեկտիվ, «սառը» լեզվական կաղապարների, մյուս կողմից՝ ներշնչում սուբյեկտիվ, հուզական մեծ լիցք ունեցող լեզվական ձևերի միջոցով:

Այսպիսով, գործառական ոճը թելադրում է իր ուրույն սկզբունքները լեզվի թե՛ արտահայտչականությամբ և թե՛ տեղեկատվության հաղորդման տրամաբանականությամբ: Հրապարակախոսական ոճի այնպիսի վառ դրսևորման մեջ, ինչպիսին է քաղաքական խոսույթը, լեզվի երկու հիմնական գործառույթներն իրենց յուրահատուկ փոխներթափանցված իրացումն են գտնում՝ ստեղծելով առանձնահատուկ *գործառական միջավայր*, որը կարելի է բնորոշել որպես *ֆաղափականացված* և որն աչքի է ընկնում իր *արտահայտչականության* մեջ: Հաղորդման և ներազդման գործառույթները, գոյաբանորեն ներհատուկ լինելով խոսքի այս ոճագործառական տարատեսակին և ձևավորելով յուրօրինակ հակադրամիասնություն, կազմում են դրա կայացման ու գոյության կենսական հիմքը:

Քաղաքական ելույթը շնորհիվ անմիջական զանգվածային հաղորդակցման իր ձևաչափի լեզվական և արտալեզվական իրողությունների փոխազդեցության լայն հնարավորություն է տալիս: Իրական ժամանակում տեղի է ունենում իրականության արտացոլում և կերտում: Մարդկանց զանգվածներին տեղե-

կատվության փոխանցումը, նրանց մտքերի և հույզերի վրա ներգործումն ապահովում են քաղաքական ելույթի դինամիկան, ինչպես նաև ելույթի հաջողվածության և հաջողության գրավականն են:

## Ծանոթագրություններ

1. *Լեզվի գործածություն*ն արտահայտությունը, բնականաբար, լեզու-խոսք երկատման և միասնության վերաբերյալ մտորումների է հանգեցնում: Դեռ շվեյցարացի ականավոր լեզվաբան Ֆ. դը Սոսյուրը *լեզուն (langue)* սահմանել է որպես նշանների և հարաբերությունների վերացական համակարգ՝ յուրացված տվյալ խոսքային հանրույթի կողմից, իսկ *խոսքը (parole)*՝ որպես լեզուն գործածության մեջ կամ խոսքի անհատական գործածությունները: Լեզուն և խոսքը, ըստ գիտնականի, կազմում են *խոսքային գործունեության (langage)* ամբողջությունը, որը ելակետային է նրա հայեցակարգում: Չնայած լեզու-խոսք խիստ տարբերակմանը՝ Ֆ. դը Սոսյուրը նշում է, որ դրանք սերտորեն փոխկապակցված են. լեզուն անհրաժեշտ է, որպեսզի խոսքը հասկանալի լինի, իսկ խոսքը լեզվի կայացման պայմանն է [де Соссюр 1977, 1990, Будагов 1988, Պողոսյան 1990]:

Հետաքրքիր է նաև գերմանացի հայտնի փիլիսոփա և լեզվաբան Վ. Ֆոն Յունբուլդտի ավելի վաղ ներկայացրած հայեցակարգը *լեզու* և *խոսք* հասկացությունների վերաբերյալ: Ըստ նրա՝ կենդանի խոսքի յուրաքանչյուր ակտ անվանվում է լեզու՝ ամենապարզ իմաստով: Սակայն ճշմարիտ իմաստով՝ լեզու կարելի է նաև անվանել միայն այսպես ասած ողջ խոսվածքի ամբողջությունը: Լեզու-խոսք տարբերակումով հանդերձ, ինչևէ, Վ. Ֆոն Յունբուլդտը լեզվի ճշմարիտ էությունը տեսնում է հենց խոսքաստեղծման մեջ և, ի տարբերություն Ֆ. դը Սոսյուրի, ընդգծում լեզվի հենց այս հայեցակերպը: Խոսքն է լեզվի կենդանի էությունը և դրա առաջնային, բնական գոյավիճակը: Լեզուն գոյություն ունի խոսքում և սնվում է խոսքից՝ որոշակի ֆիլտրման ու կանոնակարգման ենթարկելով նոր գոյացությունները [Фон Гумбольдт 1984]:

Մի կողմից՝ մարդն ուսումնասիրում է լեզվի միջոցները խոսքում և խոսքի միջոցով, իսկ մյուս կողմից՝ կառուցում իր խոսքն այդ միջոցներով: Ընդ որում՝ ցանկացած խոսք նպատակային է (լայն

իմաստով) և իրականացնում է որոշակի գործառույթ (թեկուզև խոսքարկման գործառույթ):

2. «Գրական լեզուն համաժողովրդական լեզվի մշակված ձևն է, որն ունի քիչ թե շատ գրավոր ամրագրված նորմեր» [Будагов 1967:5, 1983:241]:
3. Լեզվի՝ իբրև մտքերի ձևավորման միջոցի գործառույթն անվանվում է կառուցողական Լ. Խաչատրյանի ձեռնարկում: Լեզուն մտածողության հիմնական միջոցն է և մտքերի կառուցմանը, ձևավորմանը մասնակցում է իր նյութական միավորների և դրանց շարակարգային հնարավորությունների միջոցով [Խաչատրյան 2008]:
4. Հիշատակման արժանի է նաև շվեյցարացի գիտնական, ժնևի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչ Շ. Բալլիի աշխատությունը: Նրա գիրքը, որը կոչվում է «Traite' de stylistique française», գրված է գործառական-ոճական հայեցակերպով [Балли 1961]: Իր գրքում Շ. Բալլին ասում է, որ ոճագիտությունն ուսումնասիրում է լեզվական համակարգի արտահայտչական փաստերը դրանց հուզական բովանդակության տեսանկյունից, այսինքն՝ թե ինչպես են հույզերի ոլորտի երևույթներն արտահայտվում խոսքում, և խոսքային դրսևորումներն ազդում զգացմունքների վրա: Շ. Բալլին լեզվի հուզարտահայտչական փաստերի ուսումնասիրությունը համարում է ոճագիտության առարկա և դրանք դիտարկում արտահայտության նպատակի ու բովանդակության առնչությամբ և, ինչը թերևս հատկապես արժեքավոր է, մտածողության, խոսքի գործառության ոլորտի ու այլ արտալեզվական գործոնների հետ հարաբերակցության մեջ:

Պրահայի լեզվաբանական խմբակի (ՊԼԽ) ներկայացուցիչները, որոնք մեծ ներդրում ունեն գործառական ոճերի ուսումնասիրության մեջ, որպես լեզուն բնութագրող երկու կարևոր ցուցիչներ են նշում լեզվական դրսևորումների ինտելեկտուալությունը և ազդեցիկությունը, որոնց համաձայն լեզուն կարող է ունենալ կամ հաղորդակցման գործառույթ՝ ուղղված դեպի նշանակյալը, կամ պոետիկ գործառույթ՝ ուղղված դեպի ինքնին նշանը [Пражский лингвистический кружок 1967]: Ըստ ՊԼԽ տեսության՝ ինտելեկտուալացված խոսքային գործունեությունն ունի առաջնահերթորեն սոցիալական, հանրային ուղղվածություն և կախված է արտալեզվական իրականությունից: Ուստի լեզվաբանական վերլուծությունը պետք է կատարել գործառական տեսանկյունից, մասնավորապես երբ ուսումնասիրության առարկան լեզվի (լայն իմաստով) գործունեությունն է:

Չեխական լեզվաբանական դպրոցն ակտիվ ուսումնասիրություններ է կատարել գործառական ոճագիտության ուղղությամբ և մեծ դեր ունի այդ ասպարեզում: Լեզվաբանական ոճագիտության մեջ այն առանձնացնում է հետևյալ ուղղությունները. «1) համաժողովրդական լեզվի գործառական շերտավորման ոճագիտություն, ընդ որում՝ ոճական շերտի տակ պետք է հասկանալ ոճականորեն երանգավորված միջոցների ամբողջություններ, 2) լեզվական դրսևորման ոճագիտություն՝ ա) յուրաքանչյուր եզակի, կոնկրետ լեզվական դրսևորման կամ արտահայտության ոճագիտություն, բ) ասույթի որոշակի ոճական տիպերի ոճագիտություն, որն ուսումնասիրում է այսպես կոչված գործառական ոճերը (գիտական, գեղարվեստական և այլն)» [ըստ՝ Кожина 1968:65]:

5. Քերականություն կամ քերականական համակարգ ասելով՝ Մ. Հալլիդեյն ի նկատի ունի լեզվի բառաքերականական համակարգ, այսինքն՝ բառապաշարը ներառյալ:
6. *Իմաստային ակտ (act of meaning)* արտահայտությունը փաստորեն կիրառվում է *խոսքային ակտ (speech act)* արտահայտության նշանակությամբ:
7. Լինգվա ֆրանկան (lingua franca) բնորոշվում է որպես տարբեր մայրենի լեզուների ունեցող մարդկանց հաղորդակցման լեզու [Hornby 2000, ABBYY Lingvo 12]:

### ԳԼՈՒԽ 3

#### **ԱՐՏԱԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄՆ ՈՒ ԿԵՐՏՈՒՄԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵԼՈՒՅԹԻ ՀԱՍՏԵՔՍՈՒՄ**

Ժամանակակից քաղաքական խոսքը դիմամիկ է ու հարուստ: Կյանքի տարբեր ոլորտների իրադարձությունները, խնդիրներն ու նվաճումները, ապրումներն ու հույզերն անմիջապես իրենց արտացոլումն են գտնում քաղաքական հաղորդակցման մեջ: Լեզուն՝ որպես հաղորդակցման հիմնական ու կարևորագույն միջոց, իր բազմազան ու բազմաբնույթ ռեսուրսները տրամադրելով մարդուն՝ հնարավորություն է տալիս նրան ընտրելու և որոշակիորեն համակցելու դրանք իր տարաբնույթ՝ այդ թվում քաղաքական նպատակներին ծառայեցնելու համար: Քաղաքական հասցեագրողը ճիշտ և տեղին կիրառված լեզվական միջոցներով իր ելույթում արտացոլում է արտալեզվական իրականության հասկացություններն ու երևույթները, մեկնաբանում ու վերամեկնաբանում դրանք, կերտում-ձևավորում նորերը՝ որոշակի հասարակական-քաղաքական պահանջումներին, նկատառումների, նպատակների դիրքերից ելնելով:

#### **3.1. *-ly* և *-able/-ible* վերջածանցներով բառային շարույթների գործառության յուրահատկությունները քաղաքական ելույթում. գնահատողականություն և գործողություն**

Աշխատանքի այս մասում քննության է առնվում *-ly* և *-able/-ible* վերջածանցներով բառային շարույթների գործառությունը քաղաքական խոսույթում, մասնավորապես ժամանակակից քաղաքական ելույթներում: Գործնական նյութի մանրամասն վերլուծություն է կատարվում վերոհիշյալ բառային շարույթների տեղն ու դերը դրանց կիրառման համատեքստում պարզելու համար:

Սակայն մինչ բուն վերլուծությանն անցնելը հարկ ենք համարում մեկնաբանել *բառային շարույթ* տերմին-հասկացությոնը և, ինչն ավելի կարևոր է մեր աշխատանքի շրջանակում, վերլու-

ծության մեթոդաբանական հիմքերին և սկզբունքներին վերաբերող որոշ տեսական հարցեր:

Բառային շարույթներն այն բառերն են, որոնք, «բառածանցման առունով հստակորեն բաժանելի լինելով, կարող են կազմվել, կյանքի կոչվել, կանոնավոր կերպով վերարտադրվել կամ վերստեղծվել խոսողի կողմից ըստ ցանկության» [Alexandrova, Ter-Minasova 1987:26]: Այլ կերպ ասած՝ բառային շարույթաբանությունը գործ ունի միայն այն ածանցյալ բառերի հետ, որոնց ստեղծումը կամ հենց գոյությունը հիմնված է ձևույթների համակցման միանգամայն հստակ ամրագրված կանոնների վրա՝ համաձայն գործուն սխեմաների: Այս կանոնները սահմանվում են կոնկրետ լեզվի բառածևաբանական կարգերի կողմից: Բառածևաբանական կարգի գաղափարը պատկանում է հայտնի խորհրդային լեզվաբան Ա. Ի. Սմիրնիցկուն: Նա բառածևաբանական կարգը սահմանում է որպես իմաստային հակադրություն «ըստ երկու կամ ավելի բառերի որոշակի հատկանիշի՝ այն պայմանով, որ նույնպիսի հակադրություն դիտարկվում է բառերի նաև այլ զույգերում կամ մեծ խմբերում և արտահայտվում է կանոնավոր կերպով» [Смирницкий 1959: 205]:

Այս կարգերը հիմնված են բացարձակ արդյունավետության հասկացության վրա: Բացարձակ արդյունավետությունը սահմանվում է որպես ածանցյալ բառեր կազմելու անսահմանափակ հնարավորություն<sup>1</sup>: Այլ կերպ՝ բառածևաբանական կարգի լիարժեք իրացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ սահմանափակումներ չեն դրվում հակադրության նշույթավորված անդամի կանոնավոր վերարտադրման վրա: Ընդ որում՝ նշույթավորված անդամն է համարվում կարգակազմիչ:

Ինչպես տարբեր բառածևաբանական կարգերի հետազոտությունը ցույց է տվել, այս պահանջը կարող է լիովին բավարարվել լեզվի առավելապես վերնշահային մակարդակում, երբ ասույթն ավելի շուտ ներազդման, քան հաղորդման ուղղվածություն ունի: Հետևաբար կարելի է համարել, որ բոլոր ձևաբանական հակադրությունների նշույթավորված կարգային ձևերը հարանշանակության և վերնշահային իմաստային նրբերանգ-

ներ ձեռք բերելու միտում ունեն [Alexandrova, Ter-Minasova 1987]:

Կարգերի և չափորոշիչների համակարգի վրա հիմնված մեթոդը, ըստ որի ուսումնասիրվում են բառային շարույթներն այս աշխատանքում, ի սկզբանե մշակվել է բառակապակցությունների ուսումնասիրության համար [Alexandrova, Ter-Minasova 1987, Тер-Минасова 1980, 1986, Гвишиани 1979]: Դրա հիմքում ընկած է այն մեթոդաբանական դրույթը, որ լեզվական երևույթների ուսումնասիրությունը ենթադրում է բոլոր՝ լեզվական, ինչպես և արտալեզվական գործոնների դիտարկում, որոնցով էլ, ըստ էության, այդ երևույթները պայմանավորված են: Այլ կերպ ասած՝ քննությունն իրականացվում է համապարփակ կերպով՝ լեզվական միավորները դիտարկելով որպես ձևաբանական ու շարահյուսական, բառադարձվածային, ոճական և առոգանական ամբողջություններ՝ իրացված կոնկրետ խոսքային իրադրության համատեքստում ընդհանուր հանրալեզվաբանական հենքի վրա<sup>2</sup>:

Այն բանից հետո, երբ այս մեթոդը կիրառվեց բառակապակցությունների ուսումնասիրության՝ դրանց գործառական ոճական արժեքը, այսինքն՝ ոճակազմիչ և/կամ ոճատարբերակիչ լինելը պարզելու համար, այն նաև կիրառվեց բառային շարույթների նկատմամբ: Ուսումնասիրությունն առաջին հերթին կատարվեց գիտական և գեղարվեստական տեքստերի փաստական նյութի հիման վրա: Մեթոդի կիրառումը հաղորդման և ներազդման գործառական ոճերի նկատմամբ հաջողություն ունեցավ: Պարզվեց, որ որոշակի բառաձևաբանական կարգեր իրացնող բառային շարույթներն ունեն յուրահատուկ գործառական ոճական արժեք, ոճատարբերակիչ դեր կոնկրետ գործառական ոճում:

Մեր աշխատանքում նույն մեթոդը կիրառվում է բառաձևաբանական որոշակի կարգեր իրացնող վերը նշված տիպերի բառային շարույթների ուսումնասիրության համար հրապարակախոսության ոճաժանրային դրսևորումներից մեկում՝ քաղաքական խոսույթում:

Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ կարևորվում է վերոհիշյալ բառային շարույթների ուսումնասիրությունն ինքնին խոսույթի համատեքստում:

Քննարկվող մեթոդը մշակվել է Մոսկվայի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի անգլիական բաժնի գիտնականների կողմից: Այն հիմնված է խոսքաստեղծման գործընթացը ձևավորող թե՛ լեզվական և թե՛ արտալեզվական գործոններն ընդգրկող մի շարք կարգերի վրա<sup>3</sup>: Կարգերը կազմվում են իրենց դրական և բացասական իրացումների հակադրության հիման վրա: Սա բավական արժեքավոր է, քանի որ հնարավոր է դառնում կիրառել աստիճանավորման սկզբունքը և բացահայտել խոսքային իրադարձությունների իմաստային և վերնշանային բազմազան նրբերանգները: Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, այս պատճառով է, որ կա բառային շարույթների տարբեր տիպերի մի նշանակալի քանակություն, որոնցում տարբեր կարգեր իրացվում են տարբեր չափով, ընդ որում՝ իրացված կարգերի յուրաքանչյուր կոնկրետ կապակցություն միանգամայն յուրահատուկ է: Սա խոսում է վերլուծվող բառային շարույթների առանձնահատկության և կոնկրետ խոսքային ակտերում դրանց ոճագործառական ազդեցիկության մասին:

Սակայն կարգերն իդեալական ամբողջություններ կան վերացարկումներ են, և պահանջվում են որոշակի չափանիշներ, որոնց օգնությամբ վեր կհանվեն իրացված կարգերը: Այստեղ է, որ չափորոշիչի հասկացությունը կարևորություն է ստանում: Չափորոշիչներն այն չափանիշներն են, որոնց միջոցով հնարավոր է սահմանել, թե ինչ աստիճանով է այս կամ այն լեզվական միավորն օժտված այն ընդհանուր հատկանիշներով, որոնք իրացում են տվյալ կարգը:

Այսպիսով, կարգերի և չափորոշիչների համակարգի վրա հիմնված մեթոդը բաղկացած է հինգ կարգերից՝ հարանշանակություն, կաղապարայնություն, դարձվածայնություն, հասկացական պայմանավորվածություն և հանրալեզվաբանական պայմանավորվածություն [Тер-Минасова 1980, Alexandrova, Ter-Minasova 1987]:



Հարանշանակության կարգը դրսևորվում է հուզարտահայտչական-զնահատողական հարանշանակություն ունեցող (այսինքն՝ ոճականորեն նշույթավորված, ոչ չեզոք) շարույթների միջոցով, որոնք իրականացնում են ներագդման գործառույթն ի տարբերություն այն շարույթների, որոնք զուտ տեղեկատվական բնույթ ունեն, ոճականորեն չեզոք են և իրականացնում են հաղորդման գործառույթը: Հարանշանակության կարգն իրացնող բառային միավորները հաճախ գործառույթն են վերնշանային մակարդակում: Սակայն այս մակարդակում վերլուծություն կատարելիս պետք է միշտ հիշել, որ բառային միավորների հուզական, արտահայտչական և զնահատողական իմաստային նրբերանգները չեն կարող ըմբռնվել առանց ուղիղ կամ անվանողական իմաստների, քանի որ կառուցվում են դրանց հիմքի վրա: Այս կարգի առնչությամբ պետք է ավելացնել, որ հարանշանակային իմաստները կարող են լինել ներհատուկ, երբ դրանք ընդհանրապես հատկանշական են տվյալ շարույթին և կախված չեն համատեքստից՝ կոնկրետ կիրառությունից, և ոչ ներհատուկ, երբ ձեռք են բերվում յուրահատուկ հանգամանքների ներքո՝ որոշակի համատեքստում: Քննվող կարգը ներկայանում է հարանշանակություն – տեղեկատվական հաղորդում հակադրությամբ:

Կաղապարայնության կարգը կառուցվում է, մի կողմից, խոսքում կանոնավոր վերարտադրվող, սերտորեն կապակցված, լեզվում ամրագրված, պարբերաբար գործածվող, իսկ մյուս կողմից՝ խոսքաստեղծման գործընթացում այս կամ այն կոնկրետ իրադրության, համատեքստի պահանջները բավարարող և որոշակի հուզական, զնահատողական արծագանք առաջացնող այսպես կոչված դիպվածային միավորների հակադրության հիման վրա:

Դարձվածայնության կարգը կազմվում է դարձվածային միավորների և այսպես կոչված «ազատ» շարույթների (շարույթի ընդհանուր իմաստը պայմանավորված է իր բաղադրիչների իմաստներով) հակադրությամբ: Այս կարգի հիմքում ընկած է անվանման դարձվածային ամբողջականության չափորոշիչը,

երբ բաղադրիչների իմաստներից հնարավոր չէ հանգել ամբողջի ընդհանուր իմաստին:

Հասկացական պայմանավորվածության կարգը ենթադրում է յուրաքանչյուր շարույթի որոշակի հասկացական հիմքի, հիմնավորման առկայություն: Այս կարգը հիմնվում է այն գաղափարին, որ անվանողական միավորն արտացոլում է հասկացություն (այս կարգի իրացման այսպես ասած առաջին մակարդակը), և այդ միավորի հասկացական բովանդակությունը համապատասխանում է արտալեզվական իրականության բովանդակությանը (այս կարգի իրացման այսպես ասած երկրորդ մակարդակը): Հասկացական պայմանավորվածությունը կյանքի է կոչվում խոսողի ֆիզիկական փորձի հիման վրա: Նշված կարգի իրացման համար պահանջվում է, որ տվյալ հասկացական-տրամաբանական բովանդակությունը համապատասխանի արտալեզվական իրադրությանը: Հասկացական պայմանավորվածության կարգն իրացվում է այս պայմանը բավարարող և չբավարարող միավորների հակադրությամբ:

Հանրալեզվաբանական պայմանավորվածության կարգը ենթադրում է քննարկվող շարույթներում որոշակի հասարակական հիմքի առկայություն: Այսպես՝ լեզվական միավորը հանրալեզվաբանորեն պայմանավորված է, եթե իր բաղադրիչների փոխհարաբերությունը և իմաստը պայմանավորված են ոչ միայն բառադարձվածային և հասկացական գործոններով, այլ նաև տվյալ հանրույթի կյանքի հասարակական կարգի, ինստիտուտների, ավանդույթի և մշակույթի առանձնահատկություններով, անհատի հասարակական փորձով:

Քննվող բառային միավորների պատշաճ և խոր ուսումնասիրության համար միանգամայն էական է ոչ միայն պարզապես հասկանալ, որ մի լեզվական միավորին հատուկ է հարանշանակություն, իսկ մյուսին՝ վերարտադրողականություն և այլն, այլև հստակ պատկերացում ունենալ իրադրության համատեքստի վերաբերյալ՝ ով ասաց, ում, երբ, որտեղ, ինչու և/կամ ինչ նպատակով: Այս համատեքստում է, որ համակողմանիորեն հասկանալի է դառնում, թե իսկապես ինչ ասվեց: Հանրալեզվաբանական պայմանավորվածության կարգն իրացվում է այն դեպքում,

երբ հանրալեզվաբանական հայեցակերպը նշանակալի ազդեցության է հասնում, վեր է բարձրանում բոլոր կարգերից, որոշ հարանշանակային իմաստներ է ավելացնում բառային միավորներին, երբ լեզվական անվանողական միավորը հասկանալու համար պահանջվում են որոշակի հենքային գիտելիքներ և ուղղահայաց համատեքստի իմացություն:

Բոլոր հինգ կարգերը համագոյակցում են դիալեկտիկական միասնության մեջ, փոխադարձաբար կախված են և կապված մեկը մյուսի հետ: Այս կարգերը միավորված են այն բազմազան անցումային, միջանկյալ դեպքերով, որոնք տարբերվում են կարգային հատկանիշի իրացման աստիճանով: Կարգային մոտեցումը հնարավորություն է ընձեռում լեզվական երևույթներն ուսումնասիրել տեղում՝ առանց համատեքստից կտրելու, դինամիկ և առավելագույնս համապարփակ կերպով: Կիրառելով կարգային մեթոդը՝ յուրաքանչյուր միավոր կարելի է դիտարկել որպես հինգ կարգերի միաժամանակյա իրացում: Բազմազան շարույթների տարբերությունը պայմանավորված է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այս կարգերի համամասնությամբ և դերով:

Լեզվական նյութի ուսումնասիրությունը կատարվում է նաև ըստ հաղորդում – ներգործում ընդհանուր հակադրության և ածանցյալ հակադրությունների շարքի, որ արդեն մանրամասնվել են սույն աշխատության շրջանակում [տես էջ 49-50]: Այս հակադրությունները սերտորեն կապված են կարգային մեթոդի հակադրությունների հետ: Յետևաբար ուսումնասիրությունն այս երկու սկզբունքների համաձայն կկատարվի միաժամանակ և համադրաբար:

Քանի որ աշխատանքի այս մասի նպատակն է պարզել -ly և -able/-ible վերջածանցներով բառային շարույթների դերն իրական կենսագործունեության մեջ, նպատակահարմար է համարվում առանձնացնել այն համատեքստերը՝ ասույթները (հիմնականում համապատասխանում են նախադասության սահմաններին), որոնցում հանդիպում են այս շարույթները, այսպիսով ուսումնասիրել վերջիններս իրենց իրական խոսքային միջավայրում [Baghdasaryan 2007<sub>1</sub>, 2007<sub>2</sub>, Բաղդասարյան 2016<sub>1</sub>,

2016<sub>2</sub>]: Փորձ կարվի վեր հանել -ly և -able/-ible վերջածանցներով բառային շարույթների գործառնության առանձնահատկությունները յուրահատուկ գործառնական-գործաբանական միջավայրում՝ քաղաքական ելույթում:

**-ly վերջածանցով բառային շարույթները:** Բառային շարույթի առաջին տիպը, որի գործառնությունը քաղաքական ելույթում դիտարկվում է այս աշխատանքում, -ly վերջածանցով բառային շարույթն է: Այս ընտրությունը, բնականաբար, պատահական չէ, այլ պայմանավորված է վերոհիշյալ բառային շարույթի իմաստային արժեքով: -ly վերջածանցով բառային շարույթն իրացնում է գործողության կատարման որակի և հատկանիշի որակի բառաձևաբանական կարգը: Անհրաժեշտ է ավելացնել, որ -ly-ով բառային շարույթներն ունեն կիրառման մեծ հաճախականություն ուսումնասիրվող լեզվական նյութում:

Այս շարույթների գործածման բարձր հաճախականությունը հավանաբար պայմանավորված է այն փաստով, որ դրանք մեծ մասամբ ցույց են տալիս գործողության կամ հատկանիշի իրացման ձևը կամ աստիճանը: Գործողության գաղափարը շատ կարևոր է, քանի որ քաղաքական ելույթները սովորաբար միտված են գործողության, ինչը հռետորներին դարձնում է ավելի հանդիչ հին ու նոր տարբեր մարտահրավերներով լի աշխարհում, որոնք պիտի անհապաղ արձագանք և արդյունավետ ելք ստանան: Հատկանիշի գաղափարն իր հերթին նշանավորվում է իմաստի իր հուզական-գնահատողական բաղադրիչով, որը հաճախ հատուկ է նաև քննվող բառաձևաբանական կարգին: Մի կողմից -ly վերջածանցով բառային միավորները տալիս են փաստական տեղեկատվություն արտալեզվական իրականության մասին: Սա այս շարույթների իրացումն է լեզվի իմաստային մակարդակում: Մյուս կողմից դրանք արտահայտում են խոսողի՝ այս պարագայում քաղաքական հռետորի վերաբերմունքը գործողության կամ հատկանիշի իրացման ձևի նկատմամբ: Այս դեպքում հնարավոր է անցում լեզվի վերնշառային մակարդակ: Երբ քննարկվող շարույթները կիրառվում են բայերի հետ, հաճախ ակնհայտ է դառնում խոսողի՝ գործողության կատարման

ծևի անձնական ընկալումը: Բայերը հիմնականում միտում չունեն հուզարտահայտչական-գնահատողական հարանշանակություններ արտահայտելու: Դրանք ընդհանրապես ավելի շատ գործողության փաստական տվյալներ արտահատելու միջոց են: Բայց, իհարկե, քաղաքական խոսույթի այնպիսի տարատեսակում, ինչպիսին ելույթն է, հաճախ դրանք չեն գործառում այդքան ուղիղ և պարզ: -ly-ով բառային շարույթների խնդիրն է դրանք որակել՝ խոսքն օժտելով հուզական, արտահայտչական, գնահատողական իմաստային նրբերանգներով, որոնք անհրաժեշտ են խոսողին իր կոնկրետ արտալեզվական մտադրությանը հասնելու համար:

Այսպիսով, քաղաքական ելույթում -ly-ով բառային շարույթների գործառությունն ու արժեքը նախ փորձենք քննարկել բառադարձվածային առումով՝ կիրառելով կարգերի ու չափորոշիչների մեթոդը, ինչպես նաև քաղաքական խոսույթին ներհատուկ հաղորդում – ներգործում հակադրությունների շարքը:

All law enforcement and intelligence agencies are working **aggressively** around America, around the world and around the clock. (George Bush, 7 October 2001)

The truth is, as was **abundantly** plain in the motion before the House of Commons on 18 March, we went to war to enforce compliance with UN Resolutions. (Tony Blair, 5 March 2004)

Ներկայացված օրինակներում դիտարկվում են *aggressively* և *abundantly* բառային շարույթները համապատասխանաբար: Ըստ հաղորդում – ներգործում հակադրությունների շարքի՝ այս բառային միավորները, էությանը լինելով սուբյեկտիվ, ներկայացված են որպես օբյեկտիվ իրականության նշանակիչներ: Յնարավոր է, որ Ամերիկայի միացյալ Նահանգների նախագահ Ջ. Բուշը և նրա վարչակազմն են կարծում, որ «բոլոր իրավապահ և հետախուզական մարմիններն աշխատում են շատ հաստատական և մեծ թափով» (*All law enforcement and intelligence agencies are working aggressively ...*): Յնարավոր է, որ նրանց քաղաքական հակառակորդները կամ պարզապես շարքային

ամերիկացիները չեն կարծում, որ այդ մարմիններն այդքան լավ են աշխատում՝ հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ Սեպտեմբերի 11-ի ողբերգությունը տեղի է ունեցել այս հայտարարությունից մոտ մեկ ամիս առաջ: Ինքնին *aggressively* բառային միավորի կիրառությունը պայմանավորված է այդ արտալեզվական իրողությամբ և դրան հետևած հանրային տրամադրություններով, այսինքն՝ հանրալեզվաբանորեն պայմանավորված է: Սուբյեկտիվ կարծիքի կամ ընկալման նույնպիսի օբյեկտիվացում է ներմուծվում *abundantly* բառային շարույթի միջոցով (*The truth ... was abundantly plain ...*) Մեծ Բրիտանիայի և Յուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության վարչապետ Թ. Բլեդրի ելույթում:

Քննարկվող երկու շարույթներն իրականում տրամաբանականի և հուզականի նուրբ համակցություններ են: Դրանք տրամաբանական շարույթներ են, քանի որ չեն արտահայտում կանցույց տալիս անիրական, երևակայական կամ իռացիոնալ հասկացություններ: Տվյալ լեզվական միավորների իրականում արտահայտած բովանդակությունը համապատասխանում է որոշակի տրամաբանորեն ըմբռնելի բովանդակության: Ինչպես նաև հնարավոր է հասկացական լիարժեքության/պայմանավորվածության մյուս մակարդակը՝ այդ հասկացական-տրամաբանական բովանդակության համապատասխանությունն արտալեզվական իրադրությանը: Միաժամանակ այս բառերին ներհատուկ են իմաստային հավելյալ նրբերանգներ, որոնք հատկապես ակտիվացվում են այս կոնկրետ համատեքստերում, որտեղ քննարկվող բառային շարույթները սուբյեկտիվ վերաբերմունքի շղարշված կրողներ են:

Առաջին օրինակում *work* բայն իրացնում է հաղորդման (ինտելեկտիվ) գործառույթը, այսինքն՝ տեղեկատվություն է փոխանցում խոսողից լսողին: *Are working aggressively* կապակցությունը բացի նրանից, որ իմաստային մակարդակում նշանակում է «աշխատում են շատ հաստատական և մեծ թափով հաջողության հասնելու համար» (*are working in a very determined and forceful way in order to succeed* [տե՛ս Hornby 2000]), անկասկած, ունի նաև հուզագնահատողական իմաս-

տային նրբերանգներ գործաբանական մակարդակում: Սա ողջ կապակցության վրա *aggressively* լեզվական միավորի ազդեցության շնորհիվ է: Այսպիսով` *are working aggressively* արտահայտության մեջ գործողության իմաստային բաղադրիչն ավելի շեշտված է: Արդյունքում ողջ արտահայտությունն ավելի համոզիչ և ազդեցիկ է լսարանի համար, քան, օրինակ, *are working hard* կամ *are working actively* հոմանշային արտահայտությունները կարող էին լինել:

Պետք է նաև նշել այստեղ, որ *-ly*-ով գոյացությունը, քերականորեն հարաբերակցված լինելով բայական բառածևին, նաև ձեռք է բերում գործողությունը կատարողին (նախադասության քերականական ենթական) բնորոշ հատկանիշն արտահայտելու ունակություն: Այս բառային շարույթը բնութագրում է ոչ միայն աշխատանքի կատարման ձևը, այլ նաև մատնանշում, որ վերոհիշյալ մարմիններն իրենք, դրանցում ներգրավված մարդիկ հաստատական ու ակտիվ են (*aggressive*): Երկրորդ օրինակում *abundantly plain* արտահայտությունն առաջին հայացքից համարժեք է թվում *very plain* արտահայտությանը, բայց երբ փորձ է արվում ներթափանցել *abundant* ածականի իմաստի մեջ, պարզ է դառնում, որ թ. Բլեքրի կողմից կիրառված արտահայտությունն ավելի ազդեցիկ է իր ելույթի համատեքստում և նշանակում է *absolutely* կամ *extremely* կամ *exceedingly plain*: *Abundantly plain* բառակապակցությունը բնորոշ է պաշտոնական խոսույթին: Այս պարագայում *abundantly* բառային շարույթը շեշտում է *plain* ածականը, որը տվյալ բառակապակցության մեջ թվում է, թե կորցրել է իր իմաստային բովանդակության մի մասը և այն վերստին ձեռք է բերում իրեն լրացնող *-ly*-ով բառային շարույթի շնորհիվ: Նման սաստկացնող իմաստային միավորի կիրառումը, ինչպիսին *abundantly* բառային շարույթն է, թելադրված է քաղաքական անհրաժեշտությամբ: Այս բառային միավորի իմաստային *hausasունության* միջոցով որոշ քաղաքական գործողություններ ասես արդարացնելու ներակա փորձ է արվում. թափանցում է արտահայտության հանրալեզվաբանական հիմքը:

Քննվող երկու բառային շարույթներն ունեն ուղղակի և փաստագրական իմաստ, քանի որ չեն արտահայտում փոխաբերական կամ պատկերավոր, երևակայական կամ մտացածին գաղափարներ: Այս բառային շարույթները և սույն աշխատանքում քննարկվող -ly-ով բոլոր բառային շարույթներն ընդհանրապես պատկանում են անգլերենի ստանդարտ գրական բառապաշարին, ընդ որում՝ դրանց մի մասը նաև ընդգծված են որպես առավելապես պաշտոնական խոսույթի միավորներ, ինչը զարմանալի չէ, քանի որ գործ ունենք պետական առաջնորդների ելույթների հետ:

Ինչպես ցույց տրվեց վերևում, ըստ կարգերի և չափորոշիչների մեթոդի՝ *aggressively* բառային շարույթը հարանշանակային է, հանրալեզվաբանորեն և հասկացականորեն պայմանավորված: Պետք է շտապել ավելացնելու, որ այս աշխատանքում քննարկվող -ly-ով բառային շարույթները որպես կանոն թե՛ հանրալեզվաբանորեն և թե՛ հասկացականորեն (այս կարգի առավելապես առաջին մակարդակի առումով) պայմանավորված են: Սա ուղղակիորեն կապված է հասարակական-քաղաքական խոսույթի բնույթի և էության հետ, որում լեզվական և արտալեզվական իրողությունները կամ, այլ կերպ ասած, լեզվական և արտալեզվական փաստերը փոխներթափանցել են և հավասարապես պարտադիր են նշված տիպի խոսույթի գոյության համար:

*Abundantly* բառային շարույթը նույնպես հարանշանակային է, սակայն ի տարբերություն *aggressively* շարույթի այն ձգտում է նաև կաղապարայնության քաղաքական խոսույթում հանդիպող նման կապակցությունների կազմում: Նամանատիպ շարույթները դարձել են քաղաքական պերսուազիայի գործիքներ, դրոշմներ, թեև, դիտարկվելով այլ գործառական ոճերում, կարող են դրսևորվել որպես ավելի *լիք* իմաստային միավորներ մասնավորապես հասկացական պայմանավորվածության առումով:

We have a responsibility to deny weapons to terrorists and to **actively** prevent private citizens from providing them. (George Bush, 10 November 2001)



Այս օրինակում ուսումնասիրության համար առանձնացվել է *actively* բառային շարույթը: Այն օբյեկտիվ, ուղղակի, փաստագրական իմաստի դրսևորում է՝ տրամաբանական բաղադրիչի գերակայությամբ: Հասկացական հիմքի հետ մեկտեղ այս շարույթի գործածությունը նաև հանրալեզվաբանական հիմք ունի. դրանք են ասույթն ավելի ուժեղ ու ազդեցիկ դարձնում հաղորդագրության հավաստիության, արժանահավատության առունով, ինչի արդյունքում ավելի հաջողված է լինում լսարանի հանդուհունը: *Actively prevent* արտահայտության մեջ *prevent* (կանխել) բայն ակտիվ բայ<sup>4</sup> է և, որոշարկվելով *actively* բառային միավորով, կարծես կրկնապատկում է գործողության իր իմաստը: Սա, փաստորեն, հռետորի՝ նախագահ Բուշի խոսողական-կատարողական (իլլոկուտիվ) մտադրությունն է. նա ձգտում է հանդգել լսարանին, որ ահաբեկիչների ու ահաբեկչության դեմ միակ ճշմարիտ և ընդունելի քաղաքականությունը որքան հնարավոր է հաստատական ու ակտիվ գործելն է: Արտալեզվական իրականությունն արտացոլվել է քննվող բառային շարույթում: Գործողությունը դրված է Արևմտյան, հատկապես ամերիկյան ժամանակակից քաղաքականության հիմքում: Եվ *active*, *actively*, *activate* բառային միավորներով արտահայտությունները դարձել են սովորական միջազգային քաղաքական խոսույթում: Հետևաբար, *actively* լեզվական միավորը միտում ունի կաղապարային դառնալու յուրահատուկ գործառական խոսքային միջավայրում:

Ուսումնասիրվող բառային շարույթների հաճախակի կիրառությունը և դրանց հասկացական բովանդակության քարոզչությունը հանրալեզվաբանորեն պայմանավորված և արդարացված են մասնավորապես ժամանակակից ահաբեկչության սպառնալիքի համատեքստում:

But we **surely** have a duty and a right to prevent the threat materialising; and we **surely** have a responsibility to act when a nation's people are subjected to a regime such as Saddam's. (Tony Blair, 5 March 2004)

Ներկայացված օրինակում ուշագրավ է *surely* բառային շարույթը: Այս եղանակավորող բառը երկու անգամ կրկնվում է մեկ նախադասության շրջանակում: Ինքնին շարույթը և խոսքաշարում դրա կիրառությունն անկասկած ստեղծում են յուրահատուկ գործառական միջավայր և աջակցում ելույթի ընդհանուր գաղափար – մտադրության իրականացմանը: *Surely* շարույթն իր երկու կիրառության մեջ էլ սուբյեկտիվ է. այն ներկայացնում և հաստատում է Թ. Բլեքրի սուբյեկտիվ դիրքորոշումները, որոնք նա արդարացնում է մեծ պաթոսով: Վերջինս նրա խոսքի մեջ ներմուծվում է նաև *surely* բառի միջոցով: Թեև նշված շարույթն այս համատեքստում սուբյեկտիվ-գնահատողական հարանշանակություն, ինչպես նաև նմանատիպ համատեքստերում բարձր վերարտադրողականություն ունեցող իմաստի սաստկացման լեզվական միավոր է և լիարժեք չի դրսևորում իր հասկացական բովանդակությունը, այնուամենայնիվ, այն զուրկ չէ վերջինից, որը մատուցվում է տրամաբանական զարգացմամբ. հաջորդիվ ասույթում բերվում են արտալեզվական փաստեր ասվածն առավել հիմնավորված դարձնելու համար: Ինչևէ, շարույթում գերակա բաղադրիչը հուզական տարրն է: *Surely*-ն կրում է ողջ ասույթի հիմնական հուզարտահայտչական-գնահատողական լարվածությունը: Այս բառային միավորը թվում է, թե կասկածի տեղ չի թողնում և միտում ունի հաղորդագրության բովանդակությունը համընդհանուր ճշմարտության նման մի բան դարձնելու: Շնորհիվ հուզական-գնահատողական հարանշանակությունների, ինչպես նաև տրամաբանական աջակցության այս բառային շարույթն ասես ապացուցում և արդարացնում է ասույթում արտահայտված ամեն ինչ, որ այդքան հմտորեն ձևակերպված է ու մատուցված: Այս ամենն իրականացնում է որոշակի քաղաքական հանձնարարական իրաքյան հակամարտության խճճված համատեքստում: Միանշանակ է, որ անհրաժեշտ է տեղյակ լինել ժամանակաշրջանի միջազգային քաղաքական իրադարձություններին *surely*-ի *սուբյեկտիվ օբյեկտիվացման* և պաթոսի հանրալեզվաբանական հիմքը հասկանալու համար:

Կան նաև ասույթներ, որոնցում -ly-ով մի քանի շարույթներ են կուտակված: Այս փաստը հիմնավորում է այն պնդումը, որ տվյալ տիպի շարույթները բնորոշ են քաղաքական խոսույթին և նույնիսկ ունեն որոշակի ոճագործառական արժեք:

That we can even make these lists [*the lists of the democratic reforms that should be made in Armenia*], and **slowly** cross off some of the items listed there, is ample indication that we are **fully** engaged in one of society's hardest tasks: to **equally** and **broadly** allocate the rights, privileges, benefits of human civilization. (Vartan Oskanian, 16 March 2004)

Այսպիսով, վերը բերված ասույթում *slowly, fully, equally* և *broadly* բառային շարույթները դիտարկվում են *slowly cross off, are fully engaged, to equally and broadly allocate* կապակցություններում: Սակայն այս բառային շարույթների բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ ըմբռնելու համար պետք է վերլուծել դրանց իրացման ավելի լայն համատեքստեր: Միանգամայն պարզ է դառնում, որ դրանք միտված են պերսուազիայի և ազդեցություն գործելու: Ազդեցությունը ստեղծվում է այս շարույթներում օբյեկտիվի և սուբյեկտիվի, տրամաբանականի և հուզականի կապակցության ճիշտ համամասնությամբ և միաժամանակ այդ բառային միավորների ուղղակի իմաստով ու իրական բովանդակությամբ: Օրինակ, եթե *slowly* բառը դուրս մնա խոսքից, ասույթի այդ հատվածը կդառնա բավական գծային հասկացական-բովանդակային առումով: *Slowly* լեզվական միավորը կանխում է նման տպավորության առաջացումը՝ պնդումը ներկայացնելով ավելի իրատեսական և, հետևաբար, լսարանին՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովին առավել հակված դարձնելով այս պնդումը դրականորեն ընկալելու: Այսպիսով հավասարակշռության են բերվում այս բառային շարույթի միջոցով խոսք ներմուծվող համապատասխան հասկացական և հանրալեզվաբանական բովանդակությունները: *Fully engaged* կապակցության պարագայում, որքան էլ զարմանալի թվա, *fully* բառը և՛ հարանշանակային է, և՛ կաղապարային, քանի որ, մի կողմից, այն ունի հստակ ազդեցության

միտված հուզական երանգավորում, իսկ մյուս կողմից՝ այն պարբերաբար գործածվող միավոր է քաղաքական խոսույթում: *Equally* ու *broadly* բառային շարույթներն ունեն յուրահատուկ հանրալեզվաբանական-հարանշանակային բեռնվածություն՝ հատկապես միասին կիրառվելով որպես նախադասության նույն բառին վերաբերող համասեռ անդամներ: Այս լեզվական միավորներն ունեն կոնկրետ արտալեզվական գործառական ուղղվածություն և գործում են որպես հենքային բառեր ուսում-նասիրվող համատեքստում: Օրինակ՝ *equally and broadly allocate the rights, privileges, benefits of human civilization* հաստատվածում արտալեզվական իրականության համար հենքային բառը *equally*-ն է, քանի որ հավասարությունը ժողովրդավարության հիմնարար սկզբունքներից է. ժողովրդավարության գերիշխանության մասին է պնդում Արևմտյան քաղաքակրթությունը, և Հայաստանում դրա գոյության ու զարգացման մեջ ձգտում հավաստիացնել միջազգային հանրությանը ՀՀ Արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանն իր խոսքում: *Equally allocate* կապակցությունը դրսևորվում է առավելապես իր ուղղակի, հասկացական նշանակությամբ լեզվի իմաստային մակարդակում, մինչդեռ *broadly allocate* կապակցությունը որոշ չափով դարձվածային է՝ լեզվի միավորների յուրահատուկ բառադարձվածային հարաբերությունների դրսևորում է, որում ակտիվացել են որոշակի հուզագնահատողական հարանշանակություններ հասկացական հիմքի թուլացման հաշվին: Կապակցությունը ձգտում է գործելու լեզվի վերնշանային մակարդակում: *Equally* շարույթը նաև կաղապարային է, քանի որ քաղաքական և առհասարակ հասարակական խոսույթում այն ամենահաճախակի կիրառվող բառային միավորներից է աշխարհում ժողովրդավարական համակարգի լայն տարածումից ի վեր:

**Unfortunately**, the past is not behind us. Earlier this month, in Budapest, in a North Atlantic Cooperation Council training program, the concept of cooperation was **shockingly** shaken by the murder of an Armenian soldier by an Azerbaijani officer. (Vartan Oskanian, 16 March 2004)

Ներկայացված ասույթուն քննվում են *unfortunately* և *shockingly* բառային շարույթները: *Unfortunately* շարույթը սուբյեկտիվ-գնահատողական է որպես եղանակավորող բառ, բայց տվյալ հանրալեզվաբանական համատեքստի կողմից դրան հավելվում են օբյեկտիվ-տրամաբանական հասկացական տարրեր: Նշված բառային շարույթն իր հարանշանակության մեջ կրում է ուժեղ հուզական լարվածություն և արդյունքում ունկնդիրներին պահում լարվածության մեջ: Այն լավ հող է նախապատրաստում գաղափարի հետագա զարգացման և բացահայտման համար, որը դեռ չի արտահայտվել, բայց արդեն միանգամայն ակնկալվում է լսարանի կողմից: Ասույթի երկրորդ մասը միտված է հստակեցնելու այդ գաղափարը և միաժամանակ արդարացնելու *unfortunately* շարույթի ներմուծումն ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական համատեքստ: Քննարկվող բառային միավորն այս համատեքստում հանրալեզվաբանական խորը տարողունակություն ունի. լսվում է հայ ժողովրդի 20-րդ դարի պատմության ամենաողբերգական իրադարձությունների սուր արձագանքը: Հուզական լարումը նույնիսկ աճում է, երբ կիրառվում է *shockingly* բառային շարույթը լրացնելու և որակելու արտալեզվական գործողությունը և այն ներկայացնող *was shaken* լեզվական կառույցը, որում ինքնին *shake* բայն իմաստաբանորեն ներհատուկ հուզարտահայտչականություն է դրսևորում: Մարդկային կյանքի կորուստը միշտ էլ ցնցող է, սակայն կրկնակի է ցնցումը, երբ այն հետևանք է նպատակադիր իրականացված գործողությունների՝ ընդդեմ ազգային պատկանելության: Համագործակցության հասկացությունը *ցնցող ցնցում ամրեց* Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդի վարժանքի ծրագրի ժամանակ: Թե՛ *shockingly* և թե՛ *shake* բառային միավորների իմաստային բովանդակության մեջ առկա է *ցնցում – ցնցել* օբյեկտիվ-տրամաբանական հասկացությունը: Հետևաբար, *was shockingly shaken* կապակցության մեջ -ly-ով բառային շարույթը ոչ միայն սուբյեկտիվ-գնահատողական-հուզական, այլ նաև օբյեկտիվ-տրամաբանական-հասկացական բովանդակությունը խտացնող միավոր է: *Unfortunately* ու *shockingly* բառային շարույթներն իրենց այս

հանրալեզվաբանական իրացման մեջ մեկտեղում են իմաստի ուղղակի-փաստագրական և հարանշանակային բաղադրիչներ և, ցավոք, ավելի շուտ օբյեկտիվ իրականության, քան սուբյեկտիվ ընկալման կամ գնահատման արտահայտիչներ են: Ներկայացված լեզվական միջոցների հնուտ գործածությամբ Վ. Օսկանյանը փորձում է, առաջին, փաստել իրողությունը և, երկրորդ, հուզականորեն կողմնորոշել միջազգային հանրությանը ժնևուն: Վերը քննված խոսքային իրադրությունը քաղաքական խոսքի՝ տեղեկատվության փոխանցման և հուզական ազդեցության պոտենցիալի նտածված, հաշվարկված կիրառություն է: Այս երկուսը համապատասխանում են հաղորդման և ներգործման գործառույթներին, որոնք, ինչպես հայտնի է, օրգանապես, գոյաբանորեն անքակտելի են քաղաքական խոսույթում: Եթե համատեքստն արհեստականորեն զրկվում է կա՛մ տեղեկատվական, կա՛մ հուզական տարրից, խոսքն անհաջողություն է կրում. այն չի իրացնում խոսողի միտումը, որը դրված է ելույթի ընդհանուր գաղափար-մտադրության մեջ:

I thought it **particularly** important in view of the fact that these attacks were not just attacks upon people and buildings; nor even **merely** upon the USA; these were attacks on the basic democratic values in which we all believe so **passionately** and on the civilised world. (Tony Blair, 14 September 2001)

Այս օրինակներում միաժամանակ դիտարկվում են -ly վերջածանցով երեք բառային շարույթներ՝ *particularly*, *merely*, *passionately*: Առաջին լեզվական միավորը կապակցված է *important* բառի հետ: Այս համատեքստում *important* (կարևոր) բառը սուբյեկտիվ վերաբերմունքի կրող է, սակայն այնպիսի վերաբերմունքի, որը կարող է բանականորեն բացատրվել և օբյեկտիվացվել, ինչի փորձ փաստորեն այնուհետև արվում է ասույթում: *Particularly* բառային շարույթը, լինելով հուզական բառապաշարի միավոր, ծառայում է որպես սաստկացման միջոց *important* ածականի սուբյեկտիվ-գնահատողական համատեքստային բովանդակության համար: Ժամանակակից անգլե-

րենում նկատվում է արտահայտվող որակի/հատկանիշի գերազնահատման տարածվող միտում: *Particularly* բառի հաճախակի գործածությունը, հետևաբար, հանրալեզվաբանորեն է պայմանավորված: Խոսքում հաճախակի վերարտադրվելով այնպիսի կաղապարային բառակապակցությունների կազմում, ինչպիսին է, օրինակ, *particularly important* արտահայտությունը՝ այն կորցնում է իր հասկացական բովանդակության մի մասը: Այս պատճառով թուլանում է *particularly* սաստկացնող բառային միավորի հարանշանակային բովանդակությունը, այսինքն՝ հուզազնահատողական արժեքը: Սակայն այն, անշուշտ, պահպանվում է, քանի որ պայմանավորված է հանրալեզվաբանորեն՝ արտալեզվական իրադարձությամբ ու քաղաքական հարաբերություններով: ԱՄՆ-ի Սեպտեմբերի 11-ի ողբերգության վերաբերյալ Թ. Բլեքրի կոշտ և խիստ հուզական դիրքորոշումները քննելիս պետք է անպայման հաշվի առնել, որ ԱՄՆ-ը և Միացյալ Թագավորությունը քաղաքական-ռազմական մերձավոր դաշնակիցներ են և բավական միասնական դիրքորոշում են ցուցաբերում Մերձավոր Արևելքի երկրների նկատմամբ քաղաքականության և ահաբեկչության դեմ «պատերազմի» քաղաքականության մի շարք հարցերում: Մյուս բառային շարույթը՝ *merely*-ն, թուլացած հասկացական բովանդակությամբ բառային սաստկացման միջոց է, որ, համակցվելով *even* բառային միավորի հետ, արտահայտում է խիստ հուզարտահայտչական, սուբյեկտիվ-զնահատողական վերաբերմունք, որը հռետորը որպես օբյեկտիվ-տրամաբանական է փորձում ներկայացնել արտալեզվական իրականության հենքի վրա: Ակնհայտ է, որ *merely* շարույթը միանգամայն հարանշանակային է, ինչը հանրալեզվաբանորեն միանգամայն պայմանավորված է: Երրորդ բառային շարույթը՝ *passionately*-ն, լրացնում է *believe* բայը: Քննվող բառի իմաստային բովանդակությունն իրապես հարանշանակային է՝ սուբյեկտիվ-զնահատողական և ծայրահեղ հուզական: Բառը լի է պաթոսով ու խտացնում է լրացվող բայի իմաստը, ինչպես նաև ինքն էլ ավելի ընդգծվում իրեն նախորդող *so* շեշտող բառային միավորով: *Passionately* բառային շարույթը նշույթավորված է նաև հանրալեզվաբանական և հասկացական առումով: Անմի-

ջական համատեքստային միջավայրի գաղափարական միջուկը բովանդակային առումով բացարձակացվում է ու խիստ շեշտվում՝ ... *these were attacks on the basic democratic values in which we all believe so passionately and on the civilised world:* Այս հատվածը, իրապես, ողջ ասույթի թե՛ գաղափարական և թե՛ հուզական կիզակետն է: Տվյալ ասույթում դիտարկվում է տրամաբանական աստիճանավորման սկզբունքը, որն իրացվում է -ly-ով բառային շարույթների իմաստային ու համատեքստային նշանակության աստիճանական ուժգնացման միջոցով և միտված է ունկնդիրների մեջ փոփոխություն առաջացնելու և որոշակի հանրային կարծիք ձևավորելու: Քննարկվող օրինակը խիստ տրամաբանորեն կառուցված և մեծապես զգացմունքային ասույթ է՝ ուղղված Համայնքների պալատին Միացյալ Թագավորության վարչապետի կողմից Սեպտեմբերի 11-ի ողբերգության առիթով: Փորձ է արվում ասույթի բնույթը և խաղարկված հասկացությունները ներկայացնել որպես տրամաբանական փաստարկներ: Քննարկվող երեք շարույթներն էլ գործառու են ուղղակի իմաստով և ուղղված են օբյեկտիվ իրականությանը: Եթե *particularly, merely* և *passionately* բառային շարույթները դուրս մնային խոսքից, ողջ ասույթը կլիներ պարզունակ պնդում, որն ազդեցություն չէր գործի, հետք չէր թողնի ունկնդրի մտքում, ինչն այդքան կարևոր է ցանկացած հռետորի համար:

Գնահատողականությունն առանցքային դեր ունի ողջ քաղաքական խոսույթում: Գործողության կամ հատկանիշի իրացման ձևը, աստիճանը կամ սաստկացումը կենսական են քաղաքական խոսքի համար: Դրանով է պայմանավորված -ly-ով բառային շարույթների բառադարձվածային ճկուն իրացումների հաջողությունը քաղաքական ելույթում. դրանք միանգամայն կիրառական են թե՛ տրամաբանական նկարագրության և թե՛ հատկապես հուզական ներշնչման համար:

Այժմ -ly-ով բառային շարույթները կքննարկվեն ձևաբանական ու շարահյուսական հայեցակերպերի տեսանկյունից: Այս շարույթներն ունեն հիմնավորված ձևաբանական կառուցվածք՝ *ածական + -ly վերջածանց*, և բառակազմական այս մոդելը բա-



ցարձակ է համարվում արդյունավետության առումով [Alexandrova, Ter-Minasova 1987, Тер-Минасова 1980, Микоян, Тер-Минасова 1981, Гвишиани 1979]: Թեև -ly վերջածանցով լեզվական միավորը կոչվում է մակբայ, որը ծագումնաբանորեն ցույց է տալիս բային կից կիրառություն, այսինքն՝ բայը որոշարկող, և սա գերակշռաբար այդպես է տվյալ ուսումնասիրության լեզվական նյութում, այն նաև համակցվում է այնպիսի լեզվական միավորների հետ, ինչպիսիք են ածականը, մակբայը և այլն: Սույն ուսումնասիրության մեջ ուշադրության են արժանանում -ly-ով բառային շարույթների՝ գլխավորապես բայերի (ներառյալ նաև անցյալ դերբայը, քանի որ ըստ էության բայական ձև է ու գործողության իմաստային բաղադրիչի կրող) և որոշ չափով ածականների հետ զուգակցվող կապակցությունները: Սա պայմանավորված է քաղաքական խոսույթի սույն լեզվական նյութում վերոհիշյալ տիպի կապակցությունների բարձր հաճախականությամբ: Քաղաքական ելույթներն ինքնին ուղղված են զնահատողականության և գործողության: Սա էլ պայմանավորված է դրանցում արտացոլված արտալեզվական իրականությամբ, ինչպես նաև դրանց հիմքում ընկած գաղափարական ծրագրով՝ մարդկանց կողմնորոշել ու առաջնորդել, խրախուսել նրանց որոշակի գործողության:

-ly-ով բառային շարույթներն ունեն բազմազան շարահյուսական դիրքեր ու դերեր, որոնք հանգեցնում են այս շարույթների տարբեր բառաիմաստային ձևափոխությունների:

Ասույթում լեզվական տարրերի կապակցվածության աստիճանը և դրանց բառաիմաստային ձևափոխությունները պայմանավորված են երկու շարք հակադրությունների միջոցով դրսևորվող շարադասության քերականական գործառնությով՝ անմիջական լեզվական միջավայրով, որը թելադրվում է արտալեզվական գործոններով, ինչպես և ողջ խոսքային ակտի նպատակով: Այսպիսով, հակադրություններն են նախադասն ընդդեմ հետադասի և կիցն ընդդեմ հեռավոր դիրքի: Առաջինը կքննարկվի -ly-ով բառային շարույթների նախադաս կիրառությունը: Նախադաս և կից դիրքը բնութագրվում է նշված տիպի շարույթի ու դրա կողմից որոշարկվող բայի սերտ կապակցվածությամբ:

In addition, NATO as a whole will **urgently** consider further proposals to support the nascent Iraqi security institutions in response to Prime Minister Allawi's request. (Tony Blair, 30 June 2004)

Thousands of lives were **suddenly** ended by evil, despicable acts of terror. (George Bush, 11 September 2001)

*Will urgently consider* և *were suddenly ended* կապակցություններում միավորների միջև կապը սերտ է, և որոշարկման նշանակությունն օրգանապես հատկանշական է գործողությանը ոչ միայն բառախմաստային, այլև առոգանական (մասնավորապես դադարի բացակայություն) առումով: Վերը բերված օրինակներում նկատվում է գործողության ու դրա իրացման ձևի միասնություն: Այսպիսով, սա, ըստ էության, փաստական և զնահատողական տեղեկատվության յուրահատուկ բայակենտրոն կապակցություն է:

Հետադաս, թեև կից դիրքը ենթադրում է կապակցության անդամների ավելի ազատ կապ: Այս դեպքում հարկ է նշել, որ -ly-ով բառային շարույթների շարահյուսական դիրքը հանգեցնում է դրանց իմաստի որոշակի տեղայնացման և լրացվող բայից շարահյուսական մասնակի առանձնացման:

The real point is that those who disagree with the war disagree **fundamentally** with the judgement that led to war. (Tony Blair, 5 March 2004)

We affirmed that some crimes are so terrible they offend humanity itself, and we resolved that the aggressions and ambitions of the wicked must be opposed early, **decisively** and **collectively** before they threaten us all. (George Bush, 10 November 2001)

Yet, as we have learned, so **suddenly** and so **tragically**, there can be no peace in a world of sudden terror. (George Bush, 7 October 2001)

-ly-ով բառային շարույթներն իրացնում են նշված ասույթների հիմնական գաղափարական-հասկացական մտադրությունը: Յետադաս դիրքը դրանց օգնում է պահպանել իրենց իմաստային ամբողջականությունը և տալիս է բավականաչափ շարահյուսական անկախություն: Այս շարույթները ներկայացնում են ոչ միայն փաստական օբյեկտիվ տեղեկատվություն, այլ նաև հուզական-գնահատողական սուբյեկտիվ վերաբերմունք, ինչն էական է տվյալ գործառական ոճի և համատեքստի համար: Որոշ դեպքերում -ly-ով բառային շարույթներն առոգանական դադարով նույնիսկ առանձնացված են բայից և նախադասության մյուս անդամներից, ինչը տեքստում արտահայտված է ստորակետի միջոցով: Սա առավել ուժեղ է դարձնում այս շարույթների բառային իմաստը և առավել շեշտված՝ դրանց դերը խոսքաշարում: Աճում է նաև լրացվող բայից դրանց հարաբերականորեն անկախ գործառությունը:

Համանման դիտարկումներ կարող են արվել լրացվող բայերի նկատմամբ հեռավոր դիրք ունեցող -ly-ով բառային շարույթների կիրառություններն ուսումնասիրելիս: Այս շարույթները ձեռք են բերում նախադասության անկախ անդամների հատկանիշներ:

So we need to look once more: **nationally** and **internationally** at extradition laws, and the mechanisms for international justice; at how these terrorist groups are financed and their money laundered: and the links between terror and crime and we need to frame a response that will work, and hold **internationally**. (Tony Blair, 14 September 2001)

They started the war, **one-sidedly**. (Vartan Oskanian, 25 September 2003)

Կետադրական նշաններն առավել անկախություն են տալիս նշված շարույթների բառաիմաստային ու շարահյուսական գործառությանը և, հետևաբար, շեշտում դրանց հասկացական բովանդակությունը:

Որոշ դեպքերում -ly-ով շարույթները կապակցված են ոչ թե նախադասության որևէ մեկ անդամի հետ, այլ ողջ ստորոգումային միջուկի կամ նույնիսկ նախադասության հետ: Այլ կերպ ասած՝ գործողությանն ուղեկցող (ոչ թե դրան օրգանապես բնորոշ) հատկանիշի նշանակությունը պայմանավորում է -ly-ով բառային շարույթի հարաբերակցումը ողջ ասույթին: Այսպիսի դեպքերում -ly-ով բառային շարույթի ու կապակցված բայի անմիջական բառաիմաստային և շարահյուսական կապը կարող է թուլանալ:

Her Majesty The Queen has **graciously** agreed that their extraordinary contribution should be recognised with the award of special civilian medal. (Tony Blair, 30 June 2004)

Հետաքրքիր իմաստային փոխանցում է նկատվում ներկայացված օրինակում: Առարկային օբյեկտիվորեն բնորոշ հատկանիշը փոխադրվել է գործողության բնութագրման ոլորտ: *Gracious* բառի արտահայտած հատկանիշը, բնութագրական լինելով թագուհուն որպես գործողության սուբյեկտի, փոխանցվել է *agree* բառով արտահայտված գործողությանը՝ այն գործողությանը, որը կատարված է այդ սուբյեկտի կողմից: Այս կարգի իմաստային փոխանցումը հնարավորություն է տալիս խոսել տվյալ տիպի կազմավորումների ներքին ձևի՝ հիմնավորվածության մասին վերնշանային մակարդակում [Гвишиани 1979]: Այսպես, կարելի է եզրակացնել, որ *graciously* բառային շարույթը վերաբերում է ողջ ստորոգումային միջուկին՝ գործողության և այն կատարողի ամբողջությանը: Ակնհայտ է դառնում ձևաբանական-շարահյուսական և բառադարձվածային կապակցելիության դիալեկտիկական միասնությունը: Նշված տեսակի իմաստային փոխանցումը հմտորեն ու նրբորեն փոխակերպում է գործողության պարզ փաստումը. ասես ի միջի այլոց փոխանցվում է գործողության նկատմամբ խոսողի սուբյեկտիվ-գնահատողական վերաբերմունքը, և սերմանվում, զարգացվում հստակ վերաբերմունք ունկնդիրների մեջ:

Ողջ ասույթին կամ առնվազն ստորոգումային միջուկին բառային միավորի հարաբերակցումն ընդգծելու ընդունված ձև է այդ միավորի առանձնացումը կամ մեկուսացումն իր բառաիմաստային և շարահյուսական միջավայրից ստորակետների միջոցով:

**Ironically**, it is we the victims who have and who continue to make these unconditional offers. (Vartan Oskanian, 16 March 2004)

But, **ultimately**, leadership is about deciding. (Tony Blair, 5 March 2004)

Ստորակետները նաև մատնանշում են ասույթի տրամաբանական շեշտը, որը կրում են առանձնացված բառերը: Մեծամասամբ այսպիսի բառերը բավական հուզական և ազդեցիկ են: Դրանք ստեղծում են առանձնահատուկ արտալեզվական մթնոլորտ, որն անհրաժեշտ է հռետորին:

Ինչպես արդեն նշվել է, -ly-ով բառային շարույթը կարող է գործածվել նաև որպես ածականը բնութագրող միավոր:

Azerbaijan's leadership – old and new – rather than remaining prisoners of a Soviet era, one which they themselves rejected as **historically** illegitimate, can look to a future of compromise, peace, regional cooperation and prosperous, stable development. (Vartan Oskanian, 25 September 2003)

We hold **essentially** liberal values. (Tony Blair, 14 September 2001)

Yet it is **monstrously** premature to think the threat has passed. (Tony Blair, 5 March 2004)

Երբ -ly-ով բառային շարույթները նախադաս են ածականների, ինչպես բերված օրինակներում, կապակցությունը թե՛ շարահյուսական և թե՛ իմաստային առումով բավական սերտ է: Կապակցության առաջին անդամը՝ -ly-ով բառային շարույթը,

չունի հարաբերական շարահյուսական անկախություն ի տարբերություն այն դեպքերի, երբ այն հետադաս է:

-ly-ով բառային շարույթի՝ ածականի հետ կապակցելիության առանձնահատկություններից է այդ շարույթի «ենթարկումը» ածականին: Սա որոշ դեպքերում հանգեցնում է առաջինի բառային իմաստի մասնակի կորստի: Այս հիմքի վրա զարգանում է ածականական իմաստը սաստկացնող միավորի գործառույթը: Սա սովորական գործառույթ է *-ly վերջածանցով բառային շարույթ + ածական* կառույցի շրջանակում:

Խոսքը սաստկացնող բառային միավորի խնդիրն ուսումնասիրելիս անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել բառերի կոնկրետ բառաիմաստային նշանակությունները, դրանց փոփոխությունները (մասնավորապես ներազդման գործառույթի հետ կապված), ինչպես նաև այդ լեզվական միավորների բառադարձվածային կապակցելիության առանձնահատկությունները: Նմանատիպ վերլուծություն արդեն կատարվել է այս աշխատանքում: Վերը բերված երկրորդ օրինակի *essentially* շարույթում նկատվում է իմաստային սաստկացման գործառույթի մասնակի առկայություն: Իսկ երրորդ օրինակում *monstrously* շարույթը լրացնում է նախադասության՝ ածականով իրացված ստորոգելին: Իրականում -ly-ով բառային շարույթն այստեղ որակում է նախադասության ողջ ստորոգումը, ինչն էլ իրականացվում է որոշյալի միջոցով:

Ուսումնասիրության նյութում կան -ly-ով բառային շարույթի գործածման նաև այլ օրինակներ, ինչպիսիք են դրա կապակցությունները գերունդիումի և անցյալ դերբայի (ածականական կիրառություն) հետ և այլն: Դիտարկվում են ասույթներ, որոնցում այս շարույթները թվարկման գործառույթ են իրականացնում (*firstly, secondly, initially, finally* և այլն): Սակայն վերոհիշյալ դեպքերն այնքան սովորական և հաճախակի չեն, որքան արդեն քննարկված օրինակները: Պետք է նշել, որ քննվող նյութում հաճախ հանդիպում են ասույթներ, որոնցում միաժամանակ առկա են -ly-ով բառային շարույթի տարբեր տիպի կիրառություններ:

But it altered **crucially** the balance of risk as to whether to deal with it or **simply** carry on, however **imperfectly**, trying to contain it. (Tony Blair, 5 March 2004)

But we also know that **legislatively** facilitated press freedoms have still not resulted in an **intellectually** and **fiscally** free and responsible press. (Vartan Oskanian, 16 March 2004)

Կարելի է եզրակացնել, որ -ly-ով բառային շարույթների ձևաբանական ու շարահյուսական կապակցելիության տարբեր դրսևորումները հանգեցնում են այս բառային շարույթների որոշակի նպատակային բառաիմաստային ձևափոխությունների, որոնք ազդեցություն են ունենում ողջ ասույթի բովանդակային տոնայնության վրա և միտված են նպաստելու կոնկրետ արտալեզվական առաջադրանքի իրականացմանը: Այս բառային շարույթները բազմազան բառաիմաստային ձևավորում են ստանում իրենց կիրառման լեզվական և արտալեզվական համատեքստում՝ քաղաքական ելույթում ու պայմանավորված են դրա գործառական ուղղվածությամբ:

Մի կողմից՝ տրամաբանական, փաստական, փաստարկային, օբյեկտիվ, իսկ մյուս կողմից՝ հուզական, արտահայտչական, գնահատողական, սուբյեկտիվ տարրերի համակցման ու ներկայացման միջոցների ու տարբերակների բազմաձևությունը ծառայում է քաղաքական ելույթի երկու հիմնարար գործառույթների իրացմանը՝ լսարանին արտալեզվական տեղեկատվություն փոխանցելուն և նրա վրա հուզական-հոգեբանական ազդեցություն գործելուն: Այսպիսով, -ly վերջածանցով բառային շարույթները քաղաքական խոսույթում հանդես են գալիս ճկուն ու բազմազան դրսևորումներով՝ անհրաժեշտ նման ընդգրկուն, խորը և միաժամանակ պատասխանատու արտալեզվական առաջադրանքի իրականացմանը:

**-able/-ible վերջածանցով բառային շարույթները:** -able/-ible վերջածանցով բառային շարույթներն իրացնում են գործողության կատարման հնարավորության բառաձևաբանական կարգը: Դրանք նույնպես գործածման բարձր հաճախականու-

թյուն ունեն քաղաքական ելույթներում: Սա հիմնականում այս շարույթների գործողության իմաստային բաղադրիչի շնորհիվ է, որը դրանք դարձնում է դինամիզմի հասկացության կրողներ, ինչպես նաև այս շարույթներին հաճախ բնորոշ հուզական-գնահատողական իմաստային բաղադրիչի շնորհիվ: *Բայական հիմք + -able/-ible վերջածանց* բառակազմական հարաբերությունը բնորոշվում է բացարձակ արդյունավետությամբ, ինչը ենթադրում է քննվող տիպի շարույթների գործառության հնարավորություն ոչ միայն իմաստային, այլ նաև վերնշանային մակարդակում, երբ տվյալ տիպի բառային միավորի ստեղծումը պայմանավորված է արտալեզվական իրադրությամբ [Alexandrova, Ter-Minasova 1987, Тер-Минасова 1980, Микоян, Тер-Минасова 1981, Гвишиани 1979]:

Ստորև բերվում են օրինակներ, որոնցում *arguable, imaginable, negotiable, remarkable* բառային շարույթներն արտահայտում են գործողության կատարման հնարավորություն, իսկ նույն վերջածանցով այլ շարույթներ՝ *indistinguishable, inarguable, inalienable, unalterable, inexplicable, unexplainable*, ընդհակառակը, արտահայտում են գործողության կատարման անհնարինություն, այսինքն՝ այդ հնարավորության ժխտում այնպիսի ժխտական նախածանցների միջոցով, ինչպիսիք են *in-*ը և *un-*ը (նշենք, որ *il-, im-, ir-, non-* ժխտական նախածանցները նույնպես կիրառվում են *-able/-ible*-ով բառային շարույթների հետ): Այս բառերն առանձին վերցրած չունեն որևէ քաղաքական երանգավորում կամ այսպես ասած *ֆաղափականամեծ* չեն. դրանք անգլերենի ընդհանուր բառապաշարի միավորներ են: Բայց երբ այս բառերը հայտնվում են քաղաքական միջավայրում՝ համատեքստում, հաճախ *ֆաղափականացվում* են: Անցնելով քաղաքական խոսույթ՝ նման բառային շարույթները յուրահատուկ լեզվագործաբանական հարաբերություններ են հաստատում և փոխներթափանցվում իրենց նոր միջավայրի այլ լեզվական ու արտալեզվական տարրերի հետ և, ըստ Վ. Վինոգրադովի պնդման, գործառապես փոփոխվում [Виноградов 1955, 1963]: Նշանակում է, որ գործառական ոճը սահմանում է բառային շարույթի բնույթը, և, հետևաբար, հակառակ պնդումը



նույնպես հիմնավորված է դառնում. բառային շարույթի բնույթը կարող է ծառայել որպես գործառական ոճի տարբերակիչ հատկանիշ:

Փորձենք -able/-ible վերջածանցով բառային շարույթները քննարկել բառադարձվածային տեսանկյունից՝ հենվելով կարգերի ու չափորոշիչների համակարգի ու հաղորդում – ներգործում հակադրության վրա:

What is more, their alternative judgement is both entirely rational and **arguable**. (Tony Blair, 5 March 2004)

And it [*extremism – U. P.*] was driven not by a set of **negotiable** political demands, but by religious fanaticism. (Tony Blair, 5 March 2004)

Many of today's social ills, and the economic ones, too, will be well on their way to disappearing if human rights are accepted, absorbed, respected and implemented as **inarguable, inalienable, unalterable** rights. (Vartan Oskanian, 16 March 2004)

Այս ասույթներում *arguable, negotiable, inarguable, inalienable, unalterable* բառային շարույթները ներկայացնում են հաղորդում – ներգործում հակադրության օբյեկտիվ, տրամաբանական կողմը: Դրանք ունեն ուղղակի և փաստագրական իմաստ: Ակներև է, որ այս շարույթների միջոցով ներմուծվող՝ տեղեկատվության փոխանցման գործառույթը գերիշխում է դիտարկվող համատեքստերում: Ինչպես և -ly վերջածանցով բառային շարույթների պարագայում, -able/-ible վերջածանցով բառային շարույթներն էլ որպես կանոն անգլերենի ստանդարտ գրական բառապաշարի միավորներ են, որոնց մի մասը նաև ընդգծված են որպես առավելապես պաշտոնական խոսույթի միավորներ:

Ըստ կարգերի և չափորոշիչների համակարգի վերլուծության՝ պարզ է դառնում, որ քննվող շարույթներն ունեն կադապարայնության, հանրալեզվաբանական և հասկացական պայմանավորվածության կարգերի հատկանիշներ: Այս շարույթների

իրացումը կոնկրետ այս համատեքստերում միանգամայն բնական ու սովորական է և համապատասխանում է քաղաքական խոսույթի՝ որպես գործառական ինքնատիպ դրսևորման ընդունված նորմին: Քաղաքական խոսույթում այս շարույթները հաճախ հանդիպում են այնպիսի կապակցություններում, ինչպիսիք են *arguable judgement*, *negotiable political demands*, *inalienable human rights* և այլն: Սա մեծապես տվյալ բառային շարույթների հանրալեզվաբանական և հասկացական պայմանավորվածության շնորհիվ է. դրանց իմաստային բովանդակությունը և հասկացական նշանակությունը, ինչպես նաև արտալեզվական իրականությունը հաճախ ուղիղ համեմատական հարաբերության մեջ են գտնվում: Սա կանխորոշում է հաղորդման գործառույթի գերիշխումը: Հետաքրքիր ու փոքր-ինչ այլ երևույթներ են դիտարկվում *inarguable*, *inalienable*, *unalterable rights* կապակցության առնչությամբ: Երբ *-able/-ible*-ով այս երեք տրամաբանական շարույթները խոսքում կիրառվում են հոմանշային շարքի տեսքով, տրամաբանական ճշմարտության կողքին երևան է գալիս հուզական-պաթետիկ տրամադրություն. տեղի է ունենում իմաստային-հասկացական խտացում, ինչը առաջ է բերում որոշակի ներազդման գործառույթի իրացում: *Inalienable human rights* (մարդու անօտարելի իրավունքներ) արտահայտությունն ավելի քան հաճախ կիրառվող ու արդեն կայացած լեզվական կաղապար, նույնիսկ առանցքային տերմին է ժամանակակից քաղաքական լեզվում: Վերոհիշյալ համատեքստային հոմանշային շարքում կիրառված մյուս երկու բառային միավորները թեև լայն կիրառություն ունեն ժամանակակից քաղաքական խոսքում, ինչևէ, քննարկվող համատեքստում իրենց հարևան, «կայացած» բառային շարույթի ազդեցությամբ է, որ ձգտում են կաղապարայնության: Այսպիսով, այս երեք ասույթներում *-able/-ible*-ով բառային շարույթները և դրանց միջոցով փոխանցվող տեղեկատվությունը գերակշռորեն տրամաբանական ու օբյեկտիվ են և իրացնում են խոսքի հաղորդման գործառույթը:

Առաջին օրինակն ասույթ է Թոմի Բլեդրի ելույթից: *Arguable* շարույթը բավական հաճախ հանդիպող բառային միավոր է քա-

ղաքական խոսույթում: Կարելի է ասել՝ այն դիտարկվում է բնական միջավայրում: Թեև *judgement is both entirely rational and arguable* կապակցության մեջ *arguable*-ը *judgement* բառին կից չէ, այն ուղղակիորեն վերաբերում է վերջինիս հասկացական-ինաստային մակարդակում: Այսպես, այն կարող է դրսևորվել *arguable judgement* բառակապակցության մեջ, որը քննարկվող գործառական ոճում քաղաքական նշույթավորում է ստանում և բավական վերարտադրելի է, ինչպես նաև հանրալեզվաբանորեն ու հասկացականորեն պայմանավորված: *Judgement is both entirely rational and arguable* պնդումը Թ. Բլեքրի կողմից կիրառվել է Իրաքյան պատերազմի վերաբերյալ իր ընդդիմախոսների դիրքորոշման առնչությամբ, մի պատերազմ, որին մասնակցեց նաև Միացյալ Թագավորությունը: Ելույթում նա չի քննադատում իր ընդդիմախոսներին իրենց հակառակ դատողության համար, այլ, ընդհակառակը, որակում է այն որպես ապացուցելի՝ օբյեկտիվ, տրամաբանական պատճառների հնարավոր հիմքով: Նա նաև ներկայացնում է իր դատողությունը և որոշումն արդարացնող պատճառը, որը համոզիչ ուժ է ստանում հակառակորդների դիրքորոշման նկատմամբ իր ռացիոնալ վերաբերմունքի համատեքստում: *Arguable* բառի կիրառությունը դիվանագիտորեն արդարացված քայլ է, որը կարող է որոշ չափով հանդարտեցնել որոշմանը դեմ մարդկանց և միաժամանակ աջակցել այդ որոշման արդարացմանը:

Երկրորդ օրինակում *negotiable* բառային շարույթի համակցումը *political demands* արտահայտության հետ մեծ չափով հանրալեզվաբանորեն բեռնված է: Մեր օրերում աշխարհը հայտնվում է բազմաթիվ ու բազմազան մարտահրավերների դեմ հանդիման, որոնք հաճախ ներկայացվում են տարբեր քաղաքական պահանջների ձևով: Բանակցության հասկացությունը, հետևաբար նաև բանակցելի քաղաքական պահանջների հասկացությունը խթանվում են ժամանակակից առաջատար հասարակության հասարակական-քաղաքական կյանքում: Այսպիսով, երբ պահանջը քաղաքական է և բանակցելի, այն կարող է բավարարվել, և սա արդեն դրական քայլ է համարվում խնդրի լուծման ուղղությամբ ի հակադրություն կրոնական մոլեռան-

դության և ծայրահեղականության, որ համարվում են անվերահսկելի և չեն կարող բանականորեն ընկալվել:

Երրորդ օրինակում -able վերջածանցով բառային շարույթների առատ կիրառություն է նկատվում՝ *human rights ... as inarguable, inalienable, unalterable rights*: Վ. Օսկանյանը ձգտում է առավելագույնս օբյեկտիվ և տրամաբանական լինել մարդու իրավունքների իր գնահատականում: Նշված բառային շարույթները ներկայանում են ուղղակի իմաստով և հղված են իրական կյանքին: Տվյալ համատեքստում դրանց գործածությունը հանրալեզվաբանորեն և հասկացականորեն (գոնե առաջին մակարդակում) պայմանավորված է և նույնիսկ ժամանակի՝ 21-րդ դարի ու առիթի՝ Մարդու իրավունքների հանձնաժողովի 60-րդ նիստի (որին ներկայացվել է սույն ելույթը) պահանջն է: Հասկացական լիարժեքության երկրորդ մակարդակի առումով որոշակի վերապահումով խոսելու հարկ կա. եթե տվյալ բառային միավորների արտահայտած կոնկրետ բովանդակությունն ունի տրամաբանական հիմք (առաջին մակարդակ), ապա տվյալ հասկացական-տրամաբանական բովանդակության համապատասխանությունն արտալեզվական իրադրությանը (երկրորդ մակարդակ) ամենևին միանշանակ չէ, ինչին և հղում է կատարում *եթե* պայմանը հռետորի խոսքում:

The lawyers continue to divide over it [*the legal opinion that the war was lawful – U. P.*] – with their legal opinions bearing a **remarkable** similarity to their political view of the war. (Tony Blair, 5 March 2004)

Armenians have experienced these **inexplicable** human wrongs for a hundred years. (Vartan Oskanian, 16 March 2004)

In the wake of the shocking, frightening, **inexplainable** horror that hit Spain and the world just a few days ago, I must repeat that which we all know: there is a way to beat the terrorism, to defeat those who are bent on destroying a way of life. (Vartan Oskanian, 16 March 2004)

Քննարկենք վերը բերված օրինակներում ներկայացված *remarkable*, *inexplicable* և *inexplainable* բառային շարույթները: Տվյալ համատեքստերում այս լեզվական միավորներն իրացվում են որպես ներազդման գործուն միջոցներ: Իրականությանն ուղղված այս բառային միավորներում օբյեկտիվի և սուբյեկտիվի սահմանագիծն անորսալի է, և բառային միավորներն ամբողջությամբ ներծծված են հուզական-գնահատողական հարանշանակությամբ: Տարամետ տարրերի փոխներթափանցումը ցույց է տալիս, որ քննարկվող բառային շարույթներն ունեն քաղաքական խոսքի նշույթավորում և առանձնահատուկ գործառական արժեք: Լեզվական միավորում տարամետ չափորոշիչների միաժամանակյա համագոյակցումը փաստում է, որ դրանք իրարամերժ չեն: Այսպիսով, տեղին է խոսել իմաստային կամ վերնշանային մակարդակում բառային միավորների դրսևորած կոնկրետ բառաիմաստային և գործաբանական հատկանիշների որոշակի համամասնության մասին:

Երկրորդ և երրորդ ասույթներում դիտարկվում է *inexplicable – inexplainable* հոմանշային զույգը: *Inexplicable* և *inexplainable* բառային շարույթներում առկա է հարանշանակային երանգավորում. դրանք դրսևորում են հանրալեզվաբանական պայմանավորվածություն: Սակայն դրանք հասկացական առումով լիարժեք չեն (*these inexplicable human wrongs; shocking, frightening, inexplainable horror*), դարձվածային են և գործառում են խոսքի վերնշանային մակարդակում, քանի որ մարդկային չարագործությունները սովորաբար կարելի է բացատրել: Այլ բան է, որ բացատրությունները տարբեր հարաբերակցության մեջ կարող են լինել մարդկային նորմերի հետ: Այս պարագայում կա տրամաբանական, խիստ պրագմատիկ բացատրություն, որը չի համապատասխանում մարդկային նորմերին: Ներկայացված առաջին կապակցության մեջ *these* բառը հղում է էթնիկ զտումներին ու դրանց տրամաբանական զարգացմանը՝ գենոցիդին՝ 1915 թ. Հայոց ցեղասպանությանը, որոշ պատմաբանների պնդումներին, որ պատմության մեջ կան հանգամանքներ, որոնք արդարացնում են վայրենությունն ու սպանողը, հանդուրժողականությանը, որ միջազգային հանրությունն

ունի այսպիսի հանցագործությունների հանդեպ, քանի դեռ դրանք տեղի են ունենում հեռու երկրներում, ինչպես նաև հիշողությունների ու մեթոդների հանդեպ (*We tolerate atrocities, massacres, ethnic cleansing so long as they happen in distant lands. We tolerate their memories and approve the deniers. We tolerate historians who claim that there are circumstances in history that justify ethnic cleansing and its logical progression, genocide. Armenians have experienced these inexplicable human wrongs for a hundred years.*): Այս բոլոր հանցագործությունները, իհարկե, կարող են մեկնաբանվել մարդկային դաժանության ու թշնամանքի տեսանկյունից, աշխարհաքաղաքական զավթողական նկրտումների տեսանկյունից, որոշակի գաղափարախոսական պատճառների տեսանկյունից: Բայց չնայած սրան՝ նշված հանցագործություններն անմեկնելի են մարդկային նորմերի և բարոյականության տեսանկյունից: Այսպես՝ *inexplicable* և *inexplainable* բառային շարույթները ձեռք են բերում յուրահատուկ իմաստային նրբերանգներ և քննարկվող արտահայտություններին, ինչպես նաև ասույթներին հուզական երանգավորում տալիս: Դրանք առավել համոզիչ են դարձնում ասույթներն ու օգնում որոշակի հուզական ներգործություն ունենալ ունկնդիրների վրա: Ակնհայտ է, որ ելույթը պատրաստելիս հռետորը հաշվի է առել հասցեատեր-լսարանի առանձնահատկությունը: *Inexplicable human wrongs* արտահայտությունը և դրա հիմքում ընկած հանդիմանությունը կարելի է տեղին համարել՝ հաշվի առնելով լսարանը՝ Սարգոս իրավունքների հանձնաժողովը, որը ներկայացնում է ազատ ժողովրդավարական երկրներ ու կոչված է պաշտպանելու ու խթանելու մարդու իրավունքներն աշխարհում, և առիթը՝ այդ հանձնաժողովի հրեքյանական 60-րդ նիստը:

Երրորդ ասույթում ձևաբանական ու շարահյուսական առումով բնականորեն համադրելի լինելով համատեքստում՝ *inexplainable* բառային միավորը, ինչևէ, դիպվածային է: Բառաբանում այն առանձին հոդվածով գրանցված չէ ի տարբերություն, օրինակ, իր հոմանշային զույգի՝ *inexplicable*-ի [Hornby 2000, ABBYY Lingvo 12]: Նշանակում է՝ բառը հատուկ կիրառ-

վել է կոնկրետ առիթի համար: Այսպիսով, սա *explain* արմատային ձևույթի յուրօրինակ իրացում է՝ ըստ *բայական հիմք + -able/-ible վերջածանց* բառակազմական մոդելի: Այս բառային շարույթն ունի իմաստի հուզարտահայտչական, գնահատողական կոնկրետ հարանշանակություն՝ միտված հստակ արտալեզվական առաջադրանք իրականացնելու, և իր ամբողջական իրացումն է գտնում խոսքաստեղծման վերնշանային մակարդակում:

Նման դիպվածային գոյացությունները միանգամայն հիմնավորված են, և դրանց բառաիմաստային բովանդակությունն անմիջական կապ ունի համապատասխան բայի բառաիմաստային բովանդակության հետ. *inexplainable*-ի բառաիմաստային բովանդակության մեջ առաջնային տեղ է տրված գործողության իմաստային բաղադրիչին, մինչդեռ *inexplicable* ընդունված բառային շարույթում այն որոշակիորեն շղարշված է: Հարկ է նաև նշել, որ հուզական բովանդակության արտահայտումն է հաճախ ընկած նշված տիպի դիպվածային բառային շարույթների հիմքում:

Իսկ ահաբեկչական գործողությունների մասին խոսելիս հուզական երանգավորումն ավելի քան տեղին է ու բնական հատկապես Սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո: *Explicate* բայն ի տարբերություն *explain*-ի պաշտոնական է [Hornby 2000], և հետևաբար «թարմ» ածանցյալ *inexplainable*-ն ավելի «կենդանի» և «անկեղծ» է հնչում ունկնդրի համար:

Այսպիսով, որքան ավելի վերարտադրվում կամ ընդունված են դառնում այս բառային շարույթները, և որքան ավելի մեծանում է բառակապակցություններ կազմելու դրանց ունակությունը, այնքան ավելի նվազում է դրանց իմաստաձևաբանական հիմնավորվածությունը, և պակասում արդյունավետությունը պոտենցիալ հնարավոր կամ նոր ձևավորվող դրական կամ ժխտական հարաբերակից տարբերակների համեմատ:

*These inexplicable human wrongs* և *the shocking, frightening, inexplicable horror* արտահայտությունները, ինչպես և քննարկվող բառային շարույթները դարձվածային են. վերջիններս չի կարելի հասկանալ ուղիղ իմաստով: Այնինչ նախորդ օրինակում *remarkable similarity* արտահայտության մեջ առկա է

*remarkable* բառային շարույթի ուղղակի իմաստի, թեև միանգամայն շեշտված, զուցե և հեզմանքի հասնող հուզական խաղարկում: Միացյալ Թագավորության վարչապետը նկատում է, որ Իրաքյան պատերազմի օրինականության վերաբերյալ իրավաբանների իրավական եզրակացություններն ուշագրավ նմանություն ունեն նրանց քաղաքական դիրքորոշումներին: Հասկացական պայմանավորվածության առումով (երկրորդ մակարդակ) դժվար է միանշանակ պնդում անել, քանի որ մինչ օրս չի հաստատվել կամ հերքվել Իրաքյան պատերազմի իրավական հիմքի կամ քաղաքական արդարացվածության առկայությունը:

The Taliban are now learning this lesson – that regime and the terrorists who support it are now virtually **indistinguishable**. (George Bush, 10 November 2001)

Այս ասություն ուշադրության արժանի է *indistinguishable* բառային շարույթը: Այն տրամաբանական, իրական հիմք ունի և միտված է պնդունը ներկայացնել օբյեկտիվ հիմնավորմամբ: Սակայն դրանով հանդերձ, թեև կարող է զարմանալի լինել, այն զուրկ չէ բավականաչափ հուզական հավելումից և ձեռք է բերում փոխաբերական նշանակություն այս կոնկրետ քաղաքական համատեքստում: Նախագահ Բուշը ողջ ասույթի առանցքային գաղափարն արտահայտում է այս շարույթի միջոցով: Այն հասկացականորեն պայմանավորված չէ, քանի որ չի կարող իրականում նշանակել, որ անհնար է ռեժիմի և ահաբեկիչների միջև տարբերություն տեսնել (“indistinguishable - it is impossible to see any difference between” [Hornby 2000]). ռեժիմը և ահաբեկիչներն իրականության տարբեր կարգեր են: Հետտորը պարզապես ցանկանում է ընդգծել, որ իր և իր երկրի դիրքորոշումը հաստատում է, և նա ռեժիմը՝ երևույթը և ահաբեկիչներին, ովքեր փաստորեն ստեղծում և ապահովում են այն, դնում է նույն հարթության վրա՝ այսպիսով տարբերություն չդնելով առաջինի և վերջինների միջև և համարելով նրանց մեկ ընդհանուր չարիք: Այսպիսով Ջ. Բուշը դրդում է իր ունկնդիրներին՝ Միացյալ ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի անդամներ-



րին Աֆղանստանի ռազմական-ավտորիտար, մոլեռանդ կրոնական ռեժիմի նկատմամբ իրենց բացասական վերաբերմունքը տարածելու նաև ահաբեկիչների՝ այդ ռեժիմը սատարող մարդկանց վրա: Սա արվում է վերնշառնային մակարդակում *indistinguishable* բառային շարույթի իրացման միջոցով, ինչը հնարավոր է դարձել դիտարկվող շարույթի հանրալեզվաբանական պայմանավորվածության շնորհիվ: Ասույթի *that regime and the terrorists who support it are now virtually indistinguishable* մասը կոնկրետ թշնամիների՝ ահաբեկիչների դեմ Սիացյալ ազգերին ակտիվ պայքարի մեջ ներգրավելու անուղղակի հորդոր կարող է համարվել:

That liberty [*the most basic civil liberty – the right of the ordinary citizen to go about their business free from fear or terror – U. P.*] has been denied, in the cruellest way **imaginable**, to the passengers aboard the hijacked planes, to those who perished in trade towers and the Pentagon, to the hundreds of rescue workers killed as they tried to help. (Tony Blair, 14 September 2001)

Ներկայացվող օրինակում իրականությանն ուղղված, հասկացականորեն հիմնավորված *imaginable* բառային միավորումն նույնպես նկատվում է տարամետ իմաստային տարրերի փոխներթափանցում: Այստեղ *imaginable* բառային շարույթը հարանշանակային է, ինչպես նաև ձգտում է կաղապարայնացման: Տվյալ համատեքստում այն հանդիպում է հռետորական առումով ընդգծված, հուզական կապակցության մեջ՝ *in the cruellest way imaginable*: Քաղաքական խոսույթին բնորոշ լինելով և դրանում վերարտադրվելով՝ խոսքը սաստկացնող այս բառային միավորը նաև ձգտում է կաղապարայնացման: Տարբեր կարգային շափորոշիչների առկայությունը մեկ լեզվական միավորում ցույց է տալիս, որ կան ոչ միայն, ասենք, զուտ հարանշանակային կամ կաղապարային բառային շարույթներ, այլ բավական հաճախ հանդիպում են նաև բազմազան միջանկյալ դեպքեր: *Imaginable* շարույթը դրականորեն կամ բացասականորեն նշույ-

թավորված չէ, եթե առանձին է դիտարկվում: Այն դրականորեն կամ բացասականորեն գնահատում է իր միջոցով նկարագրվող երևույթը միայն յուրահատուկ հանրալեզվաբանական միջավայրում: Քննվող համատեքստում *imaginable* բառային միավորը ստանում է բացասական երանգավորում: Միացյալ Թագավորության վարչապետն այս լեզվական միջոցն օգտագործում է Սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունների նկարագրության առնչությամբ և դատապարտում այդ ահաբեկչական գործողությունները, որոնք մարդկային կյանքեր խլեցին, մարդկանց զրկեցին անվտանգության գաղափարից՝ մարդու հիմնարար ազատությունից: *In the cruellest way imaginable* արտահայտությունը որոշակիորեն սուբյեկտիվ, խիստ հուզական, բայց և տեղին գնահատական է իրական կյանքի կոնկրետ իրադարձությունների համատեքստում, որոնք համախմբել են մարդկանց ողջ աշխարհով մեկ, համախմբել ընդդեմ ժամանակակից աշխարհի ամենավտանգավոր և անվերահսկելի չարիքի: Այս հուզագնահատողական արտահայտությունը կարող է դառնալ առանցքային, ստեղծել փոխըմբռնման մթնոլորտ, ինչպես նաև հաջող երկխոսության հնարավորություն հռետորի և լսարանի՝ Չամայնքների պալատի ու զանգվածային լրատվամիջոցներով նաև ողջ բանական հանրության միջև: Քննարկվող արտահայտությունը կարող է լինել խոսողի և ունկնդիրների միջև ներդաշնակություն և աջակցություն հաստատող տարրը և ունի ողջ ելույթի հաջողությանը նպաստելու պոտենցիալ, հատկապես երբ այս ամենը դիտարկվում է յուրահատուկ հասարակական-քաղաքական իրադրության շրջանակում՝ գլոբալ ահաբեկչության սպառնալիքի համատեքստում:

Այսպիսով, *-able/-ible* վերջածանցով բառային շարույթները, ծագումնաբանորեն լինելով հիմնականում բայից ածանցվող միավորներ ու արտահայտելով գործողության կատարման հնարավորության նշանակություն, հաջողությամբ իրականացնում են քաղաքական ելույթի երկու հիմնական գործառույթները՝ հաղորդումն ու ներգործումը: Վերոհիշյալ շարույթները միանգամայն օրգանապես են գործառում քաղաքական ելույթի համատեքստում: Այլ լեզվական միավորների հետ տարբեր բառային,

իմաստային կապեր հաստատելով՝ դրանք դրսևորում են զգալի պերսուազիվ պոտենցիալ և արդյունավետ ծառայում հասցեագրողի նպատակադրության իրացմանը:

-able/-ible վերջածանցով բառային շարույթներն այժմ կքննարկվեն ձևաբանական ու շարահյուսական հայեցակետերի տեսանկյունից: Այս շարույթներն ունեն հիմնավորված ձևաբանական կառուցվածք՝ *բայական հիմք + -able/-ible վերջածանց*, և բառակազմական այս մոդելը բացարձակ է համարվում արդյունավետության առումով, ինչպես արդեն նշվել է այս աշխատանքում: -able/-ible վերջածանցով շարույթներ կազմվում են նաև անվանական հիմքերից, սակայն բառակազմական այս մոդելը շատ ավելի պակաս բնորոշ և արդյունավետ է նշված տիպի շարույթների կազմության համար: Ինքնին վերջածանցը՝ -able/-ible, հետաքրքիր է իր իմաստով, որը, մի կողմից, ցույց է տալիս իրականացման հնարավորություն, մյուս կողմից՝ որակի տիրապետում («that can or must be; having the quality of» [Hornby 2000, ABBYY Lingvo 12]): Ձևաբանական կառուցվածքի՝ հիմքի ու վերջածանցի իմաստային հանրագումարը -able/-ible-ով բառային շարույթները խոսքում օժտում է յուրօրինակ բառաիմաստային ու շարահյուսական գործառնությամբ:

*That liberty [the most basic civil liberty – the right of the ordinary citizen to go about their business free from fear or terror – U. P.] has been denied, in the cruellest way imaginable, to the passengers aboard the hijacked planes, to those who perished in trade towers and the Pentagon, to the hundreds of rescue workers killed as they tried to help. (Tony Blair, 14 September 2001)*

Our economic growth has been despite the blockade, which goes against the spirit and the conclusion of the recent UN-sponsored International Ministerial Conference on Transit Transport Cooperation which reaffirmed the right of access of landlocked countries to and from the sea and freedom of transit through the territory of their neighbors by all means of transport,

in accordance with **applicable** rules of international law. (Vartan Oskanian, 25 September 2003)

Առաջին օրինակում *imaginable* բառային շարույթը լրացնում է *the cruellest way* բառակապակցությունը, որն էլ իր ամբողջության մեջ որոշարկուն է ստորոգյալը և դրա միջոցով ասույթի նաև ողջ ստորոգումային հիմքը: Սրան մեծապես նպաստում են նախադասության մյուս անդամներից կապակցության առոգանական հատուկ տրոհումը, ինչը գրաֆիկորեն արտահայտված է ստորակետների միջոցով: Հետագայում դիրքը որոշակի անկախություն է տալիս քննարկվող բառային շարույթին և ընդգծում դրա բայական իմաստը: Հուզական լարումը *cruellest* գերադրական ածականից զգալիորեն տեղափոխվում է *imaginable* բառային միավորի վրա: Առանց այն էլ շեշտված արտահայտության մեջ առաջնային դերակատարում է ստանում *-able*-ով բառային շարույթը, որում առավելագույնս աշխուժանում է գործողության իմաստը: Մինչդեռ ածականին անգլերենին օրգանապես հատկանշական է կենտրոնամետ կապով հարաբերված նախադաս կից բնորոշի դերը:

*Applicable* բառային միավորը, ըստ բառարանային տվյալների [Hornby 2000], սովորաբար չի կիրառվում գոյականից առաջ: Իսկ հետագայում շարահյուսական կապը գործողության իմաստի ակտիվության նշան է: Սակայն հետաքրքրական է, որ կոնկրետ այս օրինակում քննվող բառային շարույթը գոյականին նախադաս դիրքում է դրսևորվում, ինչը նպաստում է այս բառային միավորում հատկանիշի իմաստային տարրի ուժեղացմանը և վկայում *applicable rule* բառակապակցության տերմինային բնույթի մասին:

And my country grieves for all the suffering the Taliban have brought upon Afghanistan, including the **terrible** burden of war. (George Bush, 10 November 2001)

All of this made it [September 11th – its detailed planning, its devilish execution, its place – New York, USA – U. F.] an

astonishing, **terrible** and wicked tragedy, a barbaric murder of innocent people. (Tony Blair, 5 March 2004)

I did not consider Iraq fitted into this philosophy, though I could see the **horrible** injustice done to its people by Saddam. (Tony Blair, 5 March 2004)

Նշված բառային շարույթներում (*terrible, horrible*) հասկացական բովանդակությանը զուգահեռ առկա է հատուկ ուղղվածության հարանշանակություն: Այս ներհատուկ իմաստային տարրն առավել ակտիվանում և ընդգծված դրսևորում է ստանում կոնկրետ շարահյուսական միջավայրում յուրահատուկ հասարակական-քաղաքական զարգացումների համատեքստում: Գործողության, դինամիզմի գաղափարը շատ ազդեցիկ է ժամանակակից քաղաքական խոսույթում, և քննվող բառային շարույթներում այն առկա է շնորհիվ դրանց ձևաբանական կառուցվածքի: Շարահյուսական տեսանկյունից պետք է նշել, որ որոշարկվող բառի նկատմամբ այս բառային շարույթների նախադաս դիրքը ստեղծում է բավական կենտրոնամետ կապակցություն, ինչը խթանում է դրանցում որակի իմաստային տարրի ուժեղացումը: Այսպիսով, գործողության ու որակի իմաստային տարրերի առանձնահատուկ համակցումը (ինչը տարբեր ձևաբանական-շարահյուսական և բառադարձվածային համատեքստերում տարբեր համամասնությամբ է դրսևորվում) քննվող բառային միավորները դարձնում է արտալեզվական իրականության գնահատման և լեզվական արտահայտության հասկացական բովանդակության սաստկացման ազդեցիկ գործիքներ:

Վերը բերված օրինակներում քննվող բառային շարույթները նախադաս կից շարահյուսական դիրք ունեն որոշարկվող գոյականի նկատմամբ և միտված են հատկանշային հարաբերություն արտահայտելու. միշտ չէ, որ այս բառերը գործածելիս կամ լսելիս մտովի հղում ենք կատարում բայական ածանցմանը: Սա հատկապես ցայտուն է արտահայտված երկրորդ օրինակում, որում *terrible* բառային շարույթը դրսևորվում է հատկա-

նշային իմաստ ունեցող համադաս անդամների շարքում: Ինչևէ, ածանցվող բայական հիմքի իմաստի հետ կապը պահպանված է:

Մի շարք դեպքերում սկզբնական բայական իմաստի որոշակի փոփոխություն է նկատվում -able/-ible վերջածանցով բառային շարույթներում: Դրանք, ասես, հեռացած են ածանցվող բայական հիմքից: Բնորոշ օրինակներ կարող են լինել *considerable*, *available* բառային շարույթները քաղաքական խոսույթում: Հատկապես *considerable* բառը հաճախակի կիրառություն ունի քաղաքական խոսքում: Փաստորեն այս շարույթի կիրառությունը պայմանավորված է ոչ թե անհատական մտածողությամբ, այլ լեզվում արտալեզվական գործոնների արտացոլմամբ, որոնք հարուցում են բայական իմաստի փոփոխություններ: *Considerable* բառը հասարակական-քաղաքական խոսույթում հաճախ հանդես է գալիս նաև շեշտող գործառնությով և դարձել է անգլերենին հատուկ քաղաքական կաղապար:

What is more, it was obvious that there was a **considerable** network of individuals and companies with expertise in this area, prepared to sell it [*nuclear weapons programmes, CW (chemical warfare) and BW (biological warfare) materiel, long-range missiles*]. (Tony Blair, 5 March 2004)

On each occasion the most careful judgement has to be made taking account of everything we know and the best assessment and advice **available**. (Tony Blair, 5 March 2004)

*A considerable network, the best assessment and advice available* կապակցությունները վերարտադրելի են, ունեն հասարակական-քաղաքական ուղղվածություն: Առաջին դեպքում *considerable* շարույթն ունի որակական իմաստ, մինչդեռ երկրորդում՝ *available* շարույթը միտում է դրսևորում վերականգնելու կապը գործողության իմաստային բաղադրիչի հետ: Քննվող շարույթների շարահյուսական դիրքն իր մասն ունի դրանց նշանակության մեջ: Առաջին օրինակում դիտարկվում է *considerable* բառային միավորի նախադաս, իսկ երկրորդում՝ *available* բառային միավորի հետադաս կիրառություն: Վերջինս, ինչպես ար-

դեն ասվել է -ly վերջածանցով բառային շարույթների առնչությամբ, լեզվական միավորներին տալիս է ավելի ազատ, ավելի ինքնուրույն իրացման հնարավորություն, և, հետևաբար, զարմանալի չէ, որ ակտիվացնում է բառային շարույթի ձևաբանական կառուցվածքի ներքին իմաստային հարաբերությունները:

Կան նաև -able/-ible վերջածանցով բառային շարույթներ, որոնցում հիմքի բառաձևի հետ կապը տեսանելի չէ առանց ստուգաբանական վերլուծության կամ էլ միանգամայն կորել է:

In Israel and Palestine, Armenia hails the Quartet's efforts, recognizing that the endangered Roadmap remains the only **viable** option for peace in a long-suffering region. (Vartan Oskanian, 25 September 2003)

*Viable* բառի ձևաբանական կառուցվածքն առավելագույնս վերականգնվում է լեզվաբանական վերլուծության տարածմանակյա կտրվածքով՝ հղում կատարելով աղբյուր լեզվին՝ լատիներենին, որին արմատի ձևույթն ի սկզբանե պատկանում է: Այս պարագայում բառային շարույթի հասկացական-իմաստային բովանդակությունը դառնում է հնարավորինս հիմնավորված:

Այսպիսի բառերը համարվում են ձևաբանական առունձով ամբողջությամբ անկախ միավորներ: Ինչ վերաբերում է *viable* բառային միավորի շարահյուսական իրացմանը, հարկ է նշել, որ առարկա ցույց տվող բառի նախադաս բնորոշչի դերը որակ ցույց տվող բառային միավորի սովորական շարահյուսական գործառնություններից է:

-able/-ible վերջածանցով բառային շարույթներ, ինչպես արդեն նշել ենք, բացի բայից կարող են կազմվել նաև այլ խոսքի մասերից: Այս բառային շարույթներն ունեն կապակցելիության բարձր աստիճան, սակայն ածանցվող հիմքի անվանական բնույթը շատ ավելի պակաս բնորոշ է համարվում, և անվանական հիմքով շարույթներն արդյունավետությամբ զիջում են բայական հիմքով շարույթներին [Гвишиани 1979]:

But there was a core of **sensible** people who faced with this decision would have gone the other way, for **sensible** reasons. (Tony Blair, 5 March 2004)

I'm proud of the **honorable** conduct of the American military. (George Bush, 10 November 2001)

Ինչպես երևում է, նույնիսկ մեկ նախադասության սահմաններում *sensible* բառային շարույթը հատկանիշ արտահայտող բառին բնորոշ նախադաս կից կիրառությամբ հանդիպում է երկու կապակցություններում՝ *sensible people* և *sensible reasons*: Սա խոսում է այս տիպի շարույթների կանոնավոր վերարտադրության ու կապակցելիության մասին: Մի փոքր շեղվելով ձևաբանական-շարահյուսական վերլուծությունից՝ նշենք, որ *sensible* բառային շարույթի կրկնակի կիրառությունը նաև ցույց է տալիս, որ այն գաղափարային լարվածություն է կրում այս համատեքստում: Դրա միջոցով ստեղծվում է տրամաբանականության, փաստարկայնության, օբյեկտիվության և ճշմարտացիության մթնոլորտ, ինչը նպաստում է ելույթի ընդհանուր գաղափար-մտադրությանը հասնելուն: *Sensible* բառի կրկնությամբ Թ. Բլեյրը հարգալից վերաբերմունք է ցույց տալիս բոլոր նրանց նկատմամբ, ովքեր տարամետ էին Իրաքյան պատերազմի իր որոշմանը 2003 թ. մարտին: Նա նաև ցույց է տալիս, որ հասկանում է այն մարդկանց, ովքեր «ողջամիտ պատճառներ» (*sensible reasons*) ունեին պատերազմի դեմ: «*I have never disrespected those who disagreed with the decision. Sure, some were anti-American; some against all wars. But there was a core of sensible people who faced this decision would have gone the other way, for sensible reasons. Their argument is one I understand totally. It is that Iraq posed no direct, immediate threat to Britain*», – ասում է վարչապետ Թ. Բլեյրը Միացյալ Թագավորության առաջ կանգնած ահաբեկչության սպառնալիքի մեկնաբանմանն ու Իրաքյան պատերազմի պաշտպանությանը նվիրված 2004 թ. մարտի 5-ի իր ելույթում: *Sensible* բառային շարույթի շնորհիվ քաղաքական հակառակորդների միջև փոխադարձ ըմբռնման և հարգանքի մթնոլորտ կարող է ստեղծվել: Սա կա-



րող է լավ հիմք դառնալ կառուցողական երկխոսության համար, ինչին միտված է հռետորը: Ինչպես հայտնի է, լավ, տրամաբանական սկիզբը խթանում է թեմայի հաջող զարգացում: Ընդունելով հակառակորդների փաստարկները պատերազմի դեմ՝ Թ. Բլեյրը նշում է. « ... regime change alone could not be and was not our justification for war. Our primary purpose was to enforce UN resolutions over Iraq and WMD [*weapons of mass destruction – U. P.*]: Սա քաղաքական տրամաբանական հակափաստարկ է, որ միտված է արդարացնելու վարչապետի և նրա կողմնակիցների դիրքորոշումը:

Հաջորդ օրինակում *honorable* բառային շարույթը նույնպես հատկանիշի իմաստի կրող է, ունի նմանատիպ՝ նախադաս կից շարահյուսական դիրք և ոճականորեն նշույթավորված է: Քաղաքական ելույթի տեսակը հարուստ է գնահատողական բնույթ ունեցող լեզվական միավորներով, ինչը պայմանավորված է քաղաքական խոսույթի ինքնին էությանը ու նպատակով՝ համոզել և ներազդել:

Բառակազմական մոդելի բացարձակ արդյունավետության մասին խոսելիս պետք է հաշվի առնել շարույթների՝ բազմազան բառակապակցություններ կազմելու հնարավորությունը, որոնցում դրանք ընկալվում են որպես անկախ միավորներ: Այս շարույթները խոսքում կիրառելիս անգլերեն խոսողները հաճախ չեն մտածում, թե արդյոք դրանք ածանցված են համապատասխան բայական, այլ դեպքերում էլ անվանական հիմքերից:

Խոսքում այս կամ այն միավորի կիրառությունը և հաճախականությունը սահմանվում են բառադարձվածային համատեղելիությամբ, մի կողմից, և ձևաբանական-շարահյուսական կապակցելիությամբ, մյուս կողմից: Բառաձևաբանական կարգի բացարձակ արդյունավետության մասին խոսելիս պետք է ի նկատի ունենալ տվյալ լեզվով բոլոր խոսողներին հասկանալի նոր բառեր կազմելու համար այս կամ այն բառակազմական մոդելի ոչ միայն կանոնավոր կիրառությունը, այլ նաև հակադրության ածանցյալ անդամի վերարտադրության անսահման հնարավորությունը վերնշանային մակարդակում, որտեղ կարող է դրսևորվել հուզական, արտահայտչական, գնահատողական

հարանշանակությունների ողջ բազմազանությունը: Այսպիսով, ուսումնասիրվող շարույթներն օժտված են ազատ, կանոնավոր գործառելու ունակությամբ և ի վիճակի են իրականացնելու հստակ հասարակական-քաղաքական առաջադրանք:

Ձևավորվելով հիմնականում բայական հիմքից, սակայն ներկայացնելով ածական խոսքի մասը՝ -able/-ible վերջածանցով բառային շարույթներն իրենց ձևաբանական կառուցվածքի շնորհիվ բուն խոսքային իրադրության մեջ դրսևորում են բառաիմաստային որոշակի նրբերանգներ: Ասույթում այլ լեզվական միավորների նկատմամբ դիրքով պայմանավորված՝ այս բառային շարույթներն ի հայտ են բերում տարբեր տրամաբանական-շարահյուսական կապեր, որոնց արդյունքում դրանցում ակտիվանում են այս կամ այն բառաիմաստային տարրերն անհրաժեշտ քաղաքական հասցեագրողի գաղափարի և նպատակադրության արտահայտման համար:

Գործողության իմաստային տարրն առանցքային հատկանիշ է քննարկվող գործառական համատեքստի շրջանակում, որում -able/-ible-ով բառային շարույթները դիտարկվում են: Քաղաքական խոսույթը, ավելի կոնկրետ՝ քաղաքական ելույթն ունի հստակ գործառական կողմնորոշում՝ լսարանի համոզում և նրա վրա ներգործում, այլ կերպ ասած՝ տրամաբանական փաստարկում և հուզական ազդեցություն, որ ունկնդիրներին հաճախ մղում են (բացահայտ թե ներակա կերպով) ելույթում «կողավորված» որոշակի գործողության իրականացման: Յետևաբար, ելույթներն ինքնին ունեն դինամիկ, գործողության միտված բովանդակություն, ինչը հաջողված ելույթի գրավականն է:

Այսպես, -ly և -able/-ible վերջածանցներով բառային շարույթներն իրենց բառադարձվածային, ձևաբանական ու շարահյուսական հատկանիշների շնորհիվ ի վիճակի են ձեռք բերելու այն գործառական-գործաբանական արժեքը, որն անհրաժեշտ է յուրահատուկ արտալեզվական հանձնարարականի՝ քաղաքական նպատակի իրականացման համար: Իրացնելով իրենց բառաձևաբանական կառուցվածքի հարուստ պոտենցիալը, այլ լեզվական միավորների հետ բազմազան կապա-

կցություններ կազմելով, իմաստային-տրամաբանական կապեր հաստատելով՝ այս բառային շարույթները դրսևորում են տարբեր բառահիմաստային նրբերանգներ, տարբեր նպատակային բովանդակային շեշտադրումներ: Կիրառվելով քաղաքական ելույթի համատեքստում՝ դրանք միևնույն ժամանակ կրում են քաղաքական առաջադրանքի իրացմանն ուղղված հատուկ գաղափարական-հասկացական և/կամ հուզական լարվածություն. ձեռք են բերում այսպես ասած ոճագործառական նշույթավորում: Դրանց մի ծանրակշիռ մասը կազմում են քաղաքական կաղապարային արտահայտություններ:

Այսպիսով կարելի է փաստել, որ քաղաքական խոսույթի գործառական միջավայրում -ly-ով և -able/-ible-ով բառային շարույթները «քաղաքականացվում» են. դրանք, մի կողմից, ձեռք են բերում որոշակի գործառական-գործաբանական արժեք՝ դառնալով ոճատարբերակիչ, իսկ մյուս կողմից՝ իրենց նպաստն են ունենում խոսքի այս ոճաժանրային տեսակի կառուցմանը՝ դրսևորվելով որպես ոճակազմիչ:

Քննարկվող լեզվական միավորների գործառությունը քաղաքական ելույթում իրապես արդյունավետ է գնահատողականության (առավելապես -ly-ով բառային շարույթներ) և գործողության (-able/-ible-ով բառային շարույթներ) միտված խոսքային հաղորդակցում ապահովելու համար: Գնահատողականության և գործողության գաղափարներն իրենց հերթին էական են քաղաքական խոսույթի երկու հիմնարար՝ հաղորդման և ներազդման գործառությունների իրացման համար, որոնք գոյաբանորեն հատուկ են քաղաքական խոսույթին ու պարտադիր դրակայացման համար: -ly և -able/ -ible վերջածանցներով բառային շարույթները դրսևորում են զգալի պերսուազիվ պոտենցիալ. դրանք գործուն ծառայություն են մատուցում քաղաքական հաղորդակցման մեջ տրամաբանական-փաստարկային ու հուզական-գնահատողական մթնոլորտի ստեղծման և հասցեատեր-լսարանի համոզման ու ներշնչման հարցում:

## Ծանոթագրություններ

1. Գոյություն ունի նաև գոյականական հիմքերի կապակցմամբ ձևավորվող բառային շարույթների տեսակ, որ ներհատուկ է անգլերենին: Սրանք *stone wall*, *speech sound* տիպի կազմավորումներ են, որոնց Ա. Ի. Սմիրնիցկին անվանել է *անկայուն բարդ բառեր*: Այս տիպի կապակցությունը բացարձակ կենսունակ է, ճկուն և հետազոտական հետաքրքրություն է ներկայացնում: Սակայն նշված տիպի միավորները չեն ընդգրկվել սույն հետազոտության մեջ, և վերջինս սահմանափակվել է բուն բառային շարույթներով, այսինքն՝ ածանցյալ բառերի աշխատանքում մանրամասնած տեսակով:
2. Սույն աշխատանքում առոգանական հայեցակերպը թեթևակի է շոշափվում, քանի որ չեն ուսումնասիրվում ելույթների բանավոր հնչող տարբերակները, որոնց քննությունը ենթադրում է առանձին խոր հնչույթաբանական հետազոտություն:
3. Առանձին գիտությունների կարգերն օբյեկտիվ իրականության որոշակի կոնկրետ հայեցակերպերի արտացոլումն են: Ոլորտի շրջանակում դրանք ամենալայն և ամենաընդհանուր հասկացություններն են, որոնց կարելի է հանգել գիտական ռացիոնալ մեթոդների միջոցով: Կարգերն արտացոլում են տվյալ գիտության ամենաիմնարար օրինաչափությունները, հենքային հատկանիշները [տես Alexandrova, Ter-Minasova 1987:69]:
4. *Ակտիվ բայ* արտահայտության մեջ *ակտիվ* բառը վերաբերում է բայի իմաստային հայեցակերպին:

### **3.2. Քաղաքական ելույթը որպես համայնքի և ինքնության գաղափարների ձևավորման միջոց. անձնական դերանունները որպես խոսքային-հաղորդակցական հնարներ**

Աշխատանքի այս մասի նպատակն է ցույց տալ *համայնք, ինքնություն* հասկացությունների և դրանց համապատասխան լեզվական միավորների միջև գոյություն ունեցող կապը: Ուսումնասիրության շրջանակում լեզվական միավորներից առանձնահատուկ ուշադրության են արժանանում անձնական դերանունները շնորհիվ կիրառման բարձր հաճախականության և յուրահատուկ իմաստագործաբանական դերի, որը բավական ցայտուն դրսևորվում է ժամանակակից քաղաքական խոսույթում: Լեզվական միավորներն ավանդաբար համարվում են արտալեզվական իրականությունն արտացոլելու միջոց, ինչն, անկասկած, այդպես է: Սակայն հակառակ ուղղվածության գործընթացը նույնպես ներհատուկ է խոսքին: Լեզվական ճիշտ դրսևորում գտած խոսքը կարող է հնարավոր դարձնել ոչ միայն տարբեր գաղափարների, այլև գաղափարախոսությունների և երևույթների ձևավորումը, տարածումը և կենսագործումը:

Խոսքային հմուտ գործունեությունը կրկին ուշադրության կենտրոնում է հայտնվում ժամանակակից քաղաքական իրականության մեջ: Ստեղծված պայմանները, խնդիրներն ու հարցադրումները նոր մոտեցումներ և լուծումներ են պահանջում: Վերջիններս, ծնվելով մարդու մտքում, պետք է փոխանցվեն մարդկային փոխազդեցության օբյեկտիվ իրականություն, ինչը հնարավոր է դառնում ճիշտ խոսքային-հաղորդակցական գործունեության միջոցով: Այսինքն՝ լեզվական միավորները, և խոսքն ընդհանրապես, ոչ միայն արտահայտում ու արտացոլում են աշխարհի երևույթներն ու իրողությունները, այլև կերտում, ձևավորում և օբյեկտիվ իրականություն են ներմուծում դրանք [Բաղդասարյան 2009]: *Ինքնություն* և *համայնք* գաղափար-երևույթների կերտումը մեր աշխատանքում քննվում է այս տեսանկյունից: Սակայն մինչ լեզվական դրսևորմանն անդրադառնալը փորձենք հասկանալ դրանց էությունը:

*Անհատի ինքնությունը (identity)* ուղղակիորեն կախված է նրանից, թե ինչ դեր և նշանակություն է անհատն իրեն վերագրում մարդկային կյանքի առավել լայն համատեքստում [Vander Zanden 1977:75]: Մարդու գործունեությունն ու աշխարհընկալումը մեծապես խարսխված են իր և ուրիշների վերաբերյալ ունեցած նրա պատկերացումների վրա: Մարդու ինքնությունն իր հետքը թողնում է նրա յուրաքանչյուր գործողության վրա:

Կա նաև *սեփական անձի* կամ *սեփական ես-ի (self)* գաղափարը, որը մոտ է կանգնած ինքնության գաղափարին, և այն երբեմն շփոթում են վերջինիս հետ, սակայն *սեփական ես-ի* տեսական գաղափարն ավելի երկար ավանդույթ ունի: *Սեփական անձն* անհատն է՝ իր իմացությամբ և հանրորեն սահմանված շրջանակում: Մենք ընկալում ենք ժամանակի մեջ մեր ամբողջական և անընդհատ կեցությունն ու էությունը [Vander Zanden 1977:75-76]: Այսպիսով, մարդն ամբողջական գոյություն է՝ ժամանակի չափման մեջ կայուն: *Սեփական անձ* ունենալու գիտակցությունը մեզ տալիս է հստակ, մյուսներից անջատ, իր սահմաններն ունեցող, տարբերակելի, ճանաչելի և սահմանելի լինելու զգացողություն: *Ինքնությունը* ձևավորվում, ձեռք է բերվում, փոփոխվում, պահպանվում հասարակական տարաբնույթ փոխազդեցությունների միջոցով:

Ինքնիրացումը մարդկային վարքագծի հիմնարար շարժառիթն է: Հունանիստական հոգեբանության տեսանկյունից մարդիկ կարող են ձգտել ամբողջական անհատականության և ինքնադրսևորման գիտակցական պլանավորման միջոցով: Այս կառուցողական գիտակցական գործընթացի հիմնարար բաղկացուցիչներից է նպատակային խոսքային գործունեությունը, որը հետևողական է և զուգակցում է, հաճախ էլ ուղղորդում անհատի գործունեությունն ընդհանրապես: Փոխազդեցության հոգեբանության տեսանկյունից մարդը դիտարկվում է որպես ակտիվ գործող սուբյեկտ, որը միտումնավոր և ուղղակիորեն կերտում է իր անձնական պատմությունը և աշխարհի պատմությունը մեր՝ մարդկանց մասին:

Մեր աշխատանքի շրջանակում քննվում են ինքնության, ոչ թե սեփական անձի դրսևորումները, քանի որ առաջինն իր էությանը առավելագույնս ուղղված է դեպի հասարակություն. այն մատնանշում է, թե ով և ինչ ենք մենք, այսինքն՝ մեր տեղն ու դերը, արժեքային համակարգն ու նկրտումները, գործունեության մեխանիզմները մեր հասարակական կեցության մեջ: Այսպես, *ինքնությունն* ուսումնասիրում ենք որպես հասարակական օբյեկտ, որն իր արտահայտությունն է գտնում խոսքային գործունեության և արտացոլումը՝ մարդկային գիտակցության մեջ:

*Չամայնիֆ* հասկացությունը դժվար է սահմանել, քանի որ այն տարասեռ է իր բնույթով և ոչ միանշանակ: *Չամայնիֆը* մարդկանց խումբ է, որն առանձնացվում է ըստ ազգային, էթնիկ, տարածքային, հասարակական, սոցիալական, քաղաքական, կրոնական, գաղափարական, մասնագիտական կամ խոսքային ընդհանրության սկզբունքի: «Նախևառաջ խմբերը մտավիճակներ են՝ մտային մոդելներ կամ պատկերներ գիտակցականության տարբեր մակարդակներում» [Vander Zanden 1977:222]: Խումբը շոշափելի կամ նյութական իրակություն չէ, այլ մարդկանց մտքում ծնված և հասարակական շփման մեջ կազմավորված մարդկային միավոր: Խումբը մարդկանց կողմից և մարդկանցից կազմված իրականություն է: Սոցիալական անհատն ինքն է դրան միս ու արյուն վերագրում և վերաբերվում որպես կենսական կիրառություն և կարևորություն ունեցող իրականության: Մարդկանց խումբը՝ կոչված լինի համայնք թե այլ կերպ, «գոյություն է, որն իրենում ներգրավված անհատներից ավելի բարձր մակարդակի վրա է գտնվում» [Vander Zanden 1977:223]: Այս ամբողջությունն ավելին է, քան դրա բաղկացուցիչ տարրերի մեխանիկական հանրագումարը: Այսպիսով, մարդկանց միավորումը խմբի մեջ տալիս է որակապես մի նոր ամբողջություն-միավոր, որն ունի իր սեփական ինքնությունը:

Այստեղ տեղին է խոսել ոչ թե *անհասական ինքնության*, այլև *ընդհանրական ինքնության* մասին: Բանն այն է, որ համայնքի անդամների միջև ստեղծվում է մի յուրահատուկ հարաբերություն-կապ, որն ուղղակիորեն կախված է նրանից, թե որքանով են համայնքի անդամները կիսում «մեկ լինելու գիտակ-

ցությունը» (“consciousness of oneness”) [Vander Zanden 1977:224, տե՛ս նաև Baron 1981, 1984, Shaver 1977]:

Այս հասարակական, հոգեբանական երևույթների և գործընթացների արդյունքում մարդը ոչ միայն իրեն պարզապես զգում է տվյալ խմբի մեջ, այլ իր պատկանելությունն այդ կոնկրետ սահմանված խմբին: Այսպիսով, նա, ով մեր խմբից չէ, մեր խմբից դուրս է (ingroup vs outgroup) և հետևաբար մեկ այլ խմբից է: Համայնքի կարևոր առանձնահատկություններից է հակադրության, որոշ դեպքերում նույնիսկ հակասության կամ հակամարտության գաղափարը: Աշխարհը բաժանվում է *մենք*-ի և *նրանք*-ի սկզբում անհատի կամ անհատների ուղեղում, որից հետո այդ տարանջատումն իր մարմնավորումն է գտնում մարդկանց վարքագծում և մարդկային հաղորդակցման ու փոխազդեցության մեջ: *Մենք* հասկացության հաստատումը համայնքի կայացման ամենագործուն գրավականն է. եթե մարդիկ իրենց միավորում են *մենք*-ի մեջ, ապա նրանք ունեն ընդհանուր շարժառիթ ու նպատակ, արժեքներ ու ապրելակերպ, գործունեության որոշարկված քաղաքականություն ու միասնական գործողությունների պլան: Որքան գիտակցականությունը և փոխկապակցվածությունն ավելի մեծ են, այնքան ավելի բարձր մակարդակի հասարակական, քաղաքական, կրոնական, ազգային կամ միջազգային միավոր է տվյալ համայնքը կամ խումբը:

Ե. Մեյսընը նկարագրում է համայնքի երկու տիպ՝ «սովորական հասկացության» համայնք (“ordinary concept”) և «բարոյականացված հասկացության» համայնք (“moralised concept”) [Mason 2000]: Առաջինում մարդիկ միմյանց փոխադարձաբար ճանաչում են որպես համայնքի անդամներ, քանի որ կիսում են որոշակի արժեքներ, կենսակերպ և այլն: Երկրորդում ավելանում են երկու պայմաններ ևս. անդամների միջև պետք է լինի համախմբվածություն և համերաշխություն, և չպետք է գոյություն ունենան կանոնավոր, համակարգային շահագործում և անարդարություն: Միաժամանակ այս երկու տիպի համայնքի պատկերի ստեղծմանն է միտված պերսուազիվ հաղորդակցումը: Համայնքը կարող է լինել «ստատիկ», «դինամիկ» և «հեղիեղուկ սահմաններով» [Íñigo-Mora 2004:29]: Ստատիկ համայնքը



կարելի է անվանել նաև կայուն կամ կարծրացած, քանի որ դրա անդամները չեն ընդունում որևէ նոր անդամ՝ վախենալով իրենց սեփական ինքնության ինչ-որ մաս կորցնել: Դիմամիկ համայնքը կարելի է բնորոշել որպես փոփոխվող կամ զարգացող, քանի որ այն անընդհատ ընդունում է նոր անդամներ՝ կարծելով, որ շնորհիվ այսպիսի վարքագծի այն կհարստանա և կկատարելագործվի: Եվ վերջապես համայնքի սահմանները կարող են հեղհեղուկ լինել, երբ, ասենք, մեկը, ձևականորեն պատկանելով համայնքին, կարող է պատկանելության զգացում չունենալ, քանի որ չի կիսում համայնքի արժեքները: Քաղաքական առաջնորդը չի կարող համակերպվել այս երրորդ տիպի համայնք ունենալու մտքի հետ և պետք է ձգտի երկրորդ տիպին, քանի որ «համայնքը որպես կազմակերպության ձև ինքնություն է ապահովում համայնքի անդամներին» [Maier 1995:372]:

Ակնհայտ է, որ համայնքը կերտում է *մենք*-ի տեսակ, որն այն կազմող անհատներին տալիս է հասարակական *ընդհանրական ինքնություն* ի տարբերություն *անհատական ինքնության* և *սեփական ես-ի*: Համայնական ինքնություն կերտելն ու հաղորդելը մեծապես կարևորվում է ցանկացած քաղաքական առաջնորդի գործունեության մեջ, քանի որ դա է ի վերջո թույլ տալու ասել, որ տվյալ անձը տվյալ հանրության առաջնորդն է: Առաջնորդ կամիայն այն պարագայում, երբ կա նրա կողմից ուղղորդվող կամ կառավարվող համայնք:

Խոսքային գործունեությունը կարող է դառնալ այն ռազմավարական հարթակը, որտեղ հմտորեն կծնավորվեն քաղաքական գործչի կողմից նախանշված, նրան ցանկալի ու ձեռնտու ինքնության (անհատական թե համայնական) և համայնքի պատկերները, որոնք այնուհետև իրենց արտացոլումը կգտնեն մարդկանց գիտակցության մեջ մտային պատկերումների ձևով և կանդրադառնան հասարակական փոխազդեցության ոլորտ որպես օբյեկտիվ իրականության փաստեր և իրողություններ:

Նման արդյունքի հասնելու համար պետք է տիրապետել պերսուազիվ հաղորդակցման ռազմավարություններին և հնարներին: Ինչպես արդեն նշվել է, հաղորդակցումը կարելի է անվանել պերսուազիվ, եթե դրանում փորձ է արվում ազդեցություն

գործել մարդկանց մտքերի և վարքագծի վրա: Պերսուազիա տեղի է ունենում, երբ տեղեկատվության աղբյուրը՝ հռետորը, փորձ է կատարում իր տեղեկատվության՝ ելույթի միջոցով փոփոխություն առաջացնել ընկալողի՝ ունկնդրի գիտակցության մեջ՝ համոզմունքներում և վերաբերմունքում, ինչը համարվում է պերսուազիայի առաջին մակարդակը, ինչպես նաև վարքագծում և գործողություններում, ինչը պերսուազիայի արդեն երկրորդ մակարդակն է [հմմտ. Bettinghaus 1980:3]:

Փոփոխությունը, որին նպատակաուղղված է պերսուազիվ հաղորդակցումը, կոնկրետ է և որոշարկված հռետորի կողմից: Հռետորն իրեն հասու բոլոր միջոցներով փորձում է հասցեատեր-լսարանի մոտ առաջացնել իր համար ցանկալի արձագանքը:

**Անձնական դերանունները և մասնավորապես *we-ն* քաղաքական դիրքորոշման համատեքստում:** Այժմ փորձենք հասկանալ որոշ անձնական դերանունների՝ որպես խոսքային-հաղորդակցական հնարների դերն ինքնության և համայնքի գաղափարները ձևավորելու, արտահայտելու կամ նույնիսկ մանիպուլացման ենթարկելու գործում: Դերանունները կարելի է համարել քաղաքական իրենց էությանը կամ քաղաքականացված, քանի որ դրանք իշխանության պատկերի և հանրային պատկերացումների ճկուն մանիպուլատորներ են: Քաղաքական առաջնորդը, ինչպես և կառավարող էլիտան սահմանում, որոշարկում են խնդիրներ և իրադրություններ հասարակության համար, փորձում են ձևավորել ընդհանուր գաղափարներ և գաղափարախոսություններ, որպեսզի ով լսում է, հավատա, իսկ ով հավատում է, գործի [Vander Zanden 1977:280]: Եվ սա թերևս միշտ իրականացվում է *մենք-ի* և *նրանք-ի* սահմանների վերահաստատմամբ և լավի ու վատի կենտրոնների տեղաբաշխմամբ: Արդյունքում քաղաքական հռետորը փորձում է վերահսկողության տակ վերցնել միջավայրը [հմմտ. Bettinghaus 1980:15]:

Դերանունների ցուցային իմաստային դաշտի ընդգրկումը կարող է փոփոխվել՝ կախված խոսքային-իրադրային համատեքստից և հռետորի նկատառումներից [Íñigo-Mora 2004,

Kamio 2001, Ерзинкян 2013]: Քաղաքական ելույթներում խոսողական-կատարողական (իլլոկուտիվ) և խոսողական-ներգործական (պերլոկուտիվ) ուժերի տեսանկյունից առավել ուշագրավ են առաջին դեմքի եզակի և հոգնակի թվի անձնական դերանունները: Այս լեզվական միավորների իմաստագործաբանական արժեքը շատ դեպքերում ընդգծվում է, երբ խոսույթի տվյալ դրսևորման մեջ առկա են դրանց հակակշիռ ցուցային դաշտեր ներկայացնող երկրորդ դեմքի եզակի ու հոգնակի թվի և երրորդ դեմքի հոգնակի թվի դերանունները: *Ես*-ը (*I*) ցույց է տալիս եսակենտրոն գործունեություն, լինի դա խոսքային թե այլ տիպի ակտ: Հաճախ *ես*-ի կիրառությունը ենթադրում է հռետորի ամբողջական, կայացած, բարձր ինքնագիտակցությամբ ինքնություն, որն արտահայտվում է խոսքում: *Մենք*-ը (*we*) ստեղծում է ընդհանրականության կամ «ներոնքականության» իմաստագործաբանական դաշտ, որն առանցքային է հաջող պերսուազիվ հաղորդակցման համար: Հաճախ *մենք*-ն իր մեջ միավորում է *ես*-ը և *դու*-ն՝ ստեղծելով խմբի կամ համայնքի գաղափար: Այս պարագայում շատ ավելի հեշտ է դառնում լսարանին հանդգել, ուղղորդել, կառավարել և անուղղակիորեն պարտադրել գաղափարներ, քանի որ խոսողը՝ *ես*-ը, մեկն է *մենք*-ից և ունի նույն պահանջները, մղումները և նկրտումները, մի խոսքով՝ ինքնությունը, ինչը որ՝ խոսքաստեղծման գործընթացում կերտվող համայնքը: Երկրորդ դեմքի *դու* և *դուք* (*you*) դերանուններն արտահայտում են հաղորդագրության ուղիղ հղում լսարանին և ստեղծում երկխոսության, զրույցի մթնոլորտ: Մի կողմում հռետորն է, մյուս կողմում՝ լսարանը, որ *դուք*-ի կիրառումից կարծես ավելի նյութականացվում է, և հաղորդագրությունն էլ ավելի հասցեագրված է դառնում: Երրորդ դեմքի հոգնակի թվի անձնական դերանուն *նրանք*-ը (*they*) քաղաքական գործչի խոսքում հաճախ առկայացնում, մարմնավորում է այլախոհի, հակառակորդի, թշնամու կողմը, որը որպես կանոն դեմ է հռետորի և նրա կերտած համայնքի արժեքներին, համոզումներին, կենսակերպին (ի դեպ, այս վերջինը ներկայումս դարձել է ամենագործուն հավաքական չափանիշներից արևմտյան քաղաքակրթությունում) և փորձ է կատարում խաթարել դրանք ու դրանց բնակա-

նոն գարգացումը: Այսպիսով, խոսքում, ավելի ճիշտ՝ կոնկրետ խոսքային իրադրությունում մշակված պերսուազիվ ռազմավարություն է իրագործվում խոսքային-հաղորդակցական հնարի՝ ինքնության, համայնքի և միաժամանակ հակադրության գաղափարներ ձևավորող անձնական դերանունների հնուտ գործածությամբ: Քաղաքական գործիչ-առաջնորդների ելույթներում կարևորվում է հիմնականում առաջին դեմքի հոգնակի թվի *մենք* դերանվան դերը, քանի որ առավելապես դրա միջոցով են ելույթներում կերտվում համայնքի և դրա ինքնության պատկերները:

Լեզվաբաններն առանձնացնում են *մենք*-ի մի շարք կիրառություններ, որոնցից մի քանիսը տեղին է համարվում քննել մեր աշխատանքում, քանի որ դրանք լայն կիրառություն ունեն ուսումնասիրվող փաստական նյութում՝ անգլալեզու ժամանակակից քաղաքական ելույթում.

- ընդհանուր (generic) *մենք*, որն ընդլայնված ինկլուզիվ/ներառող (inclusive) *մենք*-ն է և կարող է վերաբերել ողջ մարդկային ցեղին,
- հռետորական (rhetorical) *մենք*, որը կիրառվում է, օրինակ, ազգի, համայնքի ընդհանրական հավաքական իմաստով (սա կարող է համարվել ընդհանուր (generic) *մենք*-ի հատուկ դրսևորում) [Quirk, Greenbaum, Leech, Svartvik 1985: 350-351]:

Ինկլուզիվ *մենք*-ը մի կողմից ցույց է տալիս, որ հռետորը մեծակ չէ, նա ունի իրեն սատարող խումբ, ինչը նրան տալիս է նաև ուժ և իշխանություն, և մյուս կողմից՝ այն, որ հռետորն իր լսարանին՝ իր ժողովրդին ներառում է իր համայնքի մեջ և ասում. «ես և դուք միասին ենք», «ես ձեզ հետ եմ և վստահ եմ, որ դուք էլ ինձ հետ եք, քանի որ մենք ունենք միևնույն նպատակը», «մենք ունենք նույն ինքնությունը», «մենք ունենք ընդհանուր ինքնություն, որ վեր է յուրաքանչյուրիս ինքնությունից առանձին վերցրած»: Որքանով այս գաղափարական-տեղեկատվական հղումները տեղ են հասնում լսարանին, այսինքն՝ լսարանի մոտ առաջ են բերում հռետորի կողմից նախանշված

արձագանքը, այնքանով հաջողված է համարվում պերսուազիվ հաղորդակցման ակտը:

Արտակարգ իրավիճակներում քաղաքական առաջնորդին առավել քան երբևէ անհրաժեշտ է ձեռք բերել իր ազգի աջակցությունն ու համաձայնությունը: Նա պետք է արագ և ճիշտ որոշումներ կայացնի, սակայն այդ որոշումները պետք է ներկայացվեն ոչ թե որպես նրա անհատական, այլ ազգի ընդհանուր որոշումներ: Այս նպատակով քաղաքական առաջնորդն իր ելույթի միջոցով փորձում է որոշում կայացնելու գործընթացի մեջ ընդգրկել իր հասցեատեր-լսարանին, հանոգել նրան իր իրավացիության մեջ և ի վերջո իր կողմը ներգրավել նրան: Օրինակ՝ 2001 թվականի սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ողբերգությունը, որն արդեն դարձել է ահաբեկչության տեսակի մարմնավորում, շրջադարձային եղավ ոչ միայն ամերիկյան ժողովրդի, այլև միջազգային հանրության կյանքի և մտքի ընթացքի ու զարգացման համար (ընդ որում՝ *Սեպտեմբերի 11* (*September 11th* կամ *9/11*) արտահայտությունը ձեռք է բերել հասարակական-քաղաքական տերմինի նշանակություն):

Today, **our** fellow citizens, **our** way of life, **our** very freedom came under attack in a series of deliberate and deadly terrorist acts. (George Bush “9/11 Address to the Nation”, 11 September 2001)

This is a day when *all Americans from every walk of life* unite in **our** resolve for justice and peace. *America* has stood down enemies before, and **we** will do so this time. **None of us** will ever forget this day, yet **we** go forward to *defend freedom and all that is good and just in our world*. (George Bush “9/11 Address to the Nation”, 11 September 2001)

But one thing should be very clear. By **their** acts, *these terrorists and those behind them* have made **themselves the enemies of the civilised world**. (Tony Blair “Statement to Parliament in Response to Terrorist Attacks in the US”, 14 September 2001)

Այս առումով կարևոր դեր խաղաց ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների ու բարեկամների ազդեցիկ խոսքային-հաղորդակցական գործունեությունը՝ երբեմն աջակցական, երբեմն էլ մարտական: Դրա միջոցով ստեղծվեց մի մտային պատկերում, ըստ որի սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ի վրա գործած հարձակումները ոչ միայն զուտ ահաբեկչական գործողություններ էին, այլև ոտնձգություններ ամերիկյան ժողովրդի արժեքների և կենսաձևի դեմ, բոլոր այն ժողովուրդների դեմ, որոնք իրենց զարգացման համար ընտրել են ժողովրդավարության սկզբունքներն ու մեխանիզմները, որոնց սրտառուչ ջատագովներն ու պահապանները ողջ աշխարհում ամերիկյան պետությունը, կառավարությունն ու ազգն են:

*America was targeted for attack because **we're the brightest beacon for freedom and opportunity in the world.** (George Bush "9/11 Address to the Nation", 11 September 2001)*

**We** consider this an *attack not only against the US but against all peace-loving, democratic peoples everywhere.* **We** are **all** shaken by the arrogance and brazenness which has led to so much destruction. (Vartan Oskanian "On the Tragic Attacks on the United States of America", 12 September 2001)

I thought it particularly important in view of the fact that *these attacks were not just attacks upon people and buildings; nor even merely upon the USA; these were attacks on the basic democratic values in which **we all** believe so passionately and on the civilised world.* It is therefore right that Parliament, the fount of **our own democracy, makes its democratic voice heard.** (Tony Blair "Statement to Parliament in Response to Terrorist Attacks in the US", 14 September 2001)

**We** are also sure the United States of America and its capital will recover, overcome and *continue to be at the forefront of global leadership.* (Vartan Oskanian "On the Tragic Attacks on the United States of America", 12 September 2001)

*Terrorist attacks can shake the foundations of **our** biggest buildings, but they cannot touch the foundation of America. These*

*acts shattered steel, but they cannot dent the steel of American resolve.* (George Bush “9/11 Address to the Nation”, 11 September 2001)

Ահաբեկիչները՝ թշնամիները, կարող են սասանել ԱՄՆ-ի դեպի երկինք ձգվող շենքերը, բայց ոչ երբեք ամերիկյան ժողովրդի դեպի վեր՝ ամենայն լավի ու կատարելության ձգտող համոզմունքներն ու արժեքները:

*I appreciate so very much the members of Congress who have joined me in strongly condemning these attacks. And on behalf of the American people, I thank the many world leaders who have called to offer their condolences and assistance. America and our friends and allies join with all those who want peace and security in the world, and we stand together to win the war against terrorism.* (George Bush “9/11 Address to the Nation”, 11 September 2001)

It is with deep shock and grief that **we** express **our** condolences *to the people and the government of the United States of America.* (Vartan Oskanian “On the Tragic Attacks on the United States of America”, 12 September 2001)

**We** strongly condemn this act of terror. However, **we** are convinced that the scope and scale of this horrific act can serve to create *solidarity among civilized nations against all violent expression of political and social aspirations.* (Vartan Oskanian “On the Tragic Attacks on the United States of America”, 12 September 2001)

*Let us unite too, with the vast majority of decent people throughout the world, in sending our condolences to the government and the people of America. They are our friends and allies. We the British are a people that stand by our friends in time of need, trial and tragedy, and we do so without hesitation now.* (Tony Blair “Statement to Parliament in Response to Terrorist Attacks in the US”, 14 September 2001)

ԱՄՆ-ի մերձավոր դաշնակից Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության վարչապետի խոսքը վերոհիշյալ ողբերգության առնչությամբ նույնպես ազդեցիկ է խոսողական-կատարողական ուժի տեսանկյունից: ԱՄՆ-ի բարեկամներ իրենց համարող մի շարք պետությունների քաղաքական ղեկավարների մխիթարական ու միաժամանակ դատապարտող ուղերձները նույնպես սատարում են ընդհանուր, արդեն համաշխարհային *մենք-ի գաղափար-երևույթի* ստեղծմանը և օբյեկտիվ իրականության մեջ դրա մարմնավորմանը:

*Terrorists* attacked a symbol of American prosperity. **They** did not touch its source. *America* is successful because of the hard work, and creativity, and enterprise of **our people**. These were the true strengths of **our** economy before September 11, and they are **our** strengths today. (George Bush “Address to a Joint Session of Congress Following 9/11 Attacks”, 20 September 2001)

**We** will make no distinction between *the terrorists who committed these acts and those who harbor them*. (George Bush “9/11 Address to the Nation”, 11 September 2001)

The objective will be to bring to account *those who have organised, aided, abetted and incited this act of infamy; and those that harbour or help them have a choice*: either to cease **their** protection of **our** enemies; or be treated as *an enemy themselves*. (Tony Blair “Statement to Parliament in Response to Terrorist Attacks in the US”, 14 September 2001)

**We** do not know yet the exact origin of this *evil*. But, if, as appears likely, it is so-called Islamic fundamentalists, **we** know they do not speak or act for *the vast majority of decent law-abiding Muslims throughout the world*. I say to **our Arab and Muslim friends**: *neither you* nor Islam is responsible for this; on the contrary, **we know you share our shock at this terrorism**; and **we ask you as friends to make common cause with us in defeating this barbarism that is totally foreign to the true spirit and**



*teachings of Islam.* (Tony Blair “Statement to Parliament in Response to Terrorist Attacks in the US”, 14 September 2001)

So **we** need to look once more: *nationally and internationally* at extradition laws, and the mechanisms for *international justice*; at how *these terrorist groups* are financed and **their** money laundered: and the links between terror and crime and **we** need to frame a response that will work, and hold *internationally*. (Tony Blair “Statement to Parliament in Response to Terrorist Attacks in the US”, 14 September 2001)

Այսպիսով՝ *Սեպտեմբերի 11* երևույթի շուրջ վերաձևավորվում են միջազգային հանրությունը/համայնքը և նրա ինքնությունը, ու աշխարհը կրկին վերաձևվում է *մենք-ի* և *նրանք-ի*, որտեղ հակադրության առաջին անդամն Ամերիկայի միացյալ ճահանգներն է իր դաշնակիցների և բարեկամների հետ, որոնք պայքարում են հանուն համաշխարհային ժողովրդավարության և, հետևաբար, բարօրության, իսկ մյուսը՝ ոչ միայն ահաբեկիչների խումբը, այլ նաև նրանց աջակիցները՝ ուղղակի թե անուղղակի, այսինքն՝ բոլոր նրանք, ովքեր դուրս են մնում կամ չեն մտնում վերոհիշյալ *մենք-ի* մեջ:

I ask **you** to uphold the values of America, and remember why so many have come here. **We** are in a *fight for our principles*, and **our** first responsibility is to live by them. (George Bush “Address to a Joint Session of Congress Following 9/11 Attacks”, 20 September 2001)

**We** are democratic. **They** are not. **We** have respect for human life. **They** do not. **We** hold essentially liberal values. **They** do not. (Tony Blair “Statement to Parliament in Response to Terrorist Attacks in the US”, 14 September 2001)

*Civil liberties are a vital part of our country, and of our world.* (Tony Blair “Statement to Parliament in Response to Terrorist Attacks in the US”, 14 September 2001)

Terrorism has taken on a new and frightening aspect.

*The people perpetrating it wear the ultimate badge of the fanatic: **they** are prepared to commit suicide in pursuit of **their** beliefs.*

***Our** beliefs are the very opposite of the fanatics. **We** believe in reason, democracy and tolerance.*

*These beliefs are the foundations of **our** civilised world. They are enduring, they have served **us** well and as history has shown **we** have been prepared to fight, when necessary to defend them. But *the fanatics* should know: **we** hold *these beliefs* every bit as strongly as **they** hold **theirs**.*

*Now is the time to show it.* (Tony Blair “Statement to Parliament in Response to Terrorist Attacks in the US”, 14 September 2001)

Կարելի է նկատել, որ ելույթներում բավական առատորեն են կիրառված անձնական դերանունները՝ հատկապես առաջին դեմքի հոգնակի թվի *ինկլուզիվ we*-ն, որը հաճախ *ընդհանուր մեճֆ-ն* է և մեր օրինակների դեպքում վերաբերում է ողջ քաղաքակիրթ աշխարհին, ինչպես նաև *հռետրական մեճֆ-ը*, որ ներառում է ողջ ազգը, ուն դիմում կամ ուն անունից խոսում է քաղաքական գործիչը: Ակնհայտ է, որ հռետորները իրենց հասցեատեր-լսարանի ճանաչողության և զգացմունքների մեջ փոփոխություն առաջացնելու միտում ունեն, իսկ Միացյալ Նահանգների նախագահի և Միացյալ Թագավորության վարչապետի խոսքում նաև հղում և մղում կա դեպի գործողություն: *Մեճֆ*-ի միջոցով ԱՄՆ-ի նախագահը նաև վերահավաստում է իր պետության առաջամարտիկ դերն աշխարհում ամենայն լավն ու բարին պաշտպանելու և տարածելու գործում: Նման միտք արտահայտվում է նաև ՅՅ Արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանի խոսքում: Բավական ուշագրավ է Թ. Բլեքրի ելույթը զգացմունքային լարվածության տպավորությամբ, որը մեծ չափով իրացվում է *մեճֆ*-ի և *նրանք*-ի խտացված հակադրության միջոցով: Վարչապետի խոսքն այնքան վառ է ու արտահայտիչ, որ իր լսարանի մոտ կարող է առաջացնել որոշակի մտածողական կաղապար՝ մտքերի կամ ապրումների մտածական համա-

տեքստը սահմանող մտային, հոգեկան, ճանաչողական ֆրեյմ [Чернявская 2006:21]: Այն իր մեջ ներառում է իրականության ընկալումն ու գնահատումը: Լեզվական հատուկ դրսևորումների՝ խոսքային կաղապարների միջոցով հնարավոր է դառնում արտահայտել ապրումներ, դեպքերի զգացողություններ և մարդկանց մոտ առաջացնել համապատասխան մտային պատկերումներ, որոնք սովորաբար ձեռք են բերվում իրական կենսափորձով: Այստեղից հետևում է, որ կարելի է հասնել լսարանի ցանկալի ընկալմանն ու եզրակացությանը լեզվական հմուտ և տեղին մանիպուլացման միջոցով: Պերսուազիվ հաղորդակցումը կարելի է դիտարկել նաև այս տեսանկյունից<sup>2</sup>:

Ընդհանրականություն կերտող *մենթ*-ի խոսքային-հաղորդակցական հնարի օգնությամբ Սեպտեմբերի 11-ը ներկայացվում է համաշխարհային ընկալմամբ, և ստեղծվում է համաշխարհային աղետի հասկացությունը՝ բեկումնային նոր ժամանակի աշխարհի համար:

The post-Cold War era, which began with the collapse of the Soviet Union almost 12 years ago, ended abruptly on the sunny, clear morning of September 11, 2001. In an instant, coordinated terrorist attacks transformed the international security environment and dictated a new “grand strategy” for the United States.

*/Robert J. Lieber, Professor of Government and  
Foreign Service,  
Georgetown University, Washington, D.C., 2002:5/*

Ահաբեկչական գործողությունները և դրանց դեմ պայքարն այնքան մեծ ընդգրկում են ստացել մեր օրերում, որ վերաճել են մի տեսակ *համաշխարհային դաժնազանի (global war on terror)*, մի պատերազմ, որն աշխարհի մարդկանց կրկին վերաբաշխում է ճակատի այս ու այն կողմերում՝ սկզբում մարդկային գիտակցության մեջ ինքնության ձևավորման միջոցով, այնուհետև մարդկային համայնքի օբյեկտիվ իրականության մեջ:

Այսպիսով, քննարկված դերանուններն ունեն հստակ գործառական ուղղվածություն: Դրանք կատարում են քաղաքական խոսույթի գործառական ոճին բնորոշ հիմնարար գործառույթները՝ փոխանցում են տեղեկատվություն ու իրականացնում ներգործում: Դրանց միջոցով արտացոլվում, վերածնակերպվում, անդրադարձվում է հին աշխարհի անընդհատ թարմացվող պատկերը: Քաղաքական փոխազդեցության միջավայրում առավել ընդգծվում են այս լեզվական միավորների ընդհանրացնող և բաժանարար իմաստային առանձնահատկությունները և ծառայեցվում քաղաքական հասցեագրողի նախանշած ճանաչողական նպատակադրության կենսագործմանը: Քաղաքական ելույթը, լինելով քաղաքական հռետորիկայի վառ և թերևս ամենաընդգրկուն դրսևորումը, ներկայանում է լեզվական ճկուն իրացումներով և հզոր պոտենցիալ ունի արտալեզվական առաջադրանքի հաջող իրականացման համար:

### **Ծանոթագրություն**

1. Այս տեսանկյունից պերսուազիվ հաղորդակցման խնդիրներն ակտիվ քննության են ենթարկվում նյարդալեզվաբանական ծրագրավորման շրջանակում: Նյարդալեզվաբանական ծրագրավորումը հաղորդակցական մոդել է, որը ստեղծվել է Ռիչարդ Բենդլերի ու Ջոն Գրինդերի կողմից 1970-ական թթ. և զբաղվում է միջանձնային արդյունավետ հաղորդակցման խնդիրներով: Հաղորդակցման այս մոդելի ուսումնասիրության և գործնական կիրառության շրջանակում են վարքային հաջող շաբլոնների ու դրանց հիմքում ընկած սուբյեկտիվ փորձառության (հատկապես մտային շաբլոնների) փոխհարաբերության, մտային ու հուզական վարքի շաբլոնների փոփոխության, ինքնագիտակցության, անհատի ձևավորման, արագ ուսուցման խնդիրները: Այս մեթոդիկան միտված է մարդկանց օգնել կյանքն առավել լիակատար վայելելու: Նյարդալեզվաբանական ծրագրավորում անվանումն արտացոլում է հետևյալ հենքային գաղափարները՝ մարդկային վարքի նյարդաբանական ծագումը, լեզվի կիրառությունը մտքերն ու վարքը կարգավորելու նպատակով, ինչն անհրաժեշտ է մարդկային հասարակության մեջ հաղորդակցման համար, և այն միջոցները կամ եղանակները, որոնցով մարդը կազմակերպում է իր մտքերն ու գործողությունները ծրագրավորված արդյունքը ստանալու համար [Матевосян 2004]:

### **3.3. Լեզվաոճական արտահայտչամիջոցների՝ կրկնության, աստիճանավորման և զուգահեռականության պերսուազիվ դերը քաղաքական ելույթի համատեքստում**

Քաղաքական ելույթը, որը քաղաքական խոսույթի առավել համապարփակ դրսևորումներից է, միաժամանակ հռետորական արվեստի դրսևորման դասական օրինակ է, և կարելի է ուսումնասիրել նաև դրա տրամադրած հասկացական հենքի վրա:

Ըստ Արիստոտելի՝ հռետորական արվեստը և գիտությունը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում համոզման հնարավոր միջոցները տեսնելու ունակությունն է [Aristotle Book I Chapter 2]: Հռետորական արվեստն ունի երեք բաժին, որոնք ուսումնասիրում են էթոսը, պաթոսը և լոգոսը համապատասխանաբար: Էթոսը խոսողի ունակությունն է ցուցադրելու այնպիսի անձնական կերպար, որն արժանահավատ կդարձնի խոսքը: Պաթոսը խոսողի կողմից իր ունկնդիրների մեջ զգացմունքներ արթնացնելու ունակությունն է: Լոգոսը խոսողի ունակությունն է ճշմարտությունը կամ հավանական ճշմարտությունն ապացուցելու համոզիչ փաստարկների միջոցով: Համոզման հիմնական փաստարկներն են օրինակը և ենթիմենը: Համոզում տեղի է ունենում, երբ մարդուն կարողանում էս հավաստիացնել՝ ինչ-որ բան ի ցույց դնելով: Հռետորի ներկայացրածն ենթիմենն է, որն ընդհանուր առմամբ համոզման ձևերից ամենաարդյունավետն է: Կարելի է ասել, որ ենթիմենը սիլլոգիզմի տեսակ է, իսկ սիլլոգիզմն իր հերթին տրամաբանական փաստարկ է, որի դեպքում մի դրույթը՝ եզրակացությունը, բխում է երկու այլ որոշակի ձև ունեցող նախադրույթներից: Ինչպես Արիստոտելն է ասել, ենթիմենը հռետորական համոզման սուբստանցն է: Քաղաքական հռետորիկան կոչ է, համոզում, որպես կանոն ուղղված է ապագային և արդյունքում հաստատում կամ հերքում է առաջարկվող գործողության նպատակահարմարությունը: Քաղաքական խոսքն իր ամբողջության մեջ այս կամ այն գործողությունն անելու կամ չանելու կոչ է: Հռետորական արվեստի գործառույթը համոզման մեջ ոչ թե պարզապես հաջողության հասնելն է, այլև կոնկրետ դեպքի հանգամանքների ներքո այդ հաջողությանը հնարավորինս մոտենալու միջոցներ հայտնաբերելը [Aristotle

Book I Chapter 1], ինչն ավելի իրատեսական է կոնկրետ խոսքային իրադրության պարագայում:

Խոսքի միջոցով համոզումն իր էությանը եռաչափ է: Քաղաքական հռետորիկայի հաջողությունը պայմանավորված է դրանում ներգրավված երեք գործոններով՝ հռետորը, լսարանը և խոսքային ձևավորում ստացած հաղորդվող նյութը, որոնք գտնվում են էթոսի, պաթոսի ու լոգոսի ուսումնասիրության տիրույթներում համապատասխանաբար: Հռետորի անհատական և/կամ հանրային կերպարը, որ կարելի է նաև ինքնություն անվանել, շատ ավելի մեծ կարևորություն ունի, քան կարող է թվալ առաջին հայացքից: Նույն բառերը կարող են արտասանվել տարբեր մարդկանց կողմից, սակայն միայն հմուտ հռետորը կարող է դրանք արժանահավատ դարձնել: Մյուս կողմից էլ՝ մարդիկ հակված են հռետորին հավատալ, եթե նրա կերպարը դրական է և ընդունելի իրենց համար: Սրան կարելի է հասնել խոսքային-հաղորդակցական ճիշտ ռազմավարության շնորհիվ: Հռետորի լսարանը մեծ դերակատարում ունի նպատակային խոսքի ելքի հարցում: Համոզման կարելի է հանգել լսարանի միջոցով՝ որոշակի մտավիճակի և/կամ հուզավիճակի մեջ դնելով նրան: Սա նույնպես որոշակի խոսքային դրսևորման արդյունք է: Այս եռաչափ մոդելի մյուս՝ բուն խոսքային կողմը թերևս ամենաբացահայտ ներգրավվածությունն ունի համոզման գործընթացում: Գործի են դրվում տեղին փաստարկներ ճշմարտությունը կամ հավանական ճշմարտությունն ապացուցելու համար: Այսպիսով, հռետորը պետք է տիրապետի երեք հիմնական հմտությունների՝ տրամաբանորեն դատել, հասկանալ մարդկային բնույթն իր տարբեր դրսևորումներում և հասկանալ մարդկային զգացմունքները, ինչը ենթադրում է վերջիններիս հստակ տարբերակում, հարուցման պատճառների և ձևերի գիտակցում [հմտ. Aristotle Book 1 Chapter 2]: Շատ կարևոր է, որ հռետորը լավ պատկերացնի, թե ինչ լսարանի հետ գործ ունի, քանի որ այն է ի վերջո որոշում հռետորական խոսքի՝ օրինակ, քաղաքական ելույթի առարկան ու հաջողությունը: Քաղաքական ելույթը կամ պնդումը համոզիչ է, եթե այն համոզում է տվյալ հանրույթին, այսինքն՝ հասցեատեր-լսարանին: Հետևաբար, խոսքի ոճը,

կառուցվածքը, փաստարկների տեսակները, մի խոսքով՝ էթոսի, պաթոսի և լոգոսի համամասնությունը կամ հավասարակշռությունն ուղղակիորեն կախված են կոնկրետ լսարանից:

Հիմնական փաստարկները, ինչպես վերն արդեն նշվել է, օրինակը և էնթիմենն են: Օրինակը կարող է լինել պատմական դեպք կամ մտացածին զուգահեռ: Էնթիմենը հռետորական սիլլոգիզմն է, որի նախադրույթները հավանականություններն ու նշաններն են: Ուժեղ էնթիմեն, հետևաբար ուժեղ փաստարկում կառուցելու համար անհրաժեշտ է ունենալ որքան հնարավոր է շատ փաստեր ոչ միայն տվյալ տիպի իրավիճակի, այլև կոնկրետ դեպքի վերաբերյալ: Լինում է էնթիմենի երկու տեսակ՝ մեկը նախադրույթը հաստատում է, մյուսը՝ հերքում: Ապացուցող էնթիմենը կառուցվում է համատեղելի, իսկ հերքողը՝ անհամատեղելի նախադրույթների համակցմամբ: Մեկ այլ կարևոր հասկացություն է մաքսիմը (maxim), որն էնթիմենի մաս է կազմում: Այն կոնկրետ փաստ չէ, այլ ընդհանուր բնույթի ասույթ և վերաբերում է միայն գործնական հարցերի: Մաքսիմը, ընդհանուր առմամբ, էնթիմենի նախադրույթ կամ մտահանգում է՝ փաստարկի մնացած մասից առանձին վերցրած: Եթե մաքսիմին ավելացվում է պատճառը կամ բացատրությունը, ստեղծվում է էնթիմենը: Ինքնին մաքսիմը կարող է ունենալ կամ չունենալ լրացում: Սակայն, եթե այն հակասական կամ վիճահարույց է, ապացույց է հարկավոր: Եթե այն հակասական չէ, բայցևայնպես ակնհայտ չէ դրա ճշմարտացիությունը, ապա պետք է ավելացվի պատճառը հնարավորինս համառոտ կերպով: Այս դեպքում հարմար են հակիրճ և առեղծվածային առածները: Ժամանակակից քաղաքական հռետորիկայում դրանք հաճախ դրսևորվում են հայտնի մարդկանց՝ թևավոր խոսք դարձած արտահայտությունների կամ դրանց վերահամատեքստայնացման ձևով: Եթե մաքսիմը չի պարունակում հակասական որևէ բան կամ համընդհանուր ճշմարտություն է, լրացում չի պահանջվում: Լավագույն են համարվում այն մաքսիմները, որոնցում արտահայտված կարծիքի պատճառը պարզ կերպով է ներկայացված: Այս տիպի մաքսիմներն էնթիմենի մաս չեն կազմում [Aristotle Book II Chapters 20-22]:

Փաստարկները կառուցվում են խոսքային-հաղորդակցական մշակված ռազմավարության համաձայն և որոշակի լեզվական միջոցների մարտավարական համակցությամբ, իսկ լեզվական միջոցները բազմազան են ու բազմաթիվ և ներկայացնում են լեզվական համակարգի տարբեր հայեցակետեր՝ հնչույթաբանություն, ձևաբանություն, բառագիտություն, շարահյուսություն, տեքստաբանություն: Աշխատանքի այս մասում փորձ է արվում վերլուծելու լեզվի արտահայտչական այնպիսի միջոցներ, խոսքաստեղծման գործընթացում նաև հռետորական հնարներ, ինչպիսիք են կրկնությունը, աստիճանավորումը և զուգահեռականությունը [Ջրբաշյան, Մախչանյան 1980, Եզեկյան 2003, Պողոսյան 1991, Gasparyan, Matevosyan 2008, Figures of Repetition <http://rhetoric.byu.edu/Figures/Groupings/of%20Repetition.htm>, Rhetoric <http://www.diplomacy.edu/Language/Rhetoric/default.htm>], և մեկնաբանելու դրանց դերը ժամանակակից քաղաքական ելույթում [Բաղդասարյան 2010]: Ուշագրավ է այն փաստը, որ այս լեզվախոսքային արտահայտչական միջոցները հաճախ միասին են կիրառվում և հռետորի տեխնիկական գիճանոցի մի ծանրակշիռ մասն են կազմում:

Կրկնությունը լեզվի ոճական, շարահյուսական այնպիսի արտահայտչական միջոց է, որը շեշտում է խոսքը՝ ընդգծելով տրամաբանականը և խորացնելով հուզականը: Համապատասխանաբար առավել հանդգիչ է դառնում փաստարկումը և առավել տպավորիչ՝ ներազդումը: Կրկնությունն ունկնդրի ուշադրությունը պարբերաբար հրավիրում է խոսքի առանցքային բառերին, արտահայտություններին, գաղափարներին: Այս արտահայտչամիջոցն ունի բազմաթիվ հնչյունական, բառաձևաբանական, շարահյուսական տեսակներ: Ինչպես նաև զոյություն ունեն գաղափարի կրկնության մի շարք դրսևորումներ:

Աստիճանավորումը ոճական հնար է, որն ապահովում է մտքի, երևույթի, նկարագրության, գործողության աստիճանական զարգացում, առաջ է բերում հասցեատեր-լսարանի շոջանում հուզական լարվածություն: Նշված հնարը բառերի, արտահայտությունների, նախադասությունների այնպիսի հաջորդական դասավորություն է, որը հանգեցնում է իմաստի, հույզի



ուժեղացման (բարձրացող աստիճանավորում) կամ թուլացման (իջնող աստիճանավորում): Ստեղծվում է համակարգված առաջընթացի կամ հետընթացի պատկեր:

Ձուգահեռականությունը երկու կամ ավելի երևույթների զուգահղություն է դրանց նմանությունը կամ տարբերությունը ներակա կերպով ընդգծելու նպատակով: Ձուգահեռականությունը հավասարակշռության տրամաբանությամբ գործող հռետորական հնար է: Քաղաքական խոսույթում դրա հիմնական դրսևորումներն են թեմատիկ զուգահեռականությունը (զուգահղվում են բովանդակությամբ նման երևույթներ), ժխտական զուգահեռականությունը (երևույթների նույնության բացասումով իսկ ակնարկվում է դրանց նմանությունը) և, իհարկե, շարահյուսական զուգահեռականությունը կամ զուգահեռ կառույցները (նման սխեմաներով ներկայացված շարահյուսական շարույթներ): Վերոհիշյալ հնարը մի քանի անգամ ավելացնում է խոսքի պատկերավորությունը, ասելիքն ավելի դյուրըմբռնելի, միտքն էլ ավելի խտացված, տպավորիչ ու հիշվող դարձնում:

Քննարկվող լեզվախոսքային միջոցները/հռետորական հնարները քաղաքական խոսքում հաճախ փոխներթափանցված են դրսևորվում՝ մեկը մյուսի տպավորությունը խտացնելով և ազդեցությունը սաստկացնելով: Լեզվական բարձր ճաշակի և հմուտ մանիպուլացման առկայության պարագայում այս արտահայտչամիջոցները կարող են հիրավի անգնահատելի ծառայություն մատուցել ռազմավար հռետորին:

**Կրկնության, աստիճանավորման և զուգահեռականության գործառությունը քաղաքական խոսքում. մի հաղթանակի ելույթի քննություն:** Հռետորական խոսքը, որի ամենավառ դրսևորումներից է քաղաքական ելույթը, էությամբ նպատակաուղղված խոսքային գործունեություն է և իր հիմքում ունի գործողության գաղափարը: Քաղաքական հռետորը իր հասցեատեր-լսարանին որպես կանոն մղում է գործողության՝ բացահայտ, թե ներակա կերպով: Նրա խոսքը միտված է գործողության: Կրկնությունը, աստիճանավորումն ու զուգահեռականությունը լեզվական մտածողության հզոր գործիքներ են և կարող են միանգամայն արդյունավետ կիրառություն ստանալ

կոնկրետ սոցիալական և խնդրո համատեքստում (այսպիսին է ըստ էության քաղաքական խոսույթը): Այս հռետորական հնարները մեծապես խթանում են նպատակային տեղեկատվության փոխանցումը և լսարանի վրա ներազդումը: Սա հատկապես անհրաժեշտ է ազգի համար որոշիչ պահերին, ինչպես օրինակ՝ պատերազմ սկսելիս և ավարտելիս, ճգնաժամային իրավիճակում կողմնորոշվելիս կամ էլ նոր նախագահ ընտրելիս: Իսկ եթե պատերազմի և ճգնաժամի խնդիրները դրսևորվում են բացառիկ նախագահական ընտրությունների համատեքստում, խոսքի ուժն ու ազդեցությունն առավել քան երբևէ վճռորոշ են դառնում այլոց մտքերը վերահսկելու և ձևավորելու գործում:

Այս առումով չափազանց ուշագրավ է ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբամայի հաղթանակի ելույթը, որով նա հանդես է եկել Չիկագոյի Գրանթ Փարքում, Իլինոյս, 2008 թ. նոյեմբերի 4-ին՝ ԱՄՆ-ի նախագահական ընտրությունների օրվա գիշերը:

***If there is anyone out there who still doubts that America is a place where all things are possible; who still wonders if the dream of our founders is alive in our time; who still questions the power of our democracy, tonight is your answer.***

Սրընթաց, առանց նախաբանի՝ *եթե (if)* պայմանով ու պաթոսով սկսվում է Բարաք Օբամայի ելույթը: Եվ անմիջապես առաջին հռետորական եռաստիճան կրկնությունը: Սա, իհարկե, պարզապես *who* կամ *still* առանձին վերցրած բառերի կրկնություն չէ, այլ երկրորդական նախադասության կառուցվածքի (շարահյուսական) կրկնություն է: Սա *who doubts, who wonders, who questions* ստորոգումային հիմքի կրկնությունն է, որն ավելի է ուժգնանում *still*-ի համընթաց կրկնությամբ: Այս համատեքստում *doubt, wonder, question* բայերը գործում են որպես իրադրային իմաստային համարժեքներ. փաստորեն, դրանց արտահայտած իմաստը նույնպես կրկնվում է երեք անգամ: Նույնիսկ դա էլ չէ ամենաէականը. սա ամերիկյան գաղափարախոսության հենքային մտային պատկերումի կրկնությունն է: *America is a*

*place where all things are possible, the dream of our founders is alive in our time, the power of our democracy* պնդում-հաղորդումները նմանատիպ շարահյուսական կաղապարների մեջ են դրվել ողջ ասույթի բովանդակությունը շեշտելու և խոստովական-կատարողական ուժը մեծացնելու համար: Այս ասույթը կառուցված է երկու տիպի հռետորական հնարների՝ կրկնության (առաջինը՝ նույն բառի կամ արտահայտության կրկնություն հաջորդական նախադասությունների սկզբում, երկրորդը՝ նման գաղափար արտահայտող տարբեր բայերի կրկնություն հաջորդական նախադասություններում) և զուգահեռ կառույցների համակցությամբ: Ընդ որում՝ առաջին կրկնությունը բառի, արտահայտության կամ նախադասության կրկնության տարատեսակ է, իսկ երկրորդը՝ գաղափարի: Քննարկվող ասույթն ավարտվում է *tonight is your answer* հաղորդմամբ, որն իր արձագանքն է գտնում հաջորդ երեք պարբերություններում և դրանք խոսքի այս համատեքստ ներմուծող *it's the answer* արտահայտության եռակի կրկնության մեջ: Ի դեպ, գաղափարական մեծ բեռնվածություն ունեցող *tonight is your answer/it's the answer* արտահայտությունն ուսումնասիրվող ելույթի առաջին առանցքային հասկացույթն է:

**It's the answer told by lines that stretched around schools and churches in numbers this nation has never seen; by people who waited three hours and four hours, many for the very first time in their lives, because they believed that this time must be different; that their voice could be that difference.**

**It's the answer spoken by young and old, rich and poor, Democrat and Republican, black, white, Latino, Asian, Native American, gay, straight, disabled and not disabled - Americans who sent a message to the world that we have never been a collection of Red States and Blue States: we are, and always will be, the United States of America.**

**It's the answer** that led those *who have been told for so long by so many to be cynical, and fearful, and doubtful* of what we can achieve to put their hands on the arc of history and bend it once more toward the **hope** of a better day.

Ելույթի այս հատվածում տեսնում ենք երեք զուգահեռ ասույթներ: Ձուգահեռականությունը ստեղծվում է ոչ միայն *it's the answer*, այլ նաև *told by/spoken by* արտահայտությունների կրկնությամբ: Առաջին ասույթում գաղափարական հետաքրքրություն է ներկայացնում *first time/this time* կրկնությունը (նույն գաղափարի կրկնություն այլ լեզվական ձևակերպմամբ), որում առաջարկվում է *առաջին (first) = այս (this)* բանաձևը, որն իր զարգացումն է ստանում *առաջին*, քանի որ *սարբեր/այլ (different)*, և *սարբեր/այլ*, քանի որ *փոփոխություն (change)* ընդլայնված բանաձևում (Ելույթի հետագա համատեքստում): Վերոհիշյալ միտքը հռետորը առաջ է տանում ողջ Ելույթի ընթացքում:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում *different/difference* և *have ...\_been/are/will be* լեզվական միավորները: Իրարից ոչ հեռու` այս պարագայում մեկ նախադասության սահմաններում դիտարկվում է *differ*-ի բառաձևաբանական, իսկ *be*-ի քերականական հարացույցի տարբեր միավորների կիրառություն, ըստ էության` նույն հասկացությունների կրկնություն: Այս երևույթը հռետորական կրկնության մեկ այլ տարատեսակ է: Նկատվում է նաև *we* դերանվան կրկնություն: Ինչպես արդեն քննարկվել է այս աշխատանքում, նշված դերանունը կարևոր հասկացություն է քաղաքական խոսույթում, քանի որ հավաքական ինքնություն ստեղծելու մարտավարական միջոց է: *We have never been, we are, and ... will be* կրկնվող լեզվական ձևերով հռետորը խտացված, համապարփակ կերպով արտահայտում է ամերիկյան ազգի անցյալը, ներկան ու ապագան: Ինչ վերաբերում է *different* և *difference* լեզվական միավորներին, պետք է ասել, որ դրանք հող են նախապատրաստում Ելույթի հաջորդ առանցքային հասկացույթի` *փոփոխության* համար:

Երկրորդ ասույթում կա զուգահեռ կառույցների մի ամբողջ շարք՝ *young and old, rich and poor, Democrat and Republican, disabled and not disabled, Red States and Blue States*: Գրեթե ողջ ասույթը կառուցված է զուգահեռականության սկզբունքով, ինչը շատ տպավորիչ է դարձնում լսարանին փոխանցվող հաղորդագրությունը՝ տարբեր մարդիկ մեկ ամբողջություն են Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այս միտքն իր գաղափարական և հուզական կիզակետին է հասնում *a collection of Red States and Blue States* փոխանունության<sup>2</sup> ու *the United States of America* պնդման հակադրության մեջ: *The United States of America* բառակապակցությունն այստեղ պարզապես երկրի անվանումը չէ, այլ պնդում, որը շեշտում է ամերիկյան ժողովրդի միասնականության գաղափարը: Ակնհայտ է, որ առկա է բառախաղի տպավորություն՝ ստեղծված *states* բառի կրկնությամբ (հարակից արտահայտություններում կամ նախադասություններում բառի կրկնություն հուզականությունն ավելացնելու նպատակով):

Երրորդ ասույթում դիտարկվում է *and* համադասական շաղկապի կրկնություն (շաղկապի բազմակի կիրառություն), ինչն առանձնացնում ու շեշտում է կապակցվող լեզվական միավորները, արտահայտվող գաղափարները, ինչպես նաև մատնանշում դրանց զուգադրելի կշիռն ու կարևորությունը արտալեզվական համատեքստում:

It's been a long time coming, but **tonight**, because of what we did **on this day, in this election, at this defining moment**, **change** has come to America.

Փոփոխությունը փրկությանը հավասարազոր հասկացություն էր ամերիկյան ժողովրդի համար տվյալ պահի համաշխարհային զարգացումների խճանկարում. ավելի քան ոչ միանշանակ քաղաքական և օբյեկտիվորեն դժվար տնտեսական իրավիճակ, որում հայտնվել էր Ամերիկայի Միացյալ Նահանգները: Համաշխարհային հսկան՝ ժողովրդավարության «փարոսը», իհարկե, սովոր չէր սրան՝ հատկապես հոգեբանական

առունով: Երկար սպասված փոփոխության հասկացությունն ու հիմքուն ընկած համապատասխան երևույթը էլ ավելի հրատապ բնույթ են ընդունում, երբ, այսպես ասած, եռաստիճան կապով անմիջականորեն հարաբերվում են իրականության ներկա պահի հետ: Այս կապը ստեղծվում է հռետորական եռակի կրկնության, աստիճանավորման և զուգահեռ կառույցների հմուտ մանիպուլացման միջոցով: *This* ցուցական դերանունը երեք անգամ կրկնվում է կից արտահայտություններում շեշտելու *day, election, defining moment* լեզվական միավորները, որոնք տվյալ խոսքային ու քաղաքական համատեքստում ունեն նույն արտածովող գործաբանական նշանակությունը՝<sup>3</sup> *or = ընտրություն = վճռորոշ դրոշմ*: Սակայն դրանք նույնական չեն ո՛չ իմաստային, ո՛չ էլ համատեքստում ձեռք բերած հուզարտահայտչական ընդգրկումով: Կրկնության յուրաքանչյուր հաջորդ դրսևորումն ավելի կոնկրետ է, կարևոր և հուզականորեն ավելի ակտիվ. այսպիսով իրացվում է հռետորական աստիճանավորումը: Կրկնությունն ու աստիճանավորումը տեղ են գտել զուգահեռ կառույցներում, ինչն ավելի տպավորիչ է դարձնում ասույթը: Չարակից արտահայտություններում, մի կողմից, առկա է բառի՝ *this* ցուցական դերանվան հռետորական կրկնություն հուզական լարում ստեղծելու համար, իսկ մյուս կողմից՝ նույն գաղափարի՝ *day = election = defining moment* կրկնություն այլ բառային և հուզարտահայտչական մատուցմամբ:

Չաղթանակին՝ ընտրություններում ամերիկյան ժողովրդի արտահայտած կամքին ակնհայտ ոգևորությամբ արծագանքելուց հետո նորընտիր նախագահ Բարաք Օբաման ելույթում կտրուկ անցում է կատարում իր հակառակորդներին բարեկամական գնահատանքի խոսքեր ասելուն, իսկ հարազատներին և թիմակիցներին շնորհակալություն հայտնելուն ու շնորհավորելուն: Սակայն նա, ում Բ. Օբաման համարում է իր ընտրարշավի հաջողության գրավականը և հաղթանակի կերտողը, ամերիկյան ժողովուրդն է:

**It grew strength from the young people who rejected the myth of their generation's apathy; who left their homes and**

**their families for jobs that offered little pay and less sleep; from the not-so-young people who braved the bitter cold and scorching heat to knock on the doors of perfect strangers; from the millions of Americans who volunteered, and organized, and proved that more than two centuries later, a government of the people, by the people and for the people has not perished from this Earth.**

Այս ասույթն ամբողջությամբ բաղկացած է երեք զուգահեռ կառույցներից: Դրանք արտահայտում են երեք գաղափարներ, որոնցից երրորդն առաջին երկուսի բովանդակային ընդլայնումն ու ընդհանրացումն է: Այստեղ գործ ունենք գաղափարական աստիճանավորման հետ, որի վերջին բաղկացուցիչ մասը՝ *from the millions of Americans who volunteered, and organized, and proved that more than two centuries later, a government of the people, by the people and for the people has not perished from this Earth*, ընդհանրացման մեծ չափերի է հասնում և դրանով իսկ մեծ արժանահավատություն ներշնչում ունկնդրին: Այսպես, հռետորական աստիճանավորման տեխնիկայի կիրառմամբ Բարաք Օբաման իր ընտրազանգվածի՝ համայնքի մեջ է ներառում ողջ ամերիկյան ազգին և անուղղակիորեն հաստատում իր՝ այդ հսկայական համայնքի առաջնորդ լինելը. հռետորն առանց բացահայտ, տեսանելի շեշտադրումներ անելու լուծում է իր ինքնության խնդիրը (էթոս): Նա աներևույթ, բայց գործող «կամուրջներ» է հաստատում իր և ամերիկյան հասարակության տարբեր տարիքային խմբերի միջև, փորձ է կատարում հասկանալ, վերլուծել և կիսել նրանց գործողությունների տրամաբանությունը. այսպիսով նա իրեն նույնացնում է այդ բոլոր միլիոնավոր ամերիկացիների հետ և ստեղծում իր՝ որպես ազգի առաջնորդի համայնական ինքնությունը: Այն, ինչը վերաբերում է անենամեծ թվով մարդկանց կամ իրերին, ավելի արժեքավոր է: Այս գաղափարը յուրահատուկ թափ է ստանում ժողովրդավարության ու մեծամասնական կառավարման համատեքստում: Փաստորեն քաղաքական հռետորը դիմում է քանակի թոփոսին (topos – մտքի ուղղություն կամ տրամաբանություն

կամ, այլ կերպ ասած, փաստարկային գիծ [Aristotle Book II Chapter 23]), իսկ, ինչպես հայտնի է, փաստարկային խոսույթում թոփոսները հաստատում են արժեքներ, որոնք ծառայում են ասույթները միմյանց կապող նոր օղակների՝ փաստարկների ձևավորմանը, որոնց հիմքում ընկած են դատողությունները [Maier 1996:46]: Ինչպես նաև Բարաք Օբաման հմտորեն կիրառում է փոխառված և մեծ ժողովրդականություն վայելող մի արտահայտություն, որը հռետորական եռաստիճան կրկնության դասական օրինակ է քաղաքական խոսույթում: Խոսքը վերաբերում է Աբրահամ Լինքոլնի *a government of the people, by the people and for the people* հայտնի արտահայտությանը, որում *people* բառը կրկնվում է արտահայտության յուրաքանչյուր բաղկացուցիչ մասի վերջում: Ընդ որում՝ քննարկվող օրինակում այս հռետորական կրկնությունը դրսևորվում է զուգահեռ կառույցներում: Այս արտահայտության կիրառումը շահեկան է հռետորի համար՝ մի կողմից՝ տպավորիչ հռետորական կրկնություն, շարահյուսական զուգահեռ կառույցներ, մյուս կողմից՝ ԱՄՆ-ի լեգենդար նախագահի հեղինակությունն իր մեջ կրող, ամերիկյան քաղաքական մշակույթի՝ արդեն թևավոր խոսք դարձած հիմնարար գաղափարներից մեկի վկայակոչում: Նշված արտահայտության վերահամատեքստայնացումն առավել ազդեցիկություն է հաղորդում ողջ ասույթին և հասցեատեր-լսարանի գիտակցության մեջ ձևավորում Բարաք Օբամայի՝ որպես ԱՄՆ-ը կառուցող մեծերի լիիրավ ժառանգորդի կերպարը: Այստեղ գործի է դրվում նաև որակի թոփոսը՝ այն, որ ամերիկյան ժողովուրդը հաստատական է հետևելու իր հայրերի սկզբունքներին ու շարունակելու նրանց գործը, այսինքն՝ հավատարիմ մնալու այն գաղափարախոսական, կենսակերպային մոդելներին, որ ավանդաբար սահմանված են իր համար:

But above all, I will never forget **who this victory truly belongs to - it [this victory – U. P.] belongs to you. ... This is your victory.**



Սա ելույթի հաջորդ առանցքային հասկացույթն է: Հեղինակը ելույթի հատվածներից մեկը սկսում է ներկայացված առաջին ասույթով և ավարտում մյուսով: Մի քանի անգամ կրկնվում է նույն գաղափարը՝ թեև փոքր-ինչ փոփոխված: Ընդ որում՝ *this is your victory* պնդումն ավելի ազդեցիկ է պերսուազիվ ներգործման տեսանկյունից, քան *this victory belongs to you*-ն:

**I know you didn't do this** just to win an election and **I know you didn't do it** for me. ... For **even as we celebrate tonight, we know** the challenges that tomorrow will bring are the greatest of our lifetime - *two wars, a planet in peril, the worst financial crisis in a century.*

**Even as we stand here tonight, we know** there are brave Americans waking up in **the deserts of Iraq and the mountains of Afghanistan** to risk their lives for us.

Վերը բերված հատվածում առաջին կրկնությունը երկու համադաս նախադասությունների սկզբում է՝ *I know you didn't do*, որին հաջորդում է մյուսը՝ ներկայացված զուգահեռ կառույցներով՝ *even as we celebrate tonight, even as we stand here tonight*: Այս պարագայում *we celebrate tonight* և *we stand here tonight* պնդումները նույնական են. քննարկվող ելույթը Բարաք Օբամայի հաղթանակի ելույթն է և մարդիկ կանգնած են հրապարակում ու տոնում են այդ հաղթանակը: *Tonight* բառի կրկնությունը պատահական չէ (ընդ որում՝ ողջ ելույթի համատեքստում): Այն անցյալի ու ապագայի ջրբաժանն է, վերջը եղած վատի և սկիզբը գալիք լավի: *Tonight*-ը վերևում հիշատակված *this day, this election, this defining moment* կրկնության շարունակությունն է:

Հաջողված հռետորական մտահղացում է *the deserts of Iraq* և *the mountains of Afghanistan* արտահայտությունները զուգահեռ կառույցներով ներկայացնելը: Կառուցվածքային զուգահեռականությունը երևան է հանում մաև գաղափարական զուգահեռականություն, որն էլ հենց ողջ մտահղացման նպատակն է:

Իրաքի անապատները և Աֆղանստանի լեռները նույն պրագմատիկ նշանակությունն ունեն այս համատեքստում, ինչպես նաև արտաքին քաղաքականության մի շարք հարցերում: Վերը բերված արտահայտությունները կարևոր պրագմատիկ նշանակություն ունեն, մի կողմից, ամերիկյան ժողովրդի գիտակցության համար, մյուս կողմից՝ համաշխարհային հանրության կողմից ամերիկյան ժողովրդին ընկալելու առումով: Քննվող արտահայտություններն ասես նույն հասկացության, գաղափարի կրկնությունն են տարբեր լեզվական դրսևորմամբ:

**There is new energy to harness and new jobs to be created; new schools to build and threats to meet and alliances to repair.**

Այս ասույթում երեք անգամ կրկնվում է *new* բառը՝ *new energy, new jobs, new schools*, և, ինչպես տեսնում ենք, ողջ ասույթը կառուցված է զուգահեռականության տրամաբանությամբ, ինչն առավել ակնբախ ու ազդեցիկ է դարձնում *ոտր* հասկացության կրկնությունը: *Նոտր*-ը Բ. Օբամայի ելույթի հաջորդ առանցքային հասկացույթն է: *Նոտր* և *փոփոխության* գաղափարները վճռորոշ դեր են կատարում Բարաք Օբամայի՝ նախ որպես ԱՄՆ-ի նախագահի թեկնածուի, ապա նաև որպես ԱՄՆ-ի գործող նախագահի կերպարի և ինքնության ձևավորման գործում: Բարաք Օբաման հենց ինքն է նոր էներգիան. նա երիտասարդ է, իսկ նախկին նախագահ Ջորջ Բուշը և նախագահության թեկնածու սենատոր Ջոն ՄըքՔեյնը՝ ոչ, նա նորարար է, իսկ նրանք՝ ոչ: Սա նորընտիր նախագահի ուղարկած հաղորդագրություններից մեկն է ամերիկյան ժողովրդին ու աշխարհին: Բ. Օբամայի այս և մի շարք այլ ելույթներում *ոտր* և *փոփոխություն* հասկացույթների հմուտ մանիպուլացման շնորհիվ ձևավորվում է նրա՝ որպես նորարարի ու բարեփոխողի ինքնությունը:

Ինքնությունը կենտրոնական դիրք ունի քաղաքական հաղորդակցման և փոխազդեցության մեջ. մարդիկ քաղաքական հռետորին և նրա խոսքն ընկալում են նրա ինքնության միջոցով,

որն էլ իր ձևավորումն ու հիմնավորումն է գտնում նրա խոսքային-հաղորդակցական գործունեության մեջ: Հռետորի թե՛ անհատական և թե՛ ընդհանրական (համայնական, կոլեկտիվ, հանրային) ինքնության արժեքային կառուցվածքն ու նրա ելույթի արժեքային կառուցվածքն ուղիղ համեմատական են և փոխադարձաբար պայմանավորում են մեկը մյուսին: Քաղաքական հաղորդագրության մեջ ներդրված արժեքները հաղորդակցման հենքային շերտն են և ձևավորում են փաստարկներ, որոնցով հանդես է գալիս քաղաքական հռետորը: Ինքնությունն Արիստոտելի մեկնաբանած հռետորական արվեստի նույն էթոսն է, որ միանգամայն անօտարելի է հռետորական խոսքի ցանկացած դրսևորման եռաչափ մոդելից: Այս կամ այն ինքնության կերտման հաջողվածությունը կախված է նրանից, թե ինչ աստիճանով է հաջողվել հռետոր – լսարան փոխազդեցությունը: Մենք անվանում ենք դա փոխազդեցություն, քանի որ հասցեատեր-լսարանը երբեք չի կարող պասիվ սուբստանց լինել. այն միշտ արձագանքող է, և անտարբերությունը նույնպես արձագանքի տեսակ է՝ ձախողված խոսքային հաղորդակցման արդյունք:

**The road ahead will be long. Our climb will be steep. We may not get there in one year or even one term, but America - I have never been more hopeful than I am tonight that we will get there. I promise you - we as a people will get there.**

*The road ahead will be long. և Our climb will be steep.* հասվածները համարժեք են տվյալ ասույթի շրջանակում: *Առաջ անող ճանադարհը* նույն վերելքն է: Առաջինի երկար, իսկ երկրորդի գաղիթափ լինելն էլ բացասական գնահատողականության իմաստային նույն բեռնվածությունն ունեն, որը դժվար լինելու գաղափարն է իր մեջ կրում: Փաստորեն գործ ունենք գաղափարական կրկնության տեսակներից մեկի հետ: Ասույթի գաղափարական զուգահեռականությունն իրացվում է կառուցվածքային զուգահեռականության՝ մասնավորապես *will be* քերականական ձևի միջոցով: Հետաքրքիր խաղարկում է ստացել *մեկ*-ի գաղափարը՝ *one year, even one term*: Թիվը մնում է նույնը և նույնիսկ

կրկնվում, շեշտվում է, սակայն ժամանակահատվածը, որի ընթացքում Բ. Օբամային կարող է չհաջողվի հասնել իր նպատակակետին, ընդլայնվում է ընդհուպ մինչև նախագահության երկրորդ ժամկետ: Այսպիսով, *one*-ի կրկնության հնուտ խաղարկմամբ ակնհայտորեն մեծը՝ երկարը, աչքի համար աննկատ կամ, ավելի ճիշտ, ականջի համար անընկալելի է մնում կամ չի ստանում իր համարժեք ընկալումը: Այստեղ կիրառվել է կրկնության այն տարատեսակը, որի պարագայում *one*-ը կրկնվել է կից արտահայտության մեջ միտքը զարգացնելու՝ ընդլայնելու, ինչպես նաև խոսքին որոշակի հուզական շեշտադրում հաղորդելու համար: Նախագահության մեկ ժամկետի հնարավոր անբավարարության գաղափարը միանգամայն շղարշվում է, երբ անհապաղ վրա են հասնում հռետորի *we will get there*, առավել ևս *we as a people will get there* ոգեշունչ, *will*-ի ողջ *դասրասականությունն* իր մեջ կրող պնդումները: Այս դեպքում կրկնությունը կիրառված է ասույթի բաղկացուցիչ մասերի վերջում: Կրկնվող հավաքական-ընդհանրական *մենք*-ի (*we*) գաղափարն ավելի է խտանում, երբ մատուցվում է *որդես ժողովուրդ* մեկնաբանությամբ, որը քննվող համատեքստում կարելի է դիտարկել որպես *մենք*-ի նպատակային վերժանում ու սահմանում: Այսպիսով, հռետորը ներակա կերպով իրականացնում է իր նպատակային ինքնության հաստատումը լսարանի գիտակցության մեջ: Հետաքրքրական է այն, որ նպատակին չհասնելու գաղափարն արտահայտված է հնարավորության երանգով, այնինչ նպատակին հասնելու գաղափարը՝ հաստատականության խոսողական-կատարողական ուժով՝ այն էլ կրկնակի չափաբաժնով՝ *We may not get there* ընդդեմ *we will get there + we as a people will get there*:

There will be **setbacks and false starts**. There are many who won't agree with **every** decision or policy I make as President, and we know that government can't solve **every** problem. But **I will** always be honest with you about the challenges we face. **I will** listen to you, especially when we disagree. And above all, **I will** ask you join in the work of

**remaking this nation** the only way it's been done in America for two-hundred and twenty-one years - **block by block, brick by brick, calloused hand by calloused hand.**

Հերթական պարբերությունը սկսվում է նման, կարելի է ասել, հոմանշային հասկացությունների հաջորդական կիրառությամբ՝ *setbacks* (անհաջողություն) ու *false starts* (անհաջող մեկնարկ), այսինքն՝ նույն գաղափարի կրկնությամբ, երբ մի բառային միավորը սաստկացնում է մյուսի նշանակությունը: Ուշագրավ է *every* բառային միավորի հռետորական կրկնությունը ժխտական կառույցներում: Իրացվելով հաստատական կառույցներում՝ այն, ակնհայտորեն, բացարձակության գաղափար է ներմուծում խոսք: Սակայն այլ է պատկերը ժխտական կառույցների պարագայում. այս բառային միավորը չափավորություն արտահայտելու միտում է ձեռք բերում: Հաջորդում է *I will*-ի եռակի նախադաս կրկնությունը, որը ներագրման գործառույթը հաջողությամբ իրացնելու պոտենցիալ ունի. առաջին դեմքի եզակի թվի *tu* դերանվան կիրառությունը ենթադրում է պատասխանատվության ստանձնում, իսկ ապառնի գործողություն ցույց տվող *will*-ն իր բառաքերականական իմաստի խորքում ունի նաև *դասրասականության* իմաստային բաղադրիչ: Նշենք, որ քննվող ասույթում կրկին բացահայտ հղում է կատարվում փոփոխության, վերափոխման գաղափարին՝ *remaking this nation*, ինչը Բ. Օբամայի ելույթի և ինքնության համատեքստում, ակնհայտորեն, նշանակում է բարեփոխում: Այնուհետև հաջորդում են *block by block, brick by brick, calloused hand by calloused hand* կրկնավոր արտահայտությունները, որոնք բնականաբար, ավելի ազդեցիկ են, քան եթե դրանք կազմող լեզվական միավորներն առանձին կիրառվեին:

This victory alone is not **the change we seek** - it is only the *chance* for us to make **that change**. And **that** cannot happen if we go back to the way things were. It cannot happen without you.

Նորից ընդգծվում է փոփոխության գաղափարը՝ Բ. Օբամայի հռետորիկայի համար առանցքային *change* բառ-հասկացույթի կրկնությամբ: Ներկայացված ասույթն էնթիմեն է, որի առաջին նախադասությունը մաքսիմն է, իսկ երկրորդը բացատրությունը: Փոփոխության գաղափարը հռետորն անմիջականորեն կապում է նախագահական ընտրություններում իր հաղթանակի հետ, և այն՝ փոփոխությունը, ինչպես նաև դրա հնարավորությունը հակադրվում են նախկինում գոյություն ունեցող գործելակերպին. այս հակադրության մեջ էլ այսպես ասած ինքնըստինքյան պարզ է դառնում արծարծվող փոփոխության դրական բնույթը: Սակայն դրական տպավորությունն առավել ամբողջանում է, երբ կյանքի է կոչվում ամերիկյան հայտնի ժողովրդավարության առանցքային հասկացություններից մեկը՝ *մասնակցությունը*, որը հռետորն օգտագործում է իր համայնքի ոգին կերտելու և ամրապնդելու համար:

So **let us** summon a **new** spirit of patriotism; of service and responsibility where **each of us** resolves to pitch in **and** work harder **and** look after not only ourselves, but **each other**. **Let us remember** that if this financial crisis taught us anything, it's that we cannot have a *thriving Wall Street* while **Main Street suffers** - in this country, **we rise or fall as one nation; as one people**.

**Let us** resist *the temptation to fall back on the same partisanship and pettiness and immaturity that has poisoned our politics for so long*. **Let us remember** that it was a man from this state who **first** carried the banner of **the Republican Party** to the White House - **a party** founded on **the values of self-reliance, individual liberty, and national unity**. Those are **values we all share**, and while **the Democratic Party** has won a great victory **tonight**, we **do so** with a measure of humility and determination to heal *the divides that have held back our progress*.

Նախորդ ասույթին հետևում է կոչ՝ գործողության մղում, որը խոսք է ներմուծվում *let us* արտահայտության քառակի

կրկնությամբ: Կրկին անգամ խաղարկվում է *Մոռ* հասկացությամբ: Հաջորդ քայլով հռետորը նպատակադրվում է զարգացնել կերտվող համայնքի անդամների միասնականության գաղափարը՝ այն սերմանելով համայնքի գործող ու պոտենցիալ անդամների գիտակցության մեջ (համայնական ինքնություն): Փաստարկն առավել համոզիչ դարձնելու համար հռետորը կիրառում է շաղկապի բազմակի կրկնություն և, թեև ժխտելով, ներմուծում հակառակ պնդումը, քանի որ ճշմարիտն ավելի հեշտ է ճանաչել հակադրության մեջ՝ *not only ourselves, but each other*: *Street* բառի կրկնությամբ արտալեզվական աշխարհից՝ իրերի փոխներգործման համատեքստից խոսքային գործունեության համատեքստ է ներմուծվում մեկ այլ՝ *Wall Street – Main Street* հակադրությունը: *Wall Street*-ը հարուստ, փթթուն ԱՄՆ-ի խորհրդանիշն է, իսկ *Main Street*-ը՝ աշխատավոր դասի կամ փոքր բիզնեսի: Պատահական չէ, որ *Main Street* լեզվական արտահայտությունը և դրա տակ ենթադրվող հասկացությունն ակտիվ շրջանառության մեջ են դրվել 2008 թ. տնտեսական ճգնաժամի և ԱՄՆ-ի նախագահական ընտրությունների ժամանակ: *Յուրաֆանջուրի* գաղափարն իր զարգացումն է ստանում *մեկ ազգի, մեկ ժողովրդի* գաղափարում: Վերջինս նույնպես արտահայտվել է հռետորական կրկնության միջոցով: Ընդ որում կրկնվել է ոչ միայն *մեկ՝ ամբողջություն* հասկացությունը, այլ նաև *ազգ/ժողովուրդ* հասկացությունը: Այս երկու բառերը նույն հասկացությունն են արտահայտում, երբ վերաբերում են ԱՄՆ-ին, քանի որ ամերիկյան ազգն ու ժողովուրդը բազմաթիվ ներգաղթյալ ազգերի ու նրանց հետնորդների մի բազմաձև համակեցություն և անպայմանորեն համակցություն է: Նախագահ Օբաման ժողովրդավարական կուսակցությունից է, մինչդեռ նրան նախորդողը, ինչպես նաև ընտրություններում նրա մրցակիցը Հանրապետական կուսակցությունն են ներկայացնում: Բ. Օբաման, հաղթողի դիրքերից խոսելով, անցյալի սխալներն անուղակիորեն ներկայացնելով ու քննադատելով (*Let us resist the temptation to fall back on the same partisanship and pettiness and immaturity that has poisoned our politics for so long.*), ինչևէ, ամենևին չի նվաստացնում հակառակորդ կուսակցության վաս-

տակը. ընդհակառակը, նա դիվանագիտորեն բարձր է գնահատում այդ կուսակցության դերն ամերիկյան պետականության կայացման գործում՝ իր խոսքում շեշտը դնելով, այսպես ասած, ամերիկյան ապրանքանիշը կրող արժեքների վրա: Այսպիսով, հռետորը հուզական երանգ է ներմուծում ելույթի այն մասում, որտեղ խոսում է հակառակ քաղաքական համոզմունքներ ունեցող և դրանք սատարող ընտրագանգվածի, այսինքն՝ ժողովրդի իրենից տարածայն հատվածի մասին: *Կուսակցություն* բառի հռետորական կրկնությունը ստեղծում է զգացմունքային, հարազատ պատկեր, որի միջոցով փոխանցվում է հղում, որ պետության ոչ մի քաղաքացի՝ անկախ իր քաղաքական համոզմունքներից, դուրս չի մնում պետության նախագահի հոգածության շրջանակից: Այս միտքն իր զարգացումն է ստանում, երբ հռետորն ընդգծում է, որ այդ արժեքներն իրենք բոլորն են կիսում, այսինքն՝ ինքը և ժողովուրդը՝ իր համայնքը: Այս առնչությանը բերված ամենաուժեղ փաստարկի կրկնությամբ արժեքները կիսելու գաղափարն ընդգծվում է, և դրան ավելի առարկայական երանգ է հաղորդվում (լոգոս): Սեփական ուժերի հանդեպ հավատի, անհատական ազատության, ազգային միասնականության գաղափարները, որ նշված են քննվող համատեքստում, հղում են, այսպես կոչված, ամերիկյան Սահմանային ոգու (Frontier Spirit) հասկացությանը: Սա միանշանակ հասկացությունն է, սա կեցության ձև է: Հայտնի ամերիկյան պատմաբան Ֆրեդերիկ Զեքսոն Թըրնըրի թեզում փորձ է արվում հասկանալ Ամերիկայի բացառիկության ու կենսունակության ակունքը [Turner, <http://xroads.virginia.edu/~HYPER/TURNER/>]: Նա գտնում է, որ այդ ակունքը միշտ եղել է ամերիկյան սահմանագիծը (frontier)՝ ուրբանացված, քաղաքակիրթ հասարակության և «չսանձահարված» խոպանի միջև տարածքը: Առաջին անգամ Ֆ. Թըրնըրը ներկայացրել է իր թեզը 1893 թ.-ին: Դրանում ասվում է, որ սահմանագիծը ստեղծեց ազատություն, որն անընդհատ անվանվում էր քաղաքակրթություն, քանդեց սովորույթի կապերը, բացեց նոր հնարավորություններ, ձևավորեց նոր ինստիտուտներ: Նորանոր հողերի նվաճման և մշակման, նոր միջավայրին հարմարվելու որոշակի միջոցների ձեռքբերման ու



կիրառման արդյունքում ծնվեցին ամերիկանացուն (Americanization) երևույթն ու հասկացությունը: Ըստ Ֆ. Թըրնըրի՝ բացառիկ, աննկուն ամերիկյան ինքնությունը կերտվել է քաղաքակիրթ բնակավայրի և բիրտ ամայության խաչման կետում: Այս հակադիր պայմաններում ձևավորվեց նոր տիպի քաղաքացին, որը կարող էր սանձել անսանձն ու ազատը, և սրանց պոռթկումն էլ պարզեց նրան ուժ ու անհատականություն: Յուրաքանչյուր սերունդ, ավելի շատ շարժվելով դեպի արևմուտք, ավելի ամերիկացի էր դառնում, ավելի ժողովրդավար և ավելի անհանդուրժողական ստորակարգության նկատմամբ: Հեղինակը բերում է այն փաստարկը, որ այդ ճանապարհին յուրաքանչյուր հատվածի (Ալեքսենի լեռները, Միսիսիպի, Միսուրին, պրերիերը, Ռոքի լեռները և Կալիֆոռնիան) հաղթահարման հետ հզորացել է ամերիկյան ինքնությունը: Սահմանային ոգին ավելի գործնական էր, նպատակասլաց, հնարամիտ, տոկուն, նույնիսկ վայրագ, համայնական, սակայն ամենից առաջ անհատապաշտ: Եվ որքան ավելի այդ ժողովուրդը հեռանում էր դեպի արևմուտք, այնքան ավելի շղարշվում էր կապը հին Եվրոպայի հետ: Ձևավորվել էր նոր ժողովուրդ՝ նոր բնութագրերով ու նոր արժեքներով, և կրում էր ամերիկյան անվանումը: 1890 թ. պարզ դարձավ, որ ամերիկյան սահմանագիծն իր վերջին էր հասել: Այն միտքը, որ ամերիկյան ուժի և եզակիության աղբյուրը սպառված էր, անհանգստություն էր պատճառում: Շատերը, այդ թվում պատմաբան, հետագայում նաև ԱՄՆ-ի նախագահ Թեոդոր Ռուզվելտը, հավատում էին, որ սահմանագծի վերջն ամերիկյան պատմության նոր էջ էր ազդարարում. Ամերիկայի Միացյալ Նահանգները պետք է ընդլայնվի արտերկրում: Այս գաղափարը ժամանակի ընթացքում կարծրացել է ամերիկյան ազգի գիտակցության մեջ հենքային ճանաչողական կառույցի տեսքով:

And **to those Americans** whose support I have yet to earn - I may not have won **your** vote, but I hear **your** voices, I need **your** help, and I will be **your** President too.

Սկսվում է զուգահեռ կառույցներով ներկայացված ուղերձների մի ամբողջ շարք: Դրանք Ելույթի համատեքստ են ներմուծվում *to those* հղման միջոցով, որը վեց անգամ կրկնվում է ասույթի բաղկացուցիչ մասերի սկզբում: Առաջին ուղերձն ուղղված է այն ամերիկացիներին, որոնք իրենց ձայնը չեն տվել Բ. Օբամային: Նորընտիր նախագահը փորձում է փոխգործակցություն հաստատել իր և ամերիկացիների այդ ստվար խմբի միջև: Սա մարտավարական քայլ է, որն էական է ընդհանուր ռազմավարության հաջողության համար՝ ստեղծել հռետորի միասնական համայնքը համազգային մակարդակով: Վերոհիշյալ մարտավարությունն իրացվում է *I-ի (ես)* ու *you-ի/your-ի (դու/ձեր)* ընդգծված կիրառության միջոցով (առաջին դեպքում՝ նույն բառի կրկնությունը հաջորդական նախադասությունների սկզբում, իսկ երկրորդում՝ միջակա դիրքում): Սակայն *ես-ն* ու *դու-ն* քննվող իրադրային ու խոսքային համատեքստում տարանջատման և տարբերակման գործառույթ չեն իրականացնում: Ճիշտ հակառակը՝ դրանք ոչ թե երկու ընդդիմադիր, այլ բանակցային կողմեր են, որոնցից մեկը՝ նախագահ Բ. Օբաման, բանակցության, փոխգործակցության ու համախմբման է հրավիրում մյուսին՝ ընտրություններում վստահության քվեն իրեն չհանձնած ժողովրդի հատվածին (համայնք և համայնական ինքնություն):

**And to all those watching *tonight* from beyond our shores, from parliaments and palaces, to those who are huddled around radios *in the forgotten corners of our world* - our stories are singular, but our destiny is shared, and a new dawn of American leadership is at hand.**

**To those who would tear this world down - we will defeat you. To those who seek peace and security - we support you.**

**And to all those who have wondered if America's beacon still burns as bright - tonight we proved once more that the true strength of our nation comes not from the might of our arms or the scale of our wealth, but from the enduring power**

**of our ideals: democracy, liberty, opportunity, and unyielding hope.**

Ինչպես տեսնում ենք, շարունակվում է ուղերձների շարքը: Թվով երկրորդն ուղղված է, մի կողմից, արտերկրի լսարանին՝ մասնավորապես դրա իշխող քաղաքական էլիտային և մյուս կողմից՝ աշխարհի *մոռացված անկյունների* բնակիչներին: Համայն աշխարհին ուղարկվում է ռազմավարական կարևորություն ունեցող հաղորդագրություն՝ *մեր դասնությունները եզակի են, սակայն մեր ծակասագիրն ընդհանուր է, և ամերիկյան առաջնորդության նոր արևածագ է մոտենում*: Կիրառվում է շարահյուսական զուգահեռականության արտահայտչամիջոցը. այստեղ տարբերակվում է մասնավորը (*our stories are singular*), սակայն նույնացվում՝ ընդհանուրը (*our destiny is shared*):

Համաշխարհային հսկայի, առաջնորդի, խաղաղարարի, ինչպես էլ երևույթն անվանվի, դիրքը չի ապացուցվում կամ փաստարկվում, այլ որպես ելակետ է դրսևորվում ամերիկյան ժամանակակից քաղաքական հռետորիկայում: Այն միշտ՝ բացահայտ թե ներակա, զոյություն ունի ամերիկյան քաղաքական խոսույթում՝ անկախ նախագահի փոփոխությունից: ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման ընդլայնում է իր համայնքի սահմանները՝ համաշխարհային ընդգրկում հաղորդելով դրան: Նա նաև ասում է ողջ աշխարհին, որ ԱՄՆ-ը իր կառավարման օրոք փորձելու է վերահաստատել երկրի՝ համաշխարհային առաջնորդի դիրքերը:

Հաջորդ երկու ուղերձները հասցեագրված են ԱՄՆ-ի պոտենցիալ և գործող հակառակորդներին/թշնամիներին և դաշնակիցներին/գործընկերներին համապատասխանաբար: Առաջիններին Բ. Օբաման, այսպես ասած, խոստանում է պարտության մատնել, իսկ երկրորդներին՝ աջակցել: Այս հատվածի վերջին ուղերձն ամենաուժեղն է իր հուզական-բովանդակային լարումով, և այն ուղղված է բոլոր նրանց, ովքեր ուզում են իմանալ, թե արդյոք *Ամերիկայի փարոսը դեռ նույնչափ վառ է: Քննարկվող հատվածում ուշագրավ են երկու հղում՝ a new dawn of American leadership is at hand* և *American beacon still burns as bright: Dawn* (արևածագ) և *beacon* (փարոս) բառային

միավորները, ըստ էության, նույն գաղափարի կրողն են տվյալ գործաբանական համատեքստում: Այս գաղափարական կրկնությամբ հռետորը տարբեր բառային միավորների կիրառման միջոցով վերադառնում է իր համար կարևոր գաղափարին և թարմացնում, ընդգծում այն նոր մատուցմամբ: *Dawn* և *beacon* բառերը տեսողական համակարգի ենթամոդալակայնության հարուցիչներ են: Ըստ նյարդալեզվաբանական ծրագրավորման՝ ենթամոդալակայնությունը մարդկանց ներքին պատկերացման բնութագիրն է և ներկայացական համակարգի (system of representation – արտաքին աշխարհից եկող տեղեկատվության կողմնորոնման մարդու ուղեղում) մաս է կազմում [Матвoсян 2004:214]: *Dawn* և *beacon* բառային միավորներն ԱՄՆ-ը զուգորդում են լույսի գաղափարի՝ ամեն դրականի, առաջադեմի, պայծառի հետ, քանի որ այս լեզվական միավորների հենց իմաստային կառուցվածքում գոյություն ունի դրական գնահատողականություն: Այնուհետև ակտիվացվում է ամերիկյան ընդհանուր իդեալների՝ *ժողովրդավարության, ազատության, հնարավորության, աննկուն հույսի* բացահայտ, ինչպես նաև ամերիկյան հարստության և բանակի հզորության ներակախադարկումը (լոգոս+պաթոս): Կիրառված է ժխտական և շարահյուսական զուգահեռականության շատ տպավորիչ համադրություն՝ *the true strength of our nation comes not from the might of our arms or the scale of our wealth, but from the enduring power of our ideals*. առկա է շարահյուսական նման կառուցվածք, միաժամանակ բացասվում է երևույթների նույնությունը, և դրանով իսկ ակնարկվում՝ նրանց նմանությունը: Ամերիկյան քաղաքական հռետորիկայում կենտրոնական դիրք ունեն ազատության և հնարավորության գաղափարները՝ ամերիկյան սուբստանցի մյուս կարևորագույն խտացումները (համայնական ինքնություն): Այսպես կոչված Նոր աշխարհի՝ Ամերիկայի բումն ազատություն և հնարավորություն փնտրող մարդկանց զանգվածային գրոհի հետևանք էր: Այս երկու պատմաքաղաքական և մշակութային-հոգեբանական կարծատիպերը հիմնարար են ամերիկյան պետության և ժողովրդի ընթացքի համար: Աշխարհայացքային կարծատիպերը և դրանց խոսքա-

յին արտացոլումները, անշուշտ, ուժգնացնում են համայնքային պատկանելության զգացումը: Դրանք ապահովում են արտաքին աշխարհի անենաբազմազան տեղեկատվության ազդակների ֆիլտրումը, այսպիսով դրանց ժխտումը կամ ընդունումը՝ ելնելով անհատի կամ համայնքի ճանաչողական-հոգեբանական շրջանակի սահմաններից: Խոսքային կարծրատիպերը կարող են փոխարինել անմիջական զգայական փորձին՝ դառնալով խոսքային մոդել կամ պատկեր, և ունկնդրի մոտ առաջացնել որոշակի զգացումներ և գնահատողականություն: Առանցքային բառերը որպես պերսուազիայի դոմինանտ տարրեր և խոսքային կարծրատիպերը հանրային գիտակցության արժեքային համակարգի մանիպուլացման հզոր գործիքներ են [Черныavsкая 2006:53-55]: Ազատությունը և հնարավորությունն Ամերիկյան երազանքն են, ինչն Ամերիկայի միացյալ նահանգների լավ գովազդված այցեքարտն է ողջ աշխարհում: 1931 թ. պատմաբան և գրող Ջեյմս Թրասլոու Ադամսը ստեղծեց *Ամերիկյան երազանք* (American Dream) արտահայտությունը [Adams 2009]: Ամերիկյան երազանքը մի երկրի երազանք է, որտեղ կյանքը պետք է լինի ավելի լավ, հարուստ և լիարժեք, մի խոսքով՝ հաջողակ բոլորի համար, որտեղ կա հնարավորություն յուրաքանչյուրի համար՝ անկախ խավից, կրոնից, ռասայից ու էթնոսից, սակայն համարժեք անհատի ունակություններին ու ձեռքբերումներին: Դա մի հասարակարգի երազանք է, որտեղ յուրաքանչյուր տղամարդ և յուրաքանչյուր կին կկարողանան իրենց ունակությունների ներածին չափով հնարավոր ամենամեծ աճն ունենալ և այլոց կողմից ճանաչվել ու ընդունվել իրենց անձնական նվաճումների համար՝ անկախ ծագման ու սոցիալական դիրքի պատահական հանգամանքներից: Յեղիմակի համոզմամբ՝ դա ոչ միայն նյութական լիության, այլ նաև ազատ զարգացման հնարավորություն է՝ չկաշկանդված պատնեշներով, որոնք աստիճանաբար գոյացել են ավելի հին քաղաքակրթություններում, չճնշված հասարակական կարգերով, որոնք ձևավորվել են առավելապես դասակարգերի շահի և ոչ թե որևէ դասակարգի հասարակ մարդ արարածի համար: Պատահական չէ, որ Ազատության հուշարձանը (Statue of Liberty)՝ Ամերիկյան երազանքի

խորհրդանիշը, կանգնեցված է Նյու Յորքի նավահանգստում՝ հնարավորության երկրի դարպասների մոտ:

*To those* հղումով խոսք ներմուծվող զուգահեռ կառույցները դասավորված են աճող աստիճանավորման հռետորական հնարի տրամաբանությամբ. հուզարտահայտչական ներգործման ուժը մեծանում է հասցեատեր-լսարանի թե՛ թվական և թե՛ տարածական ընդգրկմանը համընթաց՝ սկզբում Բ. Օբամային իրենց ձայնը չտված ամերիկյան քաղաքացիները, այնուհետև արտերկրի լսարանը և ի վերջո առհասարակ բոլոր նրանք, ովքեր հարցականի տակ են դնում ԱՄՆ-ի համաշխարհային գերիշխանությունը:

For **that** is the true genius of **America** - **that America** can **change**. **Our union** can be perfected. And **what we have already achieved** gives us **hope** for **what we can and must achieve tomorrow**.

Ցուցային հղման, այնուհետև տրամաբանական շեշտադրման նպատակով կրկնված *that* դերանունն ավելի է ընդգծում *America*-ի կրկնությունը նախորդող նախադասության վերջում ու հաջորդող նախադասության սկզբում: Հուզական ներգործության խտացումը չափազանց կարևոր է ամերիկյան ոգու մասին խոսելիս, լսարանի մեջ հայրենասիրական զգացմունքներ ակտիվացնելիս: Հետաքրքիր է այն փաստարկը, որ Ամերիկայի իրական, ճշմարիտ ոգու պարագայում է, ըստ Բ. Օբամայի, միայն հնարավոր Ամերիկայի փոփոխությունը, ընթացքը դեպի կատարելություն՝ մի դժվարին գործ, որը նա պատրաստվում է ձեռնարկել: Ասույթը շարունակվում է թեմատիկ զուգահեռակալությամբ, որը կապում է անցյալը, ներկան ու ապագան՝ *what we have already achieved ... what we can and must achieve tomorrow*:

This election had **many firsts** and **many stories** that will be told for generations.

Կրկին խաղարկվում է *Մոր*-ի հասկացությո՞ւնը, բայց այս անգամ այլ բառային արտահայտությամբ՝ *firsts: Many firsts* և *many stories* բառակապակցությունները, ըստ էության, նույն նշանակությունն ունեն քննվող համատեքստում. այս ընտրությունների ժամանակ տեղ գտած շատ պատմություններ առաջին են իրենց բնությո՞ւմ: Եվ այդ պատմություններից ամենակարևորն ու բացառիկն այն է, որ ԱՄՆ-ի 2008 թ. նախագահական ընտրությունների արդյունքում առաջին անգամ այդ պետության նախագահ ընտրվեց աֆրիկյան ծագում ունեցող ամերիկացի:

Երկարաշունչ և խտացված բովանդակությամբ ելույթի վերջում Բարաք Օբաման էնթիմենով արտահայտված փաստարկներից անցում է կատարում օրինակով արտահայտված փաստարկների: Պերսուազիվ խոսքի կառուցման այս տեխնիկան գալիս է դեռևս անտիկ ժամանակներից և գործուն ազդեցություն ունի մինչ օրս: Օրինակն ինդուկցիայի բնույթ ունի, ինչը փաստարկման հիմքն է [Aristotle Book II Chapter 20]: Օրինակը պատկերավոր կերպով մարմնավորում է այն, ինչը խնամքով և հետևողականորեն ասվել է տրամաբանական փաստարկների և հուզարտահայտչական շեշտադրումների միջոցով: Փաստարկման այս ձևը երևույթները ներկայացնելու հաջողված դիտողական միջոց է: Օրինակները լինում են ընդհանուր և մասնավոր, մտացածին և իրական, որոնցից թերևս ավելի ազդեցիկ են մասնավորը և իրականը, հատկապես եթե հայտնի են հասցետեր-լսարանին: Մարդիկ առավել հակված են համաձայնել և ընդունել այնպիսի դատողություններ, որոնք հիմնված են իրենց հայտնի սկզբնադրույթների կամ փաստերի վրա: Սա օգնում է ներգրավել լսարանին դատողություններ անելու և որոշումներ կայացնելու գործընթացի մեջ: Եթե օրինակը բերվում է խոսքի վերջում, նույնիսկ մեկը բավարար է, ինչպես և մեկ վկան էլ բավարար է, եթե լավն է [Aristotle Book II Chapter 20]:

Այսպիսով, իր ելույթի վերջին հատվածում Բարաք Օբաման պատմում է 106-ամյա սևամորթ կնոջ՝ Անն Նիքսոն Քուլիերի պատմությունը (լուգոս):

**She was born just a generation past slavery; a time when there were no cars on the road or planes in the sky; when someone like her couldn't vote for two reasons - because she was a woman and because of the color of her skin.**

Եվ անմիջապես կիրառվում են կրկնություն, աստիճանավորում և զուգահեռականություն՝ հռետորական հնարների մի ամբողջ փունջ: Շարահյուսական զուգահեռականությունը ներմուծվում է սկզբում *when*-ի (այս լեզվական միավորը բառացիորեն կրկնվում է հինգ անգամ Անն Քուփերի օրինակի նկարագրության մեջ), իսկ այնուհետև *because*-ի կրկնությամբ: Դիտարկվում է բարձրացող աստիճանավորման երկու դեպք՝ ինքնաթիռը մարդկության ավելի կատարելագործված տեխնոլոգիական նվաճում է, քան մեքենան, իսկ ռասայական խտրականությունն ավելի սուր և վիրավորական բնույթ ունի, քան սեռայինը:

And **tonight**, I think about all that **she's seen** throughout her century in America - **the heartache and the hope; the struggle and the progress; the times we were told that we can't, and the people who pressed on with that American creed: Yes we can.**

Հռետորը շարունակում է իր միտքը ձևակերպել զուգահեռ կառույցներով: Այս դեպքում հակադիր գաղափարների շարք ենք տեսնում, որոնց թվում կրկին առկա է հույսի՝ այս ելույթի համատեքստում առանցքային գաղափարը: *Հույս (hope)* հասկացույթը՝ տարբեր բառաձևաբանական դրսևորումներում (*hope*՝ գոյական, եզակի թիվ – 4 անգամ, *hopes*՝ գոյական, հոգնակի թիվ – 1 անգամ, *hope*՝ բայ – 1 անգամ, *hopeful*՝ ածական – 1 անգամ), պարբերաբար կրկնվում է ողջ ելույթի համատեքստում: Առավել հետաքրքրական է այս շարքի վերջին բաղադրիչը՝ *the times we were told that we can't, and the people who pressed on with that American creed: Yes we can*: Եթե ուշադիր լինենք, կարելի է նկատել, որ տվյալ ասույթում առկա է անթա-



քույց հակադրություն՝ ... մեզ ասում էին ընդդեմ ... ժողովուրդը, որ ղեկավարեց այդ ամերիկյան համոզմունքով՝ «Այո, մենք կարող ենք»։ Ասել են, որ ամերիկյան ժողովուրդը չի կարող, սակայն, ըստ հռետորի, նաև այս հաղթանակով Ամերիկյան վստահորեն տվել է իր պատասխանը՝ նա կարող է։ Եվ սա, ըստ Բ. Օբամայի, վճռորոշ դեր ունի ամերիկյան ժողովրդի ընթացքի համար։ Վճռորոշ է նաև *yes we can* պնդման դերն այս հաղթանակի ելույթի գաղափարական հենքի կայացման համար։ Քննարկվող գաղափարները ներկայացվում են զուգահեռականության և հակադրության տրամաբանությամբ միաժամանակ։ Ինչպես նաև ասույթում ակնհայտ է բարձրացող աստիճանավորում, որը զգացմունքից անցում է ապահովում գործին և իր գաղափարական կիզակետին է հասնում աստիճանավորման երրորդ բաղադրիչում՝ *yes we can* պնդման մեջ։ Այս ելույթի համատեքստում խաղարկվում է *can – can't* հակադրությունը։ Նորընտիր նախագահի ելույթը հասնում է իր հուզականության գագաթնակետին։ Սա մեծապես իրացվում է վերոհիշյալ պնդման յոթանգամյա կրկնությամբ՝ փաստացիորեն յուրաքանչյուր պարբերության՝ ավարտուն մտքի վերջում (պաթոս)։

**At a time when women's voices were silenced and their hopes dismissed, she lived to see them stand up and speak out and reach for the ballot. Yes we can.**

Շարունակվում է արծարծվել ժամանակի գաղափարը՝ ներկան ու առաջընթացն ընդդեմ անցյալի կտրվածքով (կրկնություն տեքստի մակարդակով), իսկ հույսի գաղափարն ավելի սուր բնույթ է ստանում, երբ ժխտման տեսանկյունից է ներկայացվում։ Կրկին օգտագործվում է զուգահեռ կառույցների ու բարձրացող աստիճանավորման համակցությունը, ինչն ապահովում է թե՛ տրամաբանական զարգացում և թե՛ հուզականության թանձրացում։ Եթե կանանց ձայները լռեցվում են, նրանց էմանսիպացիայի (*emancipation*)՝ «իրենց մարդ զգալու» հույսերը ջախջախվում են։ Սակայն կանայք ոտքի են ելնում, իրենց

սրտի ու մտքի խոսքն ասում և, ավելին, քվեարկում: Նրանք կարող են, քանի որ կարող է ամերիկյան ժողովուրդը:

**When there was despair in the dust bowl and depression across the land, she saw a nation conquer fear itself with a New Deal, new jobs and a new sense of common purpose. Yes we can.**

*When*-ի նպատակային կրկնությամբ նկարագրվում են անցյալի դժվարություններ: Հղում է կատարվում ԱՄՆ-ի անցյալ դարի 30-ականների Մեծ դեպրեսիային՝ տնտեսական ճգնաժամին, որը ներկայացվում է հուսահատության ու վախի տեսքով: Հատկապես ուշագրավ է այն հանգամանքը, որ պատմության այս անցքը վերոհիշյալ ներկայացումն է ստանում տվյալ ելույթի պահին ԱՄՆ-ում առկա տնտեսական խոր ճգնաժամի պայմաններում: Ամերիկյան ժողովուրդն իր պատմությամբ ու այդ պատմությունը կերտողներով է, որ պիտի ոգևորվի, փնտրի իր այսօրվա հիմնահարցերի լուծումը՝ Նոր կուրսի, այն իրականացրած լեգենդար նախագահ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտի և, իհարկե, առաջ քաշված ընդհանուր նպատակի շուրջ համախմբված ամերիկյան ազգի օրինակով: Այս կարգի հղումներով Բարաք Օբաման նպատակ ունի ապահովելու ամերիկյան ժողովրդի հաջողությունների շարունակականության ու նրա՝ հնարավորության լեգենդներ կերտող ոգու հարատևության պատկերը [տե՛ս նաև Henninger 2008]: Դրա հետ մեկտեղ հռետորը իր խոսքի հենքում ներակայորեն դնում է այն առանցքային գաղափարը, որ ինքն ամերիկյան հաղթական պատմության շարունակությունն է: Ահա այս հաղորդագրություններն են, որ նորընտիր նախագահը մշակված ու ծրագրավորված կերպով ուղարկում է իր ժողովրդին և, թերևս, ոչ միայն նրան: Այս ամենը հաճախ ենթագիտակցական մակարդակով, ավելի հազվադեպ գիտակցական ընկալմամբ արմատավորվում է մարդկանց լայն զանգվածների ուղեղներում՝ ճիշտ մտային կաղապարների և մտային պատկերումների տեսքով: Սա մարդկային գործունեության շատ կարևոր հայեցակերպ է, որով այլ գիտակարգերի շարքում

զբաղվում է նաև նյարդալեզվաբանական ծրագրավորումը: Ինչպես արդեն նշվել է, ըստ նյարդալեզվաբանական ծրագրավորման՝ նարդը տեղեկատվությունն արտաքին աշխարհից ստանում, պահում ու կոդավորում է իր ուղեղում ներկայացական համակարգերի միջոցով, որոնք հարուցում են տարբեր տեսողական, լսողական, զգայական ընկալումներ: Լեզվական ճիշտ միավորների կիրառությամբ՝ խոսքի միջոցով հռետորն իր ունկնդիրների մեջ սերմանում է այնպիսի գաղափարներ ու նրանց մոտ առաջացնում այնպիսի ապրումների պատկերներ, որոնք բնականորեն ձևավորվում կամ ի հայտ են գալիս իրական փորձի պարագայում: Այսինքն՝ համապատասխան փորձի զգացողությունն ու արդյունքը ստեղծվում են նյարդալեզվաբանական ծրագրավորմամբ:

**When the bombs fell on our harbor and tyranny threatened the world, she was there to witness a generation rise to greatness and a democracy was saved. Yes we can.**

Հետագա զարգացում է ստանում անցյալի հաղթահարումների թեման: Ձուգահեռ կառույցները շատ հարմար հնար են այս պարագայում, քանի որ դյուրընկալելի են դարձնում տեղեկատվությունը և շարունակականության տպավորություն ստեղծում: Անցյալի սերնդի մեծությունը գնահատվում է ժողովրդավարության չափով. հզոր դրսևորում է ստանում Բարաք Օբամայի մտքի խորությունը: Անն Քուլիերի կյանքի պատմությունը ներկայացնելիս հռետորը հատուկ շեշտում է այն հանգամանքը, որ այս պատկառելի տարիքի կինը նշված բոլոր իրադարձությունները և փոփոխություններն իրապես տեսել և վերապրել է իր երկար կյանքի ընթացքում՝ *she's seen, she lived to see, she saw, she was there to witness, she was there for* (նույն գաղափարի կրկնություն այլ բառային և հուզարտահայտչական դրսևորմամբ): Սա առավել հուսալիություն է հաղորդում փոխանցվող տեղեկատվությանը, ինչպես ականատեսի վկայությունը՝ դատավարության ժամանակ:

**She was there for the buses in Montgomery, the hoses in Birmingham, a bridge in Selma, and a preacher from Atlanta who told a people that “We Shall Overcome”. Yes we can.**

Անցյալի փշոտ ուղու մասին պատմող նմանատիպ շարահյուսական կառույցներով ասույթը նույնպես պսակվում է ոգեշունչ հայտարարությամբ: Այս հատվածում հաղթահարման գաղափարը թեև տրվում է արդեն անուղղակիորեն, ուրիշի խոսքերով՝ վերահամատեքստայնացման միջոցով, բայց և այս հռետորի սրտով: Վերահամատեքստայնացումը և *yes we can* պնդման վերահաստատումը մեծացնում են ասվածի արժանահավատությունը և ողջ ասույթի խոսողական-կատարողական ուժը:

**A man touched down on the moon, a wall came down in Berlin, a world was connected by our own science and imagination. And this year, in this election, she touched her finger to a screen, and cast her vote, because after 106 years in America, through the best of times and the darkest of hours, she knows how America can change. Yes we can.**

Ձուգահեռ կառույցները մեկը մյուսի հետևից լսարանի աչքի առաջ նյութականացնում են անցյալի դարակազմիկ իրադարձությունների հիշողությունները: Ապա *this year, this election* կրկնությամբ և աստիճանավորմամբ Բարաք Օբաման անցյալից կտրուկ անցում է կատարում ներկայից՝ փոփոխության հնարավորությանը: Այս հատվածում նույնպես կիրառված են զուգահեռ կառույցներ: Հետաքրքիր է *the best of times and the darkest of hours* արտահայտությունը, որտեղ կոնկրետ համատեքստում արտաքուստ հոմանիշներ թվացող *times* և *hours* լեզվական միավորները հակադիր իմաստներ են արտահայտում, ինչը պարզ է դառնում խորաթափանց հայացքի ներքո. ամերիկյան պատմության ընթացքում դրականը գերակշռել է բացասականին, հաղթանակները՝ դժվարություններին: Եվ ով, եթե ոչ կյանք տեսած, պատմություն տեսած սևամորթ կին Անն Քուփերը՝ որպես ամերիկյան ժողովրդի մարմնացում, գիտի, որ Ամերիկյան

կարող է փոխվել այս պատմական պահին այս ընտրության միջոցով: Վերոհիշյալ կրկնությունը՝ *this year, this election*, կարծես անդրադարձնում է այս ելույթի սկզբում տեղ գտած *this day, this election, this defining moment* կրկնությունը և, ամբողջացնելով ելույթի տրամաբանական շղթան, ազդարարում, որ ելույթը մոտենում է իր ավարտին: Անն Քուլտերի պատմությունը մի ընդգրկուն դիտողական ապացույց է այն ամենի, ինչ հռետորը ուզում է ասել իր լսարանին: Օրինակը կամ լավ նկարագրությունը կարող է ավելի մատչելի, հասանելի ու ազդեցիկ լինել ունկնդրի, հատկապես տարասեռ, զանգվածային լսարանի համար, ինչպիսին է ողջ ժողովուրդը: Օրինակն ավելի պատկերավոր ու անձնականացված է դարձնում հաղորդագրությունը և, իհարկե, միշտ էլ ավելի հուզական է, քան միայն ուղիղ փաստարկները:

**America, we have come so far. We have seen so much. But there is so much more to do. So tonight, let us ask ourselves - if our children should live to see the next century; if my daughters should be so lucky to live as long as Ann Nixon Cooper, what change will they see? What progress will we have made?**

Երկայացված վերջին երկու պարբերություններում երեք անգամ կրկնվում է Ամերիկա տեղանունը: Երրորդ կրկնությամբ այն լսարանի աչքի առաջ շնչավորվում և խոսակցի է վերածվում: Սա իրականացվում է նաև ընդհանուր *մենի*-ի միջոցով, որով սկսվող զուգահեռ կառույցներ են ներմուծվում խոսք: Այստեղ գործ ունենք կրկնության մեկ այլ տեսակի հետ՝ նույն երկարությունն ունեցող նման կառույցների շարք, որում յուրաքանչյուր անդամի երկարությունը կրկնվում է զուգահեռության սկզբունքով: Հռետորի հայացքն անցյալից հառնում է ապագային: Ավելին կա անելու, քան արվել ու ձեռք է բերվել ճանապարհի ընթացքում: Նույն միտքը հռետորը կրկնում, շեշտում ու զարգացնում է՝ դրսևորելով լեզվական արտահայտության բազմազանություն: Կրկին, ինչպես և ելույթի սկզբում, հղում է կատար-

վում պահի վճռորոշության գաղափարին: Հաջորդիվ դիտարկվում է իմաստային ու կառուցվածքային զուգահեռականության երկու զույգ: Պաթոսն իր գագաթնակետին է հասնում երկրորդում, երբ հռետորը հարցով դիմում է Ամերիկային և դրանում ոչ ավելորդ անգամ հղում կատարում *փոփոխության* ու *առաջընթացի* առանցքային հասկացություններին, որոնք, ըստ էության, հոմանշային բնույթ և նույնական գործառույթ ունեն Բ. Օբամայի ելույթի շրջանակում: Կիրառված է գաղափարական կրկնության այն տարատեսակը, երբ նույն կոչը, դիմումը, խնդրանքը կամ հարցը կրկնվում է հիմնականում նույն բառերով: Այսպիսով, փաստերը լսարանի առաջ են, խնդիրները ներկայացված, հռետորն ասել է իր խոսքը, հերթն ունկնդրին է՝ Ամերիկայինը. որոշողը նա է: Դիվանագիտորեն արդարացված քայլ է. հռետորը չի ցանկանում միանձնյա որոշել, այլ հարցի միջոցով ներգրավում է հասցեատեր-լսարանին որոշում կայացնելու գործում, թեև ունի որոշման իր հայեցակերպը:

**This is our chance to answer that call. This is our moment. This is our time - to put our people back to work and open doors of opportunity for our kids; to restore prosperity and promote the cause of peace; to reclaim the American Dream and reaffirm that fundamental truth - that out of many, we are one; that while we breathe, we hope, and where we are met with cynicism, and doubt, and those who tell us that we *can't*, we will respond with *that timeless creed that sums up the spirit of a people: Yes We Can.***

Նախագահ Բարաք Օբամայի ելույթի վերը բերված եզրահանգումը միտված է ուժեղացնելու ու շեշտադրելու ներկայացված կարևոր, հենքային փաստարկները, ունկնդրին հասցնելու պահանջվող հուզական վիճակին, թարմացնելու հիշողությունները և նրան վերջնականապես բարյացակամության տրամադրելու [հմնտ. Aristotle Book III Chapter 19]: Այս հատվածում հռետորը, վերստին նշելով և ամփոփելով իր ելույթի առանցքային գաղափարները, խտացված կերպով ներկայացնում է իր

հռետորիկայի հիմնադրույթները, էթոսը (ավելի կոնկրետ համայնական ինքնությունը) ու պաթոսը: Նպատակային խոսքային ռազմավարության միջոցով զգացմունքային լարվածությունը հասցվում է զագաթնակետին: Տաղանդավոր հռետորի ռազմավարությունը միտված է խնդիրներն ու դժվարություններն աղբյուր ու ելակետ դարձնելուն: Այս հիմքի վրա այնուհետև կառուցվում է բաղձալի հաղթանակը կամ գոնե դրա համոզիչ պատկերը: Առնվազն անխելամիտ կլիներ թերագնահատել լեզվի հմուտ գործածության դերն աշխարհի պատկերը ստեղծելու գործում՝ համայնքի ու ինքնության, ճշտի ու սխալի սահմանման, որոշարկման հիմնահարցերում, հատկապես եթե այս ամենն իրականացվում է տեղեկատվության մեր դարում: Ճիշտ պահին ճիշտ տեղում ասված ճիշտ խոսքն ընդունակ է ծրագրավորելու կամ կաղապարելու նպատակային հաղորդագրության հասցեատեր-ունկնդրին: Խոսքի կառուցման տեխնիկան ձեռք է բերվում և ծառայեցվում այս նպատակին: Քննվող պարբերությունում հռետորական միջոցներից ակնառու է զուգահեռ կառույցների երեք զույգ: Այս կառույցի խտացված կիրառությունը ելույթի վերջում ռազմավարական նշանակություն ունի. դյուրըմբռնելի և ազդեցիկ է դառնում հաղորդագրությունը: Այսպես, կրկին անգամ, ինչպես և ելույթի սկզբում (*It's been a long time coming, but tonight, because of what we did on this day, in this election, at this defining moment, change has come to America.*), շեշտվում են *հնարավորության, դահի և ժամանակի*՝ ելույթի համար հենքային հասկացությունները, որոնք, ըստ էության, Բարաք Օբամայի նախագահ ընտրվելու և նրա նախանշած փոփոխությունների նույն գործաբանական իմաստն ունեն: Բարգավաճման տանող ստեղծագործ աշխատանքի, խաղաղության գործի, և, իհարկե, Ամերիկյան երազանքի վերահաստատում ու խթանում. սրանք են գործունեության այն ուղղությունները, որ նախանշում է ԱՄՆ-ի նոր նախագահը: Բացահայտ կերպով խաղարկվում է Ամերիկայի միացյալ նահանգների և ամերիկյան ազգի եզակիության գաղափարը: Եվս մեկ անգամ ընդգծվում է *հույս*-ի հասկացությամբ՝ Օբամայի հռետորիկայի անկյունաքարերից մեկը, և դրա հենքային դերը մարդու կենսագործունեության

մեջ: Կրկին նկատվում է արձագանք ելույթի սկզբում արտահայտված գաղափարներին (*It's the answer that led those who have been told for so long by so many to be cynical, and fearful, and doubtful of what we can achieve to put their hands on the arc of history and bend it once more toward the hope of a better day.*): Գաղափարախոսական և հուզական հզոր խտացում է այս պարբերության վերջին արտահայտությունը՝ *timeless creed that sums up the spirit of a people: Yes We Can*, որն ընդունակ է բարձրացնել ժողովրդի ոգին ու համոզել աշխարհի ամենամեծաթիվ ու առաջընթաց հասարակություններից մեկին, որ ամերիկյան ոգին ժամանակի չափմանը ենթակա չէ: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ *yes we can* առաջին պնդման հետ կիրառված է *that American creed* արտահայտությունը, իսկ դրա վերջին պնդման հետ՝ *that timeless creed* արտահայտությունը: Ըստ էության՝ այս արտահայտությունը նախորդի կրկնությունն է՝ սակայն բովանդակային առումով ավելի համալրված: *That ... creed*-ը ինքնին մատնանշում է, որ նույն գաղափարի՝ ամերիկյան կրեդոյի մասին է խոսքը, իսկ *timeless* բառը, փոխարինելով *American* բառին, փոխանցում է այն գաղափարը, որ *American = timeless* (պաթոս): Բ. Օբաման իր ժողովրդի գիտակցության մեջ ներակայորեն սերմանում կամ ակտիվացնում է այն առանցքային ճանաչողական կարգը, որ *ամերիկյան* հասկացույթը ոչ միայն ազգային պատկանելություն է, այլև տարածամանակյա կեցության մարմնացում: Ամերիկյան կրեդոն վավերականության ժամկետ չունի, այն գործում է անկախ ժամանակային սահմանափակումներից: Առանձին տեղեկատվություն է փոխանցվում *that* բառի միջոցով: Այս ցուցային բառային միավորը ստեղծում է ռազմավարական նշանակության կանխենթադրույթ<sup>4</sup>. ամերիկյան հարատև կրեդոյի գոյությունը տրվում է որպես օբյեկտիվ իրականության փաստ, իրականություն, որ ներկայացման կամ ապացուցման կարիք չունի և ապրիորի ընդունվում է: Այսպիսով, *that*-ի միջոցով խոսքի գործաբանական կառուցվածք է ներմուծվում ներակա դատողություն՝ ներկայացված այլ ասույթի ձևով, ընդ որում՝ վերջինս էլ մեկ այլ բացահայտ դատողության իմաստային բաղադրիչ է: *ժողովրդի*



ոգու, հույսի, հնարավորության երազանքի, փոփոխության գաղափարները վերջնականապես հաղթանակ են տանում *yes we can*-ի վերջին՝ յոթերորդ «հարվածով»։ Ելույթն ավարտվում է իր գաղափարական և հուզական գագաթնակետում։

Եվ վերջում ավանդաբար, ինչպես և ԱՄՆ-ի նախկին նախագահները, Բարաք Օբաման Աստծո օրհնությունն է խնդրում իր ժողովրդի ու երկրի համար (գաղափարի կրկնություն այլ բառային և հուզարտահայտչական մատուցմամբ)։

Thank you, **God bless** you, and **may God Bless** the United States of America.

*Yes we can*-ի կրկնությունը յոթ անգամ պերսուազիայի հնուտ կերպով հաշվարկված և գործուն հնար է։ Ելույթի վերջին բաժնում յուրաքանչյուր ավարտուն մտքին հետևում է այս հաստատուն պնդումը, ինչպես կրկներգը՝ երգի յուրաքանչյուր քառատողին, և քննվող խոսքում կատարում է նույն գործառույթը, ինչը կրկներգը երգում՝ ներգրավել լսարանին ընթացող գործողության մեջ։ Պարբերականության սկզբունքով կառուցված կրկնությունը խթանում է հեշտ մտապահումը և ինքնաբերական վերարտադրումը։ Ճիշտ հուզավիճակի հասցված լսարանը՝ տպավորված և ոգևորված, Բ. Օբամայի հետ ինքնաբերաբար կրկնում է *yes we can* պնդումը՝ սկսած արդեն երրորդ անգամից։ Յոթերորդ իր լսարանի հետ հաստատել է մի յուրահատուկ կապ-փոխհարաբերություն (ըստ նյարդալեզվաբանական ծրագրավորման տերմինաբանության՝ ռապպորտ), այսինքն՝ մուտք է գործել նրանց աշխարհի, ընդհանուր կետեր հաստատել նրանց և իր աշխարհի մոդելների շփման տարածքում, հենվելով այդ կետերին՝ ժողովրդին հանոգել, որ ինքը մեկն է նրանցից՝ ունի նույն խնդիրներն ու նկրտումները, և պատրաստ է իր հետևից տանել դրանց իրականացման ուղիով։ Ժողովրդի ձայնն աստիճանաբար ավելի ուժգնանում է, քանի որ նորանոր անհատներ են ներգրավվում *կրիտիկական զանգվածի*<sup>5</sup> մեջ, և ավելի հաստատուն են դառնում նրանց համայնական ոգին ու ինքնությունը։

Այստեղ, դատելով լսարանի արձագանքից, կարելի է խոսել քաղաքական ելույթի հաջողվածության մասին: Քաղաքական հռետորիկան, որի հենքում ծրագրավորված են խոսակցի՝ հռետորի համար ցանկալի արձագանքն ու պատասխանը, ըստ էության, յուրօրինակ երկխոսություն է և միտված է գործողության, որին կարելի է հասնել պերսուազիվ հաղորդակցման միջոցով: Մեր դարաշրջանում տեղեկատվության աննախադեպ բազմազանության պարագայում պերսուազիվ հաղորդակցումը վճռորոշ դեր ունի ցանկացած տեղեկատվության ընկալման հարցում: Պերսուազիան, ինչպես արդեն նշվել է, իրականացվում է երկու հիմնական մակարդակով. 1) ունկնդիրների մոտ ստեղծվում է մտային ճիշտ կաղապար և/կամ հուզավիճակ, և փոխվում ու/կամ վերահաստատվում են նրանց համոզմունքներն ու մոտեցումները, 2) տվյալ ունկնդիրները վերածվում են *կրիտիկական զանգվածի*՝ պատրաստ հռետորի կողմից խրախուսած կամ դրդած գործողության: Աշխարհի որոշակի իրերի և իրավիճակների մասին տեղեկատվությունը, որը հռետորը փոխանցում է լսարանին, ֆիլտրման է ենթարկվում առաջինի փորձի, մշակույթի, լեզվի, համոզմունքների, հետաքրքրությունների, շահերի, արժեքների, ենթադրությունների և, ինչը շատ կարևոր է քաղաքական պերսուազիայի համատեքստում, նպատակների միջոցով: Այսպիսով, լսարանին տրամադրվում է հռետորի աշխարհի պատկերը. որքան ավելի լավ է հաստատված կապը հռետորի ու լսարանի միջև, այնքան ավելի մեծ չափով են համընկնում հռետորի և լսարանի անդամների աշխարհի պատկերները, քանի որ մարդը չի կարող ճանաչել իրականությունն իր ողջ բազմազանության մեջ, այլ կարող է ճանաչել իրականության միայն իր ընկալումը:

Ակնհայտ է դառնում, որ հռետորի ինքնությունը (էթոս), ունկնդրի վրա ազդեցությունը (պաթոս), հաղորդագրության փաստարկային կառուցումն ու հուզարտահայտչական ձևավորումը (լոգոս ու ոճ) անքակտելիորեն փոխկապակցված են, և դրանց միասնությունը առաջ է բերում օբյեկտիվ իրականության որակապես նոր երևույթ, որն ավելին է, քան այս բաղադրիչների պարզ գումարը, քանի որ ռեակցիայի մեջ մտնելիս տարրերը

ծուլվում, փոխներթափանցում են: Ձևավորվում է պերսուազիվ հաղորդակցումը՝ մեր դեպքում քաղաքական ելույթը:

Քննվող ելույթը կարևոր պատմական նշանակություն ունի: Մեծ է դրա դերակատարումն ամերիկյան պատմության մեջ և այդ նախագահական ընտրություններում հաղթանակի համատեքստում ամերիկյան ժողովրդի համախմբման, ոգու միասնականացման և հուզական վերելքի ապահովման առումով: Իսկ կիրառված լեզվաոճական արտահայտչամիջոցների (հռետորական հնարների) դերն անգնահատելի է այս հաղթանակի ելույթի կերտման և հաջողության գործում: Դրանց ազատ կիրառությունը, տվյալ դեպքում լեզվական բարձր ճաշակով խաղարկումը հասու է միայն խոսքի ուժը գիտակցող լեզվական անհատին՝ հմուտ հռետորին և հատկապես կարևոր է տվյալ արտալեզվական իրականության պայմաններում: Սա ելույթ է, որ հռետորն ունեցել է ճգնաժամի պահին ոչ միայն տնտեսության մեջ ու միջազգային հարաբերություններում, այլև, ինչն առավել կարևոր է, մարդկանց գիտակցության մեջ: Մարդիկ փոփոխության, երազանքի թարմացման ու հույսի կարիք ունեն: Նրանք ուզում են տեսնել ու ապրել սա իրենց երեխաների հետ: Տվյալ ժամանակի, տեղի, առիթի ու խնդրո առարկայի պայմաններում Բարաք Օբաման փորձում է այս խոստման հաղորդագրությունն ուղարկել իր ելույթի միջոցով:

Քննարկվող լեզվաոճական արտահայտչամիջոցները՝ կրկնությունը, աստիճանավորումը և զուգահեռականությունը, միանգամայն օրգանապես միահյուսվելով քաղաքական խոսույթի համատեքստին, հաջողությամբ իրացնում են խոսքի այս գործառական տարատեսակին գոյաբանորեն ներհատուկ երկու հիմնարար գործառույթները՝ տեղեկատվության փոխանցումը և հուզական ներգործությունը: Քաղաքական ելույթում՝ նպատակային խոսքային գործունեության համատեքստում այս լեզվախոսքային միջոցները նշանակալի նպաստ են ունենում ողջ հաղորդակցական իրադրության նպատակի կենսագործմանը՝ դրսևորելով ոճական, հռետորական հատկանիշների հարուստ բազմազանություն:

## Ծանոթագրություններ

1. Տվյալ փոխանունությունն առավելապես ճանաչողական գործառույթ է իրականացնում քննարկվող քաղաքական ելույթի և ավելի լայն քաղաքական իրականության համատեքստում ի տարբերություն այն դեպքերի, երբ այլաբերությունները կիրառվում են առավելապես գեղագիտական ազդեցություն գործելու համար ինչպես, օրինակ, գեղարվեստական խոսքում [Гаспарян 2000, 2008]:
2. Խոսույթի (լեզվական ու արտալեզվական) լայն համատեքստում լեզվախոսքային միավորների արտածվող (inferential) գործաբանական նշանակության մասին տե՛ս Grice 1975, Грайс 1985, Bataller 2003-2004:
3. Ազգային սուբստանցի քննության առումով հետաքրքրություն է ներկայացնում Գ. Գասպարյանի ուսումնասիրությունը, որում այն դիտարկվում է որպես տեքստի թե՛ ներտեքստային և թե՛ արտատեքստային կապակցվածության ճանաչողական հիմք [Гаспарян Г. 2010]:
4. *Կանխենթադրույթի* տեսակների մասին մանրամասն տե՛ս Арутюнова, Падучева 1985: Կանխենթադրույթի տեղեկատվական և պերսուազիվ իրացումների մասին տե՛ս Sbisà 1999:
5. Կրիտիկական զանգվածն իր առաջնային իմաստով ֆիզիկայի տերմին է, որը նշանակում է միջուկային ճեղքման ենթակա նյութի այն նվազագույն զանգվածը, որն անհրաժեշտ է միջուկային շղթայական ռեակցիայի կատարման համար: Կրիտիկական զանգված հասկացությունը ներկայումս կիրառվում է նաև բազմազան այլ ոլորտներում, ինչպիսիք են տեխնոլոգիան, հանրային կարծիքը, քաղաքականությունը և այլն: Այն ցույց է տալիս մարդկանց կան որևէ բանի անհրաժեշտ/բավարար զանգված որոշակի արդյունքի հասնելու կամ գործողության իրականացման համար [Dictionary.com Unabridged. Based on the Random House Dictionary, 2010. – in Dictionary.com; The American Heritage® Dictionary of the English Language, 2009. – in Dictionary.com; The American Heritage® New Dictionary of Cultural Literacy, 2005. – in Dictionary.com; ABBYY Lingvo 12; Hornby 2000]:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս աշխատանքում քննության են առնվել ժամանակակից անգլալեզու քաղաքական ելույթի՝ որպես լեզվական և արտալեզվական իրողությունների յուրահատուկ նպատակային փոխներթափանցման ոճագործառական առանձնահատկությունները՝ միտված քաղաքական պերսուազիայի իրականացմանը: Փորձ է արվել լեզվական միջոցների քննությամբ հասկանալ, վերլուծել ու մեկնաբանել անգլալեզու քաղաքական ելույթի կառուցման, դրանում հասարակական-քաղաքական իրականության ներկայացման մեխանիզմներն ու առանձնահատկությունները, ինչպես նաև գնահատել քաղաքական ելույթի, դրանում ներառված որոշակի բառերի, արտահայտությունների, ասույթների՝ արտալեզվական նպատակին, առաջադրանքին ծառայելու հաջողությունը կամ գոնե դրա իրական պոտենցիալը: Այսինքն՝ լեզվական իրողությունների դիտարկումն իրականացվում է արտալեզվական իրողությունների հետ անընդհատ կապի մեջ: Քաղաքական ելույթի՝ որպես ռազմավարական քաղաքական ու հռետորական դրսևորման լեզվական բացահայտումը խթանում է լեզվական գիտակցության և իրազեկության բարձրացումը, նպաստում ելույթների (ավելի ճիշտ՝ քաղաքական հռետորի/առաջնորդի) քաղաքական նպատակադրություններն ու միտումները, իրականության երևույթներն ու հարաբերություններն առավել խորությամբ ըմբռնելուն:

Լինելով քաղաքական խոսույթի դասական և առանցքային իրացում՝ քաղաքական ելույթն ունի արտալեզվական մեծ բեռնվածություն: Հատկապես կարևորվում է քաղաքական առաջնորդի ելույթի դերը: Խոսքային փոխազդեցության այս ձևն արդյունավետ է ժողովրդի կամ նրա ներկայացուցիչների հետ ամնիջական շփման առունով ամենատարբեր հարցեր քննարկելու համար: Քաղաքական ելույթը ներքուստ երկխոսություն է. քաղաքական հասցեագրողի համար չափազանց կարևոր է լսարանի արձագանքը, որը կարող է լինել ամնիջական կամ արտահայտվել որպես արդյունք: Նա փորձում է ելույթի հիմքում (հիմնականում ներակայորեն) ծրագրել լսարանի՝ իր համար ցանկալի արձագանքը: Սրա հաջողվածությունից է

կախված ելույթի ու դրա նպատակի հաջողությունը: Քաղաքական ելույթը երկկողմանի հաղորդակցում է, յուրօրինակ «նյութափոխանակություն»:

Քաղաքականությունն ունի իր էությանն ու նպատակին հատուկ լեզվական դրսևորում: Քաղաքականության լեզուն, որը հիրավի անվանում են նաև քաղաքական լեզու, որոշ դեպքերում նաև *ֆաղափականացված* լեզու, աչքի է ընկնում իր բազմաշերտ խորությամբ ու նրբերանգների հետաքրքիր բազմազանությամբ:

Քաղաքական ելույթը՝ որպես քաղաքական խոսույթի համապարփակ դրսևորում առանձնանում է իր գործառույթային հատկանիշների համալիր իրացմամբ: Քաղաքական խոսույթի, ինչպես առհասարակ հրապարակախոսական գործառական ոճի հիմնարար գործառույթներն են տեղեկատվության հաղորդումը և հուզական ներգործումը, որոնք գոյաբանորեն ներհատուկ են խոսքի նշված տեսակին: Քաղաքական խոսույթը հաղորդակցում է, որի հիմնական շարժառիթն ու նպատակը պայքարն է իշխանության համար (իշխանություն մարդկանց մտքերի, հույզերի, նկրտումների, գործողությունների նկատմամբ, իշխանություն հասարակական-քաղաքական համակարգում), և որի հիմքում ընկած են մրցակցությունը, գնահատողականությունը և գործողությունը:

Քաղաքական խոսույթը ոչ միայն իրականության կամ դրա որոշակի պատկերացման արտահայտություն է, այլ նաև ինքնին գործողություն: Քաղաքական խոսքային գործունեությունը քաղաքական գործիչների և հաստատությունների մասնագիտական պրակտիկայի կարևորագույն մաս է:

Քաղաքական ելույթը պերսուազիայի հզոր ձև է: Խոսքը հղողի ինքնությունը, ինչպես ինքնին հաղորդվող նյութը, մեծապես ձևավորվում է հենց ելույթում խոսքային ռազմավարական գործունեության միջոցով: Լեզվական տարբեր ձևերի խիստ նպատակային, տեղին կիրառությունը հնարավորություն է տալիս ռազմավար հռետորին արտահայտել ու կերտել իր մղումներին ու նպատակներին համապատասխանող աշխարհի (ներառյալ իր ինքնության) պատկերը կամ մոդելը: Արտալեզվական

իրականությունը (իրողությունները)՝ թե՛ նյութական և թե՛ զգայական ու հասկացական, քաղաքական ելույթի հիմքն ու շարժիչ ուժն է: Միաժամանակ խոսքն իր լեզվական գործիքներով ներագրում է այդ արտալեզվական իրականության վրա ելույթի միջոցով: Այսպիսով, ելույթը գործառու է որպես լեզվական և արտալեզվական իրողությունների ռազմավարական յուրահատուկ փոխներթափանցում:

Այս ատենախոսության շրջանակում ուսումնասիրված *-ly և -able/-ible վերջածանցներով բառային շարույթները, անձնական դերանունները՝* մասնավորապես *we (մենք), կրկնություն, ասիճանավորում, զուգահեռականություն* լեզվաոճական արտահայտչամիջոցները, լինելով լեզվախոսքային հաղորդակցման տարբեր հարթության միավորներ, քաղաքական ելույթում միավորվում են մի նպատակի՝ քաղաքական պերսուազիայի շուրջ: Ենթադրված ու համակցված լեզվական միջոցները քաղաքական խոսույթում գնահատողականության ու գործողության գաղափարի կրողներ են, միասնություն (համայնք) և տարանջատում (*ուրիշի* կերպար) կերտողներ, ինքնություն հաստատողներ: Լեզվախոսքային միջոցների որոշակի նպատակային դրսևորումների հմուտ կիրառմամբ և խաղարկմամբ քաղաքական հռետորը ստեղծում և/կամ ակտիվացնում է իր նպատակի համար արժեքավոր, այն խթանող որոշակի հասկացույթներ, հանրային համոզմունքներ, վարքային մոդելներ, մի խոսքով՝ որոշակի մտային ճանաչողական կառույցներ (ազգային, պատմական, մշակութային) և գիտակցության առանցքային կարգեր:

Այսպիսով, խոսքային հմուտ գործունեության շնորհիվ հնարավոր է դառնում մարդկանց ուղղորդումը, առաջնորդումը, կառավարումը, վերահսկումը և մանիպուլացումը: Քաղաքական ելույթը դիտարկվում է որպես գործաբանական նպատակային՝ գործառական-ճանաչողական հաղորդակցում:

Քաղաքական խոսույթի ոճը թելադրում է իր ուրույն սկզբունքները թե՛ լեզվի արտահայտչականությանը և թե՛ տեղեկատվության հաղորդման տրամաբանականությանը: Լեզվի երկու հիմնական գործառույթները որոշակի լեզվական միավորների և դրանց համակցումների միջոցով իրենց յուրահատուկ

փոխներթափանցված իրացումն են գտնում՝ ստեղծելով լեզվի գործառույթյան առանձնահատուկ միջավայր, որը կարելի է բնորոշել որպես *ֆաղափականացված*: Այդ միավորներն ու դրանց համակցումները, մի կողմից, տարբերակում են, մյուս կողմից՝ կառուցում քաղաքական խոսույթը որպես յուրատեսակ ոճաժանրային դրսևորում: Քաղաքական հասցեագրողի ձեռքում դրանք, մի կողմից, արտացոլում են, մյուս կողմից՝ կերտում արտալեզվական իրականությունը, մի խոսքով՝ յուրովի արտահայտում, ներկայացնում են իրականությունը՝ ելնելով նրա (կամ նրա համայնքի) միտումներից ու նպատակներից:

Այսպիսով, փորձենք ամփոփել կատարված հետազոտությունը: Քաղաքական ելույթը, որը քաղաքական հռետորիկայի դասական դրսևորում է, աչքի է ընկնում տարաբնույթ տարրերի բազմաձև համակցություններով: Մարդկային էության երկու հակադիր, սակայն անբաժան դրսևորումները՝ տրամաբանականը և հուզականը, նուրբ և բարդ համակցումներով իրենց յուրատիպ միասնական արտացոլումն են գտնում քաղաքական ելույթի լայն համատեքստում: Տրամաբանական փաստարկում և հուզական ազդեցություն ապահովող տարամետ իմաստային և կառուցվածքային լեզվախոսքային միավորների օրգանական համագոյակցությունը թելադրվում է քաղաքական խոսքի գործառույթներով, որոնք են տեղեկատվության հաղորդումը և հուզական ներգործումը: Պերսուազիվ խոսքը՝ տվյալ պարագայում քաղաքական ելույթը, սովորաբար ծառայում է որոշակի հստակ հասարակական, քաղաքական առաջադրանքի իրականացմանը և ունի կոնկրետ նպատակային կողմնորոշում: Պերսուազիվ հաղորդակցման առավել ամբողջական իրացումը պայմանավորված է վերը նշված գործառույթների հակադրամիասնությամբ, որն արտալեզվական իրականության պահանջն է և արտացոլում է, ինչպես նաև ձևավորում, հաստատում, վերահաստատում իրերի, երևույթների, մարդկանց, իրադրությունների որոշակի հարաբերություններ՝ թելադրված այս կամ այն արտալեզվական (քաղաքական) նպատակադրությամբ: Քննված լեզվական նյութը թույլ է տալիս եզրակացնել, որ գործառական տեսանկյունից քաղաքական ելույթը տրամաբանական համոզ-



ման և հուզական ներագդման յուրօրինակ ռազմավարական համաձուլվածք է, որում լեզվական ու արտալեզվական իրողություններն իրենց նուրբ փոխներթափանցված իրացումն են գտնում:

Անդրադառնալով -ly վերջածանցով բառային շարույթներին՝ նշենք, որ դրանք գնահատողականության ձևավորման գործուն միջոց են: Այս շարույթները ցույց են տալիս գործողության կամ հատկանիշի իրացման ձևը, աստիճանը կամ սաստկացումը, որոնք կենսական են քաղաքական ելույթի համար: Դրանով է պայմանավորված -ly-ով բառային շարույթների հաջողությունը քաղաքական ելույթում. դրանք միանգամայն կիրառելի են թե՛ տրամաբանական նկարագրության և թե՛ հուզական ներգործության համար: Իրականության երևույթներն այս կամ այն կերպ գնահատելով և բնութագրելով՝ քաղաքական գործիչը ներագդում է մարդկանց գիտակցության վրա և ի վերջո ստեղծում այդ իրականությունը:

Ինչ վերաբերում է -able/-ible վերջածանցով բառային շարույթներին, ապա դրանք, հիմնականում արտահայտելով գործողության կատարման հնարավորության նշանակություն, գործողության գաղափարի կրող են քաղաքական ելույթում: Սա էական առանձնահատկություն է այն գործառական համատեքստի համար, որում այս շարույթները դիտարկվում են: Քաղաքական ելույթն ունի հստակ գործառական կողմնորոշում՝ տրամաբանական փաստարկում և հուզական ազդեցություն, որ ունկնդիրներին խթանում են ելույթում «կողավորված» որոշակի գործողության իրականացման: Յետևաբար, ելույթներն ինքնին ունեն դինամիկ, գործողության միտված բովանդակություն:

Քաղաքական խոսույթում բազմազան կապակցություններ կազմելով՝ -ly-ով և -able/-ible-ով բառային շարույթները դրսևորում են տարբեր բառադարձվածային, ձևաբանական, շարահյուսական հարաբերություններ և արտահայտում յուրօրինակ իմաստային նրբերանգներ, նպատակային բովանդակային շեշտադրումներ, որոնք իրենց նպաստն են բերում քաղաքական խոսույթի համար հիմնարար գնահատողականության և գործողության գաղափարների ձևավորման հարցում: Այսպիսով, հա-

մապատասխան գործառական միջավայրում նշված լեզվական միավորները ձեռք են բերում քաղաքական խոսույթի գործառական ուղղվածության, մի կողմից, ոճատարբերակիչ, իսկ մյուս կողմից՝ ոճակազմիչ արժեք: -ly և -able/-ible վերջածանցներով բառային շարույթները գործուն ներդրում են ունենում քաղաքական ելույթի միջոցով տրամաբանական-փաստարկային ու հուզական-գնահատողական մթնոլորտի ստեղծման և հասցեատեր-լսարանի համոզման գործում: Եթե տեղեկատվությունը փոխանցված է, ներագրումն իրականացված, ուրեմն լսարանը հասցված է անհրաժեշտ բարոյական-գաղափարական վիճակի, որոշ դեպքերում նաև անհրաժեշտ գործողության կատարման:

Սույն հետազոտության մեջ տեղ գտած անձնական դերանունների և մասնավորապես we (մենք) լեզվական միավորի մասին պետք է ասել, որ դրանք նույնպես դրսևորում են հստակ ոճագործառական և գործաբանական ուղղվածություն: Յուրահատուկ իմաստագործաբանական դեր կատարելով քաղաքական ելույթում՝ *մենք*-ը (հետազոտության նյութում *ինկլուզիվ մենք*-ը) կերտում է համայնքի և ինքնության որոշակի պատկեր: Պայմանավորված արտալեզվական հանգամանքներով ու նպատակադրությամբ՝ մենք-ը արտացոլում-ձևավորում է որոշակի կոնկրետ համայնք, որը տարբեր դեպքերում կարող է ընդգրկել մի խումբ համախոհներ, քաղաքական կուսակցություն կամ կառույց, ընտրազանգված, մի ամբողջ ժողովուրդ, ինչպես նաև համաշխարհային հանրությունը: Ինքնության լեզվախոսքային իրացումն ու հարաբերակցությունն այդ համայնքին նույնպես կարող է տարբեր լինել: Սրա տրամաբանական կամ պրագմատիկ հիմքերը կարելի է գտնել արտալեզվական իրականության մեջ:

Անձնական դերանունների շնորհիվ նույնպես իրականացվում են քաղաքական խոսույթին բնորոշ հիմնարար գործառույթները՝ փոխանցվում է տեղեկատվություն ու իրականացվում ներգործություն: Քաղաքական խոսույթն էլ իր հերթին առավել ակտիվացնում է այս «խոսուն» և «գործուն» լեզվական միավորների ընդհանրացնող և բաժանարար ուժը՝ վերածելով դրանք արդյունավետ քաղաքական «գործիքների», երբեմն էլ

նույնիսկ «զենքի»: Համայնքի և ինքնության գաղափարներն առանցքային են որևէ քաղաքական հռետորիկայի համար, և դրանց նպատակային կերտումն ու փոխանցումը իրականություն քաղաքական առաջնորդի գործունեության առաջնահերթություններից են ու պահանջում են պերսուազիվ հաղորդակցման բավարար ջանքեր:

Անդրադառնալով մեր ուսումնասիրության մյուս նյութին՝ կրկնությանը, աստիճանավորմանն ու զուգահեռականությանը նշենք, որ դրանք լեզվական մտածողության հզոր գործիքներ են և միանգամայն նպատակային կիրառություն են ստանում հասարակական կոնկրետ համատեքստում, ինչպիսին և ըստ էության քաղաքական ելույթն է: Այս լեզվաոճական արտահայտչամիջոցները մեծապես բարձրացնում են տեղեկատվության փոխանցման և լսարանի վրա ներազդելու գործառնությունների իրականացման արդյունավետությունը: Կրկնությունն ընդգծում է տրամաբանականը և խորացնում հուզականը: Այն ունկնդրի ուշադրությունը պարբերաբար հրավիրում է ելույթի առանցքային բառերին, արտահայտություններին, գաղափարներին, որոնք կամա թե ականա ամրակայվում են նրա հիշողության մեջ և, որ ավելի կարևոր է, ներդրվում գիտակցության մեջ: Աստիճանավորումն ապահովում է գաղափարի, իմաստի, հույզի կամ գործողության ուժգնացումը կամ թուլացումը՝ ներկայացված լեզվական միջոցների իմաստային կամ գործաբանական կառուցվածքների խաղարկմամբ: Աստիճանավորումը հռետորի ներկայանակի երանգների ռազմավարական հերթափոխն է, որն իր արտացոլումն է գտնում լսարանի զգացմունքներում առաջացող ելևէջներում: Զուգահեռականությունը, գործելով հավասարակշռության տրամաբանությամբ, ներակա կերպով ընդգծում է երևույթների, հասկացությունների, իրադարձությունների, մարդկանց նմանությունը կամ տարբերությունը՝ այդպիսով միտքն առավել համակարգված ու տպավորիչ դարձնելով:

Այսպես, կրկնության, աստիճանավորման ու զուգահեռականության նպատակային կիրառությունը գործուն ազդեցություն է ունենում ունկնդրին՝ քաղաքական հասցեագրողի համար ցանկալի հույզի, ապրումի, զգացողության, տրամադրվա-

ծությամբ, գնահատողականության մտային կաղապարի մեջ դնելու հարցում: Քննարկվող միջոցները, մի կողմից, ազդեցիկ ու դյուրըմբռնելի են դարձնում փաստարկները, մյուս կողմից՝ շեշտում են գնահատումը և զգացմունքներ արթնացնում: Կրկնությունը և աստիճանավորումը՝ հաճախ համակցված զուգահեռականության հետ, միանգամայն արդյունավետ են քաղաքական ելույթում միտքը զարգացնելու, շեշտելու, ինչպես նաև հաղորդագրությունը դյուրըմբռնելիության ու պարբերական կրկնության սկզբունքով կառուցելու իրենց հատկանիշների շնորհիվ:

Խոսքային հմուտ գործունեությունը կրկին թափ և կարևորություն է ձեռք բերում հատկապես ժամանակակից քաղաքական իրականության մեջ, քանի որ ստեղծված պայմանները և մարտահրավերները նոր մոտեցումներ ու լուծումներ են պահանջում: Վերջիններս, ծնվելով մարդու մտքում, փոխանցվում են մարդկային փոխազդեցության օբյեկտիվ իրականություն, ինչը հնարավոր է դառնում ճիշտ խոսքային-հաղորդակցական գործունեության միջոցով: Այսինքն՝ լեզվական միավորներն ու խոսքն ընդհանրապես ոչ միայն արտահայտում, արտացոլում են այն, ինչ կա աշխարհում, այլև կերտում, ձևավորում, փոխանցում ու օբյեկտիվ իրականություն են ներմուծում նոր երևույթներ ու իրողություններ: Խոսքի ուժն ու ազդեցությունն առավել քան երբևէ վճռորոշ են դառնում այլոց մտքերն ու գործողությունները վերահսկելու և ձևավորելու գործում: Լեզվական ճիշտ դրսևորում գտած խոսքը, այսինքն՝ լեզվական միավորների նտածված ընտրությունն ու համակցությունը, հաճախ հնարավոր են դարձնում ոչ միայն տարբեր գաղափարների, այլև գաղափարախոսությունների և երևույթների ձևավորումը, տարածումը և կենսագործումը:

Քաղաքական ելույթը շնորհիվ անմիջական զանգվածային հաղորդակցման իր ձևաչափի թերևս կատարյալ հարթակ է լեզվական և արտալեզվական իրողությունների փոխազդեցության ու փոխներթափանցման համար: Իրական ժամանակում տեղի է ունենում իրականության արտացոլում և կերտում՝ ընդ որում միաժամանակ ու առավելապես լեզվական միջոցներով: Մարդ-

կանց զանգվածներին տեղեկատվության փոխանցումը, նրանց մտքերի և հույզերի վրա ներգործումն ապահովում են քաղաքական ելույթի դինամիկան և ելույթի հաջողության, ինչպես նաև ողջ հաղորդակցական իրադրության նպատակի կենսագործման գրավականն են:

Ինչպես ցույց է տալիս մեր ուսումնասիրությունը, քաղաքական ելույթի՝ մեր կողմից քննարկված լեզվական միջոցները ոճատարբերակիչ ու ոճակազմիչ դեր ունեն քաղաքական խոսույթում: Դրանք փաստական համոզումը և հուզական ներազդումը, որ քաղաքական հռետորիկայի էությունն ու նպատակն են, հաջողությամբ իրականացնելու հիրավի մեծ պոտենցիալ են դրսևորում: Քաղաքական ելույթը, արտացոլելով արտալեզվական իրականությունը, նպատակային ներազդմամբ նաև կերտում է այն՝ ըստ էության իրացվելով որպես լեզվականի և արտալեզվականի յուրահատուկ փոխներթափանցում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Է. Լեզվաբանության հիմունքներ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987, 736 էջ:

2. Բաղդասարյան Մ. Բառափմաստային և ձևաբանական-շարահյուսական դրսևորումների գործառական հարաբերությունը քաղաքական խոսույթում // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում 3(21), Երևան, Երևանի պետական համալսարան, 2016<sub>1</sub>, էջ 37-44:

3. Բաղդասարյան Մ. Քաղաքական ելույթը որպես ինքնության և համայնքի ձևավորման միջոց /խոսքային-հաղորդակցական հնարներ/ // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, Գլխավոր խմբագիր Գասպարյան Ս., Երևան, Լուսակն հրատարակչություն, 2009, էջ 39-47:

4. Բաղդասարյան Մ. Քաղաքական խոսույթը որպես մարդկային փոխազդեցության ու գիտական ուսումնասիրության ոլորտ. հենքային հասկացություններ // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, N 3, Երևան, «Ձանգակ-97» հրատարակչություն, 2011, էջ 46-57:

5. Բաղդասարյան Մ. Քաղաքական խոսույթի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունների շուրջ // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, N 7, Երևան, Լուսակն, 2016<sub>2</sub>, էջ 88-99:

6. Բաղդասարյան Մ. Որոշ հռետորական հնարների պերսուազիվ դերը քաղաքական ելույթի համատեքստում. մի հաղթանակի ելույթի քննություն // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, Գլխավոր խմբագիր Գասպարյան Ս., Երևան, Լուսակն հրատարակչություն, 2010, N 2, էջ 11-24:

7. Եզեկյան Լ. Հայոց լեզվի ոճագիտություն (ուսումնական ձեռնարկ), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003, 376 էջ:

8. Խաչատրյան Լ. Լեզվաբանության ներածություն, Երևան, Ձանգակ-97 հրատարակչություն, 2008, 304 էջ:

9. Հակոբյան Ս. Փիլիսոփայության դասընթաց, Երևան, Ձանգակ-97, 2005, 405 էջ:

10. Մուրադյան Գ. Հրապարակախոսական արձակը որպես գործառական ոճերի հակադրամիասնություն (բ.գ.թ.-ի ... ատենախոսություն), Երևան, Երևանի պետական համալսարան, 2003, 172 էջ:

11. Պողոսյան Պ. Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները (խոսքի տեսություն) (ուսումնաստանողական ձեռնարկ), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1990, գիրք 1, 425 էջ:

12. Պողոսյան Պ. Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները (խոսքի տեսություն) (ուսումնաստանողական ձեռնարկ), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1991, գիրք 2, 336 էջ:

13. Ջահուկյան Գ., Խլղաթյան Ֆ. Հայոց լեզու. ընդհանուր գիտելիքներ. ոճաբանություն, Երևան, Լույս հրատարակչություն, 1976, 168 էջ:

14. Adams T. J. The Epic of America. Boston, Little, Brown, and company, 2009, 433 p.

15. Alexandrova O., Ter-Minasova S. English Syntax (Collocation, Colligation and Discourse). Moscow, Moscow University Press, 1987, 188 p.

16. Aristotle Rhetoric. <http://www.public.iastate.edu/~honeyl/Rhetoric/index.html>.

17. Baghdasaryan M. Communication, Language and Translation in a Cross-cultural Perspective. // Годичная научная конференция. Сборник научных статей. Ереван, Издательство Российско-Армянского университета, 2008, часть 2, сс. 14-21.

18. Baghdasaryan M. "Politicized" Syntagms in Action. // Armenian Folia Anglistika. International Journal of English Studies. Editor-in-chief Gasparyan S.. Yerevan, Lusakn Publishers, 2007<sub>1</sub>, 1:3, pp. 61-67.

19. Baghdasaryan M. The Lexical Syntagm with the Suffix "-ly" in Political Discourse: a Functional Stylistic Perspective. // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, Պատասխանատու խմբագիր Երզնկյան Ե., Երևան, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2007<sub>2</sub>, N 8, էջ 3-8:

20. Baron R. A., Byrne D. Social Psychology: Understanding Human Interaction. 3<sup>rd</sup> ed., Boston, Allyn and Bacon, Inc., 1981, 633 p.

21. Baron R. A., Byrne D. Social Psychology: Understanding Human Interaction. 4<sup>th</sup> ed., Boston, Allyn and Bacon, Inc., 1984, 685 p.

22. Bataller S. Lexical Pragmatics: Relevance Theory and Generalized Conversational Implicatures. // ANGLOGERMANICA ONLINE. 2003-2004, pp. 47-68, <http://anglogermanica.uv.es:8080/-Journal/>.

23. Beard A. The Language of Politics. London, Routledge, 2000, 121 p.

24. Bettinghaus E. P. *Persuasive Communication*. 3<sup>rd</sup> ed., New York, Holt, Rinehart and Winston, 1980, 272 p.
25. Brown G., Yule G. *Discourse Analysis*. Cambridge, Cambridge University Press, 2003, 288p.
26. Cap P. *Language and Legitimization: Developments in the Proximization Model of Political Discourse Analysis*. // *Lodz Papers in Pragmatics*. Łódź, Wydawnictwo Uniwersytetu Łódzkiego, 2005, №1, pp. 7-36.
27. Duranti A. *Linguistic Anthropology*. // *International Encyclopedia of the Social & Behavioral Sciences*. Oxford, Elsevier Science Ltd, 2001, pp. 8899-8906, [http://www.sscnet.ucla.edu/anthro/faculty/duranti/reprints/O2ling\\_anth.pdf](http://www.sscnet.ucla.edu/anthro/faculty/duranti/reprints/O2ling_anth.pdf).
28. Duranti A. *Truth and Intentionality: an Ethnographic Critique*. // *Cultural Anthropology*. 1993,8:2, pp. 214-245, <http://www.sscnet.ucla.edu/anthro/faculty/duranti/reprints/truint.pdf>.
29. Egorov G. *Suprasegmental Phonology*. Moscow, Moscow University Press, 1967, pp. 1-43.
30. Fairclough N. *Blair's Contribution to Elaborating a New 'Doctrine of International Community'*. // *Journal of Language and Politics*. 2005<sub>1</sub>, 4:1, pp. 41-63, <http://www.ling.lanacs.ac.uk/profiles/263>.
31. Fairclough N. *Critical Discourse Analysis*. // *Marges Linguistiques*. 2005<sub>2</sub>, 9, pp. 76-94, <http://www.ling.lanacs.ac.uk/profiles/263>.
32. Fairclough N. *Critical Discourse Analysis in Trans-disciplinary Research on Social Change: Transition, Re-scaling, Poverty and Social Inclusion*. // *Lodz Papers in Pragmatics*. 2005<sub>3</sub>, 1, pp. 37-58, <http://www.ling.lanacs.ac.uk/profiles/263>.
33. Fairclough N., Graham Ph., Lemke J., Wodak R. *Introduction*. // *Critical Discourse Studies*. Taylor & Francis Ltd, Routledge, Taylor & Francis Group, 2004, 1:1, pp. 1-7, <http://www.tandf.co.uk/journals>.
34. Foucault M. *Discourse on Language (key excerpts)*. [http://www9.georgetown.edu/faculty/irvinem/theory/Foucault-Discourse\\_on\\_Language-Summary-excerpts.html](http://www9.georgetown.edu/faculty/irvinem/theory/Foucault-Discourse_on_Language-Summary-excerpts.html).
35. Galperin I. *Stylistics*. Moscow, Higher School, 1977, 336 p.
36. Gasparyan S., Matevosyan A. *English Style in Action*. Yerevan, Lusakn Publishers, 2008, 168 p.
37. Geuss R. *The Idea of a Critical Theory. Habermas & the Frankfurt School*. Cambridge, Cambridge University Press, 1988, 100 p.



38. Ginzburg R., Khidekel S., Knyazeva G., Sankin A. A Course in Modern English Lexicology. 2<sup>nd</sup> ed., Moscow, Vysšaja Škola, 1979, 272 p.
39. Grace G. W. The Linguistic Construction of Reality. Kent, Croom Helm Publishers Ltd, 1987, 152 p.
40. Grice H. P. Logic and Conversation. // Syntax and Semantics. Cole P. and Morgan J. (Eds.), Academic Press, 1975, vol. 3, pp. 41-58, <http://www.mystfx.ca/academic/philosophy/Cook/2008-09/Grice-Logic.pdf>.
41. Grice H. P. Meaning. // Philosophical Review. 1957, 66, pp. 377-388, <http://www.ditext.com/grice/meaning.html> .
42. Halliday M. A. K. Explorations in the Functions of Language. London, Edward Arnold, 1973, 143 p.
43. Halliday M. A. K. Language as Social Semiotic. The Social Interpretation of Language and Meaning. London, Edward Arnold, 1978, 256 p.
44. Henninger D. America Needs Its Frontier Spirit. // The Wall Street Journal. December 4, 2008, <http://online.wsj.com/article/SB12-2834973764077677.html> .
45. Hodges A. The Dialogic Emergence of 'Truth' in Politics: Reproduction and Subversion of the 'War on Terror' Discourse. // Colorado Journal in Linguistics, 2008, vol. 21, [http://www.colorado.edu/ling/CRIL/Volume21\\_Issue1/paper\\_HODGES.pdf](http://www.colorado.edu/ling/CRIL/Volume21_Issue1/paper_HODGES.pdf) .
46. Ilyish B. The Structure of Modern English. Leningrad, Prosvescheniye, 1971, 368 p.
47. Íñigo-Mora I. On the Use of the Personal Pronoun *We* in Communities. // Journal of Language and Politics. John Benjamins Publishing Company, 2004, 3:1, pp. 27–52, <http://www.ingentaconnect.com/content/jbp/jlp/2004/00000003/00000001/art00003> .
48. Jakobson R. Linguistics and Poetics (selections). <http://courses.essex.ac.uk/lt/lt204/lingpoetics.htm> .
49. Kamio A. English Generic *We*, *You*, and *They*. An Analysis in Terms of Territory of Information. // Journal of Pragmatics. 2001, N 33, pp. 1111-1124, [http://www.sciencedirect.com/science?\\_ob=ArticleURL&\\_udi=B6VCW-43MCMRR-6&\\_user=10&\\_coverDate=07%2F31%2F2001&\\_rdoc=1&\\_fmt=high&\\_orig=search&\\_sort=d&\\_docanchor=&view=c&\\_rerunOrigin=google&\\_acct=C000050221&\\_version=1&\\_urlVersion=0&\\_userid=10&md5=9194e6d0db5601a69d11a34f2d77d796](http://www.sciencedirect.com/science?_ob=ArticleURL&_udi=B6VCW-43MCMRR-6&_user=10&_coverDate=07%2F31%2F2001&_rdoc=1&_fmt=high&_orig=search&_sort=d&_docanchor=&view=c&_rerunOrigin=google&_acct=C000050221&_version=1&_urlVersion=0&_userid=10&md5=9194e6d0db5601a69d11a34f2d77d796).

50. Kristensson D. Examples of Propaganda in Tony Blair's Political Speech. An Analysis of the Political Language Used in Tony Blair's Speech, Dated 5 March, 2004. <http://dalea.du.se/theses/archive/d1ac1037-d1f4-42f9-8edf-73d2bb4bf811/c92abf6c-2150-4ab5-9d-71-758fa7361463.pdf> .

51. Kristeva J. Desire in Language: A Semiotic Approach to Literature and Art. Roudiez L. S. (Ed.). New York, Columbia University Press, 1980, 336 p.

52. Leech G. N. Principles of Pragmatics. London, New York, Longman Inc., 1983, 250 p.

53. Levinson S. C. Pragmatics. Cambridge, Cambridge University Press, 1983, 419 p.

54. Lieber R. J. A New Era in U.S. Strategic Thinking. // A Special Electronic Journal of the U.S. Department of State. <http://guangzhou.usembassy-china.org.cn/uploads/images/t2QI70NJAKLp9LHwif3C-4Q/ijge0902.pdf>, 2002, pp. 5-8.

55. Maier R. Argument and Community. // Communication and Cognition. 1995, 28:4, pp. 367-386, <http://www.e-webtec.com/cc/Journals/CommunicationCognition.htm> .

56. Maier R. Forms of Identity and Argumentation. // Journal for the Theory of Social Behaviour. Oxford, The Executive Management Committee/Blackwell Publishers Ltd., 1996, 26:1, pp. 35-50.

57. Mason A. Community, Solidarity and Belonging: Levels of Community and Their Normative Significance. Cambridge, Cambridge University Press, 2000, 246 p.

58. Mihas E. Non-Literal Language in Political Discourse. // LSO Working Papers in Linguistics 5: Proceedings of WIGL. 2005, 124-139, <http://ling.wisc.edu/lso/wpl/5.1/LSOWP5.1-10-Mihas.pdf>.

59. Mukarovsky J. The Word and Verbal Art: Selected Essays by Jan Mukarovsky. New Haven, Yale University Press, 1977, 238 p.

60. Orwell G. Politics and the English Language. [http://orwell.ru/library/essays/politics/english/e\\_polit](http://orwell.ru/library/essays/politics/english/e_polit) .

61. Phillips L. Hegemony and Political Discourse: the Lasting Impact of Thatcherism. // Sociology. Sage Publications on behalf of British Sociological Association, 1998, vol. 32, N4, pp. 847-867, <http://soc.sagepub.com> .

62. Propaganda. <http://www.propagandacritic.com/articles/intro.why.html>.

63. Purvis T., Hunt A. Discourse, Ideology, Discourse, Ideology, Discourse, Ideology... // *The British Journal of Sociology*. Blackwell Publishing on behalf of The London School of Economics and Political Science, 1993, vol. 44, N3, pp. 473-499, <http://www.jstor.org/stable/591813>.

64. Quirk R., Greenbaum S., Leech G., Svartvik J. *A Comprehensive Grammar of the English Language*. London, Longman, 1985, 206 p.

65. Saeed J. I. *Semantics*. Oxford, Blackwell Publishers Ltd, 1998, 360 p.

66. Sbisà M. Ideology and the Persuasive Use of Presupposition. // *Language and Ideology. Selected Papers from the 6th International Pragmatics Conference*. Verschueren J. (Ed.). 1999, vol. 1, Antwerp, International Pragmatics Association, pp. 492-509.

67. Searle J. R. *What Is a Speech Act? // Pragmatics. A Reader* ed. by Davis S.. New York – Oxford, Oxford University Press, 1991, pp. 254-264.

68. Shaver K. G. *Principles of Social Psychology*. Cambridge, Massachusetts, Winthrop Publishers, Inc., 1977, 636 p.

69. Smith B. John Searle: from Speech Acts to Social Reality. // *John Searle*. Ed. by Smith B.. Cambridge, Cambridge University Press, 2003, pp.1-33, <http://ontology.buffalo.edu/smith/articles/SearleIntro.pdf>.

70. *Sociolinguistics. A Reader and Coursebook*. Ed. by Coupland N., Jaworski A.. Hampshire, New York, PALGRAVE, 1997, 506 p.

71. Sutton P. The Place of English in an Expanding Europe. // *Armenian Folia Anglistika. International Journal of English Studies*. Editor-in-chief Gasparyan S.. Yerevan, Lusakn Publishers, 2006, 1:2, pp. 82-89.

72. Ter-Minasova S. Linguistic Aspects of Intercultural Communication. // *Armenian Folia Anglistika. International Journal of English Studies*. Editor-in-chief Gasparyan S.. Yerevan, Lusakn Publishers, 2005, 1, pp. 80-86.

73. *The Prosody of Speech*. Ed. by Akhmanova O.. Moscow, Moscow University Press, 1973, 167 p.

74. Tian H. Review of Paul Chilton's *Analyzing Political Discourse: Theory and Practice*. // *Language in Society*. Cambridge, Cambridge University Press, 2006, 35:2, pp. 303-306.

75. Turner F. J. The Frontier in American History. <http://xroads.virginia.edu/~HYPER/TURNER/>.

76. Vander Zanden J.W. Social Psychology. New York, Random House, 1977, 464 p.

77. van Dijk T. A. Contextual Knowledge Management in Discourse Production. A CDA Perspective. // A New Agenda in (Critical) Discourse Analysis. Wodak R. and Chilton P. (Eds.). Amsterdam, Benjamins, 2005, pp.71-100, <http://www.discourses.org/OldArticles/Contextual%20knowledge%20management.pdf>.

78. van Dijk T. A. Critical Discourse Analysis. // Handbook of Discourse Analysis. Tannen D., Schiffrin D. & Hamilton H. (Eds.). Oxford, Blackwell, 2001, pp. 352-371, <http://www.discourses.org/OldArticles/Critical%20discourse%20analysis.pdf>.

79. van Dijk T. A. Critical Discourse Analysis (second draft). // to appear in Handbook of Discourse Analysis (in preparation). 1998, [http://web4.uwindsor.ca/users/w/winter/40-328.nsf/831fc2c71873e46285256d6e006c367a/10ff8b04ff3a317885256d88005720f6/\\$FILE/CDA.vandijk.pdf](http://web4.uwindsor.ca/users/w/winter/40-328.nsf/831fc2c71873e46285256d6e006c367a/10ff8b04ff3a317885256d88005720f6/$FILE/CDA.vandijk.pdf).

80. van Dijk T. A. Critical Discourse Studies: a Sociocognitive Approach. // Methods of Critical Discourse Analysis. Wodak R. & Meyer M. (Eds.). London, Sage, 2009, pp. 62-85, <http://www.discourses.org/OldArticles/Critical%20discourse%20studies.pdf>.

81. van Dijk T. A. Discourse and Manipulation. // Discourse & Society. 2006<sub>1</sub>, 17:2, pp. 359-383, <http://www.discourses.org/OldArticles/Discourse%20and%20manipulation.pdf>.

82. van Dijk T. A. Ideology and Discourse Analysis. // Journal of Political Ideologies. 2006<sub>2</sub>, N11, pp. 115-140, <http://www.discourses.org/OldArticles/Ideology%20and%20discourse%20analysis.pdf>.

83. van Dijk T. A. Political Discourse and Political Cognition. // Politics as Text and Talk. Analytical Approaches to Political Discourse. Amsterdam, Benjamins, 2002, pp. 204-236, <http://www.discourses.org/OldArticles/Political%20discourse%20and%20political%20cognition.pdf>.

84. van Dijk T. A. Principles of Critical Discourse Analysis. // Discourse & Society. 1993, N4:2, pp. 249-283, <http://www.discourses.org/OldArticles/Principles%20of%20critical%20discourse%20analysis.pdf>.

85. van Dijk T. A. Strategic Discourse Comprehension. // *Linguistica Testuale*. Genova, 1981, <http://www.discourses.org/OldArticles/Strategic%20Discourse%20Comprehension.pdf>.

86. Verschueren J. *Understanding Pragmatics*. London, Arnold, 1999, 295 p.

87. Waller L. Introducing Fairclough's Critical Discourse Analysis Methodology for Analyzing Caribbean Social Problems: Going beyond Systems, Resources, Social Action, Social Practices and Forces of Structure or Lack thereof as Units of Analysis. // *Journal of Diplomatic Language*. 2006, III:1, [http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract\\_id=912329](http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=912329).

88. Widdowson H. G. Review Article. The Theory and Practice of Critical Discourse Analysis. // *Applied Linguistics*. Oxford, Oxford University Press, 1998, 19:1, pp. 136-151.

89. Wierzbicka A. *English: Meaning and Culture*. Oxford, Oxford University Press, 2006, 368p.

90. Wodak R. *Critical Discourse Analysis. // Qualitative Research Practice*. London, Thousand Oaks, New Delhi, SAGE Publications, 2004, pp. 197-213.

91. Wodak R. *Critical Linguistics and Critical Discourse Analysis. // Handbook of Pragmatics*. Amsterdam/Philadelphia, John Benjamins Publ. Co, 2006, pp. 1-24.

92. Wodak R., Weiss G. Visions, Ideologies and Utopias in the Discursive Construction of European Identities: Organizing, Representing and Legitimizing Europe. // *Communicating Ideologies: Multidisciplinary Perspectives on Language, Discourse, and Social Practice*. Pütz M., Neff-van Aertselaer J., van Dijk T. A. (Eds.). Frankfurt a. Main, Peter Lang, 2004, pp. 225-251.

93. Аристотель Риторика. <http://www.koob.ru/aristotel/ritorika>.

94. Арутюнова Н., Падучева Е. Истоки, проблемы и категории прагматики. // *Новое в зарубежной лингвистике*. Москва, Прогресс, 1985, вып. 16, сс. 3-42.

95. Балли Ш. *Французская стилистика*. Москва, Издательство Иностранная литература, 1961, 391 с.

96. Баранов Н. Популизм и демагогия. // *Человек, культура, общество (межвуз. сб. науч. тр.)*. Волгоград, Волгоградский государственный технический университет, 2005, вып. 3, сс. 100 - 108, <http://nicbar.narod.ru/statia20.htm>.

97. Будагов Р. Литературные языки и языковые стили. Москва, Высшая школа, 1967, 376 с.
98. Будагов Р. Портреты языковедов XIX-XX вв. Из истории лингвистических учений. Москва, Наука, 1988, 320 с.
99. Будагов Р. Язык – реальность – язык. Москва, Издательство Наука, 1983, 264 с.
100. Бурашникова А. Трансляция ценностей в президентском дискурсе. <http://www.statebrand.ru/part15/49.html>.
101. Бюлер К. Теория языка. <http://depositfiles.com/ru/files/f8lry6czf>.
102. Бюлер К. Теория языка. Москва, Прогресс, 1993, 502 с.
103. Виноградов В. Итоги обсуждения вопросов стилистики. // Вопросы языкознания. Москва, Издательство Академии наук СССР, 1955, N1, сс. 60-87.
104. Виноградов В. Проблема авторства и теория стилей. Москва, Высшая школа, 1961, 320 с.
105. Виноградов В. Проблемы русской стилистики. Москва, Высшая школа, 1981, 320 с.
106. Виноградов В. Стилистика. Теория поэтической речи. Поэтика. Москва, Издательство Академии наук СССР, 1963, 256 с.
107. Гаспарян Г. Феномен У. Сарояна в контексте межкультурного дискурса (к проблеме изучения лингво-когнитивной структуры художественного текста) (дис. ... докт. филол. наук). Ереван, Ереванский государственный университет, 2010, 270 с.
108. Гаспарян С. Лингвопоэтика образного сравнения. 2-ое изд., Ереван, Лусакн, 2008, 180 с.
109. Гаспарян С. Фигура сравнения в функциональном освещении. Ереван, Издательство Ереванского университета, 2000, 324 с.
110. Гвишиани Н. Полифункциональные слова в языке и речи. Москва, Высшая школа, 1979, 200 с.
111. Головань О. Феномен дискурса: от прикладной лингвистики к политике и культуре. <http://www.pan-i.ru/librpani/Работы/Феномен-дискурса-3А-от-прикладной-лингвистики-к-политике-и-культуре/details.html>.
112. Гончарова Е. Персуазивность и способы ее языковой реализации в дискурсе рекламы. // *Studia Linguistica*. Санкт-Петербург, Санкт-Петербургский государственный университет, 2000, вып. 10, сс. 54-92.

113. Горбунова М. О понятии «дискурс» в отечественном речеведении. //Проблемы филологии, культурологии и искусствоведения. // Знание. Понимание. Умение. Москва, Московский гуманитарный университет, 2008, N3, сс. 161-164, [http://www.zpu-journal.ru/zpu/2008\\_3/Gorbunova.pdf](http://www.zpu-journal.ru/zpu/2008_3/Gorbunova.pdf).
114. Грайс Г. П. Логика и речевое общение. // Новое в зарубежной лингвистике. Москва, Прогресс, 1985, вып. 16, сс. 217-237.
115. де Соссюр Ф. Заметки по общей лингвистике. Москва, Прогресс, 1990, 280 с.
116. де Соссюр Ф. Труды по языкознанию. Москва, Прогресс, 1977, 696 с.
117. Ерзинкян Е. Дейксис слова: семантика и прагматика. Ереван, Издательство ЕГУ, 2013, 480 с.
118. Зигманн Ж. Структура современного политического дискурса (Речевые жанры и речевые стратегии) (дис. ... канд. филол. наук). Москва, 2003, 211 с., [http://planetadisser.com/see/dis\\_885-56.html](http://planetadisser.com/see/dis_885-56.html).
119. Кожина М. К основаниям функциональной стилистики. Пермь, 1968, 252 с.
120. Матевосян Л. Лингвистические основы нейролингвистического программирования.// Актуальные проблемы русского языкознания. Ереван, Издательство Ереванского университета, 2004, сс. 209-221.
121. Микоян А., Тер-Минасова С. Малый синтаксис как средство разграничения стилей. Москва, Издательство Московского университета, 1981, 214 с.
122. Михалёва О. Политический дискурс: способы реализации агональности. <http://www.rus-lang.com/about/group/mikhaleva/state2> .
123. Остин Дж. Л. Слово как действие. // Новое в зарубежной лингвистике. Москва, Прогресс, 1986, вып. 17, сс. 22-129.
124. Пражский лингвистический кружок. Сборник статей. Москва, Прогресс, 1967, 560 с.
125. Разинкина Н. Функциональная стилистика. Москва, Высшая школа, 2004, 272 с.
126. Смирницкий А. Морфология английского языка. Москва, Издательство литературы на иностранных языках, 1959, 440 с.

127. Тер-Минасова С. Синтагматика речи: онтология и эвристика. Москва, Издательство Московского университета, 1980, 200 с.

128. Тер-Минасова С. Синтагматика функциональных стилей и оптимизация преподавания иностранных языков. Москва, Московский государственный университет, 1986, 150 с.

129. Тер-Минасова С. Язык и межкультурная коммуникация. 3-е изд., Москва, Издательство Московского университета, 2008, 352 с.

130. фон Гумбольдт В. Избранные труды по языкознанию. Москва, Прогресс, 1984, 400 с.

131. Хмельцов А. Когда «они» говорят о «нас»: политический дискурс-анализ и семиотика внешней политики в междисциплинарной перспективе. // Актуальные проблемы теории коммуникации. Санкт-Петербург, Издательство Санкт-Петербургского государственного политехнического университета, 2004, сс. 159-171, <http://www.dfki.uni-sb.de/imedia/lidos/bibtex/Dijk85.html> .

132. Чаковская М. Текст как сообщение и воздействие. Москва, Высшая школа, 1986, 128с.

133. Чернявская В. Дискурс власти и власть дискурса. Проблемы речевого воздействия. Москва, Издательство Флинта, Издательство Наука, 2006, 136 с.

134. Шейгал Е. Власть как концепт и категория дискурса. [http://www.gumer.info/bibliotek\\_Buks/Polit/Article/scheig\\_vlast.php](http://www.gumer.info/bibliotek_Buks/Polit/Article/scheig_vlast.php) .

135. Шейгал Е. Инаугурационное обращение как жанр политического дискурса. // Жанры речи - 3. Саратов, 2002, сс. 205-214, <http://www.philology.ru/linguistics1/sheygal-02.htm>.

136. Шейгал Е. Семиотика политического дискурса (дис. ... докт. филол. наук). Волгоград, 2000, 431 с., <http://www.twirpx.-com/file/56756/?rand=7898778> .

137. Шейгал Е., Дешевова В. Агональность в коммуникации: структура понятия. // Вестник Челябинского государственного университета. 2009. № 34 (172), Филология. Искусствоведение, вып. 36, сс. 145–148, <http://www.lib.csu.ru/vch/172/027.pdf>.

138. Якобсон Р. Лингвистика и поэтика. // Структурализм: «за» и «против». Москва, Прогресс, 1975, сс. 193-230.



## **Բառարաններ և հանրագիտարաններ**

139. Անգլերեն-հայերեն բառարան, Խմբագրությամբ Յ. Ասման-գուլյանի և Ս. Յովհաննիսյանի, Երևան, Հայաստան հրատարակչություն, 1991, 1144 էջ:

140. Նազարյան Ա. Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Երևան, Ապոլոն հրատարակչություն, 1993, 656 էջ:

141. Ջրբաշյան Է., Սախչանյան Հ. Գրականագիտական բառարան, Երևան, Լույս հրատարակչություն, 1980, 352 էջ:

142. ABBYY Lingvo 12.

143. Dictionary.com Unabridged. Based on the Random House Dictionary, © Random House, Inc., 2010. // Dictionary.com.

144. Figures of Repetition.

<http://rhetoric.byu.edu/Figures/Groupings/of%20Repetition.htm>.

145. Hornby A.S. Oxford Advanced Learner's Dictionary of Current English. 6<sup>th</sup> ed., Oxford, Oxford University Press, 2000, 1541 p.

146. Rhetoric.

<http://www.diplomacy.edu/Language/Rhetoric/default.htm>.

147. The American Heritage® Dictionary of the English Language, 4<sup>th</sup> ed. Copyright © 2009 by Houghton Mifflin Company. Published by Houghton Mifflin Company. // Dictionary.com.

148. The American Heritage® New Dictionary of Cultural Literacy, 3<sup>rd</sup> ed. Copyright © 2005 by Houghton Mifflin Company. Published by Houghton Mifflin Company. // Dictionary.com.

149. Ахманова О. Словарь лингвистических терминов. Изд. 2-ое, Москва, Издательство Советская энциклопедия, 1969, 608 с., [http://www.classes.ru/grammar/174.Akhmanova/source/worddocuments/\\_51.htm](http://www.classes.ru/grammar/174.Akhmanova/source/worddocuments/_51.htm).

150. Душенко К. Большая книга афоризмов. Москва, Издательство ЭКСМО-Пресс, 2001, 1056 с., [http://yanko.lib.ru/books/lit/dushenko-aphorizm.htm#\\_Тoc44520506](http://yanko.lib.ru/books/lit/dushenko-aphorizm.htm#_Тoc44520506).

151. Прикладная лингвистика. // Онлайн энциклопедия Кругосвет. [http://www.krugosvet.ru/enc/gumanitarnye\\_nauki/lingvistika/PRIKLADNAYA\\_LINGVISTIKA.html](http://www.krugosvet.ru/enc/gumanitarnye_nauki/lingvistika/PRIKLADNAYA_LINGVISTIKA.html).

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ .....	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	8
ԳԼՈՒԽ 1	
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹ. ՅԵՆՔԱՅԻՆ ՅԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	15
ԳԼՈՒԽ 2	
ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆՊՏԱԿԱԿՅԻՆ ՊԵՐՍՈՒԲԱԶԻՎ ԽՈՍՔԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵԼԱԿԵՏ .....	31
2.1. Խոսքի գործառնական քննության գիտատեսական հիմքերը ...	32
2.2. Լեզվի գործառնությունը հաղորդում – ներգործում հակադրամիասնության դիտանկյունից .....	56
ԳԼՈՒԽ 3	
ԱՐՏԱԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄՆԻ ՈՒ ԿԵՐՏՈՒՄԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵԼՈՒՅԹԻ ՅԱՄԱՏԵՔՍՈՒՄ .....	68
3.1. <i>-ly</i> և <i>-able/-ible</i> վերջածանցներով բառային շարույթների գործառնության յուրահատկությունները քաղաքական ելույթում. գնահատողականություն և գործողություն .....	68
3.2. Քաղաքական ելույթը որպես համայնքի և ինքնության գաղափարների ձևավորման միջոց. անձնական դերանունները որպես խոսքային-հաղորդակցական հնարներ .....	116
3.3. Լեզվաոճական արտահայտչամիջոցների՝ կրկնության, աստիճանավորման և զուգահեռականության պերսուազիվ դերը քաղաքական ելույթի համատեքստում .....	132
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....	172
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	181

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՄԱՌԱ ԱՂԱՍՈՒ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ**

**ԼԵԶՎԱԿԱՆՆ ՈՒ ԱՐՏԱԼԵԶՎԱԿԱՆՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՈՒՄ**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի  
Հրատ. սրբագրումը՝ Վ. Դերձյանի

Տպագրված է «Արման Ասմանգուլյան» ԱԶ-ում:  
ք. Երևան, Հր. Ներսիսյան 1/125

Ստորագրված է տպագրության՝ 30.05.2018:  
Չափսը՝ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>: Տպ. մամուլը՝ 12.125:  
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն  
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1  
[www.publishing.am](http://www.publishing.am)



ՆՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2018  
[publishing.ysu.am](http://publishing.ysu.am)